

**ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԸ.
ԴԱՍԵՐ, ԱՐԺԵՎՈՐՈՒՄՆԵՐ, ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ**

1921 թ. ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ԿԱՐՍԻ
ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ 100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

19-21 հոկտեմբերի 2021, ք. Երևան

**ԵՐԵՎԱՆ
ԼՈՒՍԱԿՆ
2022**

ՀՏԴ 94(479.25):32(082)

ԳՄԴ 63.3(5Հ)+66.0g43

Հ 247

**ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՀՅԴ ՀԱՅ ԴԱՏԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
«ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՑ ՀԱՐՑԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ**

**Ժողովածուն հրատարակության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ
պատմության և արևելագիտության ինստիտուտների
գիտական խորհուրդների կողմից**

Խմբագրական խորհուրդ

**պ. գ. դ., պրոֆեսոր Խաչատուր Ստեփանյան (նախագահ),
պ. գ. դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյան,
պ. գ. դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյան,
պ. գ. թ., դոցենտ Ռոբերտ Ղազարյան,
պ. գ. թ., դոցենտ Լևոն Մկրտչյան,
բ. գ. դ. Հայկազուն Ավրոյան**

Հայաստանը և տարածաշրջանը. դասեր, արժևորումներ,
Հ 247 հեռանկարներ.- Եր.: Լուսակն, 2022.- 432էջ:

Ժողովածուում ամփոփված են Երևանում 2021 թ. Հոկտեմբերի 19-21-ը անցկացված՝ Մոսկվայի և Կարսի պայմանագրերի 100-ամյակին նվիրված «Հայաստանը և տարածաշրջանը. դասեր, արժևորումներ, հեռանկարներ» խորագրով միջազգային գիտաժողովի զեկուցումները:

ISBN 978-9939-899-47-3

©Լուսակն, 2022

ARMENIA AND THE REGION:

LESSONS, EVALUATIONS, PERSPECTIVES

COLLECTION OF REPORTS OF THE INTERNATIONAL CONFERENCE
DEDICATED TO THE CENTENNIAL OF THE MOSCOW AND KARS
AGREEMENTS (1921)

October 19-21, 2021 Yerevan

INSTITUTE OF HISTORY OF NAS RA

INSTITUTE OF ORIENTAL STUDIES OF NAS RA

ARMENIAN NATIONAL COMMITTEE – INTERNATIONAL

**“RESEARCH CENTER FOR STUDIES OF WESTERN ARMENIANS’
PROBLEMS” RESEARCH FOUNDATION**

The collection has been guaranteed for publication by the
decision of the Scientific Councils of the Institute of History of
NAS RA and the Institute of Oriental Studies of NAS RA

Editorial Board

Khachatur Stepanyan (Chairman), D.Sc., Professor,

Ashot Melkonyan, D.Sc., Professor, Academician of NAS RA,

Ruben Safrastyan, D.Sc., Professor, Academician of NAS RA,

Robert Ghazaryan, CSc., Associate Professor

Levon Mkrtchyan, CSc., Associate Professor

Haykazun Alvrtsyan, D.Sc.

The collection summarizes the materials of the international
conference “Armenia and the region: lessons, evaluations, perspectives”
dedicated to the 100th anniversary of the Moscow and Kars agreements
organized in Yerevan on October 19-21, 2021.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԵՐԿՈՒ ԽՈՍՔ.....	9
2. Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ «ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԸ. ԴԱՍԵՐ, ԱՐԺԵՎՈՐՈՒՄՆԵՐ, ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ» ԽՈՐԱԳՐՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ.....	12
3. ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՐԱՄ Ա ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐԸ 1921 ԹՈՒԱԿԱՆԻ ՄՈՍԿՈՒԱՅԻ ԵՒ ԿԱՐՍԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ 100-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ	15
4. ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ , ՀԱՄԱԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 1921 Թ. ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ԿԱՐՍԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ	19
5. ԼԵՎՈՆ ՄԿՐՏՅԱՆ , ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ԴԱՍԵՐ, ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ	41
6. ՌԻՉԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ , ՃԱՆԱՊԱՐՀ ԴԵՊԻ ՄՈՍԿՎԱ ԵՎ ԿԱՐՍ.....	54
7. ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈՔՅԱՆ , ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ԿԱՐՍԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ «ՎԵՐԼՈՒԹՅՈՒԹՅՈՒՆ»	61
8. ԱՄԱՏՈՒՆԻ ՎԻՐԱՔՅԱՆ , ԽՈՐՀՐԴԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԾՈՒՄԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄԸ 1921-1975 ԹԹ. ՀԽՍՀ ՀԱՏՎԱԾՈՒՄ	104
9. ՎԻԿՏՈՐ ՆԱԴԵԻՆ-ՌԱԵՎՍԿԻ , 1921 Թ. ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ԿԱՐՍԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴԻ	

	ԸՆԿԱԼՈՒՄԸ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ.....	126
10.	ԷՄԻ ԱՌԻՍԻՆ ՀՈԼՄՍ , ՀԱՅԵՐԸ ԿԻՍԱԽՆՔՆԱՎԱՐ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ. ԱՐԱՐԱՏ ԼԵՌԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՍԻՐԻԱՅԻ ԻՆՔՆԱՎԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ	148
11.	ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ , 1921 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-ի ԿԱՐՍԻ «ՊԱՅՄԱՆԱԳՐԻ» ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ԴՐԱ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԳՈՐԾԱԴՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ.....	181
12.	ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱԼՎՐՑՅԱՆ , ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ.....	199
13.	ԽԱՉԱՏՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ , ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ-ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԽՆԴԻՐԸ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ (1920-1930- ԱԿԱՆ ԹԹ.).....	220
14.	ՎԱՀՐԱՄ ԲԱԼԱՅԱՆ , 1918 ԵՎ 2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԺՈՒՄՆԵՐԸ ԱՐՑԱԽ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ.....	238
15.	ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ , 1921 թ. ՄԱՐՏԻ 16-ի ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-ի ԿԱՐՍԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ.....	257
16.	ՔՐԻՍՏԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ , ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ԿԱՐՍԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ 1945 թ. ԽՍՀՄ-Ի՝ ԹՈՒՐՔԻԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՇՈՒՐՋ ԸՆԹԱՅԱԾ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐՈՒՄ	292
17.	ՎԼԱԴԻՄԻՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ , 1921 թ. ՄԱՐՏԻ 16-ի ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-ի ԿԱՐՍԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ	

ԽՆԴԻՐԸ ԱՐԴԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ	311
18. ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ , ԿԵՐՊԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ. ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ	334
19. ԽԱԼԻԴ ՕԿԱՇԱ , ԹՈՒՐՔԱԿԱՆ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄԸ ԱՖՐԻԿԱ.....	358
20. ԱՐՏԱԿ ԱՊԻՏՈՆՅԱՆ , ՄՈՍԿՎԱՅԻՑ ԵՎ ԿԱՐՍԻՑ 100 ՏԱՐԻ ԱՆՑ	381
ՀԱՅ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ	
21. ԻՈՆՆԻՍ ՄԱԶԻՍ , ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄՈՏԵՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....	399
22. ԵՂԻԱ ԹԱՇՃՅԱՆ , ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՈՒԺԵՐԻ ԲԱԼԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ	417

CONTENTS

1. TWO WORDS	9
2. THE SPEECH OF YOUR HOLINESS CATHOLICOS OF ALL ARMENIANS KAREKIN II AT THE INTERNATIONAL CONFERENCE “ARMENIA AND THE REGION: LESSONS, EVALUATIONS, PERSPECTIVES”	12
3. THE LETTER OF THE PATRIARCHAL BLESSING OF THE CATHOLICOS OF THE GREAT HOUSE OF CILICIA ARAM I ON THE 100TH ANNIVERSARY OF THE 1921 MOSCOW AND KARS TREATIES	15
4. ASHOT MELKONYAN, PAN-TURKISH PROGRAMS IN THE MOSCOW AND KARS TREATIES OF 1921	19
5. LEVON MKRTCHYAN, A 100-YEAR OLD LESSONS, TACTICAL AND STRATEGIC ISSUES	41
6. RICHARD G. HOVHANNISIAN, THE ROAD TO MOSCOW AND KARS.....	54
7. ARARAT HAKOBYAN, A HISTORICAL-COMPARATIVE “ANALYSIS” OF THE 1921 MOSCOW AND KARS TREATIES	61
8. AMATUNI VIRABYAN, THE SOVIET-TURKISH DELIMITATION AND DEMARCATION IN 1921-1975 IN THE SECTION OF THE SSR OF ARMENIA.....	104
9. VICTOR NADEIN-RAYEVKIY, THE 1921 MOSCOW AND KARS AGREEMENTS AND THEIR MODERN PERCEPTION IN THE FRAMEWORK OF GEOPOLITICAL REALITY	126
10. AMY AUSTIN HOLMES, ARMENIANS IN SEMI-AUTONOMOUS REGIONS: THE REPUBLIC OF MOUNT ARARAT AND THE AUTONOMOUS ADMINISTRATION OF NORTH AND EAST SYRIA	148

11.	ARMEN MARUKYAN, HISTORICAL AND LEGAL ASSESSMENT OF KARS “TREATY” AND THE CONSEQUENCES OF THE IMPLEMENTATION OF ITS PROVISIONS FOR ARMENIA.....	181
12.	HAYKAZUN ALVRTSYAN, THE QUESTION OF WESTERN ARMENIANS IN THE CONTEXT OF TURKISH NATIONAL POLICY	199
13.	KHACHATUR STEPANYAN, ARMENIAN-TURKISH BORDER-199TERRITORIAL PROBLEM ACCORDING TO DASHNAKTSUTYUN PRESS (1920-1930)	220
14.	VAHRAM BALAYAN, TURKISH INVASIONS IN ARTSAKH IN 1918 AND 2020 AND THEIR CONSEQUENCES	238
15.	EDIK MINASYAN, CONSEQUENCES OF THE MOSCOW TREATY OF MARCH 16, 1921 AND THE TREATY OF KARS OF OCTOBER 13, 1921	257
16.	KRISTINE MELKONYAN, THE TREATIES OF MOSCOW AND KARS IN DISCUSSIONS ON TERRITORIAL REQUIREMENTS SUBMITTED TO TURKEY	292
17.	VLADIMIR HOVHANNISYAN, THE PROBLEM OF VALIDITY OF THE INTERNATIONAL TREATIES OF MOSCOW (MARCH 16, 1921) AND KARS (OCTOBER 13, 1921) IN THE CONTEXT OF THE TEMPORARY INTERNATIONAL LAW.....	311
18.	LEVON HOVSEPYAN, TRANSFORMATIONS OF THE TURKISH MILITARY AND DEFENSE SECTOR: ISSUES OF IDENTITY AND IDEOLOGY.....	334
19.	KHALID OKASHA, TURKISH PENETRATION INTO AFRICA	358
20.	ARTAK APITONYAN, 100 YEARS LATER FROM MOSCOW AND KARS. THE CHALLENGES OF ARMENIAN DIPLOMACY	381
21.	IOANNIS MAZIS, GEOPOLITICAL FINDINGS ON THE RUSSIAN STRATEGIC APPROACH IN THE RECENT WAR IN ARTSAKH	399
22.	YEGHIA TASHJIAN, ARMENIA’S FOREIGN POLICY CHALLENGES AMID POST-WAR REGIONAL BALANCE OF POWER.....	417

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ուղիղ 100 տարի առաջ քեմալա-բոլշևիկյան փոխհամաձայնեցված ռազմաքաղաքական համագործակցության հետևանք Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի և դրա ածանցյալ Կարսի 1921 թ. հոկտեմբերի 13-ի պայմանագրերը հայ ժողովրդի անժամանցելի իրավունքների կոպիտ ոտնահարումներ են և Սևրի դաշնագրի չեզոքացման փորձ: Ակնհայտ իրողություն է, որ այդ պայմանագրերը անարդարության դրսևորումներ են հայության նկատմամբ, սակայն հիմնախնդիրը ոչ այնքան այդ անարդարությունը վերահաստատելն է, որքան նոր անարդարություններից խուսափելու ելքեր որոնելը:

100 տարի անց էլ Մոսկվայի և Կարսի պայմանագրերը ոչ միայն պատմագիտական, այլև քաղաքական հետաքրքրություն են ներկայացնում: Հնարավոր սխալներից խուսափելու, նախկին սխալները չկրկնելու համար կարևոր են այդ պայմանագրերի գիտական քննարկումները: Անհրաժեշտ է դրանցից բխող առաջարկներ ներկայացնել թե՛ քաղաքական դաշտին, թե՛ հասարակությանը: Այլ կերպ ասած՝ գիտաժողովի նյութերը պատմաճանաչողական նշանակությունից առավել գիտագործնական-քաղաքական նշանակություն պիտի ունենան: Միջազգային իրավունքի տեսանկյուն

նից թե՛ Մոսկվայի, թե՛ Կարսի պայմանագրերը անօրինական գործարքներ են և իրավական ուժ չունեն: Գիտենք, որ 100 տարի անց էլ դրանք իրենց ողջ էությանմբ լրջորեն մտահոգում են հայ ժողովրդին: Տարածաշրջանում այսօրվա աշխարհաքաղաքական զարգացումները բազմաթիվ նմանություններ ունեն 100 տարի առաջ գրանցված զարգացումների հետ: Այս հանգամանքը ևս ստիպում է վերաքննել այդ օրերին տեղի ունեցածը: Ուղղակի կապ կարելի է տեսնել նշված պայմանագրերի վերանայման հարցի և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման միջև: Այդ պայմանագրերի իրավականության, դրանց վերանայման հնարավորությունների, դրանցից բխող հետևանքների հարցերի պատասխանն է, որ ակնկալում ենք ստանալ նաև այս գիտաժողովից:

Անշուշտ, մեր պատմագիտական միտքն անդրադարձել է այս խնդրին, նաև քաղաքական շահարկումներ ու անդրադարձներ են եղել: Հարցը քննարկվել է թե՛ Հայաստանում և թե՛ Սփյուռքում: Սակայն կարծում ենք, որ դեռ քննարկումների տեղ կա: Թերևս այս առումով կարևոր էր նաև արտասահմանյան մասնագետների ներգրավմամբ բարձրակարգ գիտաժողովի կազմակերպումը: 2021 թ. հոկտեմբերի 19-21-ը Երևանում հրավիրված միջազգային գիտաժողովի մասնակիցների ներկայացուցչական և պատկառելի կազմը հուշում

է, որ ներկայացված զեկուցումները կիրառական կար-
ևոր նշանակություն կարող են ունենալ:

Հակոբ Տեր-Խաչատուրյան
ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ
Հայ Դատի Կենտրոնական Խորհրդի նախագահ

**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ
«ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԸ. ԴԱՍԵՐ,
ԱՐԺԵՎՈՐՈՒՄՆԵՐ, ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ» ԽՈՐԱԳՐՈՎ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ**

Գիտաժողովի սիրելի՛ մասնակիցներ,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջույն ենք հղում
և Հայրապետական Մեր օրհնությունը բերում ձեզ և գի-
տաժողովի աշխատանքներին:

Մենք բարձր ենք գնահատում, որ պատմության
և միջազգային իրավունքի մասնագետներդ համախմբ-
վել եք Հայաստանում՝ մեր ժողովրդի համար նոր մար-
տահրավերներով բնորոշվող այս օրերին անդրադառ-
նալու Մոսկվայի և Կարսի պայմանագրերին ու դրանց
հետևանքներին: Այսօր էլ աշխարհաքաղաքական
բուռն գործընթացները մտահոգիչ են մեր ժողովրդի
համար, ինչպես 100 տարի առաջ էր, երբ ստորագրվե-
ցին այդ պայմանագրերը, որոնցով Թուրքիային տրվե-
ցին հայկական զգալի տարածքներ:

21-րդ դարի առաջին քառորդին Հայաստանը
վերստին հայտնվել է տարածաշրջանային ռազմաքա-
ղաքական գործընթացների կիզակետում: 2020 թ. սեպ-
տեմբերի 27-ից նոյեմբերի 9-ը Ադրբեջանի կողմից Ար-
ցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատե-
րազմն անասելի ծանր հարված հասցրեց հայկական

երկու հանրապետություններին՝ կանգնեցնելով նրանց նոր մարտահրավերների առջև: Միջազգային այս գիտաժողովը, անդրադառնալով անցյալ դարում տեղի ունեցած իրադարձություններին, իր նպաստը պիտի բերի արդարության և իրավունքի պաշտպանության դիրքերից տարածաշրջանում հառնաձ հարցերի կարգավորմանը և խաղաղության հաստատմանը:

Գիտաժողովի առթիվ ցանկանում ենք գնահատանքի Մեր խոսքն ուղղել մերօրյա պատմագիտական մտքի երախտավորներին՝ իրենց փաստառատ ուսումնասիրությունների ու հետազոտությունների և նման գիտական միջոցառումների անցկացման համար: Մեր գնահատանքն ենք հայտնում միջազգային այս գիտաժողովը հրավիրած կազմակերպություններին՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պատմության և արևելագիտության ինստիտուտներին, «Հայ հեղափոխական դաշնակցության» Հայ դատի կենտրոնական խորհրդին, «Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոն» գիտահետազոտական հիմնադրամին, ինչպես նաև գիտաժողովի կազմկոմիտեի անդամներին ու բոլոր զեկուցողներին:

Աղոթում ենք աշխարհի խաղաղության համար և հավատում ենք, որ արդարության հիմքերի վրա մեր տարածաշրջանում պիտի հասունանան խաղաղության արգասիքները:

Մաղթում ենք բարի ընթացք գիտաժողովին և արդյունավոր աշխատանք:

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ
19 հոկտեմբեր, 2021
Սբ Էջմիածին

**ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ
1921 ԹՈՒԱԿԱՆԻ ՄՈՍԿՈՒԱՅԻ ԵՒ ԿԱՐՍԻ
ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ
100-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ**

Երեւան, 19-21 հոկտեմբեր, 2021

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն հայրապետական օրհնութեամբ, քրիստոնէական ջերմ սիրով ու պայծառ ապագայի տեսլականով կ'ողջունենք ձեզ եւ Մեր բարձր գնահատանքը կը յայտնենք ներկայ գիտաժողովը կազմակերպողներուն:

Վտանգալից զարգացումներով լի Կովկասի եւ յատկապէս Հայաստանի պատմութեան ներկայ հանգրուանին տեղի ունեցող այս գիտաժողովը կոչուած է դառնալու տարբեր ակադեմական այլ գիտաժողովներէն: Տարբեր՝ իր բնոյթով, տարբեր՝ իր պատգամով, տարբեր՝ իր այժմէականութեամբ, տարբեր՝ մանաւանդ իր մարտահրաւէրով:

Արդարեւ, 1921 թուականի հոկտեմբեր 13-ին մէկ կողմէն՝ Հայաստանի, Ազրպէյճանի ու Վրաստանի եւ միւս կողմէն՝ Թուրքիոյ միջեւ Ռուսիոյ մասնակցութեամբ ստորագրուած «Կարսի պայմանագիր» անունով ծանօթ տխրահռչակ պայմանագրին համաձայն, Թուրքիոյ կը փոխանցուին Կարսի մարզը ամբողջութեամբ եւ Սուրմալուի գաւառն ու Արարատ լեռը՝ իրենց յարակից շրջաններով, իսկ Ազրպէյճանի կը փոխանցուի Նախիջեւանը՝ որպէս ինքնավար մարզ: Փաստօրէն, Ստալինի ճնշումով Խորհրդային Հայաստանը

կը կորսնցնէ իր տարածքին շուրջ կէտը, Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ կը գծուի նոր սահմանագիծ, եւ Հայաստանը կը ճանչնայ Թուրքիոյ ներկայ սահմանները, այլ խօսքով՝ հողային ամբողջականութիւնը: Այսպէս կարճ ժամանակաշրջանի մը ընթացքին՝ Հայոց ցեղասպանութենէն եւ անկախ Հայաստանի Հանրապետութեան խորհրդայնացումէն յետոյ, հայ ժողովուրդը կը ստանայ այս երրորդ ահաւոր հարուածը:

Պատմագիրներ ու իրաւագէտներ արդարօրէն հարցականի տակ կ'առնեն յիշեալ պայմանագրին օրինականութիւնը (legitimacy) եւ իրաւականութիւնը (legality), որովհետեւ ան չի համապատասխաներ միջազգային օրէնքին եւ միջպետական համաձայնագիրներու սկզբունքներուն եւ գործընթացներուն: Խնդրայարոյց է նաեւ օրինական ընթացքով պայմանագրին վաւերացումը ըլլալու հարցը: Հետեւաբար իրաւական հիմքերէ զուրկ անօրինական եւ անվաւեր յիշեալ պայմանագրի գործադրութիւնը եղած է ապօրէն՝ համաձայն միջազգային օրէնքին: Վստահաբար այս եւ յարակից հարցերը լայնօրէն պիտի քննարկուին գիտաժողովին կողմէ:

Այսօր, երբ աշխարհաքաղաքական նոր իրավիճակ է ստեղծուած Կովկասէն ներս, երբ Ազրպէյճան նոր պահանջներ ու պայմաններ կը դնէ Հայաստանի առջեւ, երբ Ազրպէյճանին յաղթանակ պարգեւած Թուրքիան, այսպէս կոչուած, բարիդրացիութեան ձեռք կ'երկարէ Հայաստանին եւ դրական արձագանգ կը ստանայ Հայաստանէն, եւ Ռուսիան ու Թուրքիան, իրենց ազգային եւ հասարակաց շահերէ մղուած, սկսած են տիրական ներկայութիւն դառնալ շրջանէն ներս, Կարսի պայմանագրի վերարժեւորումն ու անոր այժմէականութեան վերաշեշտումը աւելի քան հրամայական են:

Հայաստանի անկախության 30-ամեակի Մեր պատգամին մէջ յիշեցուցած էինք, թէ ռազմաքաղաքական շահերու վրայ հաստատուած ու ծաւալապաշտական հեռանկարներէ առաջնորդուած եւ համաթրքական նոր դաշնակցութիւն մը սկսած է կազմաւորուիլ Կովկասէն ներս՝ Թուրքիոյ առաջնորդութեամբ ու Ազրպէյճանի մասնակցութեամբ միաժամանակ՝ տարածաշրջանէն անդին երթալու նշաններ ցոյց տալով: Արդարեւ, Մոսկուայի եւ Կարսի պայմանագիրները փաստօրէն պարտադրուեցան Հայաստանին: Այսօր Հայաստանին նոր պայմանագիրներ պարտադրելու բացայայտ մթնոլորտ մը կը տիրէ տարածաշրջանէն ներս: Զգո՛յշ... պատմական Հայաստանէն մնացած կտոր մը հողի վրայ իր անկախութիւնը վերահաստատած Հայաստանի Հանրապետութիւնը դարձեալ զոհ չդառնայ իր շուրջը տեղի ունեցող աշխարհաքաղաքական նոր խմորումներուն:

Շրջանի աշխարհագրութիւնը կարելի չէ փոխել: Սակայն կարելի է եւ հրամայակա՛ն աշխարհաքաղաքական յարափոփոխ պայմաններուն համահունչ այնպիսի մօտեցումներ որդեգրել, որոնք չեն վտանգեր Հայաստանի Հանրապետութեան գերագոյն շահերն ու անոր ապագան: Դիւանագիտութեան մէջ հարկ է ըլլալ ճկուն, բայց ո՛չ պարտողական, իրատես, բայց ո՛չ զիջող: Հայաստանի անկախութեան ու գերիշխանութեան, հողային ամբողջականութեան ու անվտանգութեան անխաթար պահպանումը մեր ժողովուրդին համար ազգային սրբութիւն է:

Հայաստանը շրջապատող վտանգները ճիշդ չէ կառավարական ընթացիկ որոշումներով դիմագրաւել: Հրամայական է, ինչպէս յաճախ յիշեցուցած ենք, ճակատագրական

կարելիություն ներկայացնող հիմնահարցեր համազգային մաշտապով քննարկել ու համապատասխան դիրքորոշումներ ճշդել: Հայութեան մեծամասնությունը կազմող Սփիւռքը իր հարուստ փորձառութեամբ ու բազմակողմանի կապերով իր ըսելիքն ու ընելիքը պէտք է ունենայ համազգային բնոյթ ու տարողութիւն ունեցող խնդիրներու գծով:

Այս մտածումներով ու մանաւանդ սպասումով դարձեալ կ'ողջունենք ձեզ՝ մաղթելով յաջողութիւն ձեր քննարկումներուն մէջ:

Հայրական սիրով ու օրհնութեամբ՝

Աղօթարար

Արամ Ա

ԱՐԱՄ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

18 հոկտեմբեր, 2021

Անթիլիաս, Լիբանան

ՀԱՄԱԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 1921 թ.

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ԿԱՐՍԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ¹

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ

**ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,**

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

ashamelk@yahoo.com

Քանայի բառեր – Մոսկվայի և Կարսի պայմանագրեր, Հայաստան, Թուրքիա, համաթյուրքականություն, Քեմալ, Չիչերին, խորհրդային իշխանություն, Նախիջևան, Սուրմալու:

1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետության անկման և 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի ու հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերով հայկական տարածքների՝ Թուրքիային և Ադրբեջանին բռնակցման խնդրի մասին ստեղծվել է պատմագիտական հարուստ գրականություն: Այդուհանդերձ, այսօր էլ դեռ առանձին հարցեր մնում են չուսումնասիրված: Դրանց քննությունը շատ կարևոր է ու արդիական: Այն 1921 թ. Այսրկովկասում այդ պայմանագրերով համաթ-

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ-ի և ՀՀՈՀ (ՈԴ) տրամադրված ֆինանսավորմամբ 20RF-103 ծածկագրով գիտական համատեղ ծրագրի շրջանակներում:

յուրքականության ծրագրերի ներդրման և դրանից բխող ներկայիս տարածաշրջանային բարդ գործընթացների էությունը խորությամբ ըմբռնելու հնարավորություն է տալիս:

Մինչ բուն խնդրին անդրադառնալը համառոտ ներկայացնենք հարցի նախապատմությունը: Առաջին աշխարհամարտի ավարտից հետո Օսմանյան կայսրությունը մասնատելու Անտանտի երկրների քաղաքականությունը դժգոհության ալիք առաջացրեց թուրքական ազգայնական շրջանակներում, որոնք, համախմբվելով գեներալ Մուստաֆա Քեմալի շուրջ, հաստատվեցին Անկարայում և, չճանաչելով սուլթանական կառավարությունը, շարժում ծավալեցին երկիրը մասնատումից փրկելու համար:

1920 թ. Խորհրդային Ռուսաստանը զգալիորեն ամրապնդեց իր ռազմաքաղաքական դիրքերը: Կարմիր բանակը, հաղթանակներ տանելով հակախորհրդային ուժերի նկատմամբ, մոտեցավ Անդրկովկասի սահմաններին: «Սոցիալիստական» հեղափոխությունը ռազմական ճանապարհով սկսեց արտահանվել Արևելքի երկրներ: Դրան սկսեցին նպաստել Անդրկովկասի բոլշևիկները, որոնք իրենց երկրների փրկությունը տեսնում էին խորհրդայնացման մեջ: Անդրկովկասի հանրապետությունների խորհրդայնացման հարցում Մ. Քեմալը փորձեց Վ. Լենինի կառավարությանն առաջարկել իր ծառայությունները՝ հույս ունենալով Անտանտի դեմ պայքարում ստանալու Ռուսաստանի աջակցությունը: Արդեն 1920 թ. ապրիլի 28-ին Քեմալի բավական գործուն աջակցությամբ մուսավաթական Ադրբեջանը գրեթե առանց դիմադրության ընդունեց 11-րդ կարմիր բանակին և խորհր-

դայնացավ: Ռուս-քեմալական համագործակցությունն սկսեց ընդունել գործուն ձևեր:

1920 թ. գարնանը Խորհրդային Ռուսաստանի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու Հայաստանի Հանրապետության կառավարության փորձերը Թուրքիայի ու Ադրբեջանի ջանքերով ապարդյուն անցան: Մոսկվայում ընթացող հայ-ռուսական բանակցություններն ընդհատվեցին, և Լևոն Շանթի գլխավորած պատվիրակությունը ստիպված եղավ վերադառնալ Երևան: 1920 թ. մայիսին Կարմիր բանակը մտավ Ղարաբաղ, հունիսին՝ Ջանգեզուր, օգոստոսին՝ Նախիջևան: Հայկական ուժերը չխոչընդոտեցին բոլշևիկների մուտքը այդ տարածքներ: Օգոստոսի 10-ին՝ Սևրի դաշնագրի ստորագրման օրը, Թիֆլիսում կնքվեց հայ-ռուսական համաձայնագիր, որով վերոհիշյալ գավառները ճանաչվեցին հայ-ադրբեջանական վիճելի տարածքներ և ժամանակավորապես՝ մինչև խնդրի վերջնական լուծումը, մնալու էին 11-րդ բանակի վերահսկողության ներքո:

1920 թ. օգոստոսի 24-ին Մոսկվայում համաձայնեցվեց ռուս-թուրքական «Սրտագին և անկեղծ բարեկամության» պայմանագրի նախագիծը, որով Ռուսաստանը ճանաչում էր Թուրքիայի ամբողջականությունը, այդ թվում՝ Կարս, Արդահան և Բաթում քաղաքներով, այսինքն՝ 1877 թ. սահմաններով²: Ըստ էության, օգոստոսի 24-ի համաձայնագիրն ուղղված էր Հայաստանի դեմ: Պատահական չէ, որ շուտով՝

² Օգոստոսի 24-ի ռուս-թուրքական համաձայնագրի մասին տե՛ս **Акопян А.**, Московский и Карсский договоры в судьбе армянского народа, Ереван, 2021, էջ 15-19:

սեպտեմբերի 1-7-ը, Բաքվում Կոմունիստական ինտերնացիոնալի նախաձեռնությամբ հրավիրված Արևելքի ժողովուրդների համագումարում ավելի ընդգծվեցին քեմալականների ու բուլժևիկների գործակցությունը և դրա հակահայ ուղղվածությունը: Համագումարին ներկա էր նաև հայ ժողովրդի ռիսերիմ թշնամի Էնվեր փաշան: Հայաստանի Հանրապետությանը ջախջախելու և այնտեղ խորհրդային կարգեր հաստատելու համար նախատեսվեց օգտագործել քեմալական թուրքերի ռազմական ուժերը: Այս հակահայկական համագումարից մի քանի օր անց խորհրդային կառավարության թողտվությամբ և աջակցությամբ քեմալականները ներխուժեցին Հայաստանի Հանրապետության տարածք:

Հայտնվելով դիվանագիտական և ռազմական մեկուսացման մեջ՝ Հայաստանը պարտություն կրեց: 1920 թ. նոյեմբերի 29-ին Հայիեդկոմը 11-րդ բանակի օգնությամբ Ադրբեջանից մտավ Իջևան և հռչակեց երկրում խորհրդային իշխանություն: Դեկտեմբերի 2-ին Երևանում ստորագրվեց համաձայնագիր Ռուսաստանի ներկայացուցիչ Բ. Լեգրանի և Հայաստանի կառավարության լիազորներ Դրոյի և Հ. Տերտերյանի միջև: Համաձայնագիրը բաղկացած էր 8 կետից և պարունակում էր շատ կարևոր կետեր: Առաջին կետով Հայաստանի Հանրապետության կառավարությունը հրաժարվում էր իշխանությունից և այն ժամանակավորապես՝ մինչև հեղկոմի ժամանումը Երևան, հանձնում Կարմիր բանակի հրամանատարությանը՝ Դրոյի և Ռուսաստանի կոմիսար Սիլինի ղեկավարությամբ: Հաջորդ կետերով Ռուսաստանը և Հայիեդկոմը պարտավորվում էին բռնություններ չգործադրել նախկին կառավարության անդամների ու նրա համակիրնե-

րի, դաշնակցականների նկատմամբ: Երևանի համաձայնագրով խորհրդային կառավարությունը պարտավորվում էր բանակցություններ վարել Թուրքիայի հետ և սահմանային հարցերում պաշտպանել Հայաստանին:

Նույն օրը՝ դեկտեմբերի 2-ին, Ալեքսանդրապոլում կնքվեց հայ-թուրքական պայմանագիր, որով պատերազմն ավարտվեց: Հայ-թուրքական սահմանագիծն անցնելու էր Ախուրյան-Արաքս գծով, Օսմանյան կայսրության կազմում չեղած Սուրմալուի գավառն անցնելու էր Թուրքիային, Նախիջևանում մտցվելու էր հատուկ կառավարում՝ թուրքերի հսկողությամբ: Հայաստանը հրաժարվում էր Սևրի պայմանագրից, ունենալու էր միայն 1500-հոգանոց զորք: Չնայած Շիրակը մնում էր Հայաստանին, սակայն թուրքերը չէին շտապում դուրս գալու այնտեղից:

Այսպիսով՝ քեմալա-բոլշևիկյան գործակցության հետևանքով կործանվեց Հայաստանի Հանրապետությունը:

Խորհրդային Ռուսաստանի հետ ռազմական համագործակցության շնորհիվ քեմալականները զգալիորեն ամրապնդեցին իրենց դիրքերը և հսկողություն սահմանեցին Թուրքիայի մի զգալի հատվածի վրա: 1921 թ. փետրվար-մարտին, երբ Հայաստանում բոլշևիկների դեմ բռնկվել էր ժողովրդական ապստամբություն, նրանք Մոսկվայում բանակցություններ սկսեցին խորհրդային ղեկավարության հետ: Խորհրդային Հայաստանից կոնֆերանսին մասնակցելու էր Ալ. Բեկզադյանի պատվիրակությունը³: Սակայն թուրք-

³ Կոնֆերանսին մասնակցելու համար Ալ. Բեկզադյանի պատվիրակության կատարած աշխատանքների, թուրք-ադրբեջանական շրջանակների հակահայ քայլերի մասին տե՛ս **Խաչատրյան Կ. Հ.**, ՀՍԽՀ սահմանների հարցը 1921 թ.

ադրբեջանական կողմը Ի. Ստալինի, Ս. Օրջոնիկիձեի, Ն. Նարիմանովի, Բ. Մդիվանու և այլ բոլշևիկների աջակցությամբ Բեկզադյանին արգելեց մասնակցել կոնֆերանսին⁴։ Օգտագործվեց այն անհիմն պատճառաբանությունը, թե քանի որ փետրվարի 18-ին Երևանում Հայիեղկոմը տապալվել էր, ուստի նրա ներկայացուցիչ Բեկզադյանը չէր կարող ունենալ լիազորություններ և ներկայացնել Հայաստանի շահերը⁵։

Այսպես 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում ստորագրվեց խորհրդա-թուրքական «Բարեկամության և եղբայրության մասին» պայմանագիրը⁶։ Այն կնքվեց առանց հայ ժողովրդի կենսական շահերը հաշվի առնելու և առանց հայկական կողմի մասնակցության։ Պայմանագիրն իր սուր ծայրով ուղղված էր Հայաստանի դեմ։ Այդ ամոթալի պայմանագրի կնքմանն իր ակտիվ մասնակցությունն ունեցավ խորհրդային Ռուսաստանի ազգությունների ժողկոմ Ի. Ստալինը։ Պատահական չէ, որ թուրքական պատվիրակությունը Մոսկվա գնալու ճանապարհին մի քանի օր հանգրվանել էր

խորհրդա-թուրքական հարաբերությունների ոլորտում, «Լրաբեր» հասարակական գիտությունների, Երևան, 2010, № 1-2, էջ 41-45։

⁴ St'н Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий, В 2 т. / Сост., отв. ред., авт. предисл. и коммент. **Ю.Г. Барсеров**, т. 2, ч. 1, Москва, 2003, էջ 355-377։

⁵ Դա անհիմն պատճառաբանություն էր, քանի որ խորհրդային իշխանությունն ամբողջ Հայաստանում տապալված չէր։ Հայիեղկոմն իր հսկողության տակ էր պահում Ղամարլուն (Արտաշատ), Ելենովկան (Սևան), Համամլուն (Սպիտակ) և այլ շրջաններ։

⁶ Իրականում աշխարհաքաղաքական նկատառումներով պայմանագիրը ստորագրվել է մարտի 18-ին։ Այդ մասին տե՛ս **Казанчян Р.**, К вопросу о дотировке Московского советско-турецкого договора 1921 г., «Լրաբեր» հասարակական գիտությունների, Երևան, 1999, էջ 189-197, **Захаров В. А., Марукян А. Ц. и другие**, Столетие подписания московского и карсского договоров 1921 года и проблемы их денонсации, Москва-Ереван, 2021, էջ 472-478։

Բաքվում և կնքվելիք պայմանագրի տեքստը համաձայնեցրել ադրբեջանցիների հետ: Ինչ վերաբերում է Ստալինին, որը հայտնի էր իր հակահայկական կեցվածքով, ջանք չխնայեց, որ Ռուսաստանի արտգործնախարար Չիչերինը հրաժարվի իր «հայամետ» դիրքորոշումից և կոնֆերանսում մեծ զիջումներ անի թուրքերին:

Մարտի 16-ի պայմանագրով Ռուսաստանը ճանաչում էր Թուրքիայի իրավունքները Կարսի մարզի նկատմամբ: Թուրք-հայկական սահմանագիծն անցնելու էր Ախուրյան և Արաքս գետերի հունով: Ռուսաստանը, հոգուտ Խորհրդային Վրաստանի, ստանում էր Բաթում նավահանգիստը՝ փոխարենը Թուրքիային զիջելով հայկական Սուրմալուի գավառը: Քեմալականները պարտավորվում էին ազատել Ալեքսանդրապոլի գավառը: Նախիջևանի մարզը դառնում էր ինքնավար տարածք՝ Ադրբեջանի խնամակալությամբ, պայմանով, որ նա այդ իրավունքը չի զիջի երրորդ պետության (հոդված 3): Պարզ է, որ խոսքը Հայաստանին չզիջելու մասին էր:

Պայմանագրի նույն՝ 3-րդ հոդվածն իր հավելված I (C)-ով ևս մեկ այլ հակահայկական ձևակերպում էր պարունակում. նախատեսվում էին Թուրքիայի, Ադրբեջանի և Հայաստանի ներկայացուցիչներից բաղկացած հանձնաժողովի կողմից սահմանային շտկումներ Նախիջևանի և Խորհրդային Հայաստանի սահմանի մի հատվածում՝ Արաքս կայարանից դեպի հարավ՝ Արաքս գետի ու նրա աջակողմյան վտակ Կարասուի միջև ընկած եռանկյունու տարածքում⁷: Դրանց նպատակը Երևանի նահանգի կազմում ներառված Սադա-րակի շրջանը Խորհրդային Հայաստանից կտրելն ու Ադրբե-

⁷ Ст'а Захаров В. А., Марукян А. Ц. и другие, նշվ. աշխ., էջ 480, 485:

ջանին անցնող Նախիջևանի ինքնավարությանը հանձնելն էր, որ Թուրքիային տրվող Սուրմալուի (պատմական Մասյացոտն) գավառի արևելյան նեղ պարանոցով թուրքերն ընդհանուր սահման ունենային թաթար-ադրբեջանցիներին անցնող Նախիջևանի մարզի հետ⁸։ Հրապարակված փաստաթղթերից երևում է, որ թուրքական պատվիրակությունն իր այդ պահանջը «հիմնավորել է» այն կեղծ թեզով, թե «...նշված սահմաններով Նախիջևանի ինքնավարության ստեղծումը շատ կարևոր է Թուրքիայի արևելյան սահմանների անվտանգության համար»⁹։ Ընդ որում, թուրքերը չէին խորշում նշելուց, որ իբր այդ վտանգը իրենք տեսնում են Հայաստանից։

Հատկանշական է, որ ռուսական պատվիրակությունը, փաստորեն, որևէ ձևով չի խոչընդոտել Երևանի գավառի հարավային հատվածը Նախիջևանին միացնելու թուրքական պահանջի իրականացումը, թեև լիովին գիտակցել է դրա վտանգավորությունը Հայաստանի և խիստ շահավետությունը Ադրբեջանի համար։ Դա հստակ երևում է նրա մի

⁸ Երևանի նահանգի Սադարակի ենթաշրջանը, 1920 թ. դեկտեմբերի 2-ի հայ-ռուսական համաձայնագրի 3-րդ կետի համաձայն, մնալու էր Հայաստանին (տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն, փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Երևան, 2000, էջ 383)։ ՀՍԽՀ-ից այն անջատելով ու Նախիջևանի ինքնավարությանը միացնելով՝ առաջացավ շուրջ 11 կմ երկարությամբ թուրք-ադրբեջանական ընդհանուր սահման։ Դրան զուգահեռ՝ Խորհրդային Հայաստանն ընդամենը 2-5 կմ լայնությամբ «թյուրքական» նեղ պարանոցով կտրվեց Պարսկաստանից։ Դա հեռուն գնացող համաթյուրքական ծրագրի մի կարևոր բաղադրամասն էր։ Պատահական չէ, որ 1991 թ. Ադրբեջանի անկախացումից հետո Սուրմալուի գավառ-Սադարակ-Նախիջևան ճանապարհը դարձավ համաթյուրքականության գլխավոր մայրուղիներից մեկը։ Այսօր, Հայաստանից Սյունիքով հաղորդակցության ճանապարհներ՝ «միջանցքներ» պահանջելով, Թուրքիան և Ադրբեջանը ձգտում են ավարտին հասցնելու համաթյուրանականության այդ վաղեմի ծրագիրը։

⁹ Захаров В. А., Марукян А. Ц. и другие, նշվ. աշխ., էջ 504։

հայտարարությունից, ըստ որի՝ նման սահմանագիծը «...գերազանցում է Ադրբեջանի առավելագույն պահանջները, որը երբևէ ցանկություն չի արտահայտել իր հովանավորությունն իրականացնելու Երևանի գավառի որևէ մասի նկատմամբ և անփոփոխ կերպով իր ծայրագույն սահման է ճանաչել Գայլի դրունքը»¹⁰:

Թուրքիան պարտավոր էր ազատել նաև Ալեքսանդրապոլ-Նախիջևան երկաթգիծը: Խորհրդային Ռուսաստանը պայմանագրի 15-րդ հոդվածով պարտավորվում էր նաև ջանքեր գործադրել Անդրկովկասի խորհրդային երեք հանրապետությունների և Թուրքիայի միջև նմանօրինակ պայմանագրի կնքման համար:

Մոսկվայի կոնֆերանսից հետո Ալ. Բեկզադյանը բողոքի նոտա ներկայացրեց խորհրդային կառավարությանը՝ իր պատվիրակությանը կոնֆերանսին մասնակցությունից զրկելու և հակահայկական պայմանագիր ստորագրելու առնչությամբ: Ապրիլի 15-ին Ռուսաստանի արտգործոժողկոմ Գ. Չիչերինին հասցեագրած նամակ-բողոքում նա համարձակորեն գրում էր. «Իրապես ինչո՞վ կարող էր առաջնորդվել ռուսական պատվիրակությունը, երբ այդքան հեշտությամբ Անգորային էր զիջում հայերով բնակեցված մի շարք գավառներ ու շրջաններ:Գուցե նրանո՞վ, որ Արևելքում

¹⁰ Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին, Երևան, 2010, էջ 332: Ընդգծենք, որ Գայլի դրունքը գտնվում է Սադարակից հարավ՝ Դահնա (նաև՝ Գայլի դրունք) և Վելի լեռների միջև, և միացնում է Արարատյան դաշտը Շարուրի դաշտին: Դահնա լեռը և դրանից արևելք ընկած Վելի գագաթը ռուսական տիրապետության և Առաջին հանրապետության շրջանում կազմել են Երևանի նահանգի համանուն գավառի հարավային սահմանը (տե՛ս Բ. Հարությունյանի «Շարուր-Նախիջևանի երկրամաս (6.1918 – 4.1920)» քարտեզը 2002 թ. է. Ա. Զոհրաբյանի հեղինակած «Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները» (1918 թ. դեկտ. - 1920 թ. ապրիլ)» գրքում):

հեղափոխության շահերը պահանջում էին այդպիսի զոհեր
Խորհրդային Հայաստանի բանվորների ու գյուղացիների
հաշվին: Թե՛ հնարավոր է այն բանով, որ մեծ ու ուժեղ
Թուրքիայի և փոքր ու թույլ Հայաստանի ընտրության հար-
ցում որոշվեց զոհել վերջինիս՝ ի շահ առաջինի: Հայկական
պատվիրակությունը հայտնում է իր վճռական բողոքը....»¹¹:
Սակայն այդ բողոքը ոչ մի գործնական նշանակություն չու-
նեցավ:

Անդրկովկասում թե՛ արտաքին և թե՛ ներքին սահ-
մանների ճշգրտման հարցով Խորհրդային Ռուսաստանի
ղեկավարությունն սկսեց զբաղվել հատկապես 1921 թ. գար-
նանից՝ Վրաստանի խորհրդայնացումից ու Հայաստանում
Փետրվարյան ապստամբության ճնշումից հետո: Հարցի նա-
խապատրաստման դիվանագիտական փուլն աչքի ընկավ
թուրք-ադրբեջանական տանդեմի բազմաթիվ հակահայկա-
կան խարդավանքներով:

Զանազան պատճառաբանություններով թուրքերը
շարունակում էին ձգձգել Մոսկվայի պայմանագրով Հայաս-
տանին մնացող տարածքներից, մասնավորապես՝ Ալեք-
սանդրապոլի գավառից, զորքերի դուրսբերումը¹²: Գեներալ
Քյազիմ Կարաբեքիրը, որը 1920 թ. թուրք-հայկական պա-
տերազմում աչքի էր ընկել առանձնակի հակահայկական
կեցվածքով, անգամ սպառնում էր հայ-թուրքական նոր պա-

¹¹ Захаров В. А., Марукян А. Ц. и другие, նշվ. աշխ., էջ 504:

¹² Թուրքիայի Ազգային մեծ ժողովի ռազմական նախարար Քեմալ Ֆեզի փաշան
հայտարարում էր, որ «Արևելյան ռազմաճակատի թուրքական բանակը, մնալով
Կովկասում, պետք է այնտեղ կատարի հավասարակշռության տարրի դեր»
(Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության
հաղթանակը Հայաստանում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան,
1960, էջ 513):

տերազմով, որը, նրա իսկ խոսքերով, կարող էր նշանակել պատերազմ Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի միջև: Նման պահվածքը գնահատելով «խուլիգանական»՝ ապրիլի 6-ին Գ. Չիչերինը Մոսկվայում Թուրքիայի ներկայացուցիչ-դեսպան Ալի Ֆուադին գրած նամակում հայտնում էր, որ կոմունիստների կողմից ապրիլի 2-ին Երևանի գրավումից հետո այլևս որևէ հիմք չկա թուրքական զորքերը հայ-թուրքական սահմանագիծ դարձած Ախուրյան գետի աջափնյակ հետ չքաշելու համար¹³:

Խորհրդային Ռուսաստանը գործնական քայլեր կատարեց Մոսկվայի պայմանագրի պայմանները Անդրկովկասի խորհրդային երեք հանրապետություններին պարտադրելու համար: Այդ նպատակով որոշվեց նոր խորհրդաժողով հրավիրել մի կողմից՝ Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի, մյուս կողմից՝ Թուրքիայի մասնակցությամբ: Թուրքերը չհապաղեցին քայլեր ձեռնարկելու հրավիրվելիք քառակողմ կոնֆերանսին Հայաստանի մասնակցությունը բացառելու համար: Չիչերինին հասցեագրած հեռագրում Խորհրդային Ադրբեջանի արտգործոժողկոմ Մ. Հուսեյնովը հայտնում էր, որ Ադրբեջանում Թուրքիայի դիվանագիտական ներկայացուցիչ Մահմուդ Շևքեթն իր հետ ունեցած զրույցի ժամանակ, կարևորելով Արևելքում Ադրբեջանի հատուկ դերը, առաջարկել է անհապաղ հրավիրել թուրք-ադրբեջանական կոնֆերանս: Բայց ինքը պատասխանել է, որ դա հնարավոր չէ, քանի որ Անդրկովկասի երեք հանրապետությունները պետք է հանդես գան միասնաբար: «Ի պատասխան դրա,- շարունակում է Հուսեյնովը,- Մահմուդ Շևքեթը հայ-

¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 511:

տարարեց, որ պատվիրակությունն ունի հանձնագրեր՝ պայմանագիր կնքելու Ադրբեջանի հետ առանձին և առանձին Վրաստանի հետ, իսկ Հայաստանի հետ պայմանագիր կնքելու համար թուրքական պատվիրակությունը հանձնագիր չի ստացել»¹⁴: Ակնհայտ է, որ Հուսեյնովն ու Շևքերը փորձում էին առաջիկա բանակցություններում հատուկ դերակատարություն ապահովել Ադրբեջանի համար, նվազեցնել Վրաստանի դերը և ընդհանրապես թույլ չտալ հայերի մասնակցությունը: Հուսեյնովը փաստորեն դարձավ Թուրքիայի յուրահատուկ խոսափողն ու գործիքը մինչև կոնֆերանսը թուրք-ադրբեջանական պահանջները Խորհրդային Ռուսաստանի հետ համաձայնեցնելու հարցում: Պատահական չէ, որ նա ինքնագլուխ բանակցություններ սկսեց Կարս ժամանած թուրք դիվանագետների հետ, Չիչերինին հայտնեց, որ Ադրբեջանը համաձայն է անդրկովկասյան հանրապետությունների և Թուրքիայի միջև առանձին-առանձին պայմանագրերի կնքման, Թիֆլիսի կամ Երևանի փոխարեն կոնֆերանսի վայր Կարսն ընտրելու և թուրքական այլ առաջարկությունների հետ¹⁵: Հավելենք, որ, ցավոք, կոնֆերանսի նախապատրաստական աշխատանքներում ինչպես Թուրքիայի, այնպես էլ Ադրբեջանի նախաձեռնողական քայլերը Ռուսաստանի կողմից ոչ միայն հակազդեցության չհանդիպեցին, այլև արժանացան հավանության: Պատահական չէ, որ ընդունվեցին կոնֆերանսը Կարսում հրավիրելու թուրքերի և անդրկովկասյան հանրապետությունների ներկայացու-

¹⁴ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), կազմողներ՝ **Ջ. Ս. Կիրակոսյան, Ռ. Գ. Սահակյան**, խմբ.՝ **Ջ. Ս. Կիրակոսյան**, Երևան, 1972, էջ 511-512:

¹⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 511-513:

ցիչների մինչև կոնֆերանսյան հավաքը Բաքվում անցկացնելու ադրբեջանական առաջարկները: Իրենց համար ստեղծված նպաստավոր մթնոլորտում Խորհրդային Ռուսաստանի հետ ակտիվ սեպարատ բանակցություններ սկսեց Ադրբեջանի ներկայացուցիչ Բ. Շախթախթինսկին¹⁶:

1921 թ. մայիսի 7-ին Բաքվում հավաքվեցին անդրկովկասյան խորհրդային երեք հանրապետությունների պատվիրակությունները՝ Թուրքիայի հետ Մոսկվայի պայմանագրից բխող պայմանագրեր կնքելու համար: Մշակվեց ընդհանուր մոտեցում, որի համաձայն՝ Թուրքիայի հետ բանակցություններում երեք հանրապետությունները պետք է հանդես գային միասնաբար: Նախատեսվում էր հիմնականում պահպանելով Մոսկվայի պայմանագրի կետերը հասնել որոշ վերանայումների, որոնք բխում էին Հայաստանի շահերից, այն է՝ Հայաստանին Սուրմալուի գավառի Կողբի աղահանքերից օգտվելու իրավունք շնորհել, Անիի ավերակների շրջանը հանձնել հայերին, վերադարձնել Ալեքսանդրապոլի դեպոյի գույքը և այլն: Հայաստանը ձգտում էր նաև ձեռք բերելու Նախիջևանի նկատմամբ հովանավորության իրավունքը:

Նկատի ունենալով, որ ամենասուր խնդիրները վերաբերում էին հայ-թուրքական, ապա՝ վրաց-թուրքական հարաբերություններին¹⁷, որոշվեց Թուրքիայի հետ բանակցություններում քննարկման առաջնահերթ առարկա դարձնել հենց այդ հարցերը¹⁸: Իրականում բոլշևիկյան Ադրբե-

¹⁶ Տե՛ս **Խաչատրյան Կ. Հ.**, նշվ. աշխ., էջ 47:

¹⁷ Վրաստանին հուզում էին, մասնավորապես, Բաթումի մարզի ու նավահանգստի, Արդվինի գավառի հարցերը:

¹⁸ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 113, ց. 3, գ. 21, թթ. 71-72:

ջանն ու Ռուսաստանը սոսկ պատրանք էին ստեղծում, թե մտահոգ են հայկական խնդիրներով: Խորհրդակցությունը հրավիրելով Բաքվում՝ նրանք հայկական կողմի վրա հոգեբանական ճնշում գործադրելու հնարավորություն էին ստանում: Մի կողմից խոսվում էր հայկական որոշ հողեր, ունեցվածքը, հանքերը Հայաստանին վերադարձնելու անհրաժեշտության մասին, մյուս կողմից մատնանշվում էր սահմանային և այլ հարցերում Մոսկվայի պայմանագրից որևէ շեղման անհնարինությունը, առարկության չէր հանդիպում կոնֆերանսը թուրքերի կողմից բռնազավթված Կարս քաղաքում հրավիրելու թուրքական առաջարկը¹⁹:

Թվում էր, թե Ադրբեջանի հետ կապված որևէ խնդիր չկար: Սակայն շուտով պարզվեց, որ ադրբեջանցիները մտահոգված են Մոսկվայի պայմանագրի 3-րդ հոդվածով Նախիջևանի ու հայկական հանրապետության միջև սահմանի ճշգրտման հարցով, որի նպատակը, ինչպես վերը նշվել է, Երևանի նահանգից Սադարակի շրջանը Նախիջևանին միացնելով թուրք-նախիջևանյան ընդհանուր սահման ստեղծելն էր: Ուստի Բաքվի խորհրդակցության բանաձևում տեղ գտավ հետևյալ ձևակերպումը. «Նկատի ունենալով, որ Մոսկվայի պայմանագրի 3-րդ պարագրաֆով Թուրքիայի, Ադրբեջանի և Հայաստանի ներկայացուցիչների հատուկ հանձնաժողովին իրավունք է վերապահված ուղղելու Հայաստանի ու Նախիջևանի սահմանը, և որ այդ հարցն անհրաժեշտաբար կանգնելու է անդրկովկասյան-թուրքական կոնֆերանսի առջև, խորհրդակցությունը որոշում է անմիջապես միջոցներ ձեռք առնել տեղում Ադրբեջանի և Հա-

¹⁹ Տե՛ս նույն տեղում, թ. 72:

յաստանի ներկայացուցիչների կողմից ուսումնասիրելու սահմանի ճշգրտման հարցը ազգագրական սկզբունքի և այդ հարցի շուրջ տեղի բնակչության շրջանում ստեղծված կարծիքի հիման վրա»²⁰: Անտարակույս, ադրբեջանցիներն այս հարցում գործում էին թուրքերի հետ միասնաբար: Նրանց հրահանգված էր մինչև թուրք-անդրկովկասյան կոնֆերանսը լուծել առավելապես թաթարաբնակ Սադարակի շրջանը Նախիջևանին կցելու հարցը՝ գործադրելով ազգագրական սկզբունքը: Դժվար չէ կռահել, որ հայկական կողմը, ենթադրելով, որ այդ հարցում չի ստանա որևէ աջակցություն, ի վերջո տեղի է տվել²¹:

Անդրկովկասյան երեք հանրապետությունների և Թուրքիայի միջև կոնֆերանսը հրավիրվեց Կարսում 1921 թ. սեպտեմբերի 26-ին և տևեց մինչև հոկտեմբերի 13-ը: Հայկական պատվիրակության կազմում էին արտգործժողկոմ Ասքանազ Մռավյանը (նախագահ) և ներգործժողկոմ Պողոս Մակինցյանը: Ռուսական կողմը ներկայացնում էր Լատվիայում Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Յակով Գանեցկին: Անդրկովկասյան գործերին քաջատեղյակ Բ. Լեգրանի փոխարեն Գանեցկուն Կարս ուղարկելը պատահական չէր: Ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, վերջինիս մասնակցությունը, պայմանավորված իր մոտե-

²⁰ Նույն տեղում:

²¹ Կարելի է կռահել, որ Բաքվի խորհրդակցությունից հետո՝ մինչև սեպտեմբերի վերջը՝ Կարսի կոնֆերանսի հրավիրումը, հայ-նախիջևանյան սահմանազատումը հապշտապ տեղի է ունեցել, անկասկած, հայկական կողմի մեկուսացման պայմաններում: Մոսկվայի կոնֆերանսից մինչև Կարսի կոնֆերանսը դիվանագիտական պայքարի մասին տե՛ս **Ջոհրաբյան Է.**, Կարսի կոնֆերանսի գումարման ճանապարհին, «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1978, № 3 (36), էջ 214-222:

ցումներով, ավելի ծեռնտու էր թուրք-ադրբեջանական կողմին, և նա չէր կարող հանդես գալ հայկական խնդիրների ջերմ պաշտպանի դերում:

Թուրքական պատվիրակության նախագահի՝ Բ. Կարաբեքիրի ընտրությունը ևս պատահական չէր: Թուրք-հայկական պատերազմում հաղթանակ տարած գեներալի ներկայությունը, ինչպես Ալեքսանդրապոլի կոնֆերանսում եղավ, հայկական պատվիրակության վրա հավելյալ հոգեբանական ճնշման միջոց էր: Կարաբեքիրն էլ, փաստորեն, առանց առարկության ստանձնեց կոնֆերանսի նախագահի պաշտոնը՝ կեղծ պատճառաբանությամբ, թե քանի որ Կարսը թուրքական քաղաք է, իրենք էլ հյուրընկալող կողմն են, հետևաբար, միջազգային փորձից ելնելով, պետք է ստանան նախագահելու իրավունքը:

Ռուսաստանի ներկայացուցչի ճնշման ներքո թուրքերը վերջապես համաձայնեցին անդրկովկասյան հանրապետությունների հետ ստորագրել մեկ միասնական պայմանագիր: Հայկական պատվիրակությունը կոնֆերանսին ներկայացրեց հայության պահանջները՝ Սուրմալուի գավառի Կողբի և Կաղզվանի աղահանքերից օգտվելու իրավունք, Անիի ավերակների և Ալեքսանդրապոլի դեպոյի գույքի վերադարձ, Նախիջևանի նկատմամբ հովանավորության իրավունքի շնորհում և այլն:

Կոնֆերանսի ողջ ընթացքում Քյազիմ Կարաբեքիրը բազմաթիվ շողոքորթող ելույթներ ունեցավ՝ պնդելով, որ Թուրքիան շահագրգռված է տարածաշրջանում կայուն խաղաղության հաստատումով, բարեկամաբար է տրամադրված խորհրդային հանրապետությունների նկատմամբ և չի

խուսափում «եղբայրական» հայ ժողովրդի պահանջներին ընդառաջ գնալուց, մասնավորապես՝ Ախուրյանի աջ ափին ընկած հայոց մայրաքաղաք Անիի ավերակները հայերին զիջելու հարցում: Միաժամանակ չհապաղեց ավելացնելու, որ ինքը լիազորված չէ փոփոխություններ կատարելու Մոսկվայի պայմանագրով նախատեսված սահմանագծում: Հոկտեմբերի 5-ին ստացվեց Թուրքիայի Ազգային մեծ ժողովի մերժողական պատասխանը՝ նույն պատճառաբանությամբ՝ չշեղվել Մոսկվայի պայմանագրից: Այսպես մերժվեցին հայկական պատվիրակության՝ թե՛ Անիի ավերակները վերադարձնելու և թե՛ մյուս պահանջները²²:

Թուրք-ադրբեջանական տանդեմը Յա. Գանեցկու աջակցությամբ կարողացավ հասնել Մոսկվայի պայմանագրի 3-րդ կետի 2-րդ հատվածով նախատեսված սահմանի ճշտմանը՝ Նախիջևան-Սուրմալու աղեղ-ելուստով ընդհանուր սահման ունենալուն: Այդ հարցով զեկուցեց Անդրկովկասի սահմանային հանձնաժողովի նախագահ Բ. Կուզնեցովը²³: Ցավալի է, որ ռազմավարական նշանակություն ունեցող այդ խնդրի առնչությամբ հայկական պատվիրակությունը առարկություններ չներկայացրեց: Ի դեպ, Կարս ժամանած Վեդիի թյուրքերը, ոգևորված Սադարակի ենթաշրջանը Հայաստանից անջատելու որոշումով, անկասկած՝ Թուրքիայի ու Ադրբեջանի ցուցումով, նույնպես հանդես եկան իրենց շրջանը Նախիջևանին կցելու պահանջով: Գոնե

²² Մանրամասն տե՛ս **Акопян А.**, նշվ. աշխ., էջ 113-119:

²³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 133, թթ. 17-18, Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), էջ 527:

այս հարցում Գանեցկին պաշտպանեց Հայաստանի դիրքորոշումը, և այդ պահանջը մերժվեց:

Պայմանագիրը, որի և՛ վերնագիրը, և՛ տեքստը աչքի էին ընկնում բարեկամության կեղծ ձևակերպումներով, ստորագրվեց հոկտեմբերի 13-ին՝ Մոսկվայի պայմանագրի կետերի համեմատությամբ առանց էական փոփոխությունների²⁴: Թուրքիան և Ադրբեջանը կրկին գործում էին միասնաբար, մանավանդ եթե խոսքը վերաբերում էր Հայաստանի օգտին որևէ փոփոխության: Խորհրդային Ռուսաստանն էլ, վերջիններիս իր ազդեցության ոլորտում պահելու մղումով, նրանց զիջումներ էր անում, առաջին հերթին՝ հայկական շահերի հաշվին:

Այսպիսով՝ Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերով ունեցավ տարածքային լուրջ կորուստներ: Թուրքիան և Ադրբեջանը, ընդհակառակը, ընդլայնեցին իրենց տարածքները և Սուրմալու-Սադարակ աղեղով ստացան ընդհանուր սահման: Ցավոք, Խորհրդային Ռուսաստանը, բավարարվելով Նախիջևանի նկատմամբ խորհրդային վերահսկողության հաստատումով, 1921 թ. արգելք չհանդիսացավ համաթյուրքականության միջանցքի ստեղծմանը, որը ԽՍՀՄ փլուզումից հետո բացվելու և դառնալու էր Հայաստանի, ինչու չէ, նաև Ռուսաստանի դեմ ռազմավարական ճանապարհ:

Վերոհիշյալ պայմանագրերը միջազգային իրավունքի տեսանկյունից անօրինական փաստաթղթեր էին, քանի որ

²⁴ Մոսկվայի պայմանագրի համեմատությամբ Կարսում մասնակիորեն փոփոխված պայմաններից թերևս ամենաէականը Ադրբեջանի՝ Նախիջևանի հովանավորությունը երրորդ կողմի չզիջելու վերաբերյալ պահանջի վերացումն էր (տե՛ս **Խաչատրյան Կ. Հ.**, նշվ. աշխ., էջ 54):

առաջինը կնքվել էր միջազգայնորեն չճանաչված կողմերի՝ քեմալական Թուրքիայի ու բուլղարական Ռուսաստանի, երկրորդը՝ նույն Թուրքիայի և նույնպես միջազգային իրավունքի սուբյեկտ չհանդիսացող անդրկովկասյան հանրապետությունների միջև:

Ցավալիորեն ճիշտ 100 տարի անց՝ 2020 թ. սեպտեմբեր-նոյեմբերին, պատմությունը կրկնվեց. Արցախը, ենթարկվելով թուրք-ադրբեջանական նոր ագրեսիայի, նոյեմբերի 10-ի Ադրբեջան-Հայաստան-Ռուսաստան եռակողմ հայտարարությամբ կորցրեց իր տարածքի մեծագույն մասը: Այդ հայտարարությունը ևս միջազգային իրավունքի տեսանկյունից անօրինական փաստաթուղթ է: Այն կնքվել է առանց Արցախի ներկայացուցչի մասնակցության, թեև տարածքների հարցն ամբողջությամբ վերաբերում էր Արցախի Հանրապետությանը: Այդ փաստաթուղթը, որ ոտնահարում էր նաև ՀՀ շահերը (Ադրբեջանին, այսպես կոչված, «զանգեզուրյան միջանցքի» տրամադրում, ռազմական գործողությունների դադարեցման պահին հայկական կողմի վերահսկողության տակ գտնվող տարածքների հանձնում Ադրբեջանին և այլն), առանց համաժողովրդական հանրաքվեի, Ազգային ժողովի կողմից վավերացման, դրվեց գործողության մեջ, ինչի հետևանքով ՀՀ-ն ունեցավ ինքնիշխանության, միջազգային սուբյեկտայնության լրջագույն կորուստներ:

Ներկայումս Թուրքիան և Ադրբեջանը, հանդես գալով տարածաշրջանում խաղաղություն հաստատելու պատրաստականության կեղծ կարգախոսներով, ձգտում են հայկական կողմին պարտադրելու պայմանագիր իրենց երկրների տարածքային ամբողջականությունը ճանաչելու վերա-

բերյալ, ինչը կնշանակի ինչպես 1921 թ. Կարսի, այնպես էլ 2020 թ. նոյեմբերի 10-ի անօրինական փաստաթղթերի օրինականացում արդեն ՄԱԿ-ի անդամ, այն է՝ միջազգային իրավունքի սուբյեկտ Հայաստանի կողմից:

АШОТ МЕЛКОНЯН

***Директор Института истории НАН РА
доктор исторических наук, профессор, академик
НАН РА***

ПАНТЮРКИСТСКИЕ ПРОГРАММЫ В МОСКОВСКОМ И КАРССКОМ ДОГОВОРАХ 1921 Г.

Резюме

Создана огромная историческая литература, касающаяся Московского и Карсского договоров. Тем не менее, некоторые вопросы до сих пор остаются малоисследованными. Их экспертиза очень важна и актуальна, даст возможность понять суть пантюркистских устремлений кемалистской Турции и Советского Азербайджана в 1921 г., глубже осмыслить сущность нынешних региональных процессов.

По Московскому договору армянские территории – Карсская область и Сурмалинский уезд, были переданы Турции. Турецко-армянская граница должна была проходить по руслу рек Ахурян – Аракс. Нахичеваньская область становилась автономной территорией под про-

тектором Азербайджана. Садаракский район Ереванского уезда планировалось отрезать к Нахичевани для удовлетворения стремления турецко-азербайджанского тандема: создать общий «тюркский коридор» через Сурмалу – Садарак.

Карсский договор закрепил положения Московского договора без существенных изменений. С точки зрения международного права эти договоры были незаконными документами. Армения понесла серьезные территориальные потери, а Турция и Азербайджан заложили основы пантюркистских программ на Кавказе.

Ключевые слова: Московский и Карсский договоры, Армения, Турция, пантюркизм, Кемаль, Чичерин, советская власть, Нахичевань, Сурмалу.

ASHOT MELKONYAN

Director of the Institute of History of NAS RA

***Doctor of Historical Sciences, Professor, Academician
of NAS RA***

**PAN-TURKISH PROGRAMS IN THE MOSCOW AND
KARS TREATIES OF 1921**

Summary

Rich historical bibliography has been created regarding the Moscow and Kars Treaties. Nevertheless, some significant issues still remain scarcely explored. It is

very important to examine and bring them up-to-date. The issue is about the implementation of pan-Turkic programs according to those treaties of 1921 in Transcaucasia which provides an in-depth understanding of the essence of the current complex regional processes arising from it.

According to the Treaty of Moscow, the Armenian Governorate of Kars and Surmalu district were given to Turkey. The Turkish-Armenian border was to cross the rivers of Akhuryan and Araks. The Nakhichevan region became an autonomous territory under the protectorate of Azerbaijan. It was planned to transfer the Sadarak region of Yerevan Governorate from Armenia to Nakhichevan to satisfy the desire of the Turkish-Azerbaijani tandem to have a common border through Surmalu-Sadarak.

The Treaty of Kars fixed the main points of the Moscow Treaty without significant changes. These two treaties were illegal documents from the point of view of international law. Armenia suffered serious territorial losses, while Turkey and Azerbaijan laid the foundations for pan-Turkic programs in Transcaucasia.

Key words: *Moscow and Kars treaties, Armenia, Turkey, pan-Turkism, Kemal, Chicherin, Soviet power, Nakhichevan, Surmalu.*

ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ԴԱՍԵՐ, ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

mkrtchyanlevon@gmail.com

***Քանայի բառեր** – համաշխարհային անվտանգություն, տարածաշրջանային մարտահրավերներ, ազգային անվտանգություն, հայրենիք–Սփյուռք միասնություն, համահայկական ներուժ:*

Վստահ եմ, որ սույն գիտաժողովի ընթացքում գործընկերներս մասնագիտական բարձր մակարդակով կներկայացնեն քննարկման առարկա հիմնահարցերի ողջ թնջուկը: Հարյուրամյակի ընթացքում կատարվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, տարբեր աշխարհընկալումների տեր, քաղաքականացված ու ապաքաղաքական գիտնականների, գործիչների ստվար բանակ փորձել է պատասխանել մեր ժողովրդի համար կենսական նշանակության հարցադրումներին: Քաղաքական և պատմագիտական հսկայական նշանակություն ունեցող թեմայի բարդությունն այն է, որ մասնագետները ստիպված են գնահատել մի ժամանակաշրջան, որ պատմականորեն դեռևս չի ամփոփվել: Գործընթացները, որ սկսվել են հարյուր և ավելի տարի ա-

ռաջ, այսօր իսկ շարունակվում են՝ ամենօրյա ազդեցություն ունենալով մեր տարածաշրջանի ժողովուրդների վրա:

21-րդ դարի քաղաքակրթական սրընթաց փոփոխություններն ստիպում են ազգերին կողմնորոշվել վազքի մեջ՝ երբեմն արմատական հեղաշրջում պահանջելով կենսագործունեության բոլոր ոլորտներում: Ընդ որում, յուրաքանչյուր ազգ պարտադրված է լինում գնահատել միջազգային և տարածաշրջանային խորքային գործընթացները՝ սեփական հարացույցով արժևորված: Ազգային ներուժի ծավալի ճիշտ հաշվարկումը, հավասարակշռության համակարգերում կուտակված հզորության ռացիոնալ կիրառումը դառնում են ազգերի, պետությունների կենսունակության ապահովման կարևոր նախապայման:

Տարբեր քաղաքակրթությունների, աշխարհաքաղաքական և տնտեսական շահերի բախումների և համագործակցության հազարամյակների կենտրոն մեր տարածաշրջանում այս ամենն ստեղծում է իրոք անկանխատեսելի զարգացումների համայնապատկեր: Ազդեցությունների առկա բարդ համակարգը հազարավոր թելերով առնչվում է աշխարհում գործող գրեթե բոլոր վճռորոշ ուժային կենտրոններին: Կապերը ոչ միայն ուղղահայաց և հորիզոնական են, այլև հաճախ անկանոն բնույթ են կրում: Մեր տարածաշրջանը թե՛ քաղաքական, թե՛ քաղաքակրթական առումով հանդես է գալիս իբրև անկայուն օբյեկտ՝ իր գիտական, դասական բնորոշումներով: Ընդ որում, կայունացման գործընթացները նման զգայուն կետերում ոչ պակաս հղի են վտանգներով, ինչ ընթացիկ անորոշությունը: Պատմությունը Միջին Արևելքին երբեմն նվիրել է համեմատական խաղա-

դության շրջաններ, երբ առաջացել է ուժի հավասարակշռություն: Որպես կանոն, այն հենվում է հակադրությունների հավասարակշռման և եղած խնդիրների սառեցման սկզբունքների վրա: Եղած հակասությունները ոչ միայն չեն լուծվում, այլև գնալով խորանում և խրոնիկական խոցի որակ են ստանում: Որպես արդյունք, երբ հերթական համաշխարհային ցնցումը քանդում է հավասարակշռության համակարգը, նման տարածքներում կուտակված հակասությունների խորքային շերտերը դուրս նետվելով վտանգավոր, պայթյունավտանգ իրավիճակ են ստեղծում ոչ միայն այդ հատվածի, այլև համաշխարհային անվտանգության համալիր համակարգի պահպանման առումով:

Հավասարակշռության ձևավորումն անկայուն օբյեկտների կառավարման գլխավոր ուղղորդիչն է: Անվտանգության ապահովումը տվյալ տարածքների ժողովուրդների գերխնդիրն է դառնում: Քաղաքական, տնտեսական և հոգևոր-մշակութային հակադրությունները պահանջում են ձևավորել գործընթացների կառավարման բաց, առավել նուրբ համակարգեր՝ ծավալելով գործունեություն գործունեության վրա: Պատկերավոր ասած՝ անկայուն օբյեկտի կառավարումը, ըստ էության, նշանակում է կառավարվող անկայունություն:

Պետք է նկատի ունենալ, որ անկայունության հավասարակշռման գործընթացները ոչ միայն արտաքին դաշտում են, այլև պետությունների ներհասարակական զարգացումներում: Որպես կանոն, այս երկրներում առկա են ազգային անվտանգությանն առնչվող հիմնահարցերի սրված ընկալում, օտար գաղտնի ծառայությունների առավել բազ-

մաքնույթ և ակտիվ աշխատանք, արտաքին ազդեցություններին ենթարկվածության մեծ աստիճան, քաղաքական ու տնտեսական դաշտերի անկատարություն և այլն: Հասարակության մեջ տարիներ շարունակ տիրող այս իրավիճակն առաջացնում է անկումային, նիհիլիստական տրամադրություններ: Առաջանում են ներքաղաքական գործոններ, որոնք հաշվի չառնելու պարագայում ուղղակի սպառնալիք կարող են դառնալ պետության համար: Նշված խիստ ընդհանուր բնորոշումներից իսկ պարզ է դառնում, որ այսօր առավել ծանր և պատասխանատու մարտահրավեր է նետված հատկապես Հայկական լեռնաշխարհի, Հարավային Կովկասի և Իրանի բնիկ ժողովուրդներին: Նրանք նոր ժամանակներում, նոր կարգախոսների և գաղափարախոսությունների բիրտ ճնշման պայմաններում ստիպված են իրենց հազարամյա փորձառությամբ դիմագրավել և հակակշռել իրենց գոյությանը սպառնացող հին վտանգներին: Հատկանշական է, որ տարածաշրջանում դեռևս 1890-ականներից սկսված նոր ազգերի ձևավորման գործընթացները շարունակվում են ագրեսիվ ուժային դրսևորումներով: Անատոլիական թրքության օրինակով արդեն Հարավային Կովկասում հընթացս հորինվում են «պատմական հիմքեր», փորձ է արվում բնիկ ժողովուրդներից յուրացրած տարածքների, մշակութային-սովորութային ժառանգության թալանի միջոցով կառուցելու «հայրենիք» և անհանդուրժողական, ծայրահեղ ազգայնամոլական գաղափարախոսություն որդեգրած պետականություն:

Փորձության մեծ չափաբաժինը, ցավոք, կրկին հայ ժողովրդին է: Քննության են ենթարկվում ոգեկան ամրութե-

յան, ազգային համախմբման և ինքնակառավարման ունակությունները: Այժմեական է դառնում սեփական արժեքների և հոգևոր գերակայության ապահովմանը միտված զինանոցի արդիականացումն ու ճիշտ օգտագործումը: Նոր բովանդակություն և ձև է ստանում նաև վաղնջական ժամանակներից մեզ ուղեկցող ազատագրական պայքարի դիլեման՝ իր երկու ճյուղավորումներով՝

- Ներսես Մեծի տեսիլքը, իմա՝ օտարի օգնությամբ ազատագրվելու, հզոր, հոգեհարազատ ազատարարին փարվելու ուղղությունը,

- օտար տիրապետության դեմ անվերապահորեն պայքար մղելու, հայ ազգային էպոսի՝ սեփական հող ու ջրից ուժ ստացող Սասունցի Դավթի կերպարով մարմնացած ուղղությունը:

Անկախ պետականության կառուցման 30 տարիների ընթացքում հասել ենք թերևս ամենապատասխանատու և վտանգավոր եզրագծին: Հասարակության մեջ գերակայող հուսահատական պարտվողական տրամադրությունները հանգեցրել են որակական տեղաշարժի ընդհանուր ընկալումներում: Մասնավորապես առկա են՝

- ա) որոշակի մերժողական վերաբերմունք ոչ միայն վերջին տասնամյակների, այլև ընդհանրապես անցյալի ձեռքբերումների նկատմամբ,

- բ) զրոյականին մոտ հակազդեցություն աշխարհաքաղաքական ահագնացող ցնցումների առաջացրած սպառնալիքներին,

- գ) պետականության ծախողման, տնտեսական հնարավոր կոլապսի վտանգի զգացողության բացակայություն:

Հուսալքության ալիքը ժողովրդի մեջ առաջացնում է պասիվ պայքարի՝ երկիրը լքելու, օտարին ապավինելու, սեփական անզորությունն ամրագրելով գոյատևելու ճանապարհով ընթանալու տրամադրություններ:

Հարյուրամյակի ընթացքում հայ ժողովուրդը մի քանի անգամ ստիպված է եղել հաղթահարել նման իրավիճակներ: Եվ ազգային հարատևման բանալի լուծումները եղել են անհամաչափ պատասխաններում: Վերհառնման յուրաքանչյուր փուլում դրվել է ոգու բարձրացման, ազգային հպարտության, աշխարհում արժանապատիվ ապրելու իրավունքին արժանանալուն ուղղված ճիգը: «1915» և «Նեմեսիս» գործողություն, որ փոխեց հայի կերպարի ընկալումն աշխարհում ու ներազգային կյանքում, Առաջին հանրապետության կայացման դժվար, թվում է՝ դատապարտված պայքար և հայոց անկախ խորհրդարանի՝ Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստանի տեսլական, հանրապետության անկում և Լեռնահայաստանի ազատագրական պայքար, ապա՝ Սփյուռքի ձևավորում, տարոնականություն, ցեղակրոն ուխտ, հայրենակցական միությունների, ազգային կառույցների հիմնում, Հայոց ցեղասպանության ճանաչման 1960-70-ականների շարժում և վրիժառուական պայքար: Կարելի է երկար թվարկել այս շարքը: Ընդդիմախոսներն այս ամենը կարող են համարել ռոմանտիզմ, ոչ ռեալիստական քաղաքականություն, կոչել իրատեսության, քննադատել և մեղադրել արմատականության մեջ:

Մեր կարծիքով՝ իրականությունն էքզիստենցիալ հարթության մեջ է: Հայ ժողովուրդն այս տարածաշրջանում ստիպված է եղել և ստիպված է հակազդել իր նկատմամբ ի-

րականացվող ծրագրված ոչնչացման, դուրսմղման դարավոր քաղաքականությանը: Մեր հարևանների օրակարգում բացակայում է կենսունակ և ինքնաբավ Հայաստանի գոյության տարբերակը: Այն Հայաստանը, որին նրանք «ողորմաճաբար» կհամաձայնեն գոյության «իրավունք» տալ, երբեք չի կարող բավարարել արժանապատվություն ունեցող և արժեհամակարգ ձևավորած ազգի չափանիշները:

Թշնամական ուժերի կողմից անկլավի վերածված մեր մեծ հայրենիքի փոքր հատվածում պատասպարված հայության բեկորներն այսպիսով է, որ պարտադրված են պատասխանելու հիմնական հարցին՝ պե՞տք է դիմագրավել հարևան թուրքական պետությունների նվաճողական քաղաքականությանը, ինչո՞ւ և ամենակարևորը՝ ինչպե՞ս («ինչո՞ւ»-ի և «ինչպե՞ս»-ի միասնականությունն ու փոխապայմանավորվածությունը հստակ է): Կամ, փոքր-ինչ արդիական ձևակերպմամբ, հայ ժողովուրդն ա՞զգ է՝ բառի քաղաքակրթական նշանակությամբ, և կարո՞ղ է արդյոք աշխարհին ներկայանալ յուրահատուկ կոնցեպտով, որ չկոչվի «failed nation» և արժանի լինի հայրենիքում ինքնիշխան պետականություն կառուցելու: Եթե այո, ի՞նչ պետք է անել այդ ճանապարհին:

Աշխարհաքաղաքական ներկայիս խորքային գործընթացները և հեռանկարային զարգացումները հաշվի առնող՝ օտար ազդեցությունից զերծ համահայկական ներուժի արդյունավետ գործադրման ու տիրապետման համակարգի ձևավորումն այլընտրանք չունի: Համակարգերը տարբերվում են հակահամակարգերից նրանով, որ՝

ա) հավասարակշռված են և կառուցված հակադրությունների պայքարի ու միասնության սկզբունքի վրա,

բ) ունեն իրական բովանդակություն, որում հստակ սահմանված են ռազմավարական նշանակության խնդիրներն ու մարտավարությունը, որը հնարավոր չէ ներկայացնել իբրև ռազմավարական առաջադրանք,

գ) ձևը համապատասխանում է բովանդակությանը և բխում է նրանից,

դ) ներդաշնակ են և նպաստում են առաջընթացին, բացառում են ավերելու, քանդելու և «նորը» կառուցելու բուլշակիյան մեթոդաբանությունը:

Այս համակարգը պետք է ունենա գաղափարախոսական ամուր հենք, նպատակի, խնդիրների ու միջոցների ներդաշնակորեն փոխլրացվող, ճշգրտված ռազմավարական կառույց: Մեր չափումը պետք է հենված լինի աշխարհասփյուռ ազգի կարգավիճակի ամրապնդման վրա՝ հայաստանակենտրոն վեկտորի անվերապահ գերակայության սկզբունքով:

Հայոց ազգային գաղափարախոսության հենքը ձևավորվել է 19-րդ դարի վերջերին սկսված հայկական հեղափոխության տեսլականով և արդիական է հատկապես այսօր, այն է՝ հայ ժողովրդի հզոր, ազատ, բարեկեցիկ կենսագործունեության ապահովում ամբողջական և անկախ հայրենիքի տարածքում: Մշակված է հայկական շարունակականության ապահովման՝ հանգրվանային ձեռքբերումներով դեպի նպատակ շարժվելու մարտավարությունը: Անհրաժեշտ է արդիականացնել, 21-րդ դարի ցանցային բարդ պահանջնե-

րին համահունչ մշակել արյամբ ու անսահման նվիրումով սրբագործված հայեցակարգը:

Հայ ազգի լինելիությանն ուղղված նպատակների ամրագրմանը զուգընթաց՝ անհրաժեշտ է հստակ ձևակերպել ՀՀ-ում, ԱՀ-ում, Զավախքում և Սփյուռքի համայնքներում մերօրյա օրակարգերն ու թիրախները, լինեն դրանք քաղաքական, հայապահպան, կրթամշակութային թե ընկերային-տնտեսական բնույթի: Դա պահանջելու է տքնաջան աշխատանք հետևյալ ուղղություններով՝

ա) ռազմավարական ծրագրավորում՝ հայեցակարգերի, թիրախային և ոլորտային նպատակներ հետապնդող ծրագրերի մշակում, համադրում, գործադրման ժամանակացույցերի սահմանում,

բ) գործամիջոցների և գործադրման դաշտերի հստակեցում ու համադրում,

գ) մարտավարական նշանակության խնդիրների առանձնացում և ըստ առաջնահերթության դասակարգում,

դ) յուրաքանչյուր ծրագրի ենթատեքստում հնարավոր համախոհ և հակադիր ուժերի տեղաբաշխման քարտեզի մշակում,

ե) տեղեկատվական ընդհանուր, մրցունակ դաշտի ստեղծում, տեղեկատվական-քարոզչական նոր որակի գործառույթների սահմանում,

զ) հայ ժողովրդի կարողունակության «գույքագրում» չորս միջոցներով՝ մարդկային, կազմակերպական, ֆինանսական և հոգևոր-մշակութային:

Նշված ուղղություններով հետևողականորեն առաջ շարժվելու պարագայում կկարողանանք մշակել ռազմավա-

րական մարտավարության մեր մեթոդաբանությունը, ժամանակակից աշխարհում գնահատել սեփական ներուժը: Հստակ չափորոշիչներով կարելի է իմաստավորել հայ ազգի տեղն ու դերը, ուրվագծել հնարավորությունների սահմանագծերը: Կարևոր է ճիշտ կողմնորոշվել հատկապես գործադաշտերի և գործամիջոցների ընտրության հարցում: Օտարների կողմից մատուցվող, գեղեցիկ փաթեթավորված և համընդհանուր քաղաքակրթական արժեքների տեսքով մեզ հրամցվող շատ գործիքակազմերի չհաշվարկված կիրառումը կարող է հաճախ ավերիչ հետևանքների հանգեցնել:

Ազգային շահերի հաշվառման վրա հիմնված մեթոդաբանության հիմնական խնդիրը նմանատիպ վտանգների չեզոքացումն է, զարգացման սահուն ընթացքի ապահովումը: Այն անհրաժեշտաբար առաջ է բերելու արմատական փոփոխություն հայության հավաքական աշխարհընկալման մեջ: Պետականության բացակայության հարյուրամյակները, ցավոք, մեծապես խեղաթյուրել են ազգային բնավորության շատ հատկանիշներ: Հասկանալի է, որ անհրաժեշտ է երկարատև, հետևողական ճիգ՝ իրավիճակն արմատապես և որակապես փոխելու համար: Սուվերեն պետականաշինության մեթոդյա մարտահրավերի հաջողության գրավականը հետևյալ երեք կարևոր սկզբունքների պահպանումն է.

ա) Պետք է արմատապես փոխել պարտվողական, հարմարվողական մտածելակերպը՝ գոյապահպանության չափումներից անցնելով լինելիության մտածողությանը: Երկիրն իր փոքրության պատճառով չունի «թիկունք» և «սահման» հասկացությունները: Ըստ այդմ, ինչպես ՀՀ և ԱՀ քաղաքացիները, այնպես էլ աշխարհասփյուռ հայությունը

պարտավոր է ձևավորել անհամաչափ հակազդեցության, սեփական կարևոր առաքելության գիտակցման վրա հիմնված կենսագործունեություն:

բ) Միայն ազատ, իր իրավունքներին հետամուտ հասարակությունն է ունակ պաշտպանելու իր հայրենիքը:

գ) Հայաստանը պետք է արտագաղթող բնակչություն ունեցող երկրից վերածվի ներգաղթող հայության երկրի: Ընդհանրապես հայ լինելը պետք է գրավիչ լինի և՛ հոգևոր-բարոյական տեսանկյունից, և՛ պաշտպանվածության ու բարեկեցության առումներով:

Համահայկական ներուժի գնահատումը հնարավորություն կտա հասկանալու հայկական քաղաքակրթական գործոնի հզոր ուժը, հասկանալու, որ մեր ժողովուրդը ոչ միայն պատմականորեն, այլև ներկայումս համաշխարհային հոգևոր արժեհամակարգի ակտիվ շինարարներից է՝ իր որոշակի առաքելությամբ: Հայ ուժականության աստիճանն է, որ կարող է ձևավորել այսօրվա գործնական քաղաքականությունը՝ պասիվ օբյեկտից ակտիվ սուբյեկտի վերածվելու հնարավորությամբ:

Հայաստանում իշխանությունները, ընդդիմությունը, ժողովուրդը պիտի գիտակցեն հայկական ազգային օրակարգային հարցերի միասնականությունն ու փոխկապակցվածությունը, իսկ Սփյուռքում պետք է ընդունեն, որ երազն իրականություն դարձնելու ուղին Հայաստանի Հանրապետության և Արցախի հզորացումն է. մնացյալը պատրանք է և չի դիմանա ժամանակի քննությանը:

ЛЕВОН МКРТЧЯН
кандидат исторических наук, доцент
**СТОЛЕТНИЕ УРОКИ, СТРАТЕГИЧЕСКИЕ И
ТАКТИЧЕСКИЕ ВОПРОСЫ**

Резюме

Для сохранения армянской государственности необходимо кардинально изменить пораженческую, адаптивную ментальность, перейдя от измерений выживания к мышлению бытия. Надо четко осознавать, что только свободное общество, отстаивающее свои права, способно защитить Родину. Армения должна превратиться из страны с эмигрантским населением в страну армян-иммигрантов. В целом быть армянином должно быть привлекательно и с морально-нравственной точки зрения, и с точки зрения защищенности и личного благополучия. Власти, оппозиция и народ в Армении должны понять единство и взаимодополняемость армянской национальной повестки, а в Диаспоре должны признать, что путь к осуществлению мечты – укрепление Республики Армения и Арцаха.

Ключевые слова: *глобальная безопасность, региональные вызовы, национальная безопасность, единство Родины и Диаспоры, общеармянский потенциал.*

LEVON MKRTCHYAN

Candidate of Historical Sciences, Associate Professor
**A 100-YEAR OLD LESSONS, TACTICAL AND STRATEGIC
ISSUES**

Summary

In order to preserve the Armenian statehood, it is necessary to radically change the losing, adaptive mentality, passing from the survival measurements to the thinking of being. We must clearly realize that only a free society that pursues its rights is able to defend the homeland. Armenia must change from a country with an emigrant population to a country of immigrant Armenians. In general, being Armenian should be attractive both from a spiritual and moral point of view and in terms of protection and personal well-being. The authorities, the opposition and the people in Armenia must understand the unity and complementarity of the Armenian national agenda, and in the Diaspora they must accept that the way to make the dream come true is to strengthen the Republic of Armenia and Artsakh.

Key words: *Global security, regional challenges, national security, Homeland-Diaspora unity, pan-Armenian potential.*

RICHARD G. HOVANNISIAN

*Doctor of Historical Sciences, Foreign Member of NAS
RA, Professor at the University of California, Los Angeles
(UCLA)*

THE ROAD TO MOSCOW AND KARS

hovannis@history.ucla.edu

Key words: *Treaty of Sèvres, Republic of Armenia,
the Allies, Soviet Russia, Turkey, Treaty of Moscow,
Treaty of Kars.*

This presentation recounts major factors leading to the treaties of Moscow and Kars in 1921. It assesses the grounds for Armenian aspirations after World War I, the mixed responses of the victorious Allied Powers in the postwar period, and the gradual abandonment of repeated solemn pledges regarding the future of Armenia and the Armenian people (beginning already in the Mudros Armistice in October 1918). Reluctantly, the Allies created a united Armenian state on paper in the Treaty of Sèvres in August 1920 without having any serious intent of enforcing its terms, and they soon felt themselves relieved of all obligations when the small existing Armenian republic was sovietized at the end of 1920.

The Armenian government, on its part, was unable to bring itself to compromise on the hallowed goal of

achieving a free, independent, and united Armenian state. That principle was enshrined in the Act of United Armenia proclaimed on May 28, 1919. But by December 1920, the Armenians had to face the bitter reality of defeat by the Turkish Nationalist forces and the unimaginable territorial losses dictated in the Treaty of Alexandropol that same month.

The Armenian leaders belatedly turned to Soviet Russia for support. Ideologically opposed to the Bolsheviks and their eventual control of most of the former Russian Empire, the Dashnaktsakan government of Armenia did at last enter into negotiations with the Soviet authorities in the summer of 1920 based on premise of Soviet recognition of the independence of Armenia as a sovereign state, the transfer of Armenian refugees in Russia to the Armenian republic, various forms of assistance, and hopefully positive regulation of the status of Mountainous Karabakh, Zangezur, and Nakhichevan. The Armenian side was encouraged by the sympathy of the Soviet Commissariat for Foreign Affairs. But in critical issues, the Commissariat was overruled by the predominant Soviet leaders – Lenin and Stalin. There was, after all, the Turkish factor that had to be weighed in any decisions regarding Armenia. The role of Turkey loomed large in the calculations of the Soviet policymakers.

Both the Soviets and the Turkish Nationalists were regarded as outlaws and renegades by the Allied Powers, and both were subject to the perils of encirclement and suppression. There was an urgent need, therefore, for the two struggling revolutionary regimes to collaborate against the West. Mustafa Kemal skillfully manipulated this vulnerability to his great advantage. Several informal Soviet-Turkish exchanges were followed by the first formal Turkish mission to Moscow in mid-1920. Thus, while an Armenian delegation was seeking recognition and support for its country, a rival Turkish delegation was well on its way to securing Soviet commitments for financial, military, and diplomatic assistance.

Emboldened by the receipt of the first deliveries of Soviet gold and weapons (even while the Soviet Russia was publicly calling for a peaceful or mediated settlement of Armenian-Turkish disputes), Mustafa Kemal gave the order to General Kazim Karabekir to advance into Sarikamish in the Kars *oblast'* (province) in September of 1920. While the Soviets attempted to moderate the Turkish advances, nothing serious was done to prevent the sweeping penetration into the entire province of Kars, the counties of Surmalu and Nakhichevan, and even Alexandropol and its environs.

In the West, rousing, emotional speeches echoed in the League of Nations and in various legislative bodies, but

intervention was out of the question, as even sympathetic divisions of government, such as the British Foreign Office, now rejected calls to assist Armenia. And when it soon became known that Armenia had capitulated and transformed into a Soviet socialist state, any lingering sense of obligation or guilt was conveniently shed.

Abandoned and forlorn, the Armenian government negotiated with Soviet envoy Boris Legran on the best possible terms for the sovietization of what was left of the Armenian republic. A key point in the agreement of December 2, 1920, was the guarantee that Soviet Russia would recognize the boundaries of the Soviet Armenian state as they existed prior to the Turkish invasion of Kars in September. This meant that at least the former so-called Russian Armenian territories would be included in Soviet Armenia and implied that Soviet Russia would compel its Turkish allies to withdraw to the prewar boundary.

But the Turkish side had no intention of relinquishing its gains, and this was solidified by the fact that shortly after the agreement of December 2, the new Soviet authorities of Armenia repudiated the document and began to implement stringent policies associated with “War Communism”. At this mutually opportune moment, in March 1921, Soviet Russia and Nationalist Turkey formalized their relationship in a friendship treaty that

included the permanent exchange of ambassadors and missions, the pledge not to recognize any international agreement or treaty to which either party objected, and other points particularly beneficial to Mustafa Kemal's Ankara government. In this Treaty of Moscow, the territorial dimension was again negotiated at the expense of Armenia. In apparent exchange for allowing the port of Batum to remain in the Soviet sphere, Turkish possession of the county of Surmalu in province of Erevan was affirmed, together with the entire Kars *oblast'*, while Nakhichevan was confirmed to be under Azerbaijani jurisdiction. Ironically, Soviet Armenia's foreign commissar, Alexander Bekzadian, was excluded from the negotiations in Moscow because of Turkish objections. Thus, the fate of Soviet Armenia was determined without even the token participation of Armenian representatives. It remains to be examined whether the anti-Soviet February uprising in Armenia, beginning in February 1921, contributed to this situation.

What followed at Kars in October 1921 was a mere formality in legitimizing what had been done without Armenian participation in Moscow. Now, the representative of Soviet Armenia, along with those of Soviet Azerbaijan and Soviet Georgia, assigned their signatures to the Treaty of Kars in this preordained arrangement between Turkey and the Transcaucasian Soviet republics. The long road to

Moscow and Kars, initially filled with high hopes, had rapidly descended into self-righteous abandonment and ultimate betrayal, reaching a very bleak terminus for Armenia and the Armenian people.

It is left to others to discuss the legal ramifications of these treaties and to address what is the standing and status of the Treaty of Kars, especially after the demise of Soviet Armenia and its replacement by a successor independent state.

ՌԻԶԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ
արտասահմանյան անդամ, Կալիֆոռնիայի
համալսարանի (UCLA) պրոֆեսոր
ՃԱՆԱՊԱՐՀ ԴԵՊԻ ՄՈՍԿՎԱ ԵՎ ԿԱՐՍ
Ամփոփում

Հոդվածում քննվում են Մոսկվայի և Կարսի պայմանագրերի կնքմանը հանգեցնող գործոնները: Մի կողմից՝ դաշնակիցների՝ տված խոստումները չկատարելու, մյուս կողմից՝ 1920 թ. թուրք-հայկական պատերազմում կրած պարտության հետևանքով Հայաստանը հայտնվեց ծանր կացության մեջ: Խորհրդային Ռուսաստանը, որի աջակցությանն ապավինեց Հայաստանը, Հայկական հարցում մեծապես նախապատվությունը տվեց Թուրքիային, ինչի հետևանքով Հայաստանը կանգնեց տարածքային լուրջ կորուստների փաստի առաջ:

Քանիքի բաներ – Սևրի պայմանագիր, Հայաստանի Հանրապետություն, դաշնակիցներ, Խորհրդային Ռուսաստան, Թուրքիա, Մոսկվայի պայմանագիր, Կարսի պայմանագիր:

РИЧАРД ОГАНЕСЯН

*доктор исторических наук, иностранный член НАН
РА, профессор Калифорнийского университета
(UCLA)*

ДОРОГА НА МОСКВУ И КАРС

Резюме

В докладе обсуждаются факторы, приведшие к Московскому и Карсскому договорам. С одной стороны, невыполнение союзниками данных ими обещаний, с другой стороны, поражение в турецко-армянской войне 1920 г. поставили Армению в тяжелое положение. Советская Россия, на поддержку которой надеялась Армения, в армянском вопросе главным образом отдавала предпочтение Турции, ставя Армению перед фактом серьезных территориальных потерь.

***Ключевые слова:** Севрский договор, Республика Армения, союзники, Советская Россия, Турция, Московский договор, Карсский договор.*

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ԿԱՐՍԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ «ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ»

ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ

**ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նոր և
նորագույն պատմության բաժնի առաջատար
մասնագետ, պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր**

ararathakobyan47@gmail.com

Բանալի բառեր – Մոսկվայի պայմանագիր, Կարսի
պայմանագիր, Քյազիմ Կարաբեքիր, Յակով Գանեցկի,
Նախիջևանի ԻԽՍՀ, Անի:

Այս հոդվածի թեմայի ընտրության հարցում հայոց
պատմությանը քիչ թե շատ ծանոթ ունկնդիրը կարող է զար-
մանք արտահայտել, թե ինչ խոսք կարող է լինել ռազմավա-
րական նպատակներով, կառուցվածքով, բովանդակությամբ
ու արդյունքներով միմյանց տրամաբանական շարունակու-
թյունը կազմող ու գրեթե նույնական այդ երկու (Մոսկվայի և
Կարսի) պայմանագրերի համեմատական վերլուծության մա-
սին: Ի պատասխան ակամա ծագող այս հարցադրմանը՝ ա-
սենք, որ նման վերնագիր ենք ընտրել հատուկ դիտավո-
րությամբ ու նաև հեգնորեն, որպեսզի ի ցույց դնենք հակա-
ռակը: Եվ, իրոք, ի՞նչ համեմատական վերլուծության մասին
կարող է խոսք լինել, երբ կնքվել են միջազգայնորեն տար-
բեր երկու պայմանագրեր, որոնք, սակայն, ոչ միայն նման

են իրար, այլև, ըստ էության, գրեթե նույնական են: Նման վերտառությամբ հոդվածը, անշուշտ, առանձնապես հատուկ ասելիքի բացակայության պատճառով հեշտացնում է հոդվածագրի գործը: Այդ նմանությունն այնքան ակներև է, որ մենք ավելի նպատակահարմար գտանք «վերլուծություն» բառն առնել չակերտների մեջ: Այդուհանդերձ, այդ պայմանագրերում կան մի քանի ոչ սկզբունքային կազմակերպական-աշխատակարգային բնույթի հարցեր ու ձևակերպումներ, պայմանագրերի հոդվածային ոչ հաջորդական դասավորություններ, հատկապես Կարսի պայմանագրի՝ թուրք-անդրկովկասյան խորհրդաժողովում քննարկման ու վեճի առարկա դարձած մի քանի հարցեր, որոնց լուսաբանմանն էլ հարկ ենք համարում անդրադառնալ:

Ի դեպ, պատմական զուգահեռներ անցկացնելու առումով փորձեցինք մի շարք չափումներով իրար մոտ 1878 թ. Սան Ստեֆանոյի և Բեռլինի միջազգային պայմանագրերը համեմատել 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի հետ: Եվ ի՞նչ ենք տեսնում: Առաջին դեպքում թուրք-անդրկովկասյան հատվածում, այնուամենայնիվ, տարածքային-սահմանային փոփոխություն կատարվել է (Մեծ Բրիտանիայի պահանջով, փաստորեն, ի վնաս հայերի), այն է՝ Բեռլինի պայմանագրով Բայազետի գավառն ու Ալաշկերտի հովիտը վերադարձվեցին Թուրքիային, իսկ Կարսի պայմանագրով, հետևելով Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածի պարտադրանքին, տառացիորեն տարածքային-սահմանային ոչ մի փոփոխություն չի կատարվել. հայ-թուրքական պետական սահմանագիծը դարձյալ Ախուրյան և Արաքս գետերն էին, ինչը պահպանվում է մինչ օրս:

Նախ արձանագրենք, որ պատմաքաղաքական դեպքերի ու հանգամանքների բերմամբ բիրտ ուժով ու հարկադրանքով արդեն խորհրդայնացած Հայաստանին ու հայ ժողովրդին պարտադրվեց Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի (իրականում մարտի 18-ի) ռուս-թուրքական 16-հոդվածանոց «բարեկամության և եղբայրության» պայմանագրի կրկնօրինակը հանդիսացող Կարսի 1921 թ. հոկտեմբերի 13-ի «ազգերի եղբայրության և անխախտ ու անկեղծ բարեկամության» մասին այս անգամ արդեն 20 հոդվածից բաղկացած թուրք-անդրկովկասյան պայմանագիրը: Ինչպես նկատում ենք, նույնիսկ այդ պայմանագրերի խորհրդանիշը հանդիսացող պրեամբուլաներն են գրեթե նույնական: Արդեն 100 երկարուձիգ տարիներ հայ ժողովրդի հիշողության մեջ շարունակում են պահպանվել այդ անարդար ու շատ կողմերով ապօրինի պայմանագրերը: Ընդգծենք նաև, որ այս գիտաժողովում արծարծվող նյութը հույժ արդիական է նաև Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման, Թուրքիայի՝ պատասխանատվության ենթարկվելու և հատուցման գործընթացների և առհասարակ հայ-թուրքական հարաբերությունների ենթադրվող կարգավորման համապատկերում:

Պատմական իրողությունն այն է, որ միջազգայնորեն չճանաչված երկու երկրների՝ քեմալական Թուրքիայի և բուլղարիկյան Ռուսաստանի կառավարությունները կնքել են պայմանագիր և վճռել մի երրորդ երկրի՝ Երևանի 1920 թ. դեկտեմբերի 2-3-ի հայ-ռուսական (Դրո-Լեզրան) համաձայնագ-

րով անկախ համարվող Հայաստանի տարածքային-սահմանային հարցերը՝ առանց վերջինիս գիտության ու մասնակցության: Հենց այդ պայմանագրով արդեն խորհրդայնացած Հայաստանը փաստորեն պարփակվեց մոտ 30 հազ. քառ. կմ տարածքի սահմաններում: Եվ որպեսզի Մոսկվայի պայմանագրի ընդունած վճիռն օրինականացվեր (տվյալ դեպքում՝ Հայաստանի համար, որն ամենաշատն էր տուժելու), մի քանի ամիս անց՝ 1921 թ. հոկտեմբերի 13-ին, Կարսում ՌՍԴԽՀ կառավարության հանձնարարականով կնքվեց դրա նմանակը հանդիսացող մի պայմանագիր, այս անգամ՝ Հայաստանի պատվիրակության ղեկավար Ա. Մռավյանի մասնակցությամբ:

Կարսում կնքվելիք պայմանագրի՝ Մոսկվայի պայմանագրի հետ պարտադրաբար նույնական լինելու մասին է իրավական առումով վկայում վերջինիս 15-րդ հոդվածը: Այն պարտավորեցնում էր ՌՍԴԽՀ կառավարությանը քայլեր ձեռնարկելու, որպեսզի անդրկովկասյան հանրապետությունները իրավաբանորեն ճանաչեին Մոսկվայի պայմանագրով նշված իրենց սահմաններն ու հոդվածային մյուս պայմանները²⁵: Դրա համար անհրաժեշտ էր, որ նույնաբնույթ պայմանագիր կնքվեր Թուրքիայի և Անդրկովկասի երեք հանրապետությունների միջև: Ընդ որում, խորհրդային կողմից Կարսի խորհրդաժողովում գլխավոր դերակատար, հին բոլշևիկ, դիվանագետ Յա. Գանեցկու առաքելության նպատակը պիտի լիներ՝ ա) հանձին Խորհրդային Ռուսաստանի՝ դիվանագիտական «աջակցություն» ցույց տալ Անդրկովկա-

²⁵ Տե՛ս Պայմանագիր 1921 թվականի մարտի 16-ի՝ Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ, Երեւան, 1993, էջ 6:

սի խորհրդային հանրապետություններին և բ) հետևել Մոսկվայի պայմանագրի սկզբունքների պահպանմանը²⁶։ Նա գործնականում Անդրկովկասի միացյալ պատվիրակության ղեկավարն էր։

Մոսկվայի և Կարսի պայմանագրերի քննության ու վերլուծության առնչությամբ նախ հարկ է կամա թե ականա որոշ անդրադարձ կատարել նաև դրանց նախորդած՝ 1920 թ. դեկտեմբերի 2-ի լույս 3-ին Անգորայի կառավարության կողմից բիրտ ուժով ու սպառնալիքի գործադրմամբ պարտադրված և իրավական ուժ, ուստի և միջազգային ճանաչում չունեցող Ալեքսանդրապոլի հայ-թուրքական պայմանագրին, որը տասնամյակներ շարունակ շահարկվել է պատմագիտական ու հուշագրական գրականության մեջ, իբրև թե դա է եղել Մոսկվայի և Կարսի ծանրագույն պայմանագրերի կնքման հետևանքով Հայաստանի ունեցած տարածքային-սահմանային և այլ կորուստների հիմնական պատճառը։ Բայց իրականում Ալեքսանդրապոլի և Մոսկվայի պայմանագրերով հայ-թուրքական սահմանների տեղանշումներն անգամ համեմատելիս դժվար չէ համոզվել, որ տարածքային-սահմանային առումով Ալեքսանդրապոլի պայմանագիրը ոչնչով չի զիջել Մոսկվայի և դրա կրկնօրինակ Կարսի պայմանագրերին։ Ավելին՝ եթե Ալեքսանդրապոլի պայմանագրով հայ-թուրքական սահմանը Կարսի մարզի հատվածում անցնում էր Թիֆլիս, Մեծ Ղմլու և Ղըզլդաշ գյուղերից դեպի արևմուտք, այսինքն՝ հիշյալ բնակավայրերն իրենց շրջակա տարածքներով ներառվում էին Հայաստանի կազմում, ապա Մոսկվայի, նաև Կարսի պայմա-

²⁶ Տե՛ս «Խորհրդային Հայաստան», Երևան, 16 հոկտեմբերի 1921 թ.։

նագրերով, ընդհակառակը, հայ-թուրքական սահմանագիծը փաստորեն անցկացվել է այդ գյուղերից դեպի արևելք, այսինքն՝ դրանք թողնվել են Թուրքիայի կազմում: Ճանաչված պատմաբան-քարտեզագետ Բ. Հարությունյանի քարտեզագրական դիտարկումներով ու կատարած մոտավոր հաշվումներով՝ Մոսկվայի ու Կարսի պայմանագրերով, Ալեքսանդրապոլի պայմանագրի համեմատ, Թուրքիային է անցել 250 քառ. կմ տարածք²⁷: Եթե նկատի առնենք, որ Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաստանին էր անցնում նախկին Կարսի մարզի հյուսիսարևելյան շրջանից 600 քառ. կմ տարածք, իսկ Մոսկվայի ու Կարսի պայմանագրերով շուրջ 250 քառ. կմ եռանկյունի մի հողատարածք խորհրդային սահմանագծող ու քարտեզագրող հանձնաժողովի (նախագահ՝ Բ. Կուզնեցով) անփութության և անհետևողականության հետևանքով կրկին զիջվել է Թուրքիային, ապա, Ալեքսանդրապոլի պայմանագրի համեմատ, Մոսկվայի և Կարսի պայմանագրերով Կարսի մարզից Հայաստանին թողնվել է ընդամենը 350 քառ. կմ, որն էլ կազմում է Աղբաբայի՝ ներկայիս Ամասիայի ենթաշրջանը²⁸:

Մոսկվայի և Կարսի պայմանագրերի հատկապես առավել կարևոր տարածքային-սահմանային հարցերի համեմատական դիտարկումները ցույց են տալիս հետևյալը: Մոսկվայի պայմանագրի 1-ին հոդվածով Թուրքիան ստանում էր Կարսի մարզն ու Սուրմալուի գավառը, և հայ-թուր-

²⁷ Տե՛ս **Հարությունյան Բ.**, Երկու ճշգրտում (Նախիջևանի հիմնահարցը Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում), գիտաժողովի նյութեր, Երևան, 2001, էջ 78:

²⁸ Այդ մասին քարտեզագրական սահմանագծման պատկերներով տե՛ս Հայաստանի ազգային ատլաս, հ. Բ, Երևան, 2008, էջ 210-215:

քական սահմանագիծ էր դառնում Արփաչայ և Արաքս գետերի հնահունը: 2-րդ հողվածով Վրաստանը ստանում էր Բաթում քաղաքը՝ նավահանգստով, նավթամուղով և հարակից տարածքներով: Հաջորդ՝ 3-րդ հողվածով էլ Ադրբեջանը ստանում էր Նախիջևանի մարզի խնամակալությունը՝ պայմանով, որ այն չի զիջի մի երրորդ պետության²⁹: Մինչդեռ Հայաստանը միայն տարածքային կորուստներ է ունեցել: Մոսկվայի պայմանագրի 1-ին և 2-րդ հոդվածներով Հայաստանը կորցրել է երկու երկրամաս՝ Կարսի մարզը և Սուրմալուի գավառը՝ ավելի քան 20700 քառ. կմ, իսկ 3-րդ հողվածով՝ Նախիջևանի երկրամասը՝ 5500 քառ. կմ, ընդհանուր՝ 26200 քառ. կմ: Ստացվում է, որ եթե Մոսկվայի պայմանագրով Վրաստանն ու Ադրբեջանը ուրախանալու առիթ ունեցան, ապա Հայաստանը մինչ օրս շարունակում է ապրել միայն կորստի ու ցավի զգացումով:

Ի տարբերություն Մոսկվայի խորհրդաժողովի, որում կողմերը հիմնականում առանց լուրջ տարաձայնությունների որոշում ու ձևակերպում էին կնքվելիք պայմանագրի աշխատակարգը, ձևաչափը, հողվածային կառուցվածքն ու բովանդակությունը, Կարսի խորհրդաժողովում (նույնիսկ մինչ խորհրդաժողովը) թուրքերը երկար ժամանակ պնդում էին պայմանագրի կնքման իրենց ձևաչափը, այն է՝ անդրկովկասյան յուրաքանչյուր հանրապետության հետ կնքել առան-

²⁹ Տե՛ս Պայմանագիր 1921 թվականի մարտի 16-ի՝ Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ, էջ 2-3: Ինքնին հասկանալի է, որ երրորդ պետություն ասելով նկատի էր առնվում Հայաստանը:

ծին պայմանագիր, ինչի նպատակն էր տարբերակված մոտեցումով նրանց պարտադրել իրենց կամքն ու պայմանները: Այս առումով թուրքերը նույնիսկ ավելորդ էին համարում ՌՍԴԽՀ ներկայացուցչի մասնակցությունը կոնֆերանսին³⁰, որպեսզի եղած խնդիրները ճակատ առ ճակատ հեշտությամբ լուծեն իրենց օգտին: Խորհրդային կողմը փաստարկեց, որ իրենք չեն կարող առանձին պայմանագրեր կնքել, քանի որ խորհրդային հանրապետությունները սերտորեն կապված են իրար հետ ռազմաքաղաքական և տնտեսական կապերով³¹: Ի վերջո, թուրքական կողմը, հակափաստարկներ չունենալով, համաձայնեց միասնական պայմանագրի գաղափարին³²:

Արժե ընթերցողի ուշադրությունը հրավիրել նաև այն քանի վրա, որ Կարսի խորհրդաժողովին հայկական պատվիրակությունը (նախագահ՝ արտգործկոմիսար Ա. Մռավյան) իր հետ Կարս էր տարել պահանջների մի «Հուշագիր», որը սեպտեմբերի 27-ին առաջարկի կարգով անդրկովկասյան երեք հանրապետությունների փաստական ղեկավար Յա. Գանեցկու կողմից դրվեց քննարկման: Դրանք վերաբերում էին Կողբի աղահանքի, Անիի հնավայրի և վիճարկելի համարվող մի քանի այլ տարածքների պատկանելությանն ու տնտեսական հարցերին:

³⁰ Տե՛ս **Хейфец А. Н.**, Советская дипломатия и народы Востока (1921-1927), Москва, 1966, էջ 161:

³¹ Տե՛ս Документы внешней политики СССР (այսուհետ՝ ДВП СССР), т. 4, Москва, 1960, էջ 392:

³² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 21, թ. 88, **Багиров Ю. А.**, Из истории советско-турецких отношений в 1920-1922 гг., Баку, 1965, էջ 71:

Մոսկվայի և Կարսի խորհրդաժողովների՝ կազմակերպական-մասնակցային առումով համեմատության համար արձանագրենք, որ 1921 թ. փետրվարի երկրորդ կեսին Մոսկվա մեկնած հայկական պատվիրակությունը ևս իր հետ տարել էր օժանդակ փաստաթղթերի, քարտեզների, փաստագրական այլ նյութերի մի «Տեղեկատու զեկուցագիր», որում Հայաստանին միացվելիք տարածքների առումով ներկայացվում էր չորս հնարավոր տարբերակ. 1-ին՝ առավելագույն տարբերակով նախատեսվում էր Հայաստանի կազմում ներառել Սուրմալուն՝ Մեծ ու Փոքր Մասիսներով, ինչպես նաև Կարսի մարզի հիմնական մասը, իսկ 4-րդ՝ նվազագույն տարբերակով՝ ճանաչել մինչև Ալեքսանդրապոլի պայմանագիրը եղած սահմանները, այսինքն՝ Հայաստանի կազմում ներառել Մեծ Աղբաբա և Ղըզլ-դաշ լեռները, Մեծ Ղմլու և Թիխնիս գյուղերը³³: Սակայն, ինչպես հայտնի է, Հայաստանի արտգործկոմիսար Ալ. Բեկզադյանի գլխավորած պատվիրակությանը թուրքերի պահանջով չթույլատրվեց մասնակցել կոնֆերանսին, և սահմանների վերաբերյալ այդ չորս համեստ առաջարկներից բաղկացած «Զեկուցագիր»-ը ռուս-թուրքական խորհրդաժողովին չներկայացվեց: Այն, շուրջ երկու ամիս մնալով ՌՄԴԽՀ արտգործժողովի տեղակալ Լ. Կարախանի մոտ, ապրիլի կեսերին վերադարձվեց Ալ. Բեկզադյանին³⁴:

Ինչպես նշվեց, կոնֆերանսներում քննարկվող առանցքային հարցը տարածքների և սահմանների ճշգրտումն

³³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 68, թ. 14-15, ֆ. 1022, ց. 5, գ. 65, թ. 20:

³⁴ Տե՛ս **Խաչատրյան Կ.**, Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ., Երևան, 2007, էջ 120:

էր: Բայց նկատի առնելով, որ Մոսկվայի ռուս-թուրքական կոնֆերանսում Հայաստանին վերաբերող հարցերում կողմերի միջև առանձնապես տարածայնություններ չեն եղել, ուստի կփորձենք կանգ առնել այն քննարկումների վրա, որ ծավալվել են Կարսի թուրք-անդրկովկասյան խորհրդաժողովի ընթացքում: Ընդ որում, պարզվում է, որ Մոսկվայի կոնֆերանսի բացումից՝ փետրվարի 26-ից մինչև մարտի 9-ը ներառյալ տեղի են ունեցել ոչ պաշտոնական հանդիպումներ, քննարկումներ, զրույցներ և նամակագրություններ, ինչը նշանակում էր, որ թուրքական «Ազգային ուխտ»-ի սկզբունքների ճանաչման պայմաններում տարածքային-սահմանային հարցերում լուրջ խնդիրներ չէին ծագելու³⁵:

Նախ՝ թուրք-անդրկովկասյան սահմանների ճշգրտման առումով Կարսի խորհրդաժողովի հենց սկզբում որոշվեց մեկ հոդվածում (4-րդ) ամրագրել բոլոր երեք հանրապետությունների սահմանները, ինչպես նաև Մոսկվայի պայմանագրի սկզբունքների անփոփոխ ընդունումն ու սահմանային հարցերը ճշտող միացյալ հանձնաժողովի ստեղծումը³⁶: Անդրկովկասի միացյալ սահմանային հանձնաժողովի նախագահին էր Բ. Կուզնեցովը: Հայաստանի կողմից հանձնաժողովում ընդգրկվել էր քարտեզագիր, սպա Վ. Թամրուշին³⁷: Դարձյալ ընդգծենք, որ մինչ հանձնաժողովը կանցներ սահմանագծման մասնագիտական աշխատանքներին, կրկին ի գիտություն է ընդունվում հետևյալ հայտարարությու-

³⁵ Այդ մասին հանգամանորեն տե՛ս **Հակոբյան Ա.**, Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի

պայմանագրերում, Երևան, 2010, էջ 145-148:

³⁶ Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 19 հոկտեմբերի 1921 թ.:

³⁷ Տե՛ս **Թամրուշի Վ.**, Ղամարլուի և Զանգեզուրի կռիվները, Երևան, 1922:

նը. «Անվերապահորեն ընդունել Մոսկվայի պայմանագրի 1-ին հոդվածում որոշված սահմանագիծը, որը փոփոխման ենթակա չէ»³⁸:

Հասկանալի է, որ Մոսկվայի պայմանագրի սկզբունքների անփոփոխ ընդունումը նշանակում էր, որ ի սկզբանե նվազագույնի էր հասցվելու սահմանային ճշգրտումների հնարավորությունը: Դա միաժամանակ նշանակում էր, որ պայմանագրի հոդվածների քննարկումը շատ կողմերով դառնում էր ձևական: Բայց և այնպես, Կարսի խորհրդաժողովի քննարկումներում և սահմանները ճշգրտող հանձնաժողովի աշխատանքներում Հայաստանի առումով ծագել են որոշ հարցեր Անիի հնավայրի, ինչպես նաև Նոր Ղըզլ-դաշ և Վարդանլի գյուղերի պատկանելության, Կողբի և Կաղզվանի աղահանքերի շահագործման շուրջ³⁹:

Հասկանալի է, որ եթե Մոսկվայի խորհրդաժողովում հայ ժողովրդին հուզող խորհրդանշական հարցերից մեկի՝ Ախուրյան գետի աջ ափին ընկած՝ երբեմնի Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք, պատմամշակութային կոթողներով հարուստ Անիի հնավայրը (ավերակները) Հայաստանին վերադարձնելու մասին բնավ խոսք չի եղել, ապա հայկական կողմի մասնակցությամբ Կարսի խորհրդաժողովում, նախապես կազմված «Հուշագրի» համաձայն, Անիի պատկանելության հարցը պետք է, որ քննության առնվեր: Այս համեստ պահանջը հնչեցրել էր Յա. Գանեցկին: Անդրկովկասի միացյալ սահմանային հանձնաժողովը, նախ Բ. Կուզնեցովի ներկայացմամբ քննարկելով սահմանային հարցը,

³⁸ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 21, թ. 151:

³⁹ Տե՛ս նույն տեղում, թ. 15:

արձանագրել է, որ «Մոսկվայի պայմանագրի 1-ին հոդվածով որոշված սահմանագիծը անվերապահորեն ընդունվում է որպես հիմք, որից ոչ մի կողմ չի կարող նահանջել: Այդ հոդվածում նշված բոլոր ենթակետերն ու սահմանային գծերը մնում են անփոփոխ»⁴⁰: Սակայն, դրանով հանդերձ, Անդրկովկասի միացյալ սահմանային հանձնաժողովի նախագահը վերապահություն է անում Անիի շրջանի՝ իբրև պատմամշակութային հնավայրի և Կողբի աղահանքի՝ իբրև տնտեսական կարևոր նշանակության հարցի վերաբերյալ: Եվ այդ մասին ամրագրվում է արձանագրության մեջ⁴¹: Թուրքական սահմանային հանձնաժողովի նախագահ Վեյսալ բեյը, առարկելով անդրկովկասյան հանձնաժողովի առաջարկին, Կողբի աղահանքի հարցը համարում էր զուտ տնտեսական և գտնում, որ այն ոչ մի կապ չունի սահմանների փոփոխության հետ, և այն կքննի տնտեսական հանձնաժողովը:

Կարսի խորհրդաժողովում քիչ թե շատ հուսադրող քննարկում է տեղի ունեցել հայոց պատմական Անի մայրաքաղաքի ավերակները Հայաստանին վերադարձնելու հարցի շուրջ: «Հուշագրում» ներկայացված մյուս բոլոր առաջարկներին Քյազիմ Կարաբեքիր փաշայի գլխավորած թուրքական պատվիրակությունը տվել է մերժողական պատասխան և վերապահություն արել միայն Անին վերադարձնելու հարցում՝ պայմանով, որ իրենք պետք է հարցում անեն Անգորայի կառավարությանը: Խորհրդաժողովի սեպտեմբերի 27-ի լիազումար նիստում Կարաբեքիրը հայտարարում է, որ

⁴⁰ Նույն տեղում, թ. 25:

⁴¹ Տե՛ս նույն տեղում:

իրենք Անգորայի կառավարությունից հրահանգ են ստացել խստորեն հետևելու Մոսկվայի պայմանագրի կետերին: Միաժամանակ «Բացառություն է արվում, – կարդում ենք արձանագրության մեջ, – միայն Անի քաղաքի համար, որպեսզի հայկական պատվիրակությանը հաճելի լինի: Թուրքական պատվիրակությունը Անի քաղաքի ավերակները թողնում է Հայաստանին՝ հաշվի առնելով այն պատմական նշանակությունը, որ նա ունի Հայաստանի և հայ բնակչության համար»⁴²: Այդ կապակցությամբ թուրքական պատվիրակության ղեկավարը հեռագիր է ուղարկում Անգորա՝ վերջնական համաձայնություն ստանալու համար: Անիի խնդրում Բ. Կարաբեքիրի ցուցաբերած սիրալիրության համար Յա. Գանեցկին գոհունակություն է հայտնում: Այդ նույն օրը նա ռադիոհեռագիր է ուղարկում Մոսկվա՝ Ռուսաստանի արտգործոցին Գ. Չիչերինին՝ հայտնելով, որ «Անիի խնդրում հարցում է արվել թուրքական կառավարությանը, և հույս կա, որ կլինի համաձայնություն»⁴³: Եվ, իրոք, բանակցությունների սկզբնական փուլում հույս կար, որ Անիի հնավայրի ճակատագրի հարցը կլուծվի Հայաստանի օգտին⁴⁴: Այդ կապակցությամբ սեպտեմբերի 29-ին Ա. Մռավյանն իր հերթին հեռագրում էր ՀՍԽՀ Ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանին, որ Անիի ավերակները վերադարձնելու հարցում «Հավանաբար թուրքերը կհամաձայնվեն»⁴⁵:

Այնուհետև պատվիրակությունները սկսում են քննարկել այն հարցը, թե ինչպես ձևակերպել Անիի վերա-

⁴² Նույն տեղում, թ. 131:

⁴³ Նույն տեղում, թ. 99:

⁴⁴ Տե՛ս նույն տեղում:

⁴⁵ Նույն տեղում, գ. 23, թ. 54:

դարձը, որ չհակասի Մոսկվայի պայմանագրի՝ սահմաններին վերաբերող առաջին հոդվածին⁴⁶։ Կարաբեքիր փաշան թուրքական պատվիրակության անունից հայտնում է, որ Արփաչայ (Ախուրյան) գետը պետք է ընդունել որպես հայ-թուրքական վերջնական սահմանագիծ, իսկ «Ինչ վերաբերում է Անի քաղաքի ավերակների զիջմանը, ապա այն կարելի է ընդունել առանձին հոդվածով»։ Այնուհետև Կարաբեքիրն ավելացնում է. «Եվ դա արվում է՝ նկատի ունենալով այն համակրանքը, որ Թուրքիան տաժում է Հայաստանի հանդեպ»⁴⁷։ Այստեղ դժվար է բացատրություն տալ Կարաբեքիրի նման կեղծ սիրալիրությանը։ Իր ելույթի վերջում թուրքական պատվիրակության ղեկավարը եզրահանգում է, որ խորհրդային կողմի ներկայացրած մնացյալ հարցերը վերանայման ենթակա չեն։

Իր պատասխան ելույթում Յա. Գանեցկին առարկում է Կարաբեքիրի՝ Անիի հարցի վերաբերյալ առանձին հոդված ընդունելու առաջարկին՝ պատճառաբանելով, որ դա կարող է հակասել Մոսկվայի և Կարսի պայմանագրերի՝ սահմանների մասին հոդվածներին, որովհետև, Գանեցկու պարզաբանմամբ, Մոսկվայի պայմանագրում Անին նշված է թուրքական կողմում, իսկ այստեղ ընդունվելիք նոր հոդվածով կնշվի, որ այն անցնում է Հայաստանին։ Դրա փոխարեն Յա. Գանեցկին նպատակահարմար էր գտնում Անիի համար ոչ թե առանձին հոդված ընդունել, այլ պարզապես պայմանագրի բուն տեքստում նշել, որ Անի քաղաքն անցնում է Հայաստանին՝ նկատի ունենալով նրա պատմամշակութային

⁴⁶ Ст'я ДВП СССР, т. 3, Москва, 1959, էջ 597-598:

⁴⁷ ՀԱՍ, ֆ. 113, ց. 3, գ. 21, թ. 132:

նշանակությունը, և դրա վերաբերյալ անել քաղաքական բնույթի հայտարարություն⁴⁸: Հիշեցնենք, որ Անիի շուրջ այս քննարկումները ծավալվում էին, թեև Անգորայի պատասխանը դեռ չէր ստացվել:

Թուրքական պատվիրակության ղեկավարը դարձյալ պնդում է իր առաջարկը Անի քաղաքի ավերակների վերաբերյալ՝ իբրև բացառություն ընդունելու առանձին հոդված և այն ներառելու պայմանագրում. «Թուրքական պատվիրակությունը գտնում է, որ սահմանները վերջնականորեն ընդունված են Մոսկվայի խորհրդաժողովում, և անհնար է դրանց փոփոխումը կամ վերանայումը: Եվ միայն Անի քաղաքի ավերակների հարցում առաջարկում է ներառել առանձին հոդված»⁴⁹: Կարաբեքիրի այս ելույթից հետո Յա. Գանեցկին լրացուցիչ պարզաբանում է տալիս: Նա հայտնում է, որ, իր կարծիքով, ծագած թյուրիմացությունը հարթելու նպատակով «մեր պատվիրակությունը բնավ չի առարկում այն բանին, որ Անի քաղաքն անցնի հայկական կողմին, և դրա վերաբերյալ կազմվի առանձին հոդված: Մենք չենք առարկում առանձին հոդվածին, այլ գտնում ենք, որ Անիի մասին զիջման փաստը արձանագրվի նաև սահմանների մասին հոդվածում»⁵⁰:

Կարաբեքիր-Գանեցկի բանավեճի դիվանագիտական, իրավաբանական ձևակերպման նրբությունն այն էր, որ Կարաբեքիրը չէր ցանկանում, որ պայմանագրի բուն տեքստում, այն էլ՝ սահմանների մասին հոդվածում, որում,

⁴⁸ Տե՛ս նույն տեղում:

⁴⁹ Նույն տեղում:

⁵⁰ Նույն տեղում, թ. 132-133:

հետևելով Մոսկվայի պայմանագրին, հայ-թուրքական սահմանը սկզբունքորեն համարվում էր Ախուրյան գետը, նշվեր, որ Անի քաղաքը հանձնվում է Հայաստանին, այլ դրա վերաբերյալ կազմվեր առանձին հոդված, որը պետք է լիներ ոչ թե պայմանագրի բուն տեքստում, այլ II («Բ») հավելվածում՝ իբրև առանձին կետ: Կողմերը, համաձայնության չգալով, ի վերջո որոշում են հետաձգել Անիի հարցի քննարկումը, մինչև որ Անգորայից պատասխան կստացվեր⁵¹: Այնուամենայնիվ, կոնֆերանսի սեպտեմբերի 28-ի լիազումար նիստի արձանագրության մեջ ներառվում է հետևյալ ձևակերպումը. «Հայաստանի սահմանների մեջ ներառել Անի քաղաքի ավերակները»⁵²: Անդրկովկասյան միացյալ պատվիրակությունն առաջարկում է արձանագրության վերոհիշյալ հատվածը մտցնել պայմանագրի նախագծի տեքստի մեջ: Թուրքական պատվիրակությունը համաձայնում է՝ պայմանով, որ խնդրի վերջնական լուծումը պետք է տա Թուրքիայի ԱՄԺ կառավարությունը⁵³:

Մինչ կոնֆերանսի լիազումար նիստերում ծավալվում էին համանման քննարկումներ, զուգահեռաբար ընթանում էին միացյալ սահմանային հանձնաժողովի աշխատանքները: Այստեղ էլ Անիի և սահմանային վիճելի այլ հարցերի շուրջ ընթանում էին նույնաբնույթ քննարկումներ: Սկզբում սահմանային հանձնաժողովի թուրք ղեկավարը պնդում էր Անիի ավերակների հարցը հանել պայմանագրի հիմնական տեքստի 1-ին հոդվածից և ներառել հավելվածում՝ իբրև ծա-

⁵¹ Տե՛ս **Հակոբյան Ա.**, Թե ինչպես Անին ջմացվեց Հայաստանին, «ՊԲՀ», Երևան, 2003, № 2, էջ 78:

⁵² ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 11, թ. 273:

⁵³ Տե՛ս նույն տեղում, թ. 273-274:

նոթագրություն այն հատվածում, որում կխոսվի Ախուրյանի սահմանագծի մասին: Թուրք պատվիրակը պատճառաբանում էր, որ արդեն Մոսկվայի պայմանագրի տեքստին համապատասխան կազմվել է քարտեզ, որը փոփոխել այլևս չի կարելի⁵⁴: Խորհրդային կողմը (սահմանային հանձնաժողովի ղեկավար՝ Բ. Կուզնեցով), պաշտպանելով Յա. Գանեցկու պնդումը, նույնպես կարծում էր, որ Անի քաղաքի ավերակների վերադարձի մասին պետք է ամրագրել պայմանագրի 1-ին հոդվածի վերջում (իբրև ծանոթագրություն)⁵⁵: Քննարկումներից ելնելով՝ միացյալ սահմանային հանձնաժողովը հայտարարում է, որ անվերապահորեն ընդունում է Մոսկվայի պայմանագրի 1-ին հոդվածում նշված սահմանագիծը, որը փոփոխման ենթակա չէ. վերապահություն է արվում միայն Անիի համար՝ սպասելով Անգորայից ստացվելիք վերջնական պատասխանին:

Տեղադրության ու տարածքի վերաբերյալ նշենք հետևյալը. Անին գտնվում էր Ալեքսանդրապոլի գավառի հարավային կողմում՝ Ալեքսանդրապոլ (Գյումրի) քաղաքից 50 վերստ հեռավորության վրա, Ախուրյան գետի աջ ափին, 1500 մ բարձրությամբ եռանկյունաձև սարահարթի (հրվանդանի) վրա: Բուն ավերակների մակերեսը կազմում էր մոտ 86 հեկտար, իսկ շրջակա տարածքով՝ մոտ 150 հեկտար⁵⁶: Անիի ավերակների շրջակայքում ընկած էին մի քանի գյու-

⁵⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 19:

⁵⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 9:

⁵⁶ Տե՛ս **Պալաքյան Գ.**, Նկարագրություն Անիի ավերակներուն, Կ. Պոլիս, 1910, էջ 18-19, **Մսըրլեան Ջ.**, Երեք դաշնագիրեր (Ալեքսանդրապոլի, Մոսկուայի եւ Կարսի դաշնագիրերը, 1920-1921 թթ.), Պէյրուս, 1979, էջ 136, **Վարդանյան Ս.**, Հայոց մայրաքաղաքները, Երևան, 1985, էջ 102:

դեր՝ Անի (թրքաբնակ), Ենիքեյոյ (Նոր գյուղ) կամ Խարկով (հայաբնակ), Ճալա, Արագի, Ալաջա (քրդաբնակ) և Բակնան (եզդիաբնակ): Բացի Ախուրյան գետից՝ Անին եզերվում է Անի գետակով, Իգաձորով և Գալլաձորով, իսկ ավերակ-քաղաքի արևմտյան կողմով՝ հյուսիսից հարավ, հոսում է Ալաջա գետը:

Առաջարկվող սահմանագիծը հետևյալն էր. «Սկիզբ առնելով գետաբերանից՝ Անիի արձանագրությունից հարավ, որը հոսում է 1953 նշված կետից հյուսիս հոսող գետի երկայնքով մինչև ջրբաժանը, որը տանում է դեպի Անի քաղաքի արևմտյան և հյուսիսարևմտյան կողմերով մինչև Անի գյուղը՝ ներառելով դրանք Հայաստանի մեջ, հետո ուղիղ գծով հասնում էրցե եկեղեցու ավերակները: Այնուհետև էրցեի ավերակներից ձգվում է դեպի ակունքն այն գետակի, որը հոսում է էրցեից հյուսիս և այդ գետակին համընթաց հասնում մինչև նրա Արփաչայ թափվելու տեղը»⁵⁷:

Անիի վերաբերյալ Բ. Կուզնեցովի ներկայացրած առաջարկը դժգոհությամբ է ընդունվում թուրք հանձնաժողովականների կողմից: Նրանք հայտարարում են, որ նախ՝ այդ առաջարկը նկատելի շեղում է Մոսկվայի պայմանագրի համապատասխան հավելվածից, և երկրորդ՝ ռազմական առումով այդ հարցն իրենց համար ունի վիթխարի նշանակություն: «Բայց և այնպես, - ասված է հայտարարության մեջ, - մենք ընդունում ենք, որ Անին Հայաստանի համար ունի պատմամշակութային խոշոր նշանակություն, ուստի ցանկալի է, որ այդ հարցը լուծվի Հայաստանի օգտին»⁵⁸: Միաց-

⁵⁷ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 21, թ. 28^ա:

⁵⁸ Նույն տեղում, թ. 29:

յալ սահմանային հանձնաժողովի նիստը որոշում է հետաձգել նաև այս հարցի հետագա քննարկումը:

Քննարկվող հարցերից էր Անիի շրջանից Արփաչայի հունով վեր ձգվող սահմանագծի վրա ընկած՝ վիճելի տարածք համարվող Վարդանի գյուղի պատկանելությունը, որը տեղակայված էր գետի երկու ափին: Խորհրդային կողմը ցանկալի էր համարում գյուղը ներառել Հայաստանի սահմաններում: Թուրքերը հայտնում են, որ դրա պատասխանը իրենք հետո կտան:

Եվ վերջապես, Հայաստան-Թուրքիա սահմանի վերջին՝ չորրորդ հատվածը սկիզբ էր առնում Բուլայ գետի վտակից՝ անցնելով մի շարք բարձունքներով՝ Ուչ-թափալար, Արդահանի օկրուգի վարչական սահման, Մեծ Աղբաբա լեռ և այլն⁵⁹: Անդրկովկասյան կողմի նախնական առաջարկով սահմանագիծն անցնելու էր Իբիշ գյուղից արևելք (այսինքն՝ գյուղն անցնում էր Թուրքիային), սակայն Նոր Ղրզլ-դաշ գյուղը պետք է մնար Հայաստանին, քանի որ այն ընկած էր Արփաչայ գետի հովտում: Եվ բացի այդ՝ Նոր Ղրզլ-դաշից դուրս եկող ամենահարմար ճանապարհը անցնում էր Գյուլ-Բուլաղ գյուղի միջով և հասնում Ալեքսանդրապոլ: Սահմանային վիճելի տարածքներ Վարդանի, Իբիշ և Նոր Ղրզլ-դաշ գյուղերի, որոնց միջով հոսում էր սահմանային գետ, ճակատագրի հարցի լուծումը առժամանակ հետաձգվեց, սակայն հետագա քննարկումների ընթացքում խորհրդային պատվիրակությունը բավարար սրտացավություն ու շահագրգիռ պահանջկոտություն հանդես չբերեց և այդ գյուղերն իրենց հողատարածքներով զիջեց թուրքերին: Զարմա-

⁵⁹ Տե՛ս նույն տեղում:

նալ կարելի էր թուրքերի համառության վրա. ամեն անգամ, երբ սահմանային գյուղերի հարց էր քննարկվում, թուրքերը պահանջ էին դնում, որ դրանք բոլորը պետք է պատկանեն Թուրքիային⁶⁰:

Հայաստանի համար վճռորոշ օր եղավ հոկտեմբերի 5-ը, քանզի այդ օրվա ոչ պաշտոնական քննարկումները վերաբերում էին Հայաստանին առնչվող հոդվածներին ու մասնավորապես Անիի խնդրին: Իննօրյա սպասումներից հետո թուրքական պատվիրակությունը կտրուկ մերժեց Անիի ավերակները որևէ ձևակերպմամբ Հայաստանին վերադարձնելու պահանջը: Նրանք հայտարարեցին, որ «Անգորան համաձայն չէ Անին զիջել Հայաստանին»⁶¹:

Հոկտեմբերի 13-ին (հինգշաբթի օրը)՝ ժամը 12-ին, գումարվեց կոնֆերանսի վերջին՝ վեցերորդ նիստը: Նիստի նպատակն արդեն պատրաստված պայմանագրի ստորագրումն էր: Այն բացեց Յա. Գանեցկին, ով առաջարկեց ստորագրել «ազգերի եղբայրության և անխախտ ու անկեղծ բարեկամության» մասին պայմանագիրը (այս ձևակերպումը վերցված էր Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրից): Ստորագրման արարողությունը կատարվել է հանդիսավոր պայմաններում: Պատվիրակություններից բացի՝ արարողակարգին ներկա էին քաղաքային և զինվորական իշխանությունների ներկայացուցիչներ, թուրք սկաուտներ: Խոր լռության պայմաններում ընթերցվեց պայմանագրի ֆրանսերեն բնօրինակը, որից հետո ստորագրվեցին նիստերի արձանագրությունները: Ուղիղ կեսօրին պայմանագիրը ստորագր-

⁶⁰ Տե՛ս նույն տեղում, թ. 99:

⁶¹ Նույն տեղում, գ. 23, թ. 58:

վեց: Ստորագրելու պահին Կարսի բերդից տրվեց հրանոթային չորս համազարկ, և թուրքական նվազախումբը կատարեց «Ինտերնացիոնալը» և Թուրքիայի պետական հիմնը⁶²:

Այժմ փորձենք ավելի հանգամանորեն ներկայացնել Մոսկվայի և Կարսի պայմանագրերի հողվածների համեմատությունը՝ իրենց հավելվածներով, կառուցվածքով, բովանդակությամբ, հետապնդած իրավաքաղաքական, դաշնակցային ու տնտեսական խնդիրներով ու նպատակադրումներով:

Մոսկվայի պայմանագիրը բաղկացած է պրեամբուլայից, 16 հողվածներից և երեք՝ Ա, Բ, Գ հավելվածներից, իսկ Կարսի պայմանագիրը՝ պրեամբուլայից, 20 հողվածներից և երեք՝ I, II, III հավելվածներից⁶³: Հավելվածներում որոշված են սահմանագծերը: Ե՛վ Մոսկվայի, և՛ Կարսի պայմանագրերի պրեամբուլաներում, ինչպես արդեն ասվել է, ջերմությամբ խոսվում էր խորհրդային և թուրք ժողովուրդների «եղբայրություն, անխախտ ու անկեղծ բարեկամություն» հաստատելու նպատակով բանակցություններ սկսելու և բարեկամական պայմանագիր կնքելու մասին: Պայմա-

⁶² Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 23 հոկտեմբերի 1921 թ., **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 683:

⁶³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 54, թթ. 20-24, գ. 56, թթ. 68-74, ֆ. 114, ց. 2, գ. 133, թթ. 10-19, Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923) (այսուհետ՝ Հայաստանը ... փաստաթղթերում), կազմողներ՝ **Ջ. Ս. Կիրակոսյան, Ռ. Գ. Սահակյան**, խմբ.՝ **Ջ. Ս. Կիրակոսյան**, Երևան, 1972, էջ 517-527, ДБП СССР, т. 4, էջ 420-429:

նագրերի ներածականները ինքնին նախանշում էին կնքվելիք պայմանագրերի բնույթն ու բովանդակությունը:

Մեր կարծիքով՝ հայերեն ժողովածուներում Կարսի պայմանագրի 1-ին հոդվածի հայերեն թարգմանությունն այնքան էլ հաջող չէ (օրինակ՝ մեկ նախադասության մեջ երեք անգամ նշված է «տերիտորիա» բառը, «պետություն»-ը դարձել է «տերություն» և այլն), ուստի անհրաժեշտ ենք համարում այդ հոդվածը մեջբերել բնագրին ավելի հարազատ տարբերակով. «Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունը և Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի սոցիալիստական խորհրդային հանրապետությունների կառավարությունները չեղյալ և ուժը կորցրած են ճանաչում բոլոր այն պայմանագրերը, որոնք կնքվել են նախկինում պայմանավորվող կողմերի տարածքներում ինքնիշխան իրավունքներ ունեցած կառավարությունների միջև և վերաբերել են նշված տարածքներին, ինչպես նաև այն պայմանագրերը, որոնք կնքվել են երրորդ պետությունների հետ և վերաբերել են անդրկովկասյան հանրապետություններին: Ընդունվում է, որ սույն հոդվածի ուժը չի տարածվում 1921 (1337) թ. մարտի 16-ին (իրականում 18-ին – Ա. Հ.) Մոսկվայում կնքված ռուս-թուրքական պայմանագրի վրա»⁶⁴:

Նախ փաստենք, որ սույն հոդվածը նույնանում և բխում է Մոսկվայի պայմանագրի 1-ին հոդվածից՝ միայն այն տարբերությամբ, որ չեղյալ և ուժը կորցրած էին համարվում նաև թուրք-անդրկովկասյան նախկին ինքնիշխան կառավարությունների պայմանագրային հարաբերությունները:

⁶⁴ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 69: Տե՛ս նաև ֆ. 114, ց. 2, գ. 133, թ. 11:

Այսպիսով՝ Կարսի պայմանագրի 1-ին հոդվածով պայմանավորվող կողմերի կառավարությունները չեղյալ և ուժը կորցրած էին ճանաչում մինչև իրենց իշխանության գալլը նշված պետություններում ինքնիշխան իրավունքներ ունեցած կառավարությունների՝ ինչպես իրար միջև կնքված և նշված տարածքներին վերաբերող, այնպես էլ այլ պետությունների հետ կնքված և անդրկովկասյան հանրապետություններին վերաբերող պայմանագրերը: Սա նշանակում է, որ ուժը կորցրած էին ճանաչվում և՛ Բրեստ-Լիտովսկի, և՛ Բաթումի, և՛ Սևրի, և՛ Ալեքսանդրապոլի, ինչպես նաև ավելի վաղ կնքված Ադրիանապոլսի, Փարիզի, Սան Ստեֆանոյի, Բեռլինի և այլ պայմանագրեր, որոնք օսմանյան կայսերական կառավարությունը կնքել էր երրորդ կողմերի հետ: Նույնը վերաբերում էր Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի նախկին կառավարությունների՝ իրար միջև, Թուրքիայի կամ էլ երրորդ կողմի հետ կնքված պայմանագրերին:

Ասվածից հետևում է, որ չեղյալ և ուժը կորցրած էին համարվում քեմալական Թուրքիայի, մուսավաթական Ադրբեջանի և մենշևիկյան Վրաստանի միջև 1919-1920 թթ. կնքված երկկողմ պայմանագրերը, որոնք, որպես կանոն, իրենց սուր ծայրով ուղղված էին Հայաստանի Հանրապետության դեմ՝ այն կործանելու և իրար միջև բաժանելու նպատակով: Դրանցից կարելի է մատնանշել, օրինակ, 1919 թ. օգոստոսի 22-ի Ղարաբաղին վերաբերող համաձայնագիրը, նույն թվականի հոկտեմբերի թուրք-ադրբեջանական գաղտնի դաշինքը, 1920 թ. ապրիլի 15-ի թուրք-ադրբեջա-

նական ռազմական կոնվենցիան, 1920 թ. սեպտեմբերի թուրք-վրացական գաղտնի համաձայնագիրը և այլն⁶⁵:

Եվ վերջապես, Կարսի պայմանագրի 1-ին հոդվածը վկայում է նաև պայմանավորվող կողմերի միջև նոր պայմանագրային դաշտի ստեղծման պատրաստակամության մասին: Եվ մի կարևոր հանգամանք ևս. 1-ին հոդվածի վերջին պարբերությամբ պայմանավորվող կողմերն իրենց փոխհարաբերություններում օրինական և, ըստ էության, գերակա էին ճանաչում միայն ռուս-թուրքական 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի պայմանագիրը: Մյուս կողմից՝ Կարսի պայմանագիրը բոլոր առումներով վերջ է տալիս բազմաչարչար Ալեքսանդրապոլի պայմանագրի գոյությանը, թեև այն իր ստորագրման իսկ պահից, ինչպես արդեն քանիցս հիմնավորվել է, իրավական ուժ չի ունեցել:

Եթե Կարսի պայմանագրի 1-ին հոդվածը վերաբերում էր երկու (մի կողմից՝ ԹԱՄԺ, իսկ մյուս կողմից՝ Խորհրդային Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի) կառավարությունների՝ տվյալ տարածքներում ինքնիշխան իրավունքներ ունեցած նախկին կառավարությունների կնքած պայմանագրերը չեղյալ և ուժը կորցրած համարելուն, ապա 2-րդ հոդվածում դարձյալ խոսվում էր նույն պայմանավորվող կողմերի՝ սույն պայմանագրով ստանձնած փոխադարձ պարտավորության մասին՝ «չճանաչելու ոչ մի հաշտության պայմանագիր կամ միջազգային որևէ այլ ակտ, եթե կողմերից մեկին ուժով են հարկադրում այն ընդունել»⁶⁶: Դա վե-

⁶⁵ Տե՛ս **Գանգրունի Հ.**, Հայաստան 1918 եւ հայ քաղաքական միտքը, Պեյրուք, 1984, էջ 117-120, «Հայրենիք», Բոստոն, 1923, թիվ 1, էջ 109, **Մելքոնյան Ա.**, Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, 2003, էջ 327:

⁶⁶ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 69, ֆ. 114, ց. 2, գ. 133, թ. 11:

րաբերում էր ինչպես տվյալ պահին, այնպես էլ հետագայում կնքվելիք պայմանագրերին: Պետք է նշել, որ Կարսի պայմանագրի 2-րդ հոդվածի 1-ին և 3-րդ պարբերությունները բառացիորեն կրկնում են Մոսկվայի պայմանագրի 1-ին հոդվածի 1-ին պարբերությունը՝ միայն այն տարբերությամբ, որ ՌՍԴԽՀ-ի փոխարեն իբրև կողմ հանդես են գալիս անդրկովկասյան հանրապետությունները: Իսկ 2-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը թուրքական «Ազգային ուխտ»-ի ճանաչման մասին տառացիորեն է կրկնում Մոսկվայի պայմանագրի 1-ին հոդվածի 2-րդ պարբերությունը⁶⁷:

Եթե 2-րդ հոդվածը դիտարկում ենք Հայաստան--Թուրքիա հարաբերության կտրվածքով, ապա այն վերաբերում է ինչպես Սևրի, այնպես էլ չվավերացված Ալեքսանդրապոլի պայմանագրերի չճանաչմանը, որովհետև և Թուրքիայի շահերին առնչվող Սևրի պայմանագիրը չի ճանաչել ԹԱՄԺ կառավարությունը, և նույն կերպ էլ Խորհրդային Հայաստանի կառավարությունը չի ճանաչել Ալեքսանդրապոլի պայմանագիրը:

Կարսի պայմանագրի հաջորդ՝ 3-րդ հոդվածը, որը նույնանում է Մոսկվայի պայմանագրի 7-րդ հոդվածին, վերաբերում է կապիտուլյացիաների ռեժիմի վերացմանը⁶⁸: Հայտնի է, որ նախընթաց դարերում ցարական Ռուսաստանը եվրոպական պետություններից ոչ պակաս իրավունքներով կապիտուլյացիոն (հարկամաքսային և անգամ քաղաքական բնույթի) մի շարք արտոնություններ էր ձեռք բերել

⁶⁷ Տե՛ս Հայաստանը փաստաթղթերում, էջ 500, 519:

⁶⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 70, ֆ. 114, ց. 2, գ. 133, թ. 12, Հայաստանը փաստաթղթերում, էջ 519:

Օսմանյան կայսրությունում: Մոսկվայի պայմանագրով (հոդված 7) Ռուսաստանի ունեցած կապիտուլյացիոն բոլոր գործառույթներն ու իրավունքները ուժը կորցրած և վերացված համարվեցին:

Կարսի պայմանագրի 4-րդ հոդվածը, որը նույնանում է Մոսկվայի պայմանագրի 1-ին հոդվածի 3-րդ պարբերությանը, ամբողջությամբ վերաբերում է թուրք-անդրկովկասյան սահմանին: Հոդվածում, Մոսկվայի պայմանագրի ոգուն ու տառին հավատարիմ, նշված է Թուրքիայի հյուսիսարևելյան սահմանը՝ սկսած Սև ծովի ափամերձ Սարպ գյուղից մինչև Իրանի սահմանը՝ Ներքին Ղարասու գետի՝ Արաքս թափվելու տեղը: Հոդվածում սահմանի ընդհանուր պատկերը հետևյալն է. «Թուրքիայի հյուսիսարևելյան սահմանը սկսվում է Սև ծովի ափամերձ Սարպ գյուղից, անցնում է Խեդիս-մտա սարի վրայով, այնուհետև Շավշեթ և Կանի (Քանլի) դաղ սարերի ջրբաժան գծի երկարությամբ հասնում է Արդահանի և Կարսի օկրուգների (սանջակների) նախկին հյուսիսային վարչական սահմանագծին, այնուհետև՝ Արփաչայ և Արաքս գետերի հնահունով մինչև Ներքին Ղարասուի գետաբերանը»⁶⁹:

Հարկ է նշել, որ ինչպես Մոսկվայի (հոդված 1), այնպես էլ Կարսի պայմանագրում (հոդված 4) խոսվում է միայն Թուրքիայի հյուսիսարևելյան սահմանի մասին, իսկ Անդրկովկասի մասին ոչ մի ակնարկ չկա: Եթե Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրի դեպքում ինչ-որ տեղ կարելի է հասկանալ արված վերապահությունը, որպեսզի չընկալվի,

⁶⁹ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 54, թ. 20, ֆ. 114, ց. 2, գ. 133, թ. 12, Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 519, «Ժողովրդի ծայնը», Կ. Պոլիս, 22 հոկտեմբերի 1921 թ.:

թե Ռուսաստանը անդրկովկասյան ինքնիշխան հանրապետությունների համար սահման է գծում, ապա Կարսի թուրք-անդրկովկասյան պայմանագրի պարագայում «Թուրքիայի հյուսիսարևելյան սահման»-ի փոխարեն անպայման պետք է նշվեր «թուրք-անդրկովկասյան սահման»: Դրանով ցույց կտրվեր, որ ՌՍԴԽՀ-ն դեռևս հարգում է անդրկովկասյան հանրապետությունների ինքնիշխանությունը: Սա պետք է որակել որպես պատվիրակությունների կողմից թույլ տրված բացթողում:

Կարսի պայմանագրի 5-րդ հոդվածը, որը Մոսկվայի պայմանագրի 3-րդ հոդվածի փոքր-ինչ խմբագրված տարբերակն է, ամբողջությամբ վերաբերում է Նախիջևանի մարզին (նաև հավելված III-ը): «Թուրքիայի կառավարությունը և Ադրբեջանի ու Հայաստանի խորհրդային կառավարությունները համաձայն են, որ սույն պայմանագրի III հավելվածում նշված սահմաններում Նախիջևանի մարզը կազմի ինքնավար տարածք՝ Ադրբեջանի խնամակալության ներքո»⁷⁰:

5-րդ հոդվածում չկա Մոսկվայի պայմանագրի 3-րդ հոդվածի այն պայմանը, որ «Ադրբեջանը սույն խնամակալությունը չի զիջի մի երրորդ պետության»⁷¹: Խմբագրական այդ փոփոխությունը հույս ներշնչեց հայ հասարակական և ղեկավար շրջանակներին, որ հետագայում հնարավոր կլինի Նախիջևանը վերադարձնել Հայաստանին, մանավանդ որ խնդիրը դառնում էր խորհրդային պետության ներքին վարչատարածքային փոփոխության հարց, և Թուրքիան այլևս ի-

⁷⁰ ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թթ. 70-71, ֆ. 114, ց. 2, գ. 133, թթ. 12-13, Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 520:

⁷¹ Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 501:

րավասու չէր որևէ կերպ միջամտելու Նախիջևանի հետագա ճակատագրի հարցում: Նախիջևանի կցումը Հայաստանին հնարավոր էր համարվում ամբողջությամբ կամ ինքնավար կարգավիճակով: Նկատի էր առնվում, որ Նախիջևանը տնտեսապես, աշխարհագրական դիրքով ու պայմաններով կապված էր Հայաստանի հետ, իսկ Ադրբեջանն այդ երկրամասի հետ անգամ սահմանային որևէ շփում չուներ: Սակայն, ցավոք, հայ շրջանակների այդ հույսը չիրականացավ: Առաջ անցնելով նշենք, որ ԽՍՀՄ ղեկավարության գիտությամբ 1924 թ. փետրվարի 9-ին Ադրբեջանի խորհուրդների Կենտգործկոմը որոշում կայացրեց, որով Նախիջևանի երկրամասը ինքնավար հանրապետության (ՆԻՍԽՀ) կարգավիճակով մտցվեց Ադրբեջանի ՍԽՀ կազմի⁷² մեջ:

Խորհրդային իշխանության շրջանում ադրբեջանական իշխանությունները վարեցին ժողովրդագրական այնպիսի քաղաքականություն, որ Նախիջևանը աստիճանաբար հայաթափվեց: Եթե 1-ին աշխարհամարտից առաջ էրիվանի (Երևանի) նահանգի մաս կազմող Նախիջևանի հայության թիվը 53.4 հազար էր, ապա 1926 թ. հայերը կազմում էին ընդամենը 11.3 հազար, այսինքն՝ հայ բնակչության թիվը նվազել էր շուրջ 5 անգամ: Հետագայում այդ թիվն ավելի

⁷² 1929 թ. փետրվարի 18-ին Անդրկովկասի Կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահությունը լսեց Հայաստանի և Ադրբեջանի հողային և անտառային մի քանի վիճելի հարցերի մասին: Խոսքը Ղազախի և Դիլիջանի, Մեղրիի և Զեբրայիլի գավառների սահմանային խնդիրների մասին էր: Այն վերաբերում էր նաև Նախիջևանի նախկին գավառի հյուսիսարևելյան և հարավարևելյան մի շարք գյուղեր Հայաստանին վերադարձնելու հարցին: Անդրդաշնության Կենտգործկոմի նախագահությունը որոշեց Կարճևան, Ղուրտղուլաղ, Հորոդիս, Օզբին, Աղջախ, Դագին-Ավմալու, Իթկոան և Սուլթան բեկ գյուղերը թողնել ՀՍԽՀ կազմում: Նշված 8 գյուղերն իրենց հողատարածքներով, որոնք կազմել են 479 քառ. կմ, միացվեցին Հայաստանին:

նվազեց, իսկ Արցախյան շարժման նոր փուլում Նախիջևանը լրիվ հայաթափվեց:

Նախիջևանի ԻՍԽՀ հարցում պարադոքսն ու զավեշտալին այն է, որ խորհրդային իշխանության 70 տարիներին հայերի փոխարեն նրա հիմնական էթնիկ տարրը դարձան ադրբեջանցիները: Ստացվեց այնպես, որ Նախիջևանի ադրբեջանցիները ազգային ինքնորոշում ու ինքնավարություն ստացան Ադրբեջանական ԽՍՀ կազմում: Մինչդեռ միջազգային իրավունքի տեսանկյունից ճիշտ կլիներ, որ Նախիջևանը ինքնավար կարգավիճակով լիներ Հայաստանի վարչատարածքային կազմում:

Ինչ վերաբերում է Հայաստանի և Նախիջևանի սահմանագծին, ապա Կարսի պայմանագրով ՀՍԽՀ կազմում ներառվեց նախկին Երևանի գավառի հարավ-արևելքում գտնվող եռանկյունի մի հատված՝ շուրջ 260 քառ. կմ, և վերջին սահմանակետը դարձավ Արագդայան (Երասխավան) գյուղ-կայարանը, ինչպիսին մնում է մինչ օրս:

Կարսի պայմանագրի հաջորդ՝ 6-րդ հոդվածն ամբողջությամբ կարգավորում էր Բաթումի խնդիրը: Այն Մոսկվայի պայմանագրի 2-րդ հոդվածի բառացի կրկնությունն է:

Թուրքիայի սահմաններն անդրկովկասյան հանրապետությունների հետ որոշվում էին Կարսի պայմանագրի 4-6-րդ հոդվածներով ու I, II, III հավելվածներով, որոնք համապատասխանում էին Մոսկվայի պայմանագրի 1-3-րդ հոդվածներին և 1-ին (A), 2-րդ (B), 3-րդ (C) հավելվածներին: Կարսի պայմանագրի 7-րդ և 8-րդ հոդվածները վերաբերում էին Վրաստանի և Թուրքիայի սահմանամերձ շրջանների բնակիչների համար սահմանահատման հեշտացված պայ-

մաններ ստեղծելուն, ամառային և ծմեռային արոտավայրերից օգտվելուն, նախիրների տեղափոխմանը և այլն: Դրանց պարզեցված մաքսային, ոստիկանական և սանիտարական կանոնները պետք է սահմաներ խառը հանձնաժողովը⁷³: Այս կապակցությամբ Մոսկվայի պայմանագրի 9-11-րդ հոդվածներում անուղղակի և ընդհանուր ձևով խոսվում է երկու երկրների միջև մարդկանց և ապրանքների ազատ փոխադրումների համար առավելագույն բարենպաստ պայմաններ ապահովելու մասին: Կարսի և Մոսկվայի պայմանագրերի վերոնշյալ հոդվածների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ Կարսի պայմանագրում սահմանային փոխադրումների պարզեցված կանոնները գործում էին միայն վրաց-թուրքական սահմանային հատվածում: Կարսի պայմանագրի 7-8-րդ և հաջորդ հոդվածներում հայ-թուրքական սահմանային հատվածում փոխադրումների համար նպաստավոր պայմաններ ստեղծելու մասին ոչինչ ասված չէ⁷⁴:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարելի է եզրակացնել, որ Հայաստանին վերաբերող հարցերում ցուցաբերվել է խտրական մոտեցում, ինչը շեղում էր Մոսկվայի պայմանագրի սկզբունքից:

Կարսի պայմանագրի 10-րդ հոդվածը, կրկնելով Մոսկվայի պայմանագրի 8-րդ հոդվածը, վերաբերում էր երկու կողմերի կառավարությունների անմիջական ենթակայության տակ գտնվող տարածքներում այնպիսի կազմակերպությունների և խմբերի առաջացումն ու գոյությունն արգե-

⁷³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թթ. 71-72, ֆ. 114, ց. 2, գ. 133, թթ. 13-14, Հայաստանը փաստաթղթերում, էջ 520-521:

⁷⁴ Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա նա Թուրքիայի հետ գործնականում սահմանային շփում չունի:

լելուն, որոնք հավակնություն ունեին ստանձնելու մյուս երկրի ամբողջ տարածքի կամ դրա մի մասի կառավարումը⁷⁵: Նման հոդվածի անհրաժեշտությունը թելադրված էր նրանով, որ և՛ Թուրքիայում, և՛ ՌՍԴԽՀ-ում ու անդրկովկասյան հանրապետություններում այդ շրջանում դեռևս գործում էին քաղաքական զանազան կազմակերպություններ ու զինյալ խմբեր, որոնք փորձում էին դրսից պայքարի տարբեր ձևերով ու միջոցներով վերահաստատել իրենց իշխանությունը: Այդ առումով պայքարի մի խոշոր կենտրոն էր համարվում Կ. Պոլիսը, որտեղ կենտրոնացած էին մեծ թվով ռուս սպիտակ էմիգրանտներ, վրաց մենշևիկներ, «Մուսավաթ» և «Դաշնակցություն» կուսակցությունների կառույցներ ու խմբեր: Սակայն պետք է նշել, որ Մոսկվայի և Կարսի պայմանագրերի համապատասխանաբար 8-րդ և 10-րդ հոդվածները Կ. Պոլսում դեռ չէին գործում, քանի որ այդ ժամանակ քաղաքը դեռևս չէր անցել ԹԱՄԺ կառավարության զինվորական և քաղաքացիական անմիջական կառավարման ներքո: Բայց փոքր-ինչ ավելի ուշ, երբ քեմալականները տիրացան Կ. Պոլսին, և հոդվածի ուժը տարածվեց քաղաքի վրա, մինչ այդ Անգլիայի հովանավորությանն ապավինած այդ քաղաքական բազմապիսի կազմակերպություններն ու զինյալ խմբերը կա՛մ ջախջախվեցին, կա՛մ էլ հասցրին արտագաղթել ու ցաքուցիր լինել:

Կարսի պայմանագրի 11-րդ և 12-րդ հոդվածները, որոնք համեմատելի են Մոսկվայի պայմանագրի 10-րդ և 11-րդ հոդվածների հետ, կարգավորում էին մի կողմի քաղաքացիների իրավական կարգավիճակը մյուսի տարածքում՝

⁷⁵ Տե՛ս Հայաստանը փաստաթղթերում, էջ 520, 521:

նրանց նկատմամբ կիրառելով առավել բարենպաստման սկզբունքը: Տվյալ երկրի քաղաքացին օգտվում էր հյուրընկալող երկրի օրենքներից բխող բոլոր իրավունքներից ու պարտականություններից՝ բացառությամբ ազգային պաշտպանությանն առնչվող պարտականությունների, որոնցից նրանք ազատվում էին: Իսկ երկու կողմերի քաղաքացիների ընտանեկան, ժառանգությանը և գործունակությանը վերաբերող բոլոր իրավական հարցերը լուծվելու էին հատուկ համաձայնությամբ⁷⁶:

Կարսի պայմանագրի 13-րդ հոդվածը, որը նույնա-նում է Մոսկվայի պայմանագրի 12-րդ հոդվածի հետ, վերաբերում էր Թուրքիայի ինքնիշխանության տակ անցած տարածքների (Կարսի մարզի, Սուրմալուի և Արդվինի գավառների, Բաթումի մարզի հարավային հատվածի), ինչպես նաև Վրաստանի ինքնիշխանության տակ անցած՝ Բաթումի մարզի հյուսիսային շրջանի քաղաքացիներին, որոնք ցանկության դեպքում կարող էին հրաժարվել տվյալ պետության քաղաքացիությունից՝ ազատորեն վաճառելով ու իրենց հետ վերցնելով սեփական իրերի և գույքի արժեքը⁷⁷: Կարսի պայմանագրի 14-րդ և 16-րդ հոդվածները Մոսկվայի պայմանագրի 13-րդ հոդվածի տրոհված և վերախմբագրված մասերն են: Պայմանավորվող կողմերը պարտավորվում էին պայմանագրի ստորագրումից հետո՝ 6 ամսվա ընթացքում, գաղթականների վերաբերյալ հատուկ համաձայնագիր

⁷⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թթ. 72-73, ֆ. 114, ց. 2, գ. 133, թթ. 14-15, Հայաստանը փաստաթղթերում, էջ 503, 521-522, **Եսայան Ա.**, Հայաստանի միջազգային իրավական դրությունը (1920-1922), Երևան, 1967, էջ 328:

⁷⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 132, թ. 14, գ. 133, թ. 15, Հայաստանը փաստաթղթերում, էջ 503, 522:

կնքել, իսկ պայմանագրի ստորագրման օրից հաշված 2 ամսվա ընթացքում՝ երկուստեք վերադարձնել իրենց տարածքներում պահվող նախկին ռազմագերիներին և քաղաքացիական գերիներին⁷⁸: Դա նշանակում էր, որ մինչև 1921 թ. վերջը պետք է հայրենիք վերադառնային (եթե, իհարկե, ողջ էին) թուրք-հայկական պատերազմի հայ ռազմագերիները և Ալեքսանդրապոլից, Կարսից և այլ վայրերից էրզրում և այլ վայրեր քշված հայ քաղաքացիական անձինք (60 հազար): Վերադարձավ, սակայն, նրանց միայն մի մասը: Մնացած մասը մահացել էր ցրտից, քաղցից, բռնություններից ու կոտորածներից:

17-րդ հոդվածը, խմբագրական աննշան փոփոխությամբ, ըստ էության նույնանում է Մոսկվայի պայմանագրի 9-րդ հոդվածի հետ: Այն սահմանում է երկու կողմերի միջև հաղորդակցության միջոցների (երկաթուղային, հեռագրական և կապի այլ միջոցներ) անընդհատություն, մարդկանց և ապրանքների անխափան փոխադրումների երկկողմ պարտավորություններ: Իբրև դրա շարունակություն, ի տարբերություն Մոսկվայի պայմանագրի, Կարսի պայմանագրում տեղ է գտել մի առանձին հոդված՝ 18-րդը, որը վերաբերում է երկկողմ տնտեսական, առևտրական և հումանիտար հարցերի լուծմանը⁷⁹:

Կարսի պայմանագրի 19-րդ հոդվածով (Մոսկվայի պայմանագրի 14-րդ) կողմերը պարտավորվում էին 3 ամսվա ընթացքում կնքել հյուպատոսական կոնվենցիաներ: Եվ

⁷⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 132, թ. 14, գ. 133, թթ. 15-16, Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 503-504, 522-523:

⁷⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 132, թ. 13, գ. 133, թ. 16, Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 502-504, 522-523:

պետք է ասել, որ ՀՍԽՀ-ն Կարսում արդեն ուներ դիվանագիտական ներկայացուցիչ: Սակայն Հայաստանի ներկայացուցչությունը Թուրքիայում, ինչպես նաև Իրանում և մի քանի այլ երկրներում կարճատև կյանք ունեցավ: 1922 թ. կեսերին՝ ԽՍՀՄ կազմավորման նախապատրաստական աշխատանքներին համընթաց, Հայաստանի ներկայացուցչությունները լուծարվեցին:

Կարսի պայմանագրի վերջին՝ 20-րդ հոդվածը արձանագրում է պայմանագրի ստորագրման և կնքման իրողությունը: Ընդ որում, անդրկովկասյան կողմը նշված է ոչ թե մեկ հավաքական անունով, այլ երեք՝ Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի հանրապետությունների կառավարությունների լիազոր ներկայացուցիչների անուններով, որոնք էլ ստորագրել են պայմանագիրը:

Կարսի պայմանագրի ստորագրումից որոշ ժամանակ անց՝ 1921 թ. դեկտեմբերի 10-ին, Թիֆլիսում համապատասխան քարտեզագրմամբ հաստատվեց թուրք-անդրկովկասյան սահմանագիծը, որը տառացիորեն կրկնում էր Մոսկվայի պայմանագրով նշված սահմանագիծը⁸⁰:

Եթե խնդիրը դիտարկենք միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի տեսանկյունից, ապա իրար հետ ներքին կապ ու ընդհանրություն ունեցող Մոսկվայի և Կարսի պայմանագրերը անօրինական և բնույթով կողոպտիչ են, չունեն պարտադիր բնույթ, ուստի և կարելի է դրանք համարել անվավեր: Վիեննայի 1969 թ. մայիսի 23-ի կոնվենցիայի 52-րդ հոդվածում, որը վերաբերում է միջազգային պայմանագրային իրավունքին, նշվում է. «Պայմանագիրը համար-

⁸⁰ Տե՛ս ՀԱՍ, ֆ. 113, ց. 3, գ. 21, թթ. 185-187:

վում է առ ոչինչ, եթե կնքվել է ուժի սպառնալիքով կամ ընդունվել միջազգային իրավունքի սկզբունքների խախտումով»⁸¹: Հայտնի է, որ Մոսկվայի պայմանագիրը կնքվել է պայմանագրային իրավունքի սկզբունքների կոպիտ խախտումով, իսկ Կարսինը՝ Հայաստանի վրա քաղաքական ու բարոյական ճնշման գործադրմամբ ու ներագդմամբ:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածը կանխորոշեց Կարսի պայմանագրի հոդվածների կառուցվածքը, բնույթն ու բովանդակությունը: Անդրկովկասյան հանրապետություններն այնպիսի կարգավիճակում էին, որ ի վիճակի չէին որևէ շեղում կատարելու Մոսկվայի պայմանագրի սկզբունքներից, տարածքային-սահմանային ուղենշումներից: Ասվածն առավելաբար վերաբերում է Խորհրդային Հայաստանի կառավարությանը և նրա պատվիրակությանը, քանզի Մոսկվայի և դրա նմանակ Կարսի պայմանագրերից մեծապես տուժած կողմը Հայաստանն էր:

Հայաստանի պատվիրակությունից միգուցե հնարավոր չէր ավելին պահանջել, որովհետև այդ պայմանագրերի հիմնադրույթները կառուցված էին քեմալա-բոլշևիկյան գործակցության հիմքում ընկած կեղծ դրույթի վրա: Մյուս կողմից՝ Խորհրդային Հայաստանի պատվիրակության գործելակերպը թելադրված էր Հայաստանի այն ժամանակվա ռազմաքաղաքական կացությամբ, Ռուսաստանից լիակատար կախվածությամբ, հայ կոմունիստ պատվիրակների կուսակցական-կանոնադրական պարտավորվածությամբ և

⁸¹ Геноцид армян (документы и комментарий), сост. проф. Ю. Г. Барсегов, т. 2, ч. 2, Москва, 2005, с. 435.

այլն: Կարս մեկնելուց առաջ նրանք Մոսկվայից հրահանգ էին ստացել իրենց անելիքների շրջանակի մասին, ուստի անտեղի կլինի կշտամբել Հայաստանի պատվիրակության ղեկավար Ա. Մռավյանին կամ մեկ ուրիշի, որովհետև նրա փոխարեն ով էլ որ լիներ, միևնույն է, էապես ոչինչ չէր փոխվելու ի շահ Հայաստանի, ինչպես չհաջողվեց անգամ Անիի պատմամշակութային հնավայրի հարցում:

Արդ՝ 100-ամյա հեռավորությունից առնվազն Անիի ճակատագրի հարցում Հայաստանն ու հայ ժողովուրդն ունեն բոլոր հիմքերը՝ պատմաքաղաքական, իրավական, ազգային-մշակութային, հոգևոր-բարոյական և այլն, պետական մակարդակով աշխարհի տարբեր կառույցներում ծայն բարձրացնելու և պահանջելու հայոց պատմամշակութային հուշարձան համարվող Անիի վերադարձը:

Վերը նշվեց, որ Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերով Արփաչայի վերին հոսանքի շրջանում ընկած եռանկյունի հատվածի երեք գյուղերն իրենց շրջակա 250 քառ. կմ տարածքով սահմանագծողների անփութության հետևանքով (հաղորդակցության դժվարության պատճառաբանությամբ) թողնվեցին Թուրքիայի կազմում:

Կարծում ենք, որ մեր գիտաժողովը առաջարկության կարգով և փաստաթղթային համապատասխան հիմնավորումներով այս հարցը կդնի Հայաստանի ներկա իշխանությունների առջև, մանավանդ որ մեր ժամանակներում առհասարակ շատ է խոսվում քարտեզների միջոցով սահմանների ճշգրտման մասին, ինչպես նաև խոսակցություններ կան հայ-թուրքական միջպետական հարաբերությունների հնարավոր կարգավորման շուրջ: Ուստի իբրև հարցի մասնակի

լուծման մի տարբերակ պետք է Հայաստանին վերադարձ-
վեն գոնե հայոց խորհրդանիշներից մեկը համարվող Անին,
Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերով
Հայաստանի կազմում ներառված Թիֆլիս, Մեծ Ղմլու և
Ղըզլ-դաշ բնակավայրերը՝ իրենց շրջակա տարածքներով:

АРАРАТ АКОПЯН

***Ведущий специалист отдела новой и новейшей
истории Института истории НАН РА,
доктор исторических наук, профессор***

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ МОСКОВСКОГО И КАРСКОГО ДОГОВОРОВ

Резюме

Идейной и стратегической основой содержатель-
ного сходства Московского и Карсского договоров 1921 г.
было оформившееся весной-летом 1920 г. советско-
кемалистское сближение и союз. Этот союз одним из
своих острых концов был направлен против Севрского
договора 10 августа и Арбитражного решения президента
США В. Вильсона 22 ноября 1920 г, являющихся
воплощением мечты армянского народа.

По суммарным результатам Московского и Карс-
ского договоров Турция получила от Армении больше
территории, чем было предусмотрено «Национальным

турецким пактом». По Московскому российско-турецкому договору к Турции отошли Карсская область – 17250 кв. км, и провинция Сурмалу – 3450 кв. км, в общей сложности – 20700 кв. км исконно армянской территории. Кроме того, по требованию Турции Нахичевань – около 5500 кв. км территории, была передана ее младшему брату Азербайджану.

В этом контексте, если учесть, что незаконным (без голосования) решением Кавбюро ЦК РКП(б) от 5 июля 1921г. Нагорный Карабах – 4160 квадратных километров, был подарен Азербайджану, то, в результате этих антиармянских сделок, у Армении и армянского народа было отнято и присоединено к Турции и Азербайджану $20700 + 5500 + 4160 = 30360$ кв. км территории, что было больше, чем площадь Советской Армении и ее правопреемника – нынешней Республики Армения – 29,8 тыс. кв. км. Не говоря уже о потере более чем 90 тыс. кв. км четырех западноармянских провинций, подлежащих возврату Армении и армянскому народу по Севрскому договору.

Фактически Турция, проигравшая Первую мировую войну и совершившая тягчайшее преступление против человечества – Геноцид армян, вместо того, чтобы быть призванной к ответу и наказанной международным сообществом, наоборот, используя противоречия между великими державами, и разыгрывая перед

большевистской Россией ложную революционность и дружбу, не только не понесла наказания за свою политику геноцида и не вернула западноармянские провинции, предусмотренные Севрским договором, но даже получила как подарок по Московскому договору значительную часть восточноармянских территорий.

Совершенно правы те, кто характеризует Московский договор как сделку. Часть Московского договора, касающаяся Армении, с точки зрения международного права является нарушением в том смысле, в каком это предусмотрено Венской конвенцией о праве международных договоров 1969 года. Статья 34 Конвенции от 23 мая 2006 г. гласит, что «договоры могут относиться только к сторонам, подписавшим договор, что не создает обязательства или права для третьего лица, не являющегося стороной договора, без согласия последнего». В этом смысле Московский договор можно охарактеризовать как сделку по двум причинам: а) Москва пошла на территориальные уступки кемалистам за счет армянских земель, чтобы предотвратить их возможный переход к Антанте; б) вопрос о границах Армении решался без участия ее представителей.

Спустя столетие действительность Московского договора остается проблемой. Дело в том, что правительства двух международно не признанных государств – большевистской России и кемалистской Турции – за

спиной Армении и армянского народа, с грубым нарушением международного договорного права, заключили между собой договор, не имея границ друг с другом, и решили жизненно важные территориально-пограничные вопросы третьего государства, в данном случае Армении, без его ведома и участия.

***Ключевые слова:** Московский договор, Карсский договор, Карабекир, Ганецкий, Нахичеванская АССР, Ани.*

ARARAT HAKOBYAN

***Doctor of Historical Sciences, Professor, Leading
Researcher of the Department of Modern History of the
Institute of History of NAS RA***

**A HISTORICAL-COMPARATIVE “ANALYSIS” OF THE 1921
MOSCOW AND KARS TREATIES**

Summary

The ideological-political and strategic basis of the content similarity of the 1921 Moscow and Kars Treaties was the Soviet-Kemal rapprochement and alliance formed in the spring and summer months of 1920. With one of its sharp edges, it was directed against the August 10, 1920 Treaty of Sèvres – the embodiment of the dreams of Armenia and the

Armenian people, and the November 22 Arbitral Award of US President W. Wilson.

According to the results of the Moscow and its analogue Kars agreements, Turkey received more territory from Armenia than it was envisaged by its “National Pact”. According to the Moscow Russian-Turkish agreement, Kars province with 17,250 sq. km and Surmalu district with 3,450 sq. km – with a total area of 20,700 sq. km of native Armenian territory were transferred to Turkey. Besides, on demand of Turkey, the territory of Nakhichevan with around 5500 sq. km was handed over to its younger brother Azerbaijan. In this context, if we take into account that according to the July 5, 1921 illegal (without voting) decision of the Caucasus Bureau of the Central Committee of the Communist Party of Russia, Nagorno Karabakh with its 4160 sq. km, was also donated to Azerbaijan, consequently, as a result of these anti-Armenian deals, 30,360 sq. km area was taken away from Armenia and the Armenian people, which was actually larger than the territory of Soviet Armenia (SSR of Armenia) and its legal successor, the current Republic of Armenia – 29,800 sq. km. Not to mention about the four Western Armenian states – a territory of 90,000 sq. km to be returned to Armenia and the Armenian people under the Treaty of Sèvres.

In fact, Turkey, which lost the First World War and committed the gravest crime against humanity – the

Armenian Genocide, instead of being called to account and punished by the international community, on the contrary, using the contradictions between the great powers, playing a false revolution and friendship with Bolshevik Russia, was not only punished for its genocidal policy and did not return the Western Armenian states envisaged under the Treaty of Sèvres, but even received a considerable part of the Eastern Armenian territories as a reward under the Treaty of Moscow.

Those who describe the Treaty of Moscow as a deal are absolutely right. The part of the Moscow Treaty concerning Armenia violated from the point of view of international law in the sense that as stipulated in the 23 May 1969 Vienna Convention on the Law of Treaties, “contracts may apply only to the signatory parties to the contract, which do not create an obligation or a right for a third party that is not a party to the contract without the latter’s consent”. In this sense, the Moscow Treaty with its part concerning Armenia can be described as a deal. It is considered for two circumstances: a) Moscow made territorial concessions to the Kemalists at the expense of Armenian lands in order to prevent their possible side-taking towards the Entente; b) the issue of Armenia’s borders was resolved without the participation of its representatives.

A century later, the validity of the Moscow Treaty remains a problem. The point is that the governments of the

two internationally unrecognized states – Bolshevik Russia and Kemalist Turkey, with the gross violation of international treaty law behind Armenia and the Armenian people, signed an agreement with each other, in fact having no territorial-border contact with each other, and decided on the native territorial-border issues of another vital state, in this case Armenia, without its knowledge and participation.

Key words: *Treaty of Moscow, Treaty of Kars, Karabekir, Ganetsky, Nakhichevan ASSR, Ani.*

**ԽՈՐՀՐԴԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ
ՍԱՀՄԱՆԱԳԾՈՒՄԸ ԵՎ
ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄԸ 1921-1975 ԹԹ. ՀԽՍՀ
ՀԱՏՎԱԾՈՒՄ**

ԱՄԱՏՈՒՆԻ ՎԻՐԱԲՅԱՆ

***Խ. Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի
թանգարանագիտության, գրադարանագիտության և
մատենագրության ամբիոնի վարիչ, պատմական
գիտությունների դոկտոր***

amatun@yahoo.com

Քանալի բառեր – խորհրդա-թուրքական սահման,
սահմանագծում, սահմանազատում, խորհրդային Հայաս-
տան, Կարս, Անի, Կողբ, Կաղզվան:

Խորհրդա-թուրքական հարաբերությունները բավա-
կանին բարդ ու հակասական էին 1921-1975 թթ.: Մասնավո-
րապես սահմանազատումն առաջ էր բերում խորհրդային
Միության և Թուրքիայի Հանրապետության միջև որոշակի
խնդիրներ: Սկսած 1921 թ. Մոսկվայի պայմանագրից՝
խորհրդային Ռուսաստանը, տարված Արևելքում հեղափո-
խության գաղափարներով, Թուրքիային անում էր բավակա-
նին զիջումներ, այդ թվում և՛ սահմանազատման հարցերում:

Պետական սահմանը սահմանային գիծ է և այդ գծով անցնող հորիզոնական հարթություն: Այն որոշակիացնում է պետության սահմանը և համապատասխանաբար պետության ինքնիշխանության գործառության սահմանները: Պետական սահմանը բաժանում է տվյալ պետության տարածքը այլ պետություններից կամ այնպիսի միջազգային տարածքներից, ինչպիսին է, օրինակ, բաց ծովը: Սահմանը գծանշում է պետության տարածքը, որի վրա տարածվում է պետության ինքնիշխանությունը: Գոյություն ունեն ցամաքային, ջրային և օդային սահմաններ: Ցամաքային սահմանները գծվում են պայմանագրերի հիման վրա՝ կնքված երկու երկրների միջև: Որպես կանոն, դրանք գծվում են՝ հաշվի առնելով տարածաշրջանի ռելիեֆի առանձնահատկությունները (լեռներ, գետեր և այլն), և կոչվում են օրոգրաֆիկ: Երբեմն սահմանը գծվում է ուղիղ գծով երկու կետերի միջև (երկրաչափական սահման):

Սահմանի գծման գործընթացը սովորաբար ենթադրում է երկու փուլ՝ դելիմիտացիա (սահմանագծում) և դեմարկացիա (սահմանազատում): Ինչպես նշվեց, երկրների միջև սահմանը հաստատվում է, որպես կանոն, պայմանագրով: Նման դեպքերում սահմանագիծը մանրամասն նկարագրվում է միջազգային պայմանագրում, և դրան համապատասխանող տիրույթը նշվում է քարտեզի վրա, ինչը պայմանագրի անբաժանելի մասն է կազմում: Այս գործընթացը կոչվում է դելիմիտացիա: Խորհրդա-թուրքական դելիմիտացիայի հիմքը Մոսկվայի և Կարսի պայմանագրերն էին: Դեմարկացիան (ֆր. Demarcation – սահմանազատում) սահմանի որոշակիացումն ու գծանշումն է սահմանային նշանների միջո-

ցով, որոնք ամրագրվում են սահմանի դելիմիտացիայի մասին պայմանագրում: Սահմանազատման աշխատանքներն իրականացնելու համար կազմվում են խառը հանձնաժողովներ: Պայմանավորվող կողմերը բոլոր գործողությունների մասին կազմում են հատուկ փաստաթղթեր՝ սահմանագծի և սահմանային նշանների վերաբերյալ մանրամասն տեղեկություններ պարունակող արձանագրություններ, որոնց կցվում են այդ նշանների սխեմաները և նկարները: Սահմանազատման աշխատանքների ժամանակ կազմվում է սահմանագծի լայնամասշտաբ քարտեզ, տեղադրվում են սահմանանշաններ՝ սյուներ, փշալարեր և այլն, ու որոշվում դրանց տեղագրական կոորդինատները:

Պետական նշանների ստուգումն ու սահմանային նշանների վերականգնումը կոչվում է ռեդեմարկացիա (վերասահմանազատում):

Հայ-թուրքական սահմանը, որ գոյություն ունի ցայսօր, գծվել է Մոսկվայի և Կարսի պայմանագրերով: Չանդրադառնալով այդ պայմանագրերի կնքման նախապատմությանը, Մոսկվայի և Կարսի կոնֆերանսներին՝ ներկայացնենք Կարսի կոնֆերանսում սահմանագծման ընթացքում ծագած մի քանի հարցեր:

Կոնֆերանսի 1921 թ. սեպտեմբերի 26-ի առաջին իսկ լիազումար նիստում խորհրդային կողմը թուրքական պատվիրակությանը ներկայացրեց սահմանային և տնտեսական բնույթի առաջարկների հուշագիր: Սեպտեմբերի 27-ի նիստում ընդունվում են թուրքական պատվիրակության ղեկավար Քյազիմ Կարաբեքիրի հետևյալ երկու առաջարկները՝

ա) Մոսկվայի պայմանագրի սկզբունքների անփոփոխ ընդունում,

բ) սահմանային հարցերը ճշտող միացյալ հանձնաժողովի ձևավորում:

Սա նշանակում էր, որ պայմանագրի հոդվածների քննարկումը շատ կողմերով դառնում էր ձևական: Այնուամենայնիվ, պարզվում է, որ սահմանային մի քանի տեղամասեր վիճելի են. վրաց-թուրքական սահմանագծում՝ 1. Սարպ գյուղը, 2. սահմանը Սաբաուր գյուղի շրջանում, 3. Քավթառեթի գյուղը, իսկ հայ-թուրքական սահմանագծում՝ 1. Նոր Ղըզլ-դաշ և Վարդանլու գյուղերը, 2. Անին և Կողբը⁸²:

Նույն՝ սեպտեմբերի 27-ի նիստում խորհրդային պատվիրակության ղեկավար Յակով Գանեցկին բարձրացրեց Անիի ավերակների, Կողբի աղահանքերի և Ճորոխի շրջանի պղնձահանքերի հարցերը: Սահմանագծման աշխատանքներն արդյունավետ դարձնելու համար որոշվեց ստեղծել սահմանագծման միացյալ հանձնաժողով՝ Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցությամբ⁸³: Հանձնաժողովի կազմում ընդգրկվեցին Բ. Կուզնեցովը (ՌՍԴԽՀ, նախագահ), Նիկոլայ Գեդևանովը (Վրաստան, զինվորական), Վլադիմիր Թամրուչին (Հայաստան, զինվորական), Պ. Իգորովը (Ադրբեջան) և թարգմանիչ Ա. Լակտիոնովը: Թուրքական կողմից հանձնաժողովում էին մայոր Վեյսալ բեյը, Թալեաթ բեյը և թարգմանիչ Ահմեդ բեյը: Հանձնաժողովն իր հերթին բաժանվեց 2 ենթահանձնաժողովի՝ հայ-

⁸² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 21, թ. 15:

⁸³ Տե՛ս նույն տեղում, գ. 23, թ. 54:

թուրքական և վրաց-թուրքական սահմանները տեղում ուսումնասիրող և ճշտող:

Անդրկովկասի յուրաքանչյուր հանրապետության սահմանային խնդիրը Թուրքիայի հետ ճշտելիս պետք է մասնակցեր տվյալ հանրապետության ներկայացուցիչը⁸⁴: Առաջին նիստում (սեպտեմբերի 27) նախագահներ էին ընտրվել Բ. Կուզնեցովը և Վեյսալ բեյը: Արձանագրությունները կազմվում էին ռուսերենով և թուրքերենով, ապա տեքստերը՝ համաձայնեցվում իրար հետ: Որոշվում է 5 վերստանոց քարտեզով քննության առնել Անդրկովկասի հանրապետությունների և Թուրքիայի միջև եղած ընդհանուր սահմանը, ապա՝ անցնել սահմանների առանձին հատվածների քննությանը՝ հեշտից դեպի բարդ: Մինչև սահմանային բուն հարցերի քննարկմանն անցնելը Վեյսալ բեյը ցանկանում է տեղեկություն ստանալ Անդրկովկասի հանրապետությունների միջև գոյություն ունեցող սահմանների վերաբերյալ: Սակայն Կուզնեցովը դեմ է արտահայտվում և նշում, որ նպատակահարմար կլինի քննության առնել Անդրկովկասի հանրապետությունների և Թուրքիայի միջև ընդհանուր սահմանը: Նա հայտարարում է, որ «Մոսկվայի պայմանագրի առաջին հոդվածով որոշված սահմանագիծն անվերապահորեն ընդունվում է որպես հիմք, որից ոչ մի կողմ չի կարող նահանջել: Այդ հոդվածում նշված բոլոր սահմանային կետերը մնում են անփոփոխ»⁸⁵: Սակայն նա վերապահում է անում Անիի շրջանի՝ որպես պատմամշակութային հնավայրի և Կողբի աղահանքի՝ որպես տնտեսական կարևոր նշանակության

⁸⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 97:

⁸⁵ Նույն տեղում, գ. 21, թ. 25:

հարցի վերաբերյալ: Կողքի աղահանքի հարցի շուրջ վեճ է ծավալվում: Վեյսալ բեյը, հաշվի առնելով դրա տնտեսական նշանակությունը, գտնում է, որ այն պետք է քննի տնտեսական հանձնաժողովը:

Ամենացավոտը, թերևս, Անիի ավերակների վերադարձի հարցն էր: Հայկական կողմը մի հուշագիր էր պատրաստել, որը ներկայացնում է Յակով Գանեցկին: Հուշագիրն արժարժում էր Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք Անիի ավերակները Հայաստանին վերադարձնելու հարցը: Կողքի և Կաղզվանի աղահանքերի, Կարսի արոտավայրերի վերաբերյալ և տնտեսական բնույթի մյուս առաջարկներին թուրքական կողմը մերժողական պատասխան տվեց և վերապահություն արեց միայն հայոց պատմական Անի մայրաքաղաքի ավերակների տարածքը Հայաստանին վերադարձնելու հարցում, սակայն պայմանով, որ իրենք պետք է հարցում անեն Անգորայի կառավարությանը: Հետաքրքիր է Ք. Կարաբեքիրի հայտարարությունը. «Բացառություն է արվում միայն Անի քաղաքի համար, որ հայկական պատվիրակությանը հաճելի լինի: Թուրքական պատվիրակությունը Անի քաղաքի ավերակները թողնում է Հայաստանին՝ հաշվի առնելով այն պատմական նշանակությունը, որ այն ունի Հայաստանի և հայ բնակչության համար»⁸⁶:

Կոնֆերանսի լիազումար նիստերին զուգահեռ ընթանում էին սահմանային հանձնաժողովի աշխատանքները: Վիճելի էր Վարդանլու գյուղի (ներկայիս Ախուրյանի տարածաշրջանը, լքյալ) պատկանելության հարցը, քանի որ գյուղը գտնվում էր Արփաչայ գետի երկու ափերին: Անդրկովկաս-

⁸⁶ Նույն տեղում, թ. 131:

յան կողմը ցանկանում էր այն ներառել Հայաստանի կազմում, սակայն թուրքական կողմը որոշում է դրա պատասխանը հետո տալ: Վիճահարույց էր նաև Իբիշ և Նոր Ղըզլ-դաշ (ներկայիս Ամասիայի տարածաշրջանը) գյուղերի պատկանելության հարցը: Անդրկովկասյան կողմի նախնական առաջարկով սահմանագիծն անցնելու էր Իբիշ գյուղից արևելք, այսինքն՝ գյուղն անցնելու էր Թուրքիային, սակայն Նոր Ղըզլ-դաշ գյուղը (իրականում՝ ավերակներ) պետք է մնար Հայաստանին, քանի որ այն ընկած էր Արփաչայ գետի հովտում, և ամենահարմար ճանապարհը դեպի Ալեքսանդրապոլ անցնում էր այդ գյուղով: Սահմանային Վարդանլու, Իբիշ և Նոր Ղըզլ-դաշ գյուղերի հարցի քննարկումը հետաձգվեց հաջորդ նիստին: Սահմանային հանձնաժողովի հաջորդ նիստին մերժվեց Կողբի աղահանքի շահագործման հարցը, իսկ ավելի ուշ մերժվում է նաև Անիի հարցը և հանվում հետագա քննարկումից: Միացյալ սահմանային հանձնաժողովի հարցերը լուծվելու էին կոնֆերանսի լիազումար նիստում: Հայ-թուրքական և վրաց-թուրքական սահմանային հատվածներում ընկած 6 գյուղերի պատկանելության խնդիրը լուծելու համար Ք. Կարաբեքիրը ներկայացնում է սահմանագծման միջազգայնորեն ընդունված կանոնները: Ըստ նրա՝ գյուղերը կարող են այրվել, ավերվել ու ոչնչանալ, ուստի սահմանագիծն անցկացնելիս ավելի ճիշտ կլինի հիմք ընդունել կայուն բնական կետերը և գծերը՝ գետերը, լեռնագագաթները, ջրբաժանները և այլն: Ամենից առաջ հիմք կարող են լինել գետերը: Ընդ որում, եթե գետով սահմանագիծ է անցնում, և գյուղն ընկած է նրա երկու ափերին, սահմանը պետք է անցնի գետի հունով, այսինքն՝ գյուղի մի մասը

պետք է անցնի մեկին, մյուս մասը՝ մյուսին: Եթե սահմանն անցնում է լեռներով ու բարձունքներով, ապա սովորաբար հիմք է ընդունվում ջրբաժան գիծը: Իսկ եթե սահմանն անցնում է հարթավայրով կամ բլրոտ տեղանքով, ապա սահմանը գծելիս կիրառվում է ուղիղ գիծը որոշակի կետերի միջև⁸⁷:

Խորհրդային կողմը լիովին հավանություն է տալիս Կարաբեքիրի մատնանշած՝ սահմանների անցկացման կանոններին: Եվ քանի որ վիճելի Վարդանլու և Նոր Ղըզլ-դաշ գյուղերի միջով գետ է անցնում, ուստի խորհրդային կողմը չի առարկում, որ սահմանն անցնի գետով, ինչպես նշված է Մոսկվայի պայմանագրի տեքստում: Գանեցկին այն միտքն է արտահայտում, որ գյուղերի նման մեխանիկական բաժանման դեպքում, եթե տվյալ գյուղի բնակիչների շրջանում դժգոհություն առաջանա, ապա դժգոհ բնակիչները կարող են անցնել մյուս կողմը: Իբիշ գյուղը թողնվեց Հայաստանի կազմում: Միացյալ սահմանային հանձնաժողովը սահմանեց նաև սահմանային նշանները և դրանց տեղադրման կանոնները:

Կարսի պայմանագրի ստորագրումից հետո անհրաժեշտ էր ձևավորել խորհրդա-թուրքական խառը հանձնաժողով՝ հաստատված սահմանի երկայնքով սահմանանշաններ տեղադրելու, հարակից մի շարք խնդիրներ լուծելու նպատակով: Խորհրդա-թուրքական խառը հանձնաժողովի առաջին հանդիպումները կայացան 1924 թ. դեկտեմբերին և 1925 թ. հունվարին Թիֆլիսում: Խորհրդային կողմը թուրքական կողմի ղեկավար գեներալ Խալիբ բեյին առաջարկեց

⁸⁷ Տե՛ս **Հակոբյան Ա.**, Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Երևան, 2010, էջ 271-272:

աշխատանքներն սկսել 1925 թ. հունվարի 15-ին: Եղանակային պայմանները բարենպաստ էին, և հնարավորություն կար Արաքսի շրջանում սահմանագատման աշխատանքներն ավարտելու մինչև գետի վարարումների սկսվելը: Սակայն Խալիբ բեյը հրաժարվեց՝ պատճառաբանելով, որ թուրքական կողմը պատրաստ չէ ձմռանն աշխատելու: Խորհրդային կողմը տեղի տվեց, և 1925 թ. հունվարի 5-ի 2-րդ նիստում որոշվեց աշխատանքներն սկսել փետրվարի 15-ին: Արձանագրությունը ստորագրեցին երկու կողմերը⁸⁸:

1925 թ. փետրվարի 15-ին՝ ժամը 12:00-ին, խորհրդային պատվիրակությունը ժամանեց նշանակված վայրը՝ Ստորին Կարասուի և Արաքսի միախառնման տեղը: Երեք ժամից ավելի սպասելուց հետո խորհրդային պատվիրակությունը վերադարձավ Երևան: Մարտի 7-ին թուրքական կողմը Թիֆլիսում Թուրքիայի գլխավոր հյուպատոս Նուրի բեյի միջոցով հայտնեց, որ մարտի 15-ին թուրքական պատվիրակությունը կժամանի Երևան: Մարտի 9-ին խորհրդային կողմը տվեց իր համաձայնությունը: Խորհրդա-թուրքական պատվիրակությունների հանդիպումը տեղի ունեցավ մարտի 14-ին Մարգարա սահմանային կետում: Խորհրդային պատվիրակությունը բաղկացած էր 9 անդամից: Նախագահն էր Օտտո Կարկլինը, տեղակալը՝ Շաստիկովը: Հայաստանը ներկայացնում էին հանրապետության զինվորական կոմիսար Հովսեփ Սարատիկովը (Սարատիկյան) և Էջմիածնի գավգործկոմի նախագահ Հրանտ Ղարիբյանը: Թուրքական պատվիրակությունը բաղկացած էր 10 անդամից, որը ղեկավարում էր գլխավոր շտաբի մայոր Ֆահրի բեյը: Պատվիրա-

⁸⁸ ՏԵՄ ՀԱՍ, ֆ. 113, ց. 3, գ. 326, թթ. 17-21:

կությունների առաջին նիստը կայացավ մարտի 15-ին Երևանում: Նիստը բացեց Կարկիինը, Անդրկովկասի հանրապետությունների անունից ողջույնի խոսքով հանդես եկավ Վաշաձեն⁸⁹:

Չորրորդ լիագումար նիստին, որը կայացավ մարտի 22-ին, խորհրդային կողմը թուրքական կողմին ներկայացրեց խորհրդա-թուրքական սահմանազատման իր առաջարկը: Թուրքական կողմն անհամաձայնություն հայտնեց մի քանի հարցերի վերաբերյալ, որոնք որոշեցին քննել տեղում: Խոսքը Ստորին Կարասուի և Արաքսի միախառնման վայրում գոյություն ունեցող 2 կղզիների մասին էր: Արձանագրության մեջ հիշատակված էր միայն մեկը: Կարկիինը նշեց. «Կարսի պամանագրով մենք լիագործված ենք լուծելու Ստորին Կարասուի գետաբերանից սկսվող սահմանի հարցերը: Իսկ Ֆահրի բեյի հիշատակած 2-րդ կղզին գտնվում է Ստորին Կարասուի գետաբերանից հարավ և ընկած է Պարսկաստանի և ԽՍՀՄ-ի միջև»⁹⁰: Թուրքական կողմը հարց բարձրացրեց նաև Ինաբդաղ լեռան մոտ գտնվող կղզիների վերաբերյալ, որին ի պատասխան՝ Կարկիինը նշեց. «Դրանք ավազային գոյացություններ են, որոնք անընդհատ փոխում են իրենց տեսքը, այդ պատճառով մենք գտնում ենք, որ դրանք կպատկանեն այն կողմին, որին ավելի մոտ են ընկած»⁹¹: Սրանով հաստատվեց խորհրդա-թուրքական սահմանի այդ հատվածը, ապա քննարկվեց այդ հատվածում սահմանային պլանների տեղակայման հարցը:

⁸⁹ Տե՛ս նույն տեղում, գ. 329, թ. 12:

⁹⁰ Նույն տեղում, թ. 5:

⁹¹ Նույն տեղում, թ. 26:

Խորհրդա-թուրքական սահմանի մյուս հատվածի հարցը քննարկվեց մարտի 26-ի 5-րդ լիագումար նիստում: Քննարկման էր դրվել Նովրուզլուից Նաջաֆ Ալի ընկած հատվածը: Այս հատվածում վիճելի էր Զանգու և Արաքս գետերի միախառնման վայրի կղզին: Կողմերը համաձայնության չեկան, և որոշվեց արձանագրության մեջ նշել, որ Սարաջայլարից մինչև Ռամազան-Քենդից հարավ-արևելք ընկած հատվածը՝ Արաքսի բազուկների հատման վայրը, սահմանագիծը որոշված չէ: 5-րդ լիագումար նիստը շարունակվեց մարտի 29-ին Հաջի-Բայրամ բնակավայրում: Քննության դրվեց Մարգարայից մինչև Արփաչայի՝ Արաքս թափվելու վայրն ընկած հատվածի հարցը: Հաջորդ նիստում, որը տեղի ունեցավ ապրիլի 8-ին Լենինականում, քննության դրվեցին գետի հունի փոփոխության, գետի հունով սահմանի անցկացման, ձկնորսության, Արաքս և Արփաչայ գետերի կամուրջների և մի շարք այլ հարցեր: Խորհրդային պատմիրակությունը գլխավորում էր Շաստիկովը: Նշենք, որ նա բավականին կոշտ դիրքորոշում և անզիջում կեցվածք էր որդեգրել: Քննարկվեց Հաջի-Բայրամից մինչև Կարախան չայ ընկած հատվածի հարցը: Նորից վիճելի էր կղզիների հարցը: Ի վերջո 3 կղզիներից 2-ն անցան ԽՍՀՄ-ին, 1-ը՝ Թուրքիային:

Նիստի ժամանակ Ֆահրի բեյը հարց բարձրացրեց Արաքս և Արփաչայ գետերի ջրօգտագործման վերաբերյալ: Դեռ 1923 թ. հունվարի 25-ին Թուրքիան նոտայով տեղեկացնում և ինչ-որ չափով կշտամբում էր, որ Խորհրդա-թուրքական սահմանի մի մասը կազմող Արփաչայ գետից Ալեքսանդրապոլի դաշտավայրի ոռոգման համար ջուր վերցնելու հետևանքով թուրքական բնակավայրերը ոռոգման հնարավորությունից

գրկվել են⁹²: 1923 թ. փետրվարի 26-ի պատասխան նոտայով նշվել էր, որ Կարսի պայմանագրով որևէ սահմանափակում չկա ջրօգտագործման հարցում, և երկու կողմերը կարող են օգտվել հավասարապես: Պատասխան նոտայում նշված էր նաև, որ հարցում կարվի ՀՍԽՀ ջրային տնտեսություն, և «եթե հաստատվի թուրքական կողմի ասածը, ապա կկազմվի հիդրո-տեխնիկական հանձնաժողով՝ բոլոր հանգամանքները ճշտելու և ջրօգտագործման համաձայնագրի նախագիծ կազմելու համար»⁹³:

1925 թ. ապրիլի 4-ին Խորհրդային Հայաստանի ջրային տնտեսության աշխատանքների տեսուչ Ավետյանը հաշվետվություն է կազմում ոռոգման նպատակով սահմանային գետերից ջուր օգտագործելու վերաբերյալ: Նիստի ժամանակ որոշվեց ջրային հարցերով զբաղվելու համար ձևավորել առանձին հանձնաժողով, որի աշխատանքներն ընթանալու էին սահմանային հանձնաժողովի աշխատանքներին զուգահեռ: Խորհրդային պատվիրակության ղեկավար Շաստիկովը հարց բարձրացրեց Հայաստանի գյուղացիների կողմից թուրքական հատվածում մնացած արոտավայրերի հետագա օգտագործման վերաբերյալ: Թուրքական կողմը մերժեց առաջարկը: Որոշվեց երկուստեք հրաժարվել հանդիպակաց կողմում մնացած արոտավայրերի օգտագործման պահանջից⁹⁴:

Խորհրդա-թուրքական հանձնաժողովի 1925 թ. մայիսի 13-ի նիստի արդյունքներին ծանոթանում ենք ապրիլի 28-ին հանձնաժողովի անդամ Հովսեփ Սարատիկովին փոխարինած

⁹² Տե՛ս նույն տեղում, գ. 156, թ. 2:

⁹³ Նույն տեղում, թ. 3:

⁹⁴ Տե՛ս նույն տեղում, գ. 289, թ. 28:

Լենինականի գավառի զինվորական կոմիսար Աղասի Կնդեղյանի՝ ՀՍԽՀ Ժողկոմխորհին ուղարկած հաշվետվությունից⁹⁵:

Սահմանային հանձնաժողովի աշխատանքները շարունակվեցին մինչև 1926 թվականը: Հանձնաժողովի խորհրդային կողմի նախագահ Օտտո Կարկլինը Անդրդաշնության Ժողկոմխորհի նախագահ Սարգիս Լուկաշինին, Վրաստանի Ժողկոմխորհի նախագահ Շալվա Էլիավային, Հայաստանի Ժողկոմխորհի նախագահ Սարգիս Համբարձումյանին ուղարկած՝ խորհրդա-թուրքական հանձնաժողովի աշխատանքներն ամփոփող հաշվետվության մեջ, համադրելով կատարված աշխատանքների արդյունքները, ընդգծում է այն հանգամանքը, որ թուրքերը սկզբից ևեթ լուրջ չէին տրամադրված սահմանազատման աշխատանքներին⁹⁶: Այդ պատճառով աշխատանքները երկարաձգվեցին: Կարսի պայմանագրով գծված սահմանի և փաստացի տարածքի անհամապատասխանությունն առաջացնում էր լրացուցիչ դժվարություններ: «Բայց պետք է նկատել, որ որոշ անճշտությունները պայմանագրում զգալի օգուտ տվեցին մեր կողմին. նման դեպքերում մենք այսպես թե այնպես ինչ-որ բան «շահում» էինք»,- գրում է Կարկլինը⁹⁷:

Զիջելով Կարսը, Արդահանը և Սուրմալուն՝ խորհրդային պատվիրակությունը անզիջում կեցվածք էր ցուցաբերում Արաքսի կղզիների կամ այլ փոքրիկ տարածքների նկատմամբ: Փաստորեն, Վարդանլու գյուղի հարցը լուծվեց նրա մեծ մասի անցումով ԽՍՀՄ-ին: Աղբաբա լեռից հյուսիս ընկած

⁹⁵ Տե՛ս նույն տեղում, գ. 274, թ. 3:

⁹⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 1, թթ. 1-6:

⁹⁷ Տե՛ս նույն տեղում, թ. 2:

հատվածը (312 դեյաատին արոտավայր) և Կարա-Մահմեդի հատվածում երկու կարամահմեդյան բլուրները (61 դեյաատին արոտավայր) անցան ԽՍՀՄ-ին⁹⁸:

1926 թ. սեպտեմբերի 8-ին Թիֆլիսում ԽՍՀՄ-ի և Թուրքիայի Հանրապետության միջև ստորագրվեց Գերագույն (կամ Գլխավոր) պայմանագիր սահմանազատման աշխատանքների մասին: Անհրաժեշտ էր համաձայնեցնել նաև ջրօգտագործման հարցերը, որոնց լուծումը ևս հանձնված էր խառը հանձնաժողովին: 1927 թ. հունվարի 8-ին Կարսում ստորագրվեց «ԽՍՀՄ-ի և Թուրքիայի Հանրապետության գետերի, գետակների և առվակների ջրօգտագործման կոնվենցիան»⁹⁹:

1960-ական թվականներին առաջացավ խորհրդաթուրքական սահմանի ռեդեմարկացիայի խնդիր: 1926 թվականից անցել էր 40 տարի, և փոխվել էր սահմանային գետերի հունը, վերացել կամ առաջացել էին կղզյակներ, շատ վայրերում փոխվել էր սահմանային նշանների դիրքը: Ռեդեմարկացիա անցկացնելու նպատակով ԽՍՀՄ ԱԳՆ-ն 1965 թ. սեպտեմբերի 23-ին գրություն ուղարկեց Մոսկվայում Թուրքիայի դեսպանատուն, որին Թուրքիան դրական պատասխան տվեց: Թուրքիան առաջարկում էր բանակցություններն սկսել Անկարայում և քննարկել հետևյալ հարցերը՝

1. սահմանային շրջանների քարտեզների կազմում,
2. տեխնիկական աշխատանքները սկսելու ժամանակահատվածի որոշում,
3. տեխնիկական աշխատանքներ իրականացնող խմբի կազմի որոշում,

⁹⁸ Տե՛ս նույն տեղում:

⁹⁹ Տե՛ս նույն տեղում, թ. 24:

4. այն սահմանային հատվածների որոշում, որոնք պետք է արտացոլվեին սահմանային քարտեզների վրա,

5. օդանկարահանում, տեխնիկական մասերի որոշում,

6. սահմանային քարտեզների պատրաստումից հետո հատուկ հանձնաժողովի ձևավորում, որը պետք է զբաղվեր սահմանային վեճերի կարգավորմամբ:

1967 թ. փետրվարի 28-ին Անկարայում խորհրդա-թուրքական սահմանի ռեդեմարկացիայի մասին ԽՍՀՄ-ի և Թուրքիայի Հանրապետության միջև ստորագրվեց արձանագրություն: Այն կազմված էր 14 կետից: Աշխատանքներն իրականացնելու համար կազմվում է խորհրդա-թուրքական համատեղ հանձնաժողով¹⁰⁰:

1969 թ. հունվարի 20-ից մարտի 19-ը Մոսկվայում տեղի ունեցան խորհրդա-թուրքական համատեղ հանձնաժողովի նիստերը: Խորհրդային կողմի ղեկավարն էր Պավել Երմոշինը, թուրքական կողմինը՝ Շինասի Օյմանը: Նիստերի ժամանակ քննարկվեցին ռեդեմարկացիոն աշխատանքների տեխնիկական սկզբունքները և կարգը: Այդ փաստաթղթերի համաձայն՝ շուտով սկսվելու էին դաշտային աշխատանքները:

1970 թ. փետրվարի 24-ից մարտի 28-ը Անկարայում տեղի ունեցան խորհրդա-թուրքական համատեղ հանձնաժողովի հերթական նիստերը: Պատվիրակությունների կազմերը նույնն էին: Բանակցությունների ընթացքում կողմերը համաձայնեցրին և ստորագրեցին վերասահմանազատման մասին մի շարք փաստաթղթեր:

Հետաքրքրական է նշել ՀԽՍՀ տարածքում 1970 թ. հուլիսի 10-14-ին խորհրդային ենթահանձնաժողովի աշխա-

¹⁰⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 5, գ. 3, թթ. 67-70:

տանքը թուրքական ենթահանձնաժողովի հետ: Խորհրդային ենթահանձնաժողովի կազմում էին Ա. Բեսսոնովը, Մ. Զավերսկոյը, Գ. Նալբանդյանը և Բ. Շուշունովը: Ուսումնասիրությունից հետո պարզվեց հետևյալը. սահմանային 94-րդ, 135-րդ և 136-րդ սյուները տեղափոխվել էին խորհրդային տարածքի խորքը: Խախտվել էր 1926 թ. արձանագրությունը: Այս ամենի հետևանքով գրանցվել էր տարածքային նշանակալից կորուստ: Օրինակ՝ սահմանային 135-136-րդ սյուների տեղափոխման հետևանքով խորհրդային կողմը կորցրել էր 2 կմ² տարածք Ամասիայի շրջանում: Ինչպես պարզվեց, թուրքերը փաստորեն զավթել էին այդ տարածքը և սյուները տեղափոխել խորհրդային հատված: Չնայած ակնհայտ փաստերին՝ ենթահանձնաժողովի թուրքական կողմը հրաժարվեց այդ մասին փաստաթուղթ ստորագրելուց: Հարցը հանձնվեց խորհրդա-թուրքական համատեղ հանձնաժողովին:

Խորհրդա-թուրքական համատեղ հանձնաժողովը 1973 թ. ավարտեց իր աշխատանքները, և արդեն սեպտեմբերին Մոսկվայում պետք է ստորագրվեին վերասահմանազատման փաստաթղթերը, սակայն դա տեղի ունեցավ 1973 թ. դեկտեմբերի 1-29-ը Անկարայում: Այս ամենը պատահականություն չէր: Թուրքերն ամեն ինչ հաշվարկել էին: Նրանք զանազան պատճառներով հետաձգում էին փաստաթղթերի ստորագրումը՝ ունենալով որոշակի և կոնկրետ հարցեր լուծելու նպատակ: Անհասկանալի պատճառներով խորհրդային պատվիրակությունը գնաց զիջումների և համաձայնեց ռեդեմարկացիոն փաստաթղթերը ստորագրել Անկարայում:

Խորհրդային պատվիրակությունը ղեկավարում էր դեսպան Պավել Երմոշինը, տեղակալը գեներալ-մայոր Պյոտր Ի-

վանովն էր, Վրաստանի ներկայացուցիչը՝ պատմական գիտությունների թեկնածու Օթարի Գիզինեշվիլին, Հայաստանի ներկայացուցիչը՝ պետական անվտանգության գնդապետ Գուրգեն Նալբանդյանը (1902-1998): Պատվիրակության նախագահի տեղակալ Իվանովը պնդում էր պատվիրակության կազմից հանել Վրաստանի և Հայաստանի ներկայացուցիչներին, սակայն Երմոշինը որոշեց նրանց հրավիրել եզրափակիչ նստաշրջանին: Թուրքական պատվիրակության նախագահն էր դեսպան Մուստաֆա Քենանօղլուն:

1973 թ. դեկտեմբերի 3-ին՝ առաջին նիստի ժամանակ, իր ողջույնի խոսքում Մուստաֆա Քենանօղլուն որոշակի վճռականությամբ նշեց հանձնաժողովի կողմից փաստաթղթերի ստորագրման անհրաժեշտությունը, «որը կերաշխավորեր խորհրդա-թուրքական սահմանի անփոփոխությունը»¹⁰¹: Նրա ելույթից պարզ էր արդեն, որ թուրքերի հիմնական նպատակը համատեղ հանձնաժողովի տեխնիկական իրավասություններից դիմակավորված անցումն էր և իրենց համար ձեռնտու քաղաքական բնույթի փաստաթղթի մշակումը: Խորհրդային պատվիրակությանը, բնականաբար, այս ամենն անհանգստացրեց: Մինչև դեկտեմբերի 19-ը ամեն ինչ ընթանում էր իր հունով, մինչև որ հերթը հասավ մամուլի համար արվելիք հայտարարությանը: Հայտարարության խորհրդային նախագիծը կարճ էր և քաղաքական ենթատեքստ չէր պարունակում, իսկ թուրքական նախագիծը երկար էր և ուներ այսպիսի հատված. «Պայմանավորվող կողմերը գտնում են, որ այս վերջին դրա-

¹⁰¹ **Հարությունյան Ա.**, Խորհրդա-թուրքական սահմանի վերասահմանագծման պատմությունից, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 2008, № 1, էջ 179:

կան առաջընթացը խորհրդա-թուրքական հարաբերություններում, որոնք զարգանում են հոգուտ երկու կողմերի և ինքնիշխանության, իրավահավասարության, տարածքների ամբողջականության և ներքին գործերին չմիջամտելու սկզբունքները հարգելու շրջանակներում, կարևոր ներդրում է համագործակցության համար տարբեր բնագավառներում»¹⁰²:

We wanted to take a step to make April 24 not just a memorial for the genocide, but a day of resistance against the current representatives of the fascist Union and Progress Committee who carried out the genocide.

¹²⁹ Fermun Çirak had a checkered life and appears to have been radicalized at a young age. He fled Turkey after the 1980 military coup, first moving to France where he worked as the bodyguard of Yilmaz Güney. He later joined the military wing of the Communist Party of Turkey (TKP/ML) and trained in Lebanon’s Beqaa Valley. From 1991-1992 he fought in the First Nagorno-Karabakh War against Azerbaijan. In July 2015, he became a commander of the International Freedom Battalion (IFB) that organized international volunteers to support the YPG in their fight against the Islamic State.

¹²⁹ “Nubar Ozanyan Armenian Brigade declared”, ANF News, April 24, 2019, <https://anfenglish.com/rojava-northern-syria/nubar-ozanyan-armenian-brigade-declared-34506>

The Armenian people won't just condemn the genocide and remember the lost. We want to spread the hope that they will also fight for them. Burdened by the knowledge that the genocide that happened 104 years ago continues today in different guises, we formed our self-defense force against all oppression, tyranny, massacres and assimilation attacks.”¹³⁰

The Nubar Ozanyan Brigade, also known as the Armenian tabur, is located in the Khabur region of northern Syria. The area consists of over thirty villages along the Khabur river, many of which have been historically inhabited by Christians. The Islamic State launched an attack on the Khabur Valley in February of 2015 and kidnapped over two hundred Assyrians who they held in captivity for over a year. The captives were only released after the church negotiated the payment of millions in ransom money¹³¹. After the defeat of the Syrian caliphate in March 2019, some of the Christian population has returned, but struggle to rebuild their lives amidst the ongoing instability.

¹³⁰ Hinnant, Lori: “Ransomed: The freeing of 226 Christians from the Islamic State,” December 6, 2016, AP, <https://www.ap.org/explore/a-savage-legacy/ransomed--the-freeing-of-226-christians-from-islamic-state.html>

¹³¹ Hinnant, Lori: “Ransomed: The freeing of 226 Christians from the Islamic State,” December 6, 2016, AP, <https://www.ap.org/explore/a-savage-legacy/ransomed--the-freeing-of-226-christians-from-islamic-state.html>

In September of 2020 and again in October 2021, I visited the Armenian tabur in the Khabur Valley. Their outpost was built in a village of semi-destroyed buildings with rickety chairs and barely functioning water faucets. For hours at a time, there would be no electricity at all. The walls of their small meeting room were adorned with portraits of an assortment of prominent Armenians throughout history. Two of the women were Sose Mayrig (née Vartanian) born in 1868 who fought in self-defense units known as *fedayi* to defend Armenians from persecution during the late Ottoman Empire, and Zabel Yesayan, a novelist and professor of literature born in 1878.

In addition to military training, the members of the unit are also taught the language and history of Armenia. I was invited to watch part of their training session, where they performed several practice drills speaking Armenian instead of Arabic. Although they were formed to fight the Islamic State, since Turkey occupied another swath of Syrian land during its intervention in October 2019, the unit now finds itself on the frontlines of the area occupied by Turkey and its militias. With the Turkish-backed armed groups less than ten miles away from their outposts, the descendants of Armenian genocide survivors are now primarily defending their region from Turkey.



[Members of the Martyr Nubar Ozanyan Brigade training outside a church near Tel Tamer. Photo by the author.]

In response to the Turkish intervention in October 2019, both the United States and Russia signed two separate ceasefire agreements with Ankara. However, on the ground there is no ceasefire. When I visited areas

around the frontlines for a week in early October 2021, I heard bombardments every single day. About half the villages around Tel Tamer are empty; while about half are still inhabited by civilians. At the time of my visit, the villages that were being constantly attacked were Dirdara, Taweela, and Um al Kayf, among others.

The Armenian tabur is currently responsible for defending two areas along the frontlines. Over the past year, the Turkish military and its proxies have not taken any more territory. However, there are constant clashes along the frontlines around Tel Tamer. One of the leaders of the Armenian tabur explained to me that he believed Turkey's current objective is to prevent stability, and thereby prevent the return of civilians to the areas occupied by Turkey, as well as the areas still held by the SDF on the frontlines. "All this is a preparation to empty your enemy areas before your operation. Three commanders of the Tel Tamer Military Council were assassinated. But there was no land operation."¹³² It is not just the instability that prevents civilians from returning, but also the fact that in some cases their properties have been confiscated, as the following example illustrates:

"Yesterday an Armenian came here – he was from Serêkaniyê [Ras al-Ayn], but he left when the war started.

¹³² Interview with leader of the Armenian Unit, Tel Tamer, October 2021.

Now an Arab family took over his business in Serêkaniyê. The moment when people fled – they left things behind. Warfare lasted twelve days; the ceasefire was on the tenth day. During the last two days they were bringing tanks and armored vehicles and stealing things. They were even killing each other for those things.”

One of the Armenian women whose family is Christian told me that when she first heard that there were Armenian Muslims, that she rejected the idea, claiming it was impossible for Muslims to be Armenians. Although she grew up in one of the larger cities of northern Syria, where she attended school, she had never learned much about the history of the genocide, and how some Armenian orphans were raised as Muslims in Kurdish or Arab families. She told me that she learned this history only after joining the tabur. She now understands that they were forced to convert, and that it was “not their fault,” as she put it¹³³.

The Armenian Social Council in Al-Hasakah

After the creation of the Autonomous Administration, many communities across the region have formed local councils as part of their new institutions of self-government. In late 2019, preparations began to

¹³³ Interview with member of the Armenian Unit, Tel Tamer, October 2021.

create an Armenian council. In early 2020, the Armenian Social Council was formed in Al-Hasakah which provides Armenian language and history classes. The Council is also conducting a census in order to document the true size of the Armenian community in North and East Syria. As explained above, many Armenian children were orphaned during the genocide and raised by Kurdish or Arab families.



[Flag of the Armenian Social Council in Al-Hasakah.
Photo taken by the author.]



[Armenian Language Courses taught at the Armenian Social Council in Al-Hasakah. Photo taken by the author.]

I interviewed Arif Qesebiyan, the co-chair of the Armenian Social Council. I asked her how they went about conducting the census. She explained that they visit every local commune and ask for information about Armenians who are registered there. Because their names were often Arabized, it is not possible to identify Armenians simply by their names. Instead, the heads of the local communes are asked whether they are aware of any families of Armenian descent in his or her commune. If the co-chair of the commune is aware of any such families, the members of the Social Council then visit those people and ask about

their family history. They also conduct outreach through social media, and invite people to celebrate Armenian holidays and attend theatrical performances about the history of the region.

According to Arif Qesebiyan, since they began the census in July 2020 until September 2021, they had registered around 10,000 Armenians in Derik, Qamishli, and Al-Hasakah, which are all part of the Cazira canton. There are officially seven cantons that are part of the Autonomous Administration. Until now, the Social Council is still working to complete the census in just one of the seven cantons, and hence the total size of the Armenian population in North and East Syria is yet to be determined.

الإحصائيات التي قام بها المجلس الاجتماعي الأرمني

اسم الثلاثي	
اسم الزوج/الزوجة	
عدد الأولاد	
المنطقة التي هاجر منها وتاريخها	
المنطقة التي يسكنها وتاريخ الهجرة إليها	
الديانة المنتمية إليها حالياً	
تصنيف تواريخ الهجرة من الإبادة والحروب ١٩١٥-١٩٢٨	
نوعية العمل التي يعمل حالياً	
الملاحظات	

[Questionnaire used by the Armenian Social Council as part of their census to identify people of Armenian descent in North and East Syria. Photo taken by the author.]

Testimonies of Armenian Muslims in Northeast Syria

To provide a sense of the many challenges faced by Armenians in northern Syria, I will include below

fragments from a few of my interviews. During my most recent visit in September-October 2021, I interviewed over fifteen Armenians, or people of Armenian descent, including both Muslims and Christians. Below I will highlight interviews with four people, who are all Muslim Armenians living in the city of Al-Hasakah, and who all spoke Kurdish¹³⁴. By including excerpts from my interviews, my intention is to allow their voices to be heard, without any filter or interpretation imposed on them. The excerpts are intended to shed light on some of their family histories, highlight how they currently identify, and how they relate to the central government in Damascus as well as the local government in the northeast. I will begin with three people who are active in the Autonomous Administration, and then turn to another person who works for the institutions of the central government.

Armenians who work in the Autonomous Administration in Northeast Syria

Holmes: How do you identify?

Arif: I am Armenian.

Arteen: I am Armenian. If they ask more, I can say the country – but normally I don't say I am Syrian.

¹³⁴ Because I do not know Kurdish, I relied on a translator for interviews with Kurdish speakers.

Haiak: I am Armenian. Our parents and relatives, although they speak Arabic and Kurdish, they don't say I am a Kurd or Arab. They just say they are Armenian.

Holmes: What did you all learn about Armenian history growing up in regime schools in Syria?

Haiak: we never studied anything about Armenia in the regime schools. It was all about the Arabic language and culture. For those who didn't convert to Islam but stayed Christian, they could take Armenian language classes at the Armenian church, but only about three hours a week maximum.

Holmes: You are now conducting a census to try to understand the size of the Armenian population in North and East Syria, including both Muslims and Christians. Are there any people you've encountered who are either unwilling or afraid to identify openly as Armenians?

Arif: There was one case of a sheikh, he is a tribal leader. By origin he is Armenian, he has a big family. He told us: 'I am known among the people as a tribal leader and I am Muslim, so if I say I am Armenian I would have a problem.' His tribe are not all Armenians, and so this may affect his situation in the tribe. He is in an area where the Baggara and Ageedat live; he is sheikh of a considerable number of people.

Holmes: What will you do after you finish the census?

Arif: This is a long process it will take a long time. We don't have a plan for what to do later. We will publish it or tell the international news agencies and research centers. Because there were 1.5 million people killed in the genocide. Who is going to compensate them? They lost their language and family members. The Turks should pay the price.

Armenians who work for government/regime institutions in Northeast Syria

Holmes: What is your name? What do you do for a living?

Bedros: My name is Bedros. But in the Syrian registry my name is Mohammed. I work for the Directorate of Water for the Syrian Government. My salary is 50,000 SYP, which is 15 USD per month. My salary is little, but if I get sick, I have health insurance. If I worked for the Autonomous Administration, I would have problems when I go to the regime areas, like Aleppo.

Holmes: How do you identify?

Bedros: I am Armenian.

Holmes: What happened to your family in 1915?

Bedros: My grandfather's name was Ohannes Krikor Tatariyan. Ohannes was six-years-old when his parents were taken by the Ottomans. He was taken in Urfa and forced to walk to Mardin, following the Ottoman

soldiers on their horses. The group slept at night, but when he woke up in the morning he was alone... He sat outside a shop in Mardin. When the shopkeeper came, he took care of him. Then a Kurdish merchant from Amude came. His name was Aziz Khash Khalaf, he was Kurdish and Muslim, and he took Ohannes with him to Amude and raised him there. So my grandfather lost both his language and religion when he was just six years old. But they were doing him a favor because Ottoman soldiers would come and look for Armenian children even after 1915, until 1920. If they said his name is Hussein, they would think he was Muslim. Until the French Mandate started in 1920, Ottoman soldiers would come here and look for Armenians.

My grandfather got married to two Kurdish women. He was raised as a Muslim, but he always remembered that he is Armenian. He didn't say I am a Kurd or Arab. When he was 60 years old, some of his relatives were searching for their families. His cousins in Aleppo found him; but they stayed Christian, they have shops in Baron Street. They had the same name Ohannes Tatariyan.

His cousins took him to Aleppo, and they asked him to convert back to Christianity. But he said I'm now 60 and I have two wives. If I convert back to Christianity, even if I'm not killed, my wife will be divorced from me. Then his cousins in Aleppo insisted he should convert back to

Christianity, but he refused. After a few years, he lost contact with his cousins – because the Christians saw Islam as a factor behind the genocide. They could not accept that he refused to convert back to Christianity.

Conclusion

The creation of a semi-autonomous region in Northeast Syria has created space for the Armenian minority, in particular those whose ancestors converted to Islam, to begin to reclaim their heritage. In addition to providing language and history courses to Muslim Armenians, who previously had few opportunities to learn Armenian, the Social Council is also conducting a census. The work of the census is still ongoing at the time of writing. However, by finding and identifying Muslim Armenians, or those Christian Armenians whose ancestors converted to Islam in the aftermath of the genocide, the Council is hoping to document the true size of the Armenian community in Northeast Syria. It is also breaking a significant social taboo by allowing “hidden Armenians” to begin to identify openly as Armenian for the first time.

The Nubar Ozanyan unit was also formed by Armenians and represents one of the newest additions to the Syrian Democratic Forces. The unit includes men and

women, as well as Muslim and Christian Armenians, in addition to international volunteers of Armenian descent.

Emerging out of the chaos of the Syrian conflict, Armenians are actively involved in shaping military and civilian institutions in the semi-autonomous region of Northeast Syria. This paper has endeavored to add nuance to our understanding of the political and social experiment underway in Northeast Syria, and highlight forms of cooperation between Kurds and Armenians as a legacy of the Republic of Mount Ararat. However, the continued existence of the semi-autonomous enclave is uncertain. At the time of writing, the Syrian regime continues to attempt to retake territory it lost in 2012 and reassert central government control over all of Syria, while Turkey continues to threaten to launch another cross-border intervention.

Selected interviews with Armenians in Syria¹³⁵:

1. Female Co-Chair Armenian Civil Council, in Al-Hasakah
2. Male Co-Chair Armenian Civil Council, in Al-Hasakah
3. Bedros in Al-Hasakah

¹³⁵ Names have been withheld to protect the identity of those who were interviewed.

4. Armenian student in Al-Hasakah Firat University
5. Armenian student, formerly at Aleppo University, now at Rojava University in Al-Hasakah
6. Archivist at the Armenian Social Council
7. Media relations of the Armenian Social Council
8. Armenian shop owner in Al-Hasakah
9. Armenian automobile mechanic in Raqqa
10. Armenian musician from Raqqa, now in Qamishli
11. International volunteer from Europe in the Martyr Nubar Ozanyan Brigade, of Armenian descent
12. International volunteer from North America in the Martyr Nubar Ozanyan Brigade, of Armenian descent
13. Commander of Martyr Nubar Ozanyan Brigade
14. Commander of Martyr Nubar Ozanyan Brigade
15. Member of the women's units of the Martyr Nubar Ozanyan Brigade

ԷՄԻ ԱՌԻՍՏԻՆ ՀՈԼՄՍ

***Վաշինգտոնի Վիլսոն կենտրոնի արտաքին
հարաբերությունների խորհրդի միջազգային
հարաբերությունների հարցերով փորձագետ,
Ջոնս Հոփկինսի համալսարան***

ՀԱՅԵՐԸ ԿԻՍԱԻՆՔՆԱՎԱՐ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ.

ԱՐԱՐԱՏ ԼԵՌԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՍԻՐԻԱՅԻ ԻՆՔՆԱՎԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ամփոփում

Արարատ Լեռան Հանրապետությունը (The Republic of Mount Ararat), որն իր անկախությունը Թուրքիայի երիտասարդ հանրապետությունից հռչակեց 1927 թ., արդյունք էր քրդական «Հոյբուն» կուսակցության և «Հայ հեղափոխական դաշնակցության» միջև ստորագրված համագործակցության պայմանագրի: Սույն հոդվածը համառոտ ակնարկ է գրեթե մոռացված Արարատ Լեռան Հանրապետության մասին նախքան Հյուսիսարևելյան Սիրիայի հայերի կողմից ստեղծված երկու նոր քաղաքական և ռազմական ինստիտուտների վերլուծությունը: Արարատյան ապստամբության ժառանգությունը շարունակում է ձևավորել ներկան առնվազն երեք պատճառով: Նախ՝ հայ փոքրամասնության շատ ներկայացուցիչներ, որոնք այժմ բնակվում են Հյուսիսարևելյան Սիրիայում, նույնանում են որպես «վերապրածների ժառանգներ»՝ ներառյալ քրիստոնյաները, ինչպես նաև այն հայերը, որոնց նախնիները մահմեդականություն են ընդունել ցեղասպանության հետևանքով: Երկրորդ՝ 2012 թ. կեսերին Բաշար ալ-Ասադի վարչակարգի ուժերն սկսեցին հեռանալ Սիրիայի հյուսիս-արևելքից՝ դիմակայելու համար հակակառավարական ցույցերին, որոնք վերածվում էին քաղաքացիական պատերազմի: Կառավարական ուժերի դուրսբերումը Սիրիայի հյուսիս-արևելքից տարածք բացեց ոչ արաբա-

կան փոքրամասնությունների համար՝ վերականգնելու իրենց մշակութային ժառանգությունը, ինչը ևս մեկ անգամ հանգեցրեց քրդերի, հայերի և ասորիների համագործակցությանը: Ի վերջո 2019 թ. հոկտեմբերին՝ Սիրիա թուրքական ներխուժման ժամանակ, Սիրիայում Հայոց ցեղասպանության ամենամահաբեր վայրերից մեկը՝ Ռաս-ուլ-Այնը, անցավ Թուրքիայի վերահսկողության տակ: Հարյուրհազարավոր խաղաղ բնակիչներ փախան, այդ թվում՝ հայ ընտանիքներ, որոնք դեռ ապրում էին Ռաս-ուլ-Այնում, որը հայտնի է քրդերեն Սերիկանիե (Serêkaniyê) և արամերեն Ռիշ Այնո (Rish Ayno) անուններով: Հոդվածը հիմնված է 2015-2021 թթ. Սիրիայի հյուսիսում իրականացված դաշտային հետազոտությունների վրա:

Քանալի բառեր. Հայոց ցեղասպանություն, Արարատ լեռան Հանրապետություն, Սիրիական հակամարտություն, Թուրքիայի արտաքին քաղաքականություն, մահմեդական հայեր, քուրդ-հայկական համագործակցություն, Հյուսիսային և արևելյան Սիրիայի ինքնավար վարչակազմ (AANES), Սիրիայի դեմոկրատական ուժեր (SDF):

ЭМИ ОСТИН ХОЛМС

Научный сотрудник по международным делам

Центра Уилсона,

кандидат наук, Университет Джона Хопкинса

**АРМЯНЕ В ПОЛУАВТОНОМНЫХ РЕГИОНАХ:
РЕСПУБЛИКА ГОРЫ АРАРАТ И АВТОНОМНАЯ
АДМИНИСТРАЦИЯ СЕВЕРНОЙ И ВОСТОЧНОЙ
СИРИИ**

Резюме

Республика Горы Арапат (The Republic of Mount Ararat), провозгласившая свою независимость от молодой Турецкой республики в октябре 1927 года, возникла в результате официального договора о сотрудничестве между Курдской лигой Хойбун и Армянской революционной федерацией Дашнакцутюн. В статье представлен краткий обзор почти забытой республики Горы Арапат, прежде чем перейти к анализу двух новых политических и военных институтов, созданных армянами на северо-востоке Сирии. Наследие Арапатского восстания продолжает формировать настоящее по крайней мере по трем причинам. Во-первых, многие представители армянского меньшинства, проживающие в настоящее время на севере Сирии, идентифицируют себя как «потомки выживших», в том числе христиане, а также те армяне,

чьи предки обратились в ислам после геноцида. Во-вторых, в середине 2012 года силы режима Башара Асада начали вывод войск с северо-востока Сирии для противостояния антиправительственным протестам, перераставшим в гражданскую войну. Вывод правительственных войск с северо-востока открыл пространство для неарабских меньшинств, чтобы вернуть себе свое культурное наследие, что снова привело к сотрудничеству между курдами, армянами и ассирийцами. Наконец, в октябре 2019 года, во время турецкого вторжения в Сирию, одно из самых смертоносных мест геноцида армян в Сирии – Рас-эль-Айн – перешел под контроль Турции. Сотни тысяч мирных жителей бежали, в том числе армянские семьи, которые все еще жили в Рас-эль-Айне, известном как Серекание (Serêkaniyê) на курдском языке и Риш-Айно (Rish Ayno) на арамейском языке. Статья основана на полевых исследованиях, проведенных на севере Сирии в период с 2015 по 2021 год.

Ключевые слова: Геноцид армян, Республика горы Арарат, сирийский конфликт, внешняя политика Турции, армяне-мусульмане, курдско-армянское сотрудничество, Автономная администрация Северной и Восточной Сирии (ААНЕС), Сирийские демократические силы (СДС).

**ԿԱՐՍԻ 1921 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի
«ՊԱՅՄԱՆԱԳՐԻ» ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ
ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
ԴՐԱ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԳՈՐԾԱԴՐՄԱՆ
ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ**

ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ ՊԻ Հայկական հարցի և Հայոց
ցեղասպանության բաժնի վարիչ,
պալմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*
mararmts@yahoo.com

***Բանալի բառեր** – Մոսկվայի պայմանագիր, Կարսի «պայ-
մանագիր», Խորհրդային Ռուսաստան, քեմալական Թուրքիա,
Խորհրդային Հայաստան, Վրաստան, Ադրբեջան:*

Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի «Բարեկամության և
եղբայրության մասին» պայմանագրի ստորագրումից հետո
Խորհրդային Ռուսաստանը չհապաղեց կատարելու տվյալ
փաստաթղթի 15-րդ հոդվածով Թուրքիային տված խոստու-
մը: Խորհրդային Ռուսաստանի նախաձեռնությամբ Կար-
սում հրավիրված կոնֆերանսում նույն թվականի հոկտեմբե-
րի 13-ին ստորագրվեց փաստաթուղթ մի կողմից՝ Թուրքիա-
յի, իսկ մյուս կողմից՝ Անդրկովկասի երեք հանրապետու-
թյունների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի միջև:
Կարսում ստորագրված նոր «պայմանագիրը» բխում էր

Մոսկվայի պայմանագրից և ուներ զուտ ձևական բնույթ, որով Ռուսաստանը և Թուրքիան փորձում էին իրավական տեսք տալ իրենց ապօրինի գործարքին¹³⁶: Վիեննայի 1969 թ. «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» կոնվենցիայի 52-րդ հոդվածի համաձայն՝ «Պայմանագիրն առ ոչինչ է, եթե դրա ստորագրումը ուժի կամ դրա կիրառման սպառնալիքի հետևանք է»¹³⁷:

Խորհրդային Ռուսաստանի կողմից Կարսի կոնֆերանսին մասնակցելու ուղարկվեց Լատվիայում Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Յակով Գանեցկին, որը Կարսի պայմանագիրը ստորագրեց որպես Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ¹³⁸: Կարսի կոնֆերանսին Ռուսաստանի մասնակցությունը և նրա ներկայացուցչի կողմից փաստաթղթի ստորագրումը պայմանավորված էին բացառապես Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածով: Գանեցկու միջոցով Մոսկվան փաստորեն վերահսկում էր Հայաստանի ներկայացուցիչների՝ Ա. Մուսվանի և Պ. Մակինցյանի գործողությունները, որպեսզի «մոսկովյան գործարքը» չձախողվի: Այս հանգամանքը, սակայն, նույնպես միջազգային իրավունքի սկզբունքների կոպիտ խախտում է: Նույն՝ Վիեննայի կոնվենցիայի 51-րդ հոդվածով սահմանվում է, որ եթե պետության համար պայմանագրի պարտադիր լինելու համաձայնությունը ձեռք է բերվել նրա ներկայացուցչի նկատմամբ

¹³⁶ Տե՛ս **Թորիկեան Շ.**, Հայկական հարցը եւ միջազգային օրէնքը, Պէյրուֆ, Համազգայինի Վահէ Սեթեան տպարան, 1976, էջ 107:

¹³⁷ Международное право в документах, сост. сборника **Н. Т. Блатова**, Москва, изд. Юрид. лит., 1982, с. 86.

¹³⁸ Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), կազմողներ՝ **Զ. Ս. Կիրակոսյան, Ռ. Գ. Սահակյան**, խմբ.՝ **Զ. Ս. Կիրակոսյան**, Երևան, 1972, էջ 518:

պարտադրանքի գործողություններով կամ սպառնալիքներով, ապա այն չի կարող իրավական ուժ ունենալ¹³⁹:

Հայկական կողմի ներկայացուցիչները բոլշևիկյան քարոզչության ազդեցության տակ Կարսի պայմանագիրը ստորագրելու պահին թերևս համոզված էին, որ Մոսկվայի և Կարսի պայմանագրերը «չարյաց փոքրագույնն» են Հայաստանի ու հայ ժողովրդի համար, Խորհրդային Ռուսաստանի միջնորդությամբ փրկության միակ հնարավորությունը, քանզի դաշնակցական կառավարությունը 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի պայմանագրով արդեն տարածքային մեծ զիջումներ էր արել թուրքերին: Ասվածի ապացույցը թերևս նաև այն է, որ Կարսի պայմանագրի 1-ին հոդվածով չեղյալ էին համարվում մինչ այդ ստորագրված երկկողմ պայմանագրերը¹⁴⁰. այս առումով նախ և առաջ նկատի էր առնվում Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Այս առնչությամբ պետք է նշել, սակայն, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրն առանց այդ էլ չունեւր և չէր կարող ունենալ իրավական ուժ հետևյալ պատճառներով.

1. Պայմանագիրը հայկական կողմից ստորագրել են արդեն տապալված դաշնակցական կառավարության ներկայացուցիչները, որոնք իրավասու չէին այն ստորագրելու:
2. Պայմանագիրը ստորագրվել է ուժի սպառնալիքի գործադրման պայմաններում:
3. Համաձայն Ալեքսանդրապոլի պայմանագրի 18-րդ հոդվածի՝ պայմանագիրը պետք է վավերաց-

¹³⁹ Տե՛ս Международное право в документах, էջ 86:

¹⁴⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 69: Տե՛ս նաև ֆ. 114, ց. 2, գ. 133, թ. 11:

վեր մեկ ամսվա ընթացքում, սակայն այն ընդհանրապես չի վավերացվել:

Պետք է ընդգծել, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը քեմալա-բուլճարական գործարքի և Հայաստանի վրա գործադրված երկկողմ ճնշումների հետևանք էր: Մոսկվայի համաժողովից մինչև Կարսի համաժողովն ընկած ժամանակահատվածում Ալեքսանդրապոլի պայմանագրի փաստարկով հայկական կողմին ապակողմնորոշելը նույնպես միջազգային իրավունքի նորմերի խախտում էր: Վիեննայի կոնվենցիայի 49-րդ հոդվածի համաձայն՝ պայմանագիրն առ ոչինչ է, եթե այն ստորագրվել է պայմանավորվող կողմի ներկայացուցչին խաբելու կամ ապակողմնորոշելու միջոցով¹⁴¹:

Կարսի փաստաթուղթը բառացիորեն կրկնում ու վերարտադրում էր Մոսկվայի պայմանագրի հոդվածները և այդ կերպ «օրինականացնում» Մոսկվայի քեմալա-բուլճարական գործարքը: Միջազգային պայմանագրային իրավունքի թվարկված կոպիտ խախտումները հիմք են տալիս պնդելու, որ միջազգային իրավունքի տեսանկյունից Կարսում ստորագրված փաստաթուղթը չի կարող համարվել առանձին պայմանագիր, այլ լավագույն դեպքում կարող է դիտվել որպես Մոսկվայի անօրինական գործարքի հավելված:

Քանի որ Կարսում ստորագրված «դե-յուրե» անօրինական փաստաթղթի հիման վրա գծվեց հայ-թուրքական սահմանը, ուստի հարկ ենք համարում միջազգային պայմանագրային իրավունքի տեսանկյունից քննության առնել դրա հոդվածներն ու դրույթները: Փաստաթղթի 1-ին իսկ հոդվածով, մինչ այդ պայմանավորվող կողմերի միջև ստորագր-

¹⁴¹ См. u Международное право в документах, էջ 86:

ված փաստաթղթերից բացի, ուժը կորցրած էին համարվում նաև երրորդ երկրների կողմից կնքված պայմանագրերը, որոնք վերաբերում էին անդրկովկասյան հանրապետություններին¹⁴²: Սույն հոդվածի հատուկ ձևակերպումներից անմիջապես հասկացվում է, որ փորձ էր արվում չեզոքացնելու Սևրի պայմանագիրը: Առավել ևս, որ այդ հոդվածը բացառություն էր անում միայն Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի պայմանագրի համար, քանզի այդ անօրինական գործարքն էր Կարսում պարտադրված փաստաթղթի հիմքը: Սակայն 1-ին հոդվածին տրամագծորեն հակասում է Կարսի փաստաթղթի 2-րդ հոդվածը, որով «Թուրքիան համաձայնվում էր չճանաչել որևէ միջազգային պայմանագիր կամ ակտ, որը վերաբերում է Հայաստանին, Ադրբեջանին ու Վրաստանին և ճանաչված չէ այդ երկրների կառավարությունների կողմից, որոնք այսօր ներկայացնում են Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի խորհուրդներին»¹⁴³:

Խորհրդային Հայաստանը Մոսկվայի պայմանագիրը ճանաչել է միայն Կարսի պայմանագրի ստորագրումով, այսինքն՝ մինչ այդ պահը չի ճանաչել Մոսկվայի պայմանագիրը: Խորհրդային Հայաստանի կառավարությունը նույնիսկ բողոք է ներկայացրել Ռուսաստանի կառավարությանը, որ առանց իր մասնակցության է լուծել իր տարածքային հարցերը: Հայաստանի արտգործժողկոմ և պատվիրակության ղեկավար Ա. Բեկզադյանը 1921 թ. ապրիլի 15-ին այդ կապակ-

¹⁴² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 56, թ. 69:

¹⁴³ Նույն տեղում:

ցությամբ հայտարարություն է ուղղել Ռուսաստանի արտգործոցնախարարին¹⁴⁴:

Այսպիսով՝ Կարսի փաստաթղթի 2-րդ հոդվածի տրամաբանությունից բխում էր, որ Թուրքիան պետք է անվավեր ճանաչեր նաև Մոսկվայի պայմանագիրը, ուստի և անօրինաչափ էր Կարսի փաստաթղթի 1-ին հոդվածով Մոսկվայի պայմանագրի համար բացառություն անելը: Ավելին՝ Կարսի փաստաթղթի 2-րդ հոդվածը կրկնում էր Մոսկվայի պայմանագրի 1-ին հոդվածը, որով պայմանավորվող կողմերը համաձայնում էին չճանաչել ոչ մի պայմանագիր կամ միջազգային որևէ այլ ակտ, եթե կողմերից մեկին ուժով են հարկադրել այն ընդունել¹⁴⁵: Մինչդեռ Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածը հարկադրանքի ամենավառ դրսևորումն է անդրկովկասյան հանրապետությունների և մասնավորապես Հայաստանի նկատմամբ: Ուստի Կարսի փաստաթղթի 2-րդ հոդվածի վերը նշված դրույթը ոչ միայն լիովին չեզոքացնում է դրա հիմքը կազմող Մոսկվայի պայմանագիրը, այլև իմաստագրկում հենց Կարսում ստորագրված փաստաթուղթը: Հոդվածների միջև առկա այս հակասությունները վկայում են այն մասին, որ գործարքի նախաձեռնողները՝ քեմալականներն ու բոլշևիկները, ո՛չ Մոսկվայում և ո՛չ էլ, առավել ևս, Կարսում առանձնապես ջանք չեն գործադրել ո՛չ միջազգային իրավունքի նորմերն ու սկզբունքները և ո՛չ էլ անգամ տրամաբանության տարրական օրենքները պահպանելու հարցում: Նրանք ձգտել են ժամ առաջ «օրինակա-

¹⁴⁴ Տե՛ս **Հակոբյան Ա.**, Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Երևան, «Գիտություն» հրատ., 2010, էջ 215:

¹⁴⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 133, թ. 11:

նացնելու» Մոսկվայում կայացած գործարքը Կարսում Հայաստանի ներկայացուցչի ստորագրության միջոցով:

Կարսի պայմանագրի ստորագրումից անմիջապես պարզ դարձավ, որ թուրքական կողմը չի պատրաստվում կատարելու տվյալ փաստաթղթով հայերի և Հայաստանի իրավունքների պաշտպանությանը վերաբերող իր պարտավորությունները: Այսպես, համաձայն 10-րդ հոդվածի, որը կրկնում է Մոսկվայի պայմանագրի 8-րդ հոդվածը, կողմերը պարտավորվել են իրենց տարածքներում արգելել այնպիսի կազմակերպությունների և խմբերի առաջացումն ու գոյությունը, որոնք ունեն մյուս երկրի կամ նրա տարածքի մի մասի կառավարումն ստանձնելու հավակնություն, ինչպես նաև այնպիսի խմբերի գոյությունը, որոնց նպատակն է պայքարել մյուս երկրի դեմ¹⁴⁶: Ակնհայտ է, որ բոլշևիկների ու քեմալականների համար փոխշահավետ այս դրույթն ուղղված էր Խորհրդային Հայաստանում հայ ավանդական կուսակցությունների և առաջին հերթին Միացյալ Հայաստանի գաղափարախոս ՀՅ Դաշնակցության գոյությունը բացառելուն: Սակայն, չնայած Կարսի փաստաթղթի այս երկկողմ պարտավորությանը, թուրքական իշխանությունների թույլտվությամբ Տրապիզոնում գործում էր «Իթաաթ» կուսակցությունը, որի կազմում ընդգրկված էին նախկին մուսավաթականներ՝ Ղարաբաղի հայերի դահիճ Խոսրով-բեկ Սուլթանովը և ներքին գործերի նախկին նախարարի օգնական Ռուստամբեկովը: Դրանից բացի՝ Կարսում գործում էր համաթուրքական ուղղվածություն ունեցող «Պարագլուխներ» կազմակերպությունը, որը համալրված էր ինչպես նախկին մուսավաթական

¹⁴⁶ Տե՛ս նույն տեղում, թ. 14:

գործիչներով, այնպես էլ թուրքական բանակի սպաներով¹⁴⁷: Թուրքական հետագա վարչակարգերը շարունակեցին այս քաղաքական գիծը և Թուրքիայի տարածքում ոչ միայն թույլ տվեցին հակահայկական կառույցների՝ «Գորշ գայլերի» և այլ ազգայնական ու իսլամիստական կազմակերպությունների գոյությունն ու ակտիվ գործունեությունը, այլև մինչ օրս հովանավորում են դրանց: Ավելին՝ թուրքական պետությունը, ի դեմս իր բարձրաստիճան պաշտոնյաների, ընդգծված և հետևողական հակահայկական քարոզչություն է իրականացնում:

Փաստաթղթի 14-րդ հոդվածով կողմերը պարտավորվում էին պայմանագրի ստորագրման պահից սկսած՝ վեց ամսվա ընթացքում, կնքել 1918-1920 թթ. պատերազմի հետևանքով գաղթածներին վերաբերող հատուկ համաձայնագիր¹⁴⁸: Ընդ որում, փաստաթղթի 20-րդ հոդվածով տվյալ պարտավորությունն ուժի մեջ էր մտնում ոչ թե վավերագրերի փոխանակման, այլ անմիջապես փաստաթղթի ստորագրման պահից¹⁴⁹: Այս հոդվածներից բխում է, որ Թուրքիան Խորհրդային Հայաստանի հետ մինչև ապրիլի 13-ը պետք է գաղթականներին վերաբերող հատուկ համաձայնագիր կնքեր: Ինքնին հասկանալի է, որ թուրքական իշխանությունները բացարձակապես շահագրգռված չէին այս հարցում, քանզի ծագելու էին հայ գաղթականների իրավունքների վերականգնման ու հատուցման բազում հարցեր, որոնք չէին բխում քեմալականների շահերից: Նրանք արդեն

¹⁴⁷ Տե՛ս **Զոհրաբյան Է. Ա.**, Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները, Երևան, ԵՊՀ հրատ., 1979, էջ 316-317:

¹⁴⁸ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 133, թթ. 15-16:

¹⁴⁹ Տե՛ս նույն տեղում, թ. 16:

իսկ «լուծել էին» իրենց գերխնդիրը. Մոսկվայի գործարքն օրինական տեսք էր ստացել Կարսում Հայաստանի ներկայացուցչի ստորագրությամբ:

Կարսի փաստաթղթի 17-րդ հոդվածով կողմերը պարտավորվել են «առանց որևէ կասեցումների ապահովել մարդկանց ու ապրանքների ազատ փոխադրումը»¹⁵⁰: Մինչդեռ Թուրքիան 1993 թվականից առ այսօր իրականացնում է Հայաստանի շրջափակումը՝ միակողմանիորեն փակելով սահմանը, ինչով խախտում է Կարսի փաստաթղթի համապատասխան հոդվածը:

Կարսի փաստաթղթի 2-րդ հավելվածի համաձայն՝ Արաքսի գոտու հատվածում Թուրքիան պարտավորվել է Ալեքսանդրապոլ-Երևան երկաթուղուց 8 և 4 վերստ հեռավորությունների վրա սահմանված գոտիներում չկատարել ամրաշինական աշխատանքներ և չտեղակայել կանոնավոր զորքեր¹⁵¹: Այս պահանջը, սակայն, թուրքական իշխանությունների կողմից խախտվեց 1942-1943 թթ., երբ թուրքական զորքերը, հայ-թուրքական սահմանի մոտ կուտակված, սպասում էին Ստալինգրադի ճակատամարտի ելքին՝ Հայաստան ներխուժելու համար: Արցախյան պատերազմի ընթացքում՝ 1993 թ., Թուրքիան չբավարարվեց միայն Հայաստանի շրջափակումով, այլ կատարեց հակաօրինական հերթական քայլը, այն է՝ դիմեց «ուժի ցուցադրության»՝ սահմանի մոտ տեղակայելով թուրքական կանոնավոր զորքեր:

Հատկանշական է, որ Թուրքիայի հետ փոխադարձ պայմանավորվածությամբ Խորհրդային Ռուսաստանը Կար-

¹⁵⁰ Նույն տեղում:

¹⁵¹ Տե՛ս նույն տեղում, թ. 18:

սի պայմանագիրն ավելի շուտ վավերացրեց (1922 թ. մարտի 16)*, քան Խորհրդային Հայաստանը (1922 թ. մարտի 20)¹⁵²: Այդ կերպ Ռուսաստանն օր առաջ ջանում էր վերահաստատել իր հավատարմությունը Թուրքիայի հետ Մոսկվայում կնքած գործարքին:

ԽՍՀՄ կազմալուծումից և նախկին խորհրդային հանրապետությունների անկախության հռչակումից հետո Թուրքիան արագ վերականգնեց դիվանագիտական և պայմանագրային հարաբերությունները Վրաստանի և Ադրբեյջանի հետ, որոնց իրավական հիմքն էին 1922 թ. թիֆլիսյան թուրք-անդրկովկասյան կոնֆերանսի շրջանակներում ստորագրված համաձայնագրերը: Հայաստանի պարագայում, սակայն, Թուրքիան ապակառուցողական դիրքորոշում որդեգրեց և դիվանագիտական հարաբերություններ հաստատելու հարցում անընդհատ նախապայմաններ էր առաջ քաշում, ինչի հետևանքով չհաջողվեց վերականգնել նույն թիֆլիսյան կոնֆերանսի ընթացքում կնքած համաձայնագրերով Խորհրդային Հայաստանի ձեռք բերած իրավունքները: Ակնհայտ է, որ 1922 թ. ստորագրված միայն հյուպատոսական համաձայնագրի վերագործարկումն այսօր Հայաստանի Հանրապետությանն իրավական հնարավորություն կտար

* Ռուսաստանն ընդհանրապես չպետք է վավերացներ Կարսի փաստաթուղթը, քանզի նա տվյալ պայմանագրի կողմ չէր հանդիսանում: Նրա կողմից այս պայմանագրի՝ հենց մոսկովյան գործարքի օրը վավերացումը նպատակ էր հետապնդում մեկ անգամ ևս ցույց տալու թուրքերին, որ իրենք հավատարիմ են կայացած գործարքին, մյուս կողմից էլ՝ ճնշում գործադրելու Խորհրդային Հայաստանի վրա, որ վերջինս արագացնի իրեն պարտադրված փաստաթղթի վավերացումը:

¹⁵² Տե՛ս **Խաչատրյան Կ.**, ՀԽՍՀ սահմանների հարցը 1921 թ. խորհրդա-թուրքական հարաբերությունների ոլորտում (Մոսկվայի և Կարսի կոնֆերանսները), «Լրաբեր» հասարակական գիտությունների, Երևան, 2010, № 1-2, էջ 55:

պաշտպանելու Թուրքիայում գտնվող իր քաղաքացիների օրինական շահերն ու իրավունքները:

Հիմք ընդունելով Վիեննայի «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» կոնվենցիայի 49-րդ հոդվածը, ըստ որի՝ պայմանագիրն առ ոչինչ է, եթե ստորագրվել է պայմանավորվող կողմի ներկայացուցչի խաբեության կամ ապակողմնորոշման միջոցով, 51-րդ հոդվածը, ըստ որի՝ պայմանագիրն առ ոչինչ է այն դեպքում, եթե պետության համար դրա պարտադիր լինելու համաձայնությունը ձեռք է բերվել նրա ներկայացուցչի նկատմամբ պարտադրանքի գործողություններով կամ սպառնալիքներով, 52-րդ հոդվածը, ըստ որի՝ պայմանագիրն առ ոչինչ է, եթե դրա ստորագրումը ուժի սպառնալիքի կամ դրա կիրառման հետևանք է, Կարսի փաստաթուղթը Հայաստանի Հանրապետության կողմից կարող է համարվել առ ոչինչ: Նույն կոնվենցիայի 69-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ առ ոչինչ համարվող պայմանագրերն իրավական ուժ չունեն, իսկ նույն հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե պայմանագիրն առ ոչինչ է համարվում կոնվենցիայի 49-րդ, 50-րդ, 51-րդ կամ 52-րդ հոդվածների հիմքերով, ապա նշված գործողություններում պատասխանատու կողմը որևէ պահանջի իրավունք չունի մյուս կողմի նկատմամբ¹⁵³: Սա նշանակում է, որ նշված գործողություններն ապացուցվելու դեպքում Թուրքիան ոչ մի պահանջ չի կարող ներկայացնել Հայաստանին Կարսի փաստաթղթով ստանձնած պարտավորությունների առնչությամբ: Տվյալ պարագայում Հայաստանը պարտավոր կլինի այդ մասին պաշտոնապես գրավոր տեղեկացնել պայմա-

¹⁵³ St' u Международное право в документах, էջ 92:

նագրի մյուս մասնակիցներին՝ Թուրքիային, Վրաստանին, Ադրբեջանին և Ռուսաստանին: Ընդ որում, գրավոր փաստաթղթում պետք է ոչ միայն նշված լինեն նման քայլի հիմքերը, այլև առաջարկություններ ներկայացվեն պայմանագրի հետագա ճակատագրի վերաբերյալ¹⁵⁴: Կարսի փաստաթղթի մասնակիցները պետք է եռամսյա ժամկետում պատասխանեն Հայաստանի գրավոր ուղերձին, իսկ կողմերի միջև հակասություններ ծագելու դեպքում հարցի լուծումը պետք է հանձնվի ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանին:

Այս հարցում, սակայն, Վիեննայի կոնվենցիայի դրույթներով առաջնորդվելն ու դրանց հիման վրա Կարսի փաստաթուղթն առ ոչինչ հայտարարելն անուղղակիորեն կնշանակի, որ մինչ այդ մենք փաստորեն ընդունել ենք դրա օրինականությունը: Ուստի Հայաստանի Հանրապետությունն այս հարցում կարող է ելնել «Tabula rasa» («մաքուր թղթի») սկզբունքից և առաջնորդվել ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածով, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության համար միջազգային պայմանագրերն ուժի մեջ են մտնում և դառնում ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մաս միայն նրա կողմից վավերացվելուց հետո¹⁵⁵, ինչը նշանակում է, որ իր կողմից չվավերացված Կարսի փաստաթուղթը Հայաստանի Հանրապետության համար իրավական ուժ չունի:

¹⁵⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 91:

¹⁵⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ընդունված 2005 թ. նոյեմբերի 27-ին, հոդված 6, էջ 9-10:

Ինչ վերաբերում է պայմանագրային իրավունքում ընդունված վաղեմության ժամկետի՝ էստոպելի սկզբունքին, ապա այս հարցը կարգավորվում է Վիեննայի կոնվենցիայի 45-րդ հոդվածով, որում նշվում է, որ պայմանագիրը չեղյալ համարելու կամ վերանայելու պահանջի ժամկետները համարվում են բաց թողնված այն դեպքում, եթե պահանջատեր կողմը նախկինում որոշակիորեն հարմարվել ու լռելայն համաձայնել է կատարված փաստի հետ: Իսկ եթե կողմը որոշակի գործողություններով՝ հայտարարություններ, բողոքի նոտաներ և այլն, հայտնել է իր անհամաձայնությունը, ապա տվյալ փաստաթղթի նկատմամբ չի կարող կիրառվել վաղեմության պահանջի սկզբունքը¹⁵⁶: Մոսկվայի ու Կարսի փաստաթղթերի առումով վաղեմության ժամկետի պահանջը չի կարող կիրառվել, քանի որ Խորհրդային Հայաստանը դեռ 1921 թ. ապրիլի 15-ին է բողոք ներկայացրել Կարսի փաստաթղթի հիմքը կազմող Մոսկվայի անօրինական գործարքի դեմ, իսկ հետագայում՝ 1945 թ. հուլիսի 22-ին՝ Պոտսդամի կոնֆերանսի՝ կառավարությունների ղեկավարների վեցերորդ նիստի ժամանակ, ԽՍՀՄ-ը Խորհրդային Հայաստանի ու Խորհրդային Վրաստանի անունից տարածքային հարց է բարձրացրել Թուրքիայի առաջ՝ պահանջելով վերադարձնել Կարսն ու Արդահանը¹⁵⁷, ինչը պետք է համարել Կարսի փաստաթղթի վիճարկում:

Ավելորդ չենք համարում հիշեցնել, որ Կարսում ստորագրված փաստաթղթի ընդունման (հատկապես Հայաստա-

¹⁵⁶ Տե՛ս Международное право в документах, էջ 85:

¹⁵⁷ Տե՛ս Դաշնակից երեք տերությունների՝ ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ղեկավարների Բեռլինի (Պոտսդամի) կոնֆերանսը (1945 թ. հուլիսի 17 – օգոստոսի 2), Երևան, 1989, էջ 168:

նի կողմից) հարցը բավականին արդիական էր նաև հայ-թուրքական վերջին արձանագրություններում: Մասնավորապես «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին» արձանագրության մեջ նշվում էր, որ ստորագրող կողմերը վերահաստատում են երկու երկրների միջև գոյություն ունեցող սահմանի փոխադարձ ճանաչումը՝ սահմանված միջազգային իրավունքի համապատասխան պայմանագրերով¹⁵⁸: Արձանագրության տեքստում սահմանի փոխադարձ ճանաչումը ոչ թե հաստատելու, այլ վերահաստատելու հանգամանքի ընդգծումը մեխանիկորեն առաջ է քաշում հենց Կարսի փաստաթղթի վերջնական ճանաչումը, քանզի «փաստացի գոյություն ունեցող հայ-թուրքական սահմանի հարցը կարգավորող» այլ փաստաթղթեր, քան Մոսկվայի ու Կարսի «պայմանագրերն» են, պարզապես գոյություն չունեն:

Ամփոփելով նշենք, որ Հայաստանի կողմից Կարսի փաստաթղթի հետևանքների չեզոքացմանն ուղղված որևէ քայլի կատարմանը պետք է նախորդի նախապատրաստական լուրջ աշխատանք՝ հաշվի առնելով նաև աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային զարգացումները: Գաղտնիք չէ, որ միջազգային իրավական նորմերն ու սկզբունքներն ազդեցիկ տերությունները ծառայեցնում են իրենց շահերին ու նպատակներին՝ երբեմն նաև խախտելով կամ իրենց ձեռնադրած ձևով մեկնաբանելով դրանք: Եվ եթե նույնիսկ նրանք միջազգային հարաբերություններում իրենց կատա-

¹⁵⁸ Տե՛ս Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ: Խորհրդարանական լսումներ 19-20 դեկտեմբերի 2007 թ., Երևան, 2011, էջ 440:

րած գործողությունները ձգտում են հիմնավորելու միջազգային իրավունքի նորմերով ու սկզբունքներով, ապա Հայաստանի Հանրապետությունն առավել ևս չպետք է իրեն շռայլություն թույլ տա՝ հրաժարվելով պաշտպանել ոչ միայն իր, այլև ողջ հայ ժողովրդի օրինական շահերն ու իրավունքներն այն հնարավորություններով, որոնք ընձեռում է միջազգային իրավունքը, մանավանդ որ մեր հարևանները վաղուց այդ իրավունքը խեղաթյուրված ձևով օգտագործում են մեր դեմ:

АРМЕН МАРУКЯН

*Заведующий отделом Армянского вопроса и Геноцида
армян Института истории НАН РА,
доктор исторических наук, профессор,*

ИСТОРИКО-ПРАВОВАЯ ОЦЕНКА КАРССКОГО «ДОГОВОРА» И ПОСЛЕДСТВИЯ РЕАЛИЗАЦИИ ЕГО ПОЛОЖЕНИЙ ДЛЯ АРМЕНИИ

Резюме

Карсский «договор» 1921 г. был подписан с грубыми нарушениями норм и принципов международного права. Подписанным в Карсе документом делалась попытка «легализовать» предыдущую большевистско-кемалистскую сделку в Москве, что дает основание

рассматривать подписанный в Карсе документ как приложение незаконного Московского договора.

Подписание Карсского документа привело к значительным потерям армянских территорий, вызвало серьезные проблемы безопасности, демографические проблемы и психологические комплексы, последствия которых Армения и армянский народ продолжают ощущать по сей день. Как субъект международного права, Республика Армения может использовать возможности, предоставляемые международным правом, для нейтрализации или, по крайней мере, смягчения угроз этого незаконного и антиармянского документа, навязыванного ей с нарушениями норм и принципов международного договорного права. Однако, перед тем, как предпринять какие-либо шаги с целью нейтрализации тяжелых последствий Карсского документа, Армения должна проводить последовательную политическую и дипломатическую работу с учетом геополитических и региональных процессов.

Ключевые слова: *Московский договор, Карсский «договор», Советская Россия, Кемалистская Турция, Советская Армения, Грузия, Азербайджан.*

ARMEN MARUKYAN

*Head of the “Armenian Question and Armenian Genocide History” Department of the Institute of History of NAS RA,
Doctor of Sciences in History, Professor*

**HISTORICAL AND LEGAL ASSESSMENT OF KARS
“TREATY” AND THE CONSEQUENCES OF THE
IMPLEMENTATION OF ITS PROVISIONS FOR ARMENIA**

Summary

The Kars “Treaty” of 1921 was signed with a gross violation of the norms and principles of international law. The document signed in Kars made an attempt to “legalize” the previous Bolshevik-Kemalist deal in Moscow, which gives reason to consider the document signed in Kars as an annex to the illegal Moscow Treaty.

The signing of the Kars document led to significant losses of the Armenian territories, caused serious security problems, demographic problems and psychological complexes, whose consequences Armenia and the Armenian people continue to feel to this day. As a subject of international law, the Republic of Armenia can use the opportunities offered by international law to neutralize or at least mitigate the threats of this illegal and anti-Armenian instrument imposed on it with violations of the norms and

principles of international treaty law. But, before taking any steps to neutralize the grave consequences of the Kars document, Armenia should carry out consistent political and diplomatic work, taking into account geopolitical and regional processes.

Key words: *Moscow Treaty, Kars “Treaty”, Soviet Russia, Kemalist Turkey, Soviet Armenia, Georgia, Azerbaijan.*

**ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ
ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱԼՎՐՑՅԱՆ

***«Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության
կենտրոն»***

***գիտահետազոտական հիմնադրամի տնօրեն,
բանասիրական գիտությունների դոկտոր***

haykazunalvrtsyan@yahoo.com

Բանալի բառեր – արևմտահայություն, Թուրքիա, «Իթթի-հար», ազգային փոքրամասնություն, Մուստաֆա Քեմալ, բռնի իսլամացում, կրոն, կրոնափոխություն, թուրքացում, ցեղասպանություն, ազգայնամոլություն:

Խոսելով 1923 թվականից հետո Թուրքիայում բնակվող փոքրամասնությունների մասին՝ նախ պետք է նկատի ունենալ այն իրողությունը, որ Լոզանի պայմանագրով Թուրքիայի Հանրապետության ստանձնած պարտավորությունների շրջանակում ազգերի իրավունքների հարց չէր արժարժվում, քանզի, բացի թուրքերից, այլ ազգերի մասին պայմանագրում չէր հիշատակվում:

Փաստորեն, Լոզանի դաշնագրով Թուրքիան կարողացավ այլափոխել «ազգային-կրոնական փոքրամասնություն» հասկացության բուն բովանդակությունը: Ճիշտ է,

Թուրքիան թեև նույն դաշնագրով ստիպված էր ընդունել երեք ազգերի՝ հայերի, հույների և հրեաների՝ կրոնական համայնք լինելու հանգամանքը, բայց մյուս բոլոր իսլամադավան ժողովուրդները՝ քրդեր, չերքեզներ, լազեր, թաթարներ, թուրքմեններ, զազաներ, բոշնաղներ, արաբներ, կարափափախներ, սուդանցիներ, ղրղզներ, աբխազներ, օսեր, բոշաներ, նաև իսլամացած վրացիներ, հույներ և հայեր (ներառյալ համշենահայերը), ալևիներ, ոչ մահմեդական եզդիներ և այլ մեծ ու փոքր էթնոկրոնական խմբեր, չճանաչվեցին փոքրամասնություն, այսինքն՝ համարվեցին թուրք։ Ըստ էության, սրանք այն փաստական (ստեղծված իրավիճակը) և հատկապես միջազգայնորեն ճանաչված իրավական (Լոզանի դաշնագիրը) հիմքերն էին, որոնց հիման վրա ձևակերպվեց նորաստեղծ հանրապետության Սահմանադրության 66-րդ հոդվածը, ըստ որի՝ «Թուրքիայի պետության հետ քաղաքացիական կապով կապված ամեն ոք թուրք է»։ Այսինքն՝ օրենքով ամրագրվեց, որ Թուրքիայի բոլոր քաղաքացիները թուրքեր են, ինչից էլ բխելու էր մյուս ազգերի և ժողովուրդների նկատմամբ գործադրվելիք քաղաքականությունը։

Հանրապետության հռչակումից հետո Թուրքիայի իշխանությունները մշակեցին և հետևողականորեն գործադրեցին երկրում բնակվող այլալեզու և այլակրոն ժողովուրդների ձուլման քաղաքականություն, որը տարբեր դրսևորումներով շարունակվում է առ այսօր։ Թուրքիայի ղեկավարությունն այդ նպատակի իրագործման համար պատրաստ էր ամեն քայլի։ Այս առումով ծրագրային կարելի է համարել Թուրքիայի վարչապետ, հետագայում նախագահ Իսմեթ Ինոնյու-

ի՛ 1925 թ. մի ելույթում արտահայտած հետևյալ միտքը. «- Մենք բացահայտ ազգայնականներ ենք: Ազգայնականությունը մեզ միավորած միակ պատճառն է: Թուրք մեծամասնության կողքին մյուս տարրերը ոչ մի ազդեցություն չունեն: Ինչ գնով ուզում է լինի, մենք թրքացնելու ենք մեր երկրում ապրողներին, իսկ թուրքերի և թրքականության դեմ դուրս եկողներին ոչնչացնելու ենք»¹⁵⁹: Իսկ Թուրքիայի արդարադատության նախարար Մահմութ Էսադի՝ 1930 թ. ելույթում արտահայտած հետևյալ միտքը իր լկտիությամբ և այլամերժությամբ թերևս բացառիկ է. «Մենք ապրում ենք ամենաազատ երկրում՝ Թուրքիայում, որտեղ թուրքը այս երկրի միակ տերն ու տիրակալն է: Մարդիկ, ովքեր ծագումով մաքուր թուրքեր չեն, այս երկրում ունեն միայն ստրուկ, ճորտ լինելու իրավունք»¹⁶⁰:

Այն, որ Մուստաֆա Քեմալը շարունակեց երիտթուրքերի ազգային քաղաքականությունը, սպասելի էր, քանի որ ինքը և իր կառավարության գրեթե բոլոր անդամները երիտթուրքեր էին. «Թուրքիայի Հանրապետության բոլոր հիմնադիրները՝ Մուստաֆա Քեմալի գլխավորությամբ, եղել են իթթիհադականներ: Աթաթուրքը երբեք չի թաքցրել, որ «իր զգացմունքների հայրը եղել է Նամըք Քեմալը, իսկ գաղափարներինը՝ Զիա Գյոքալփը»: Նույնիսկ որպես Թուրքիայի Հանրապետության հռչակման ամսաթիվ է ընտրվել հոկ-

¹⁵⁹ **Օքթայ Բարան**, Իսմեթ Ինոնյուն, քեմալիզմը և ժողովրդավարությունը, http://marksist.net/oktay_baran/ismet_inonu_kemalizm_ve_demokrasi.htm (մուտք՝ 10.10.2021):

¹⁶⁰ www.noravank.am (մուտք՝ 10.10.2021):

տեմբերի 29-ը, քանի որ 1907 թ. հոկտեմբերի 29-ին Մուստաֆա Քեմալն անցել էր Իթթիհատի շարքերը»¹⁶¹:

Ազգային քաղաքականության հարցում թե՛ սուլթանը, որը 1894-1896 թթ. կոտորեց մոտ 300 հազար հայ՝ հիմք դնելով տասնամյակներ ձգվող հայոց ցեղասպանությանը, թե՛ սահմանադրական երիտթուրքերը, թե՛ աշխարհիկ-ժողովրդավար Մուստաֆա Քեմալն առանձնապես շատ չէին տարբերվում, իսկ եթե կային որոշ տարբերություններ, ապա դրանք ընդամենը մարտավարական բնույթի էին: Ի դեպ, Քեմալը նույնպես կոտորել է մոտ 300 հազար հայ, բայց նրա այս վայրագությունները նույնիսկ թուրք որոշ իսկապես առաջադեմ և լուրջ պատմաբաններ փոքր-ինչ վերապահությամբ են գնահատում՝ չկարողանալով կամ չցանկանալով դրանք դիտել, այսպես կոչված, ազգային-ազատագրական պատերազմի շրջագծից դուրս: Թեև շատերը Մուստաֆա Քեմալին ուղղակիորեն չեն տեսնում ցեղասպանության հանցակիցների մեջ, սակայն վերջին շրջանում նկատելի է, որ նրա կենսագրության այս «մաքուր» կամ «անխոցելի» կողմը նույնպես վերանայման է ենթարկվում: Սելիմ Դերինգիլը, նշելով, որ Մուստաֆա Քեմալի դեմ որևէ ուղղակի մեղադրանք որևիցե տեղ չկա, նաև ավելացնում է, որ «...հնարավոր չէ «լավ» կամ «վատ» իթթիհատականների ծիծաղելի տարանջատում մտցնել»¹⁶²:

¹⁶¹ Անույան Մ., Ճանաչում և դատապարտում. երիտթուրքերի դատավարությունները (1919-1921 թթ. և 1926 թ.), Երևան, 2013, էջ 155-156:

¹⁶² <http://www.taraf.com.tr/nese-duzel/makale-selim-deringil-inonu-tehcire-karsicikmadi.htm> (մուտք՝ 10.10.2021).

Հայերեն թարգմանությունը՝ <http://akunq.net/am/?p=15920> (մուտք՝ 10.10.2021):

Հանրապետության հռչակումով և Սահմանադրության ընդունմամբ ազգային հարցը նաև գործնականում լուծելու համար թուրքական իշխանությունները մշակեցին և սկսեցին հետևողականորեն իրականացնել մի մեծ ու ընդգրկուն ծրագիր, ինչը շարունակվում է առ այսօր:

Ստորև փուլ առ փուլ համառոտ անդրադառնանք այդ ծրագրին:

ա. Հանրապետության կայացման շրջան. *1930-ական թվականներ*: Ժողովուրդների թուրքացման և իսլամացման քաղաքականությունը գործադրվում էր հասարակական կյանքի բոլոր բնագավառներում անխտիր: Ըստ թուրք պատմաբան Բասքըն Օրանի՝ հանրապետության էթնոկրոնական ճարտարապետությանն առնչվող քաղաքականությունը մշտապես հետապնդել է 2 նպատակ՝

«ա) *ազատվել ոչ մահմեդականներից*, քանի որ տարբեր կրոններ դավանելու պատճառով չէին կարող ուժացվել,

բ) *ծուլել քրդերին* և ոչ թուրք մյուս մահմեդական խմբերին»¹⁶³:

Այս ծրագիրը ենթադրում էր օսմանցուն փոխարինած թուրքի նոր ինքնության կերտում, որին էլ ուղղվեցին կառավարության հիմնական միջոցներն ու ջանքերը: Այդ նպատակի իրականացման համար հատկապես կարևորվում էին՝

1. կրթությունը, գիտությունն ու քարոզչությունը,

2. ազգային-հասարակական և սոցիալ-տնտեսական կյանքում թուրք տարրի գերակայությունն ամրագրող օրենքների ընդունումը:

¹⁶³ www.baskinoran.com (մուտք՝ 10.10.2021). Տե՛ս նաև «Ակօս», 29.05.2009:

Առաջին ոլորտում նշենք մի քանի սկզբունքային միջոցառումներ.

ա. Երկրի ողջ բնակչության՝ Սահմանադրությամբ թուրք հռչակումը, որը, ինչպես վերը նշվեց, առաջին քայլն էր:

բ. Արաբական այբուբենից անցում լատինականին (սրանով լուծվում էր նաև կարևորագույն խնդիր. նոր սերունդները զրկվում էին սեփական երկրի ու ժողովրդի պատմությանն ինքնուրույնաբար ծանոթանալու հնարավորությունից):

գ. Թուրք ազգի բացառիկության գիտակցության սերմանում երեխաների մեջ՝ դպրոցներում ամեն օր կրկնել տալով հայտնի երգումը.

Թուրք եմ, ազնիվ եմ, աշխատասեր եմ:

Սկզբունքս փոքրերին պահապան լինելը, մեծերին հաշվի առնելն է,

Հայրենիքս, ազգս անձիցս առավել սիրելը:

Բարձրագույն նպատակս բարձրանալ-առաջ գնալն է:

Հեյ, մեծ Աթաթուրք,

Երդվում եմ անդադար քայլել քո բացած ճանապարհով՝

Դեպի քո մարտացույց արած նպատակը:

Թո՛ղ իմ գոյությունն ընծայվի թուրքի բարօրությանը:

Ի՛նչ երջանիկ է նա, ով ասում է՝ թուրք եմ¹⁶⁴:

դ. Դպրոցական և համալսարանական կրթության նոր ծրագրերի, նոր դասագրքերի, հատկապես՝ պատմության դասագրքերի կազմում:

ե. Թուրքիայի պատմության նորովի շարադրում, որը միակ պաշտոնական աղբյուրն էր և պարտադիր էր բոլորի համար:

¹⁶⁴ Այն դպրոցներից հանվեց 2013 թ.:

Բնակչության թրքացումից ոչ պակաս կարևոր էր երկրի թրքացումը, այսինքն՝ հայկական, հունական և ասորական տեղանունների փոփոխությունը: Այն սկսվեց 1928 թ. և շարունակվում է նաև մեր օրերում: Միայն Արևմտյան Հայաստանում, Փոքր Հայքում, Կիլիկիայում, Պոնտոսում և հարակից հայաբնակ այլ վայրերում փոխվեց մոտ 10 հազար բուն հայկական տեղանուն: Մի քանի տարին մեկ տպագրվող քարտեզներն իրարից տարբերվում էին անճանաչելիության աստիճան: Այս գործում ներգրավված էին ողջ պետական համակարգն ու քարոզչական ներուժը՝ գիտական հիմնարկներ, համալսարաններ, լրատվամիջոցներ, մշակույթ (թատրոն, կինո, գրականություն), հրապարակախոսություն, մամուլ և այլն: Նոր թուրքի կերպարի կերտմանը զուգահեռ՝ թուրք հասարակությանը ներարկվում էր այն գաղափարը, որ քրիստոնյա ազգերը, հատկապես՝ հայերը, թշնամիներ են, քանի որ դավաճանել են թուրք ժողովրդին և թուրքական հայրենիքին՝ Օսմանյան կայսրությանը:

Այժմ տեսնենք, թե *ոչ մահմեդականներից* ազատվելու գործընթացն ինչպես ընթացավ: Առաջին քայլերն ուղղված էին բոլոր քրիստոնյաներին պետական, հասարակական կյանքից օտարելուն. 1926 թ. պաշտոնեության մասին ընդունված 788-րդ օրենքի («Մեմուրին քանունու») 4-րդ հոդվածի համաձայն՝ հանրային ոլորտի պաշտոնյաները պետք է լինեին թուրքեր: Մյուս ազգերից թույլատրվում էր ընդունել միայն նրանց, ովքեր համաձայն էին իսլամանալու-թրքանալու: Սա թերևս առաջին բացահայտ խտրական օրենքն էր, որը շատերին պետք է ստիպեր կա՛մ հեռանալ երկրից, կա՛մ ձուլվել:

Հաջորդ զանգվածային միջոցառումը 1929 թ. մի շարք նահանգներից՝ Դիարբեքիր, Խարբերդ, Սեբաստիա և այլն, հայերին պարտադրված արտագաղթն էր. 1929-1930 թթ. այդ նահանգներից ավելի քան 6.000 հայեր գաղթեցին Սիրիա: Մեկ պարտադրված արտագաղթ էլ կազմակերպվեց 1934 թ., այս անգամ՝ երկրի խորքերից դեպի Կ. Պոլիս:

1939 թ. Ալեքսանդրեթի նահանգը պոկվեց Սիրիայից և կցվեց Թուրքիային: Կիլիկիայի հայերի մի զգալի մասը՝ 35.000 մարդ, որ փրկվել էր կոտորածներից և հաստատվել այդ նահանգում, նորից ստիպված էր հեռանալ երկրից: Այսպիսի զանգվածային արտագաղթերի միջև ընկած ժամանակահատվածներում ճնշումների հետևանքով բազմաթիվ հայեր ճարահատյալ ընդունում էին իսլամ, իսկ ովքեր չէին համակերպվում, հեռանում էին կա՛մ Պոլիս, կա՛մ արտասահման:

Գերմանիայում նացիոնալ-սոցիալիստների և Հիտլերի հաղթանակը թուրքական իշխանություններն ընդունեցին առանձնահատուկ ոգևորությամբ: Գերմանիայում հրեաների հալածանքներն արձակեցին քեմալականների ձեռքերը. Թուրքիայում սկիզբ առավ հակահրեական հզոր ալիք, ինչի հետևանքով հազարավոր հրեաներ հեռացան երկրից:

բ. Առաջին համաշխարհային պատերազմի շրջան.
1940-ական թվականներ: Քեմալ Աթաթուրքի մահվանից հետո (1938 թ.) իշխանության եկած Իսմեթ Ինոնյուի քաղաքական ուղղվածության մասին լավագույնս վկայում է 1943 թ. Գերմանիայից Թալեաթի աճյունի տեղափոխումը Թուրքիա: Սա հայերի և ընդհանրապես մյուս ազգային փոքրամաս-

նությունների նկատմամբ վարվող քաղաքականության մասին հստակ ազդարարություն էր:

Այս շրջանից հատկապես պետք է նշել զինակոչին, հարկային և լեզվական քաղաքականությանն առնչվող օրենքները:

1941 թ. մայիսին, երբ գրեթե ողջ Եվրոպան հայտնվել էր Գերմանիայի տիրապետության տակ, և ակնհայտ էր, որ նախապատրաստվում էր հարձակում ԽՍՀՄ-ի վրա, Գերմանիայի դաշնակից Թուրքիան ընդունեց զինակոչի մասին հատուկ օրենք, որով 25-45 տարեկան բոլոր հայերը, հրեաներն ու հույները զորակոչվեցին բանակ: Այն կոչվեց 20 դասակարգի զինակոչ: Զորակոչն անցկացվեց առանց զգուշացնելու և ավարտվեց երկու օրվա ընթացքում, ինչը վկայում է նախապատրաստական գաղտնի աշխատանքների մեծ ծավալի մասին: Մարդկանց հավաքում էին տներից, գործատեղերից, փողոցներից: Շատերը արդեն ծառայել էին բանակում, ոմանց համար էլ դա երրորդ զորակոչն էր: Այս զորակոչը հիշեցնում է Առաջին աշխարհամարտի ժամանակ հատկապես հայերին (18-45 տարեկան) զորակոչելու և դավադրաբար ոչնչացնելու ծրագիրը: Այս անգամ ևս հայերն ուղարկվեցին բանվորական գումարտակներ՝ քարհանքերում աշխատելու կամ ճանապարհներ կառուցելու, իսկ հույները և հրեաները ուղարկվեցին՝ կատարելու այլևայլ աշխատանքներ, բայց ոչ բանվորական գումարտակներ: Սա ևս մի հավելյալ ապացույց է, որ հայերի նկատմամբ վերաբերմունքն էականորեն տարբերվում էր մյուս ազգային փոքրամասնությունների նկատմամբ վերաբերմունքից: Այս մարդիկ ստույգ մահվան ճիրաններից ազատվեցին միայն արևելյան

ճակատում իրավիճակի փոփոխությամբ: Ու թեև նրանք փրկվեցին մահից, բայց գորացրումից հետո շատերն արտագաղթեցին:

Տնտեսական ոլորտում պետք է առանձնացնել ունևորության հարկի մասին օրենքը (Varlik Vergisi), որն ընդունվեց 1942 թ. նոյեմբերին և գործադրվեց ամենայն խստությամբ ու հետևողականությամբ: Ըստ այդ օրենքի՝ «....թուրք առևտրականը պետք է վճարեր իր տարեկան եկամտի 4.74 տոկոսը, յոյնը՝ 150 տոկոսը, հրեան՝ 179 տոկոսը, իսկ հայը՝ 232 տոկոսը. այսինքն՝ յոյները, թուրքերի համեմատությամբ, վճարում էին 31 անգամ ավելի, հրեաները՝ 36 անգամ, հայերը՝ 47 անգամ»¹⁶⁵:

Օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ նշանակված հարկի դեմ հարկատուները բողոքելու իրավունք չունեին: Ավելին՝ հարկը չվճարողներին սպառնում էր խիստ պատիժ, ինչն էլ, ըստ էության, օրենքի բուն նպատակն էր: Օրվա վարչապետ Շյուքրյու Սարաջօղլուի բնորոշմամբ՝ «Եթե այս երկրի ցուցաբերած հյուրասիրությունից օգտվելով հարստացել են, ապա այս օրենքը պետք է ողջ խստությամբ կիրառվի այն անձանց հանդեպ, որոնք այս զգայուն պահին կխուսափեն իրենց պարտականությունները կատարելուց»¹⁶⁶:

Կառավարությունը հստակ գիտեր, որ հայերը, հույները և հրեաները չէին կարող կատարել հարկային նման պարտավորությունները: Եվ ահա շատ չանցած՝ սկսվում է «օրինազանցների» նկատմամբ պատժամիջոցների գործադ-

¹⁶⁵ **Գեղամեան Ս.**, Թուրքիայի ազգային բուրժուազիան երկրի տնտեսական եւ սոցիալ-քաղաքական կեանքում 1945-50 թթ., «Դրօշակ», Աթենք, 1989, փետրվար, էջ 31:

¹⁶⁶ **Ridvan Akar**, Varlik Vergisi, İstanbul, 1992, s. 61.

րումը: Հարկ է նշել, որ կրոնափոխների կամ օրենքի գործադրման ընթացքում իսլամ ընդունողների հարկի չափը կրկնակի փոքր էր:

Նրանց ունեցվածքը, ովքեր չէին կարողանում վճարել հարկերը, աճուրդով վաճառվում էր: Նրանք, որոնց ունեցվածքի վաճառքից գոյացած գումարը չէր բավարարում հարկի պարտքը մարելուն, աքսորվում էին Աջքալեի գավառ՝ քարհանքերում տաժանակիր աշխատանքի կամ Կարինից Սեբաստիա ճանապարհներ կառուցելու: Նույնիսկ աքսորավայր հասնելու ծախսը գանձվում էր աքսորվողից: Շատերը զոհվեցին աքսորավայրերում:

Ունևորության հարկի մասին օրենքը չեղյալ հայտարարվեց 1944 թ. մարտին, երբ Երկրորդ աշխարհամարտի ելքը գործնականում վճռված էր, և Թուրքիայի դաշնակից Գերմանիան պարտության եզրին էր:

Փոքրամասնությունների դեմ ուղղված հաջորդ քայլը 1930-ականներին իշխանությունների նախաձեռնությամբ սկիզբ առած «Քաղաքացի՛, խոսի՛ր թուրքերեն» շարժումն էր: Ազգայնամոլների խմբերն այս սպառնալից կոչով անցնում էին փոքրամասնությունների բնակավայրերով, թաղերով՝ տարածելով ահ ու սարսափ: Անասելի տառապանքներ կրած շատ մարդկանց վրա այս շարժումը թողեց ակնկալված ազդեցությունը. փոքրամասնությունների լեզուներն աստիճանաբար դուրս էին մղվում գործածությունից, քանզի մայրենի լեզվով հասարակական վայրերում խոսելը համարվում էր թուրքի նկատմամբ անհարգալից վերաբերմունք և հաճախ ողբերգական հետևանք էր ունենում:

Իշխանությունները լավ գիտեին, որ հայերի (և ընդհանրապես քրիստոնյաների) ինքնության պահպանման գործում եկեղեցին ուներ անփոխարինելի դեր, ուստի հայերի ծուլման կամ երկրից վտարման ծրագրում առանձնահատուկ նշանակություն էր տրվել հայկական եկեղեցիների ու վանքերի ոչնչացմանը և հոգևորականների գործունեությունն ամեն կերպ խոչընդոտելուն: 1914 թ. գրանցումներով՝ օսմանյան պետությունում հայերն ունեցել են 2538 եկեղեցի, 451 վանք և 2000 դպրոց: Լոզանի հաշտության պայմանագրի (կնքվել է 1923 թ. հուլիսի 24-ին) 42-րդ կետում ասվում է. «Թուրքական կառավարությունը եկեղեցիները, սինագոգները, գերեզմանոցները և մյուս կրոնական կառույցներն իր ամբողջական պաշտպանության տակ առնելու երաշխավորը պետք է լինի»: Սակայն իրողությունն այլ էր: Ըստ ՅՈՒՆԵՍԿՈ-ի գեկույցի՝ վերոնշյալից 1974 թ. մնացել էր 913 եկեղեցի և վանք, իսկ այսօրվա դրությամբ այդ 913-ից «464-ն ամբողջությամբ ավերվել է, 252-ը փլուզման վտանգի տակ է, իսկ 197-ը լուրջ վերանորոգման կարիք ունի»¹⁶⁷:

Թուրքիան կարողացավ օգտագործել ինչպես Առաջին, այնպես էլ Երկրորդ աշխարհամարտերի ընձեռած հնարավորությունները՝ միատարր երկիր ստեղծելու համար: Բազմաթիվ հայեր, հույներ, ասորիներ և հրեաներ լքեցին երկիրը, մնացողների զգալի մասն էլ իսլամացավ: Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տվյալներով՝ 1922 թ. կոտորածներից և տեղահանությունից փրկվածների

¹⁶⁷ Այշե Հյուր, Ովքե՞ր տիրացան հայերի ունեցվածքին, <http://www.taraf.com.tr/ayse-hur/makale-ermenimallarini-kimler-aldi.htm> (մուտք՝ 10.10.2021): Հայերեն թարգմանությունը՝ <http://akunq.net/am/?p=17672> (մուտք՝ 10.10.2021):

թիվը կազմել է 387.800¹⁶⁸, որոնց մոտ կեսը բնակվում էր Կ. Պոլսում: Պետության վարած քաղաքականության հետևանքով 1940-ականների վերջին հատկապես գավառաբնակ հայության թիվը կտրուկ նվազել էր:

գ. Ժողովրդավարների կառավարման շրջան: 1950-ականներին՝ ժողովրդավարների կառավարման շրջանում, այնպիսի ցնցումներ, ինչպիսիք էին տեղահանությունը, զորակոչը և հարկային քաղաքականությունը, չարձանագրվեցին՝ բացառությամբ 1955 թ. սեպտեմբերի 6-7-ի իրադարձությունների, որոնք թեև իշխանությունները փորձեցին ներկայացնել որպես ամբոխի տարերային գործողություններ, սակայն ակնհայտ էր, որ դրանք կազմակերպել էին հատուկ ծառայությունները, և հիմնականում ուղղված էին հունական և հայկական համայնքների դեմ: Երկու օրում Կ. Պոլսում և Զմյուռնիայում ամբոխը թալանում, ոչնչացնում է հույների, հայերի և հրեաների 4348 խանութ, 110 հյուրանոց, 27 դեղատուն, 23 դպրոց, 21 գործարան, 70 եկեղեցի, 3 գերեզմանատուն, հազարավոր տներ: Սպանվեցին 16 հույն, որոնցից 2-ը՝ քահանա, և 1 հայ: Բռնաբարվեցին բազմաթիվ կանայք ու աղջիկներ: Ինչպես Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության բազում հանցագործություններ, այնպես էլ այս մեկը մնաց անպատիժ:

Փոքրամասնություններին ծուլելու քաղաքականության հետևանքով հայերի թիվը կտրուկ նվազեց: Ժամանակի հայկական մամուլը («Նոր Մարմարա», «Ժամանակ», «Ալիք», «Հայրենիք» ամսագիր և այլն) հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում 1950-ականներին Փոքր Հայքի և հատ-

¹⁶⁸ Տե՛ս http://www.armenocide.am/genocide_museum.htm (մուտք՝ 10.10.2021):

կապես Հարավարևմտյան Հայաստանի մի շարք բնակավայրերում հայ եկեղեցու գործունեության աշխուժացման վերաբերյալ, սակայն նույնը չի նկատվում Արևմտյան Հայաստանի այն տարածքներում, որոնք ընդգրկված են ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի՝ 1920 թ. իրավարար վճռով հաստատված Հայաստանի Հանրապետության սահմաններում¹⁶⁹: Ավելին՝ սույն տարածքներում նոր թափ է հավաքում իսլամացման գործընթացը: Ժողովրդավարների կառավարման շրջանում ևս հայերի իսլամացման գործընթացը, ինչպես տեսնում ենք, տարբեր ձևերով, տարբեր միջոցներով շարունակվել է:

դ. Ռազմական հեղաշրջումների ժամանակաշրջան: 1960-1980-ականների դեպքերը (1960 թ., 1971 թ. և 1980 թ. ռազմական հեղաշրջումները) եկան փաստելու, որ անգամ կիսատ-պռատ ժողովրդավարությանը Թուրքիան պատրաստ չէր: 1960 թ. զորավար Գյուրսելի գլխավորությամբ ռազմական հեղաշրջումը վերահաստատեց բռնապետական համակարգը Թուրքիայում: Ի դերև ելան ազգային փոքրամասնությունների և թուրք հասարակության որոշ շրջանակների հույսերը ակնկալվող բարեփոխումների հարցում: Այստեղ միայն փաստենք, որ գավառաբնակ հայության թիվը, ըստ ժամանակի Պոլսո հայոց պատրիարք Շնորհք Գալուստյանի, տասը տարում (1960-1970 թթ.) նվազեց ավելի քան կիսով չափ՝ հասնելով շուրջ 25 հազարի:

ե. Արդի վիճակը: Այսօր կարող ենք փաստել, որ Թուրքիայի իշխանությունները, չնայած գործադրած մեծ

¹⁶⁹ Տե՛ս **Խանլարեան Կ.**, Հայ բնակչության էթնոկոսմական վերակերպումները Թուրքիայի Հանրապետությունում (1923-2005 թթ.), Անթիլիաս, 2009, էջ 100:

ջանքերին և պետականորեն ծրագրված ու իրականացված աննախադեպ հանցագործություններին, ո՛չ ցեղասպանության, ո՛չ ձուլման ճանապարհով չկարողացան «լուծել» ազգային հարցը: Էթնոկրոնական տեսանկյունից Թուրքիան միատարրությունից շատ է հեռու, ինչպիսին փորձում է ներկայանալ թե՛ երկրի ներսում, թե՛ առավել ևս, միջազգային հանրությանը: Վերջին տարիներին հեղինակավոր միջազգային կազմակերպությունների անցկացրած հարցումների տվյալներով՝ Թուրքիայի բնակչության շուրջ կեսը¹⁷⁰ իրեն թուրք չի համարում: Այդ բազմամիլիոնանոց զանգվածը, բնականաբար, միատարր չէ նաև լեզվական առումով. Թուրքիայում բնակվող ժողովուրդները խոսում են 36 լեզվով¹⁷¹: Սակայն մեկ ազգ-մեկ լեզու հիմնահարցը Թուրքիայի ներքաղաքական օրակարգում չի կորցրել իր արդիականությունը: 2009 թ. մարտին Հաքքարիում Թուրքիայի վարչապետ, հետագայում նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանն այդ միտքը բանաձևեց առավել հակիրճ. «Մեկ լեզու, մեկ ազգություն. ով որ չի հավանում, կթողնի-կգնա»¹⁷²:

Կարծում ենք՝ բոլորի, հատկապես հայերի համար պարզ է, թե «կթողնի-կգնա» արտահայտությունն իրականում ինչ բովանդակություն ունի, որի հիշեցումով թուրքական իշխանությունները թիրախավորում են մի քանի նպա-

¹⁷⁰ Տե՛ս Հայ Դատն այսօր, Թեհրան, 2005, էջ 46: Տե՛ս նաև <http://www.milligazete.com.tr/index.php?action=show&type=writersnews&id=17302> (մուտք՝ 10.10.2021):

¹⁷¹ Թուրքիայում տարածված լեզուներին և աշխարհի բոլոր լեզուներին նվիրված մի համապարփակ ուսումնասիրություն հրապարակած «www.ethnologue.com»-ի՝ Թուրքիայի մասին զեկուցման համաձայն՝ Թուրքիայում խոսում են 36 լեզվով՝ թուրքերենը ներառյալ:

¹⁷² «Milliyet» օրաթերթ, 13.03.2009:

տակ, որոնցից հիմնականը փոքրամասնությունների շրջանում նկատվող ինքնության զարթոնքը խեղդելն է: Տվյալ հարցում հայերին (ներառյալ իսլամացվածները) թիրախավորելը պայմանավորված է հայ-թուրքական հարաբերություններով, ինչն այսօր նորանոր երանգներ է ստանում մի կողմից՝ Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման պահանջի, մյուս կողմից՝ Թուրքիայի իշխանությունների Ժխտողական քաղաքականության, երրորդ կողմից՝ արևմտահայության ազգային զարթոնքի դրսևորումներով:

АЙКАЗУН АЛВРЦЯН

***Директор исследовательского фонда
«Центр изучения проблем Западной Армении и
западных армян»,
доктор филологических наук***

ПРОБЛЕМА ЗАПАДНЫХ АРМЯН В КОНТЕКСТЕ НАЦИОНАЛЬНОЙ ПОЛИТИКИ ТУРЦИИ

Резюме

Благодаря Лозаннскому договору Турция смогла изменить суть концепции национально-религиозного меньшинства. Правда, хотя ей пришлось признать статус трех наций – армян, греков и евреев – как религиозной общины в рамках одного пакта, но другие большие и малые этнорелигиозные группы не были признаны мень-

шинством, то есть, они считались турками. Опираясь на эту фактическую (созданную ситуацию) и, особенно, международно признанную правовую (Лозаннский договор) основу, была сформулирована статья 66 Конституции новообразованной республики, согласно которой «Каждый, кто имеет гражданскую связь с турецким государством, турок». Другими словами, в законе было сказано, что все граждане Турции являются турками, и из этого будет следовать политика, применяемая к другим нациям и народам.

После провозглашения республики турецкие власти планировали и последовательно проводили политику ассимиляции малых народов, религиозных групп, проживающих в стране, которая продолжается и по сей день в различных проявлениях.

По мнению турецкого историка Баскина Орана, этнорелигиозная политика Турецкой Республики всегда преследовала две цели.

а. Избавиться от немусульман, потому что они не могут быть ассимилированы из-за их различных религий.

б. Ассимилировать курдов и другие нетурецкие мусульманские группы.

Этот план заключался в создании новой идентичности для турок, пришедших на смену османам, на что были направлены основные средства и силы прави-

тельства. Для реализации этой цели особенно были выделены следующие вопросы:

а. Образование, наука и пропаганда.

б. Принятие законов, укрепляющих верховенство турецкого элемента в национальной, социальной и социально-экономической жизни.

Сегодня мы можем констатировать, что турецкие власти, несмотря на их огромные усилия, беспрецедентные, спланированные государством преступления, не смогли «решить» национальный вопрос путем геноцида или ассимиляции. С этнорелигиозной точки зрения Турция далеко не однородна, какой пытается представить себя как внутри страны, так и тем более перед международным сообществом.

Ключевые слова: западные армяне, Турция, Иттихад, национальное меньшинство, Мустафа Кемаль, насильственная исламизация, религия, обращение, тюркизация, геноцид, национализм.

HAYKAZUN ALVRTSYAN

***“Director of the Western Armenians Affairs Research
Center”***

***Scientific-Research Foundation,
Doctor of Philological Sciences***

**THE QUESTION OF WESTERN ARMENIANS IN THE
CONTEXT OF TURKISH NATIONAL POLICY**

Summary

With the treaty of Lausanne, Turkey was able to distort the very essence of the notion of national-religious minority. It is true that under the same treaty Turkey had to accept the fact that the three nations – Armenians, Greeks and Jews were religious communities, but the other large and small ethno-religious groups were not recognized as minorities, yet they were considered Turks. In fact, on the basis of this factual situation and especially on the internationally recognized legal basis (Lausanne Treaty), Article 66 of the constitution of the newly established republic was formulated, in accordance to which “anyone, who is in civil relationship with the Republic of Turkey, is a Turk”. In other words, it was stipulated by the law that all the citizens of Turkey are Turks, and the policy applied towards other nations and people was to derive from this. After the proclamation of the republic, the Turkish

authorities planned, and consistently pursued a policy of assimilation of the foreign-speaking, non-religious peoples living in the country, which continues to this day with various manifestations.

According to Turkish historian Baskin Oran, the ethno-religious policy of the Republic of Turkey has always been aimed at two goals:

- a. get rid of non-Muslims since they could not be assimilated because of their different religions,
- b. assimilate Kurds and other non-Turkish Muslim groups.

This plan was supposed to create a new identity for the Turk who had replaced the Ottomans, to which the main means and forces of the government were directed. For the realization of that goal, the following were especially important:

- a. education, science and propaganda.
- b. adoption of laws strengthening the supremacy of the Turkish element in national, social and socio-economic life.

Today we can state that the Turkish authorities, despite their great efforts, unprecedented state-planned crimes, have not been able to “solve” the national issue through genocide or assimilation. From an ethno-religious point of view, Turkey is far from being homogeneous, as it

tries to present itself both inside the country and, moreover, to the international community.

Key words: *Western Armenians, Turkey, Ittihad, national minority, Mustafa Kemal, forced Islamization, religion, conversion, Turkification, genocide, nationalism.*

**ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ-
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԽՆԴԻՐԸ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ
ՄԱՄՈՒԼԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ
(1920-1930-ԱԿԱՆ ԹԹ.)**

ԽԱՉԱՏՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի համաշխարհային
պատմության և նրա դասական դման մեթոդիկայի
ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր*
kh.stepanyan@gmail.com

Բանալի բառեր – հայ-թուրքական սահման, դաշնակ-
ցական մամուլ, «Դրօշակ», «Հայրենիք», «Յուսաբեր»,
«Յառաջ», Ռուբեն Տեր-Մինասյան, Արտաշես Աբեղյան,
Կարո Սասունի, Սիմոն Վրացյան:

Հայոց Մեծ եղեռնից, արևմտահայության հայրե-
նազրկումից և Հայաստանի առաջին հանրապետության ան-
կումից հետո հայ իրականության մեջ սկսեցին նոր շեշ-
տադրմամբ ընկալել հայ-թուրքական հարաբերությունների
խնդիրը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հատկապես
1920-1930-ական թթ. Խորհրդային Միությունում ընդհանրա-
պես և Խորհրդային Հայաստանում մասնավորապես թե՛
գործնականում և թե՛ նույնիսկ տեսականորեն անհնար էր

այդ հարաբերությունների քիչ թե շատ անկողմնակալ քննարկումը, կարևոր է տվյալ ժամանակահատվածում խնդրի վերաբերյալ սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի արտահայտած տեսակետներին անդրադառնալը: Այս տեսանկյունից գլխավոր շեփորահարը թերևս դաշնակցական մամուլն էր:

1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում կնքվեց ռուս-թուրքական «բարեկամության և եղբայրության» պայմանագիրը¹⁷³: Պայմանագրով որոշվում էր Թուրքիայի հյուսիսարևելյան սահմանը, որը Հայաստանի հարևանությամբ անցնելու էր Ախուրյան և Արաքս գետերով: Թուրքիային էին զիջվում Կարսի մարզը և երբևէ նրա կազմում չեղած Սուրմալուի գավառը: Պայմանագրի 3-րդ հոդվածով, որպես ինքնավար տարածք, երրորդ կողմին, այսինքն՝ Հայաստանին չզիջելու պայմանով Ադրբեջանին էր հանձնվում Նախիջևանը: 1921 թ. հոկտեմբերի 13-ին Կարսում կնքվեց մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրի ոգուն համապատասխան պայմանագիր¹⁷⁴: Ձևավորվեց հայ-թուրքական սահմանը¹⁷⁵:

Ինչպես նշվեց, 1920-1930-ական թթ. դաշնակցական մամուլը Խորհրդային Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների, դրանց ապագայի և հատկապես սահմանների վերաբերյալ բավականին լայն քննարկում իրակա-

¹⁷³ Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), կազմողներ՝ **Ջ. Ս. Կիրակոսյան, Ռ. Գ. Սահակյան**, խմբ.՝ **Ջ. Ս. Կիրակոսյան**, Երևան, 1972, էջ 499-507:

¹⁷⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 517-527:

¹⁷⁵ ՀՍԽՀ տարածքի և սահմանների (այդ թվում՝ Թուրքիայի հետ սահմանների) ձևավորման գործընթացի մասին մանրամասն տե՛ս **Խաչատրյան Կ., Սուքիասյան Հ., Բադալյան Գ.**, Հայկական տարածքների բռնակցումը Թուրքիային և Խորհրդային Ադրբեջանին 1920-1930-ական թվականներին, Երևան, 2020:

նացրեց: Խորհրդային Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանային հարցերի քննարկումը Սփյուռքում պայմանավորված էր նաև Հայոց ցեղասպանությամբ և դրանից բխող հատուցման պահանջով: Թուրքիայից բռնի տեղահանված արևմտահայության տեսակետը ներկայացնող թերթերը չէին կարող անտեսել այդ իրողությունը: Բնականաբար, հայ-թուրքական հարաբերություններին վերաբերող ցանկացած հարցի, հատկապես Խորհրդային Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանային-տարածքային հարցի լուծման վերաբերյալ մոտեցումները պայմանավորվելու էին այդ գործոններով և պատմական անարդարությունը սրբագրելու ձգտումով:

Պետք է արձանագրել, որ խնդրի վերաբերյալ մոտեցումները բազմազան էին և երբեմն նույնիսկ իրարամերժ: Հիմնականում դաշնակցական մամուլն առավել արմատական էր տրամադրված թուրքերի հանդեպ և դեմ էր առանց Արևմտյան Հայաստանի վերադարձի հաշտություն կնքելուն¹⁷⁶: Իսկ 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերով սահմանված հայ-թուրքական սահմանը, բնականաբար, բացարձակապես անընդունելի էր: Սակայն կային նաև մի շարք պարբերականներ, որոնց կարծիքով՝ գոյություն ունեցող սահմանն արտացոլում էր իրերի վիճակը, և ավելի նպատակահարմար էր եղած սահմաններն ընդունելով նվիրվել Խորհրդային Հայաստանի վերաշինությանը:

¹⁷⁶ Հոդվածի ծավալի սահմանափակ լինելու հանգամանքով է պայմանավորված միայն դաշնակցական մամուլի գնահատականներին անդրադառնալը: Այլ առիթով անպայման կանդրադառնանք նաև մյուս և հատկապես հակառակ տեսակետներին ու գնահատականներին:

Դաշնակցական մամուլի մեջ պետք է առանձնացնել Փարիզում հրատարակվող կուսակցության գլխավոր պաշտոնաթերթ «Դրօշակ»-ը և Բոստոնում հրատարակվող «Հայրենիք» ամսագիրն ու օրաթերթը:

«Դրօշակ»-ում հրապարակված «Քաղաքական խնդիրները Հ.Յ.Դ. XI Ընդհանուր ժողովում» հոդվածաշարում Առաջին հանրապետության վերջին վարչապետ, ՀՅԴ Բյուրոյի անդամ Սիմոն Վրացյանը գրում է, որ Թուրքիայի սահմաններն անվիճելիորեն պիտի փոխվեն¹⁷⁷: Տարագիր գործիչը, ներկայացնելով ՀՅԴ պաշտոնական տեսակետը, փաստացի շեշտում է հայ ժողովրդի անժամանցելի իրավունքի մասին: Միաժամանակ Վրացյանը կարևորում է Կարմիր բանակի ներկայությունը թուրք-հայկական սահմանին, ինչը զսպում էր թուրքերի ախորժակը¹⁷⁸:

Դաշնակցական պարբերականներում խնդրի վերաբերյալ արժանահիշատակ են տարագիր գործիչ, Հայաստանի առաջին հանրապետության նախկին ռազմական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանի մտորումները:

«Դրօշակ»-ում հրատարակված «Միացյալ Հայաստան» հոդվածում Ռուբենը Խորհրդային Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանը վերանայելու խնդրին անդրադառնում և Միացյալ Հայաստանի գաղափարը բխեցնում է հետևյալ հիմքերից՝ հայ ժողովրդի և Հայաստանի պատմությունից, հայկական հեղափոխական շարժման հետևողական ընթացքից, հայ ժողովրդի և սերունդների անապաս-

¹⁷⁷ Տե՛ս **Վրացեան Ս.**, Քաղաքական խնդիրները Հ.Յ.Դ. XI Ընդհանուր ժողովում, «Դրօշակ», Փարիզ, 1929, թիւ 4-5, էջ 74:

¹⁷⁸ Տե՛ս նույն տեղում:

տան ու հայրենագուրկ վիճակից, Հայաստանի անվտանգության ապահովման անհրաժեշտությունից, Հայաստանի՝ աշխարհագրական և տնտեսական ամբողջություն կազմելու ձգտումից, Առաջավոր Ասիայում վերջնականապես խաղաղություն հաստատելու և ամեն գույնի աշխարհակալություններին ու խաղերին վերջ տալու պահանջներից¹⁷⁹:

Ռուբենն առանձնապես կենտրոնանում է հայ ժողովրդի անվտանգության ապահովման և սփյուռքահայությանն ուժացումից փրկելու անհրաժեշտության վրա: Միայն Միացյալ Հայաստանի պայմաններում է հնարավոր ապահովել հայ ժողովրդի և հայոց պետականության տնտեսական զորությունն ու անվտանգությունը:

«Դրօշակ»-ում հրատարակված մեկ այլ հոդվածում Ռուբենը հայ-թուրքական սահմանի վերանայման և Միացյալ Հայաստանի խնդրին անդրադառնում է սերունդների ուժի և կարողությունների տեսանկյունից: Նա ցնորք է համարում Կուրից մինչև Սև և Միջերկրական ծովերը ձգվող Հայաստան պահանջելու ծրագրերը՝ միաժամանակ սաստելով նրանց, ովքեր ծաղրում էին Միացյալ Հայաստանի գաղափարն իսկ իբրև ցնորք¹⁸⁰:

1921 թ. Կարսի պայմանագրով Հայաստանի սահմաններից դուրս մնացած Սուրմալուի և Մասիսի կարևորության մասին Ռուբենը խոսում է «Հայրենիք» ամսագրում տպագրված «Հայաստանի արեւելքը (Բագրեւանդ եւ Սուրմալու)» հոդվածում: Ըստ Ռուբենի՝ Թուրքիան Բագրևանդ և

¹⁷⁹ Տե՛ս **Ռուբէն**, Միացեալ Հայաստան, «Դրօշակ», 1926, թիւ 7, էջ 211:

¹⁸⁰ Տե՛ս **Ռուբէն**, Վասպուրականը իբրեւ անկիւնաքար Միացեալ Հայաստանի, «Դրօշակ», 1926, թիւ 11-12, էջ 299:

Սուրմալու գավառները, որոնք երկար ժամանակ կռվախնձոր են եղել Օսմանյան կայսրության և Ռուսաստանի միջև, պահում է իր ձեռքում, որովհետև դրանք շատ կարևոր են «առևտրական, ինքնապաշտպանական նպատակների համար»¹⁸¹:

Փորձելով համեմատականորեն արժևորել Սուրմալուի դերը՝ հոգվածի հեղինակը գրում է. «Սա (Սուրմալուի և Կարսի գավառները – Խ. Ս.) թուրքի համար յաղթութիւն է. իրաւ է, թէ նա կորսնցուց Մոսուլը, բայց զինուորական տեսակէտից նոյնքան արժէքաւոր հենարան ձեռք գցեց՝ Ղարսն ու Սուրմալուն իր Նախկրայով»¹⁸² խլելով Ռուսաստանէն»¹⁸³: Կարևորելով Սուրմալուի և Բագրևանդի դերը Հայաստանի համար՝ Ռուբենը իբրև եզրակացություն նշում է այդ ձգտման իրագործումից բխող գլխավոր օգուտները. «1. Երբ Մասիսի կողերը ազատ Հայաստանին պատկանեն, վերջ պիտի գտնեն ռուսական ու անգլիական (այժմ՝ թերևս ամերիկյան – Խ. Ս.) մրցակցութիւնները, որոնք իսկական արնահեղութիւնների պատճառներ են: 2. Անհնարին ու ցնորական պիտի դառնան պանթուրանիզմի ձգտումները, եւ իբրեւ սրա հետեւանք հնարաւոր պիտի լինի ներդաշնակ կենակցութիւնը հարեւան թուրքի եւ ադրբեջանցու հետ: 3. Հայաստանը կ'ունենայ տնտեսական ու ռազմական ելումուտքի ճանապարհներ, կը դառնայ «նիթապէս» եւ «ֆիզիկապէս» առողջ: 4. Կը վերանայ կոտորածների մղձաւանջը: 5. Ոչ միայն Սուրմալուի եւ Բագրեւանդի հայերը, այլ նաեւ Հայաս-

¹⁸¹ Տե՛ս Ռուբեն, Հայաստանի արեւելքը (Բագրեւանդ եւ Սուրմալու), «Հայրենիք», Բոստոն, 1927, սեպտեմբեր, էջ 100:

¹⁸² Նախիջևանի երկրամասը:

¹⁸³ Ռուբեն, Հայաստանի արեւելքը (Բագրեւանդ եւ Սուրմալու), էջ 101:

տանի յաւելեալ ժողովուրդը եւ գաղթականների մեծ մասը ապրելու տեղ կը գտնեն»¹⁸⁴:

Սրանց կողքին Ռուբենը նշում է Սուրմալուի և Բագր-Լանդի այլ առավելություններ ևս՝ Կողբի աղը, Սուրմալուի բամբակը, Ալաշկերտի հացը, քարածուխը և այլն: Այդ պատճառով է, որ Մասիսի պատկանելությունը Հայաստանին միայն մասնակի հարց չէ: Դրանից կախված է Հայաստանի և հայ ժողովրդի բարգավաճումը, ինչպես նաև վերջնական խաղաղության հաստատումը:

Ինչպես տեսնում ենք, հայ-թուրքական հարաբերություններում Ռուբեն Տեր-Մինասյանը ամենակարևորը համարում էր սահմանային-տարածքային խնդիրների կարգավորումը, առանց որի անհնար էր տարածաշրջանում խաղաղության հաստատումը, ինչպես նաև հայկական պետության տնտեսական, ժողովրդագրական, ռազմական անվտանգության ապահովումը:

Մեկ այլ տարագիր գործիչ՝ 1919-1920 թթ. ՀՀ խորհրդարանի անդամ, Բեռլինի և Մյունխենի համալսարանների պրոֆեսոր Արտաշես Աբեղյանը, «Դրօշակ»-ում հրատարակած մի հոդվածում առաջարկում է համեմատել խորհրդային իշխանությունների՝ սկզբնական շրջանի կոչերը, խոստումներն ու նշանաբանները օրվա իրականության հետ, և պատկերը պարզ կլինի: «Առաջ բուշեիկները խոստանում էին ոչ միայն Կարսն ու Սուրմալուն յետ առնել թիրքերից, այլ եւ թիրքահայկական խնդիրը լուծել: Այժմ եւ Թիրքահայաստանի, եւ Կարսի ու Սուրմալուի վրայ սեւ խաչ է քաշուած: Խոստանում էին վիճելի գաւառները վերադարձնել Հայաս-

¹⁸⁴ Նույն տեղում, էջ 108:

տանին: Այժմ ոչ միայն Ախալքալաքն ու Ղարաբաղը «լուրջ ու երկար ժամանակով» խլուած են Հայաստանից, այլև Շարուրն ու Նախիջեւանը»¹⁸⁵, - գրում է Ա. Աբեղյանը:

Աբեղյանը հայ-թուրքական (Խորհրդային Հայաստանի և Թուրքիայի) սահմանի վերանայումը դիտարկում է Միացյալ Հայաստանի գաղափարի կենսագործման անհրաժեշտության տեսանկյունից: «Միացեալ Հայաստանի ելակետը Անդրկովկասում որոնելու է. ներկայ Հայաստանից թէև դուրս, բայց նրան անմիջապէս կից գտնուող եւ ազգագրորէն ու աշխարհագրատնտեսօրէն: Ուստի եւ իրականօրէն – ոչ նուազ հայկական բռնագրաւուած շրջանների վերստին կցումը մեր երկրին՝ դիտելու է որպէս առաջին հանգրուանը Միացեալ Հայաստանի աստիճանական իրականացման»¹⁸⁶, - մտորում է Ա. Աբեղյանը: Նրա կարծիքով՝ սա պետք է դառնա քաղաքական ծրագիր, որի իրագործումը կարճ ժամանակի խնդիր չէ և համբերություն է պահանջում:

Խոսելով մասնավորապես Կարսի և Սուրմալուի մասին՝ Ա. Աբեղյանը պնդում է, որ դրանք սակարկության առարկա են դարձել Մոսկվայի և Անկարայի միջև և, անկախ Արևմտյան Հայաստանի հարցի լուծման ընթացքից, պետք է շուտափույթ վերադարձվեն Հայաստանին¹⁸⁷: Մեկ այլ առիթով հայկական հողերի սակարկության մասին խոսելիս Սիյուրքում հաստատված գործիչը հանգում է այն հետևության-

¹⁸⁵ **Աբեղյան Ա.**, Զակֆէդերացիայի տասնամեակը, «Դրօշակ», 1932, ապրիլ, թիւ 4, էջ 82:

¹⁸⁶ **Աբեղյան Ա.**, Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստան (Ազգային քաղաքականութեան խնդիրներ), «Հայրենիք», 1927, օգոստոս, էջ 131:

¹⁸⁷ Տե՛ս **Աբեղյան Ա.**, Մենք եւ մեր հարեանները (Ազգային քաղաքականութեան խնդիրներ), «Հայրենիք», 1928, սեպտեմբեր, էջ 125:

նը, որ Հայաստանն իրար մեջ բաժանելու համաձայնությու-
նը Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի միջև ձեռք է
բերվել մինչև Մոսկվայի պայմանագրի ստորագրումը: Ավե-
լին, առանց այդ համաձայնության, քեմալականները երբեք
չէին հարձակվի Հայաստանի վրա: Աբեղյանը միաժամանակ
հավելում է, որ թուրքերի՝ Հայաստանի վրա չհարձակվելը
կարող էր պայմանավորված լինել ոչ թե հայկական ուժերով,
այլ Մոսկվայից ունեցած իրենց վախով¹⁸⁸:

Մեկ այլ տեղ Աբեղյանը նշում է, որ, ըստ «Известия»
թերթի, 1921 թ. Մոսկվայի պայմանագիրը սոսկ իրավական
ձևակերպումն է մինչ այդ և վաղուց կայացված որոշման:
Անդրկովկասում հողային գիջումները Մոսկվան Թուրքիա-
յին շուտ էր խոստացել¹⁸⁹: Աբեղյանը միաժամանակ նշում է,
որ, Անդրկովկասի հայկական տարածքները Թուրքիային
գիջելով, Ռուսաստանն ակնկալում էր վերջինիս հետ ընդդեմ
Անգլիայի ընդհանուր ճակատ կազմել:

Այսպիսով՝ Կարսի և Սուրմալուի հանձնումը թուրքե-
րին Ա. Աբեղյանը համարում էր հայ ժողովրդի թիկունքում
նախապես ծրագրված ռուս-թուրքական գործարք:

«Հայրենիք» ամսագրի էջերում Խորհրդային Հայաս-
տանի և Թուրքիայի սահմանային-տարածքային խնդիրնե-
րին է անդրադարձել նաև տարագիր գործիչ Կարո Սասու-
նին: Այս կապակցությամբ նա գրում է. «1921-1923 թուական-
ները հայ բոլշեիկներու համար քաղաքական պարտութեան
տարիներ եղան.... Երեւանի այսօրուան վարիչները վերջնա-
կանօրէն նահանջեցին թրքական ներկայ սահմաններէն, ե-

¹⁸⁸ Տե՛ս «Հայրենիք», 1929, 9 փետրուարի:

¹⁸⁹ Տե՛ս նույն տեղում:

րելի Մոսկուայի իրենց տերերի հրամանով... Միւս կողմէ՝ երեք տարիներ անցան, ու բոլշեւիկեան Կովկասի «եղբայրացումն» ալ չօգնեց հայ գործակատարներուն: Ազգերու ինքնորոշման սկզբունքը գործադրելի եղաւ ուրիշներու համար, սակայն, «եղբայրօրէն», այդ զլացուեցաւ հայերուն: Եւ, վերջապէս, կար «ազգամիջեան խաղաղութիւնը», որու համար ստիպուած էին տեղի տալ Նախիջեւանի, Ղարաբաղի եւ Ախալքալաքի խնդիրներու մէջ, որպէսզի կարենային յայտարարել, թէ մենք մեր դրացիներուն հետ հիմա կռիւ չունենք: Բնական է, որ եթէ հայ բոլշեւիկները խաբուած չըլլային ու յաջողէին Հայաստանի սահմանները լայնցնել, իրենց այսօրուան պատճառաբանութիւններուն փոխարէն, մեծադղորդ յայտարարութիւնները ոսկէ տախտակներու վրայ պիտի արձանագրէին, պատմութեան յանձնելու համար»¹⁹⁰: Ինչպէս տեսնում ենք, Կարո Սասունին նույնպէս հայ ժողովրդի դեմ դավադրություն էր տեսնում՝ փաստելով նաև Խորհրդային Հայաստանի ղեկավարության խաբված լինելու կամ որոշումների վրա ազդել չկարողանալու հանգամանքը:

Կարո Սասունին հույս էլ չունէր, որ պաշտոնական հայտարարություններով և հոդվածներով ապացուցված «ոռւս-թուրքական բարեկամության պայմաններում» խորհրդային պետությունը քայլեր կձեռնարկէր «անբարյացակամ» լինելու Թուրքիայի հանդեպ, որն ականա «չարականության» էր վերածվել հայ ժողովրդի և Հայաստանի համար¹⁹¹: Խորհրդային Ռուսաստանի շահագրգռվածության բացակայությունը կամ պակասը Արևմտյան Հայաստանի հանդեպ

¹⁹⁰ Սասունի Կ., Ռուսական օրինադրական, «Հայրենիք», 1928, յունուար, էջ 109:

¹⁹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 112:

ընդհանրապես Կ. Սասունին պարզաբանում է հետևյալ պատճառաբանությամբ: Նրա կարծիքով՝ Թուրքիայի այն տարածքները, որոնք պետք է բաժին հասնեին ցարական Ռուսաստանին, ցեղասպանության պատճառով դարձել էին գրեթե անմարդաբնակ, հետևաբար Ռուսաստանը չէր կարող «այդ ամայացած հողաշերտը (Արևմտյան Հայաստանը – Խ. Ս.) պատուանդան դարձնել համաշխարհային յեղափոխութեան: Այդպիսի գրաւում մը ներկայ Ռուսաստանին ոչ զինուորական, ոչ քաղաքական եւ ոչ ալ տնտեսական առաւելութիւն մը պիտի ապահովէր»¹⁹²: Մեր կարծիքով՝ խորհրդային իշխանությունները, եթե հնարավորություն ունենային հայկական տարածքները վերցնելու Թուրքիայից, Կ. Սասունու մեջբերված վերջին պատճառաբանությունն այնքան էլ էական չէր լինի: Կարո՞ւ Սասունին «Յառաջ»-ի խմբագրականում նշում է, որ Թուրքիայի հանդեպ Դաշնակցության քաղաքականության հիմքում շարունակելու է մնալ հայկական հողերի խնդիրը, որոնք բռնագրավված են թուրքերի կողմից¹⁹³:

Դաշնակցական մամուլի օրգաններից հայ-թուրքական սահմանային-տարածքային խնդիրներին լայնորեն անդրադարձել է Բոստոնի «Հայրենիք» օրաթերթը:

Հայաստանի առաջին հանրապետության տարագիր վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը «Հայրենիք»-ում գրում է, որ թուրքերը, կորցնելով իրենց եվրոպական տարածքները, ավելի են ամրապնդվելու Արևմտյան Հայաստանում՝ այն խորհրդային Հայաստանին չզիջելու մտադրությամբ: Սա էլ

¹⁹² **Սասունի Կ.**, Ռուսական օրինեսագիան, «Հայրենիք», 1928, փետրուար, էջ 138:

¹⁹³ Տե՛ս «Յառաջ», Փարիզ, 1930, 4 սեպտեմբերի:

ենթադրում է, որ հանուն դրա թուրքերը կձգտեն Խորհրդային Միության հետ բարեկամության¹⁹⁴:

Հետաքրքիր է «Հայրենիք» օրաթերթի անդրադարձը հայ-թուրքական սահմանային-տարածքային խնդիրների վերաբերյալ թուրք լրագրողների մոտեցումներին: Վերջիններս իրենց հակահայկական քարոզչությունը Եվրոպայում իրականացնում էին ազդեցիկ թերթերի միջոցով: Գերմանական «Frankfurter Zeitung» և անգլիական «Times» թերթերի թուրք թղթակիցները հակախորհրդային տրամադրություններով համակված եվրոպացի ընթերցողներին ներկայացնում էին մտացածին տեղեկություններ, թե իբր ՀՅ Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունները համագործակցում են իրար հետ, իբր Խորհրդային Հայաստանն անվերապահորեն վայելում է Մոսկվայի հովանավորությունը, և նրա կովկասյան երկու հարևանները՝ Վրաստանը և Ադրբեջանը, տուժում են Կրեմլի «հայամետ» տարածքային քաղաքականությունից: «Հայրենիքի» 1931 թ. սեպտեմբերի 10-ի խմբագրականում, սակայն, մերկացվում է թուրք լրագրողների հերյուրանքը և նշվում, որ իրականում Հայաստանն է զոհ գնացել խորհրդային վարչակարգին¹⁹⁵:

Հայ-թուրքական սահմանների խնդիրն արծարծվեց նաև Թուրքիայի՝ Ազգերի լիգային անդամակցելու հարցի առնչությամբ: Հայ քաղաքական միտքը փորձեց հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման և հայկական խնդիրների լուծման համար ակտիվություն ցուցաբերել նաև Թուրքիայի՝ Ազգերի լիգային անդամակցության նախօրեին:

¹⁹⁴ Տե՛ս «Հայրենիք», 1929, 8 փետրուարի:

¹⁹⁵ Տե՛ս «Հայրենիք», 1931, 10 սեպտեմբերի:

«Հայրենիք» թղթակից Հայկ Արմանն առաջարկում է մի հուշագիր հղել Ազգերի լիգային՝ «խնդրելով, որ Թուրքիոյ Ազգերի Լիկայի միանալու իրաւունքը տրուի վերապահութեամբ մը՝ թէ Հայաստանի դատն ու իրաւունքները, ճանչցուած պետութեանց կողմէ, պիտի չվնասուին (shall not be prejudiced) Թուրքիոյ լիկայի անդամակցութեամբ»¹⁹⁶: Ավելին՝ թերթն առաջարկում է նաև նման բովանդակությամբ նամակ ուղարկել Ազգերի լիգայի անդամ 54 երկրների արտաքին գործոց նախարարություններին, որպեսզի դրանց պատվիրակները Հայաստանի առաջարկած վերապահությամբ քվեարկեն Թուրքիայի՝ Ազգերի լիգային անդամակցության օգտին:

Առանձնահատուկ հիշատակության է արժանի նաև «Հայրենիք» օրաթերթի հրապարակումն Անդրդաշնության վարչական կենտրոն Թիֆլիսում ստեղծված մի հատուկ հանձնաժողովի մասին: Մանրամասնորեն ուսումնասիրելով Անդրկովկասում խորհրդա-թուրքական սահմանը՝ հանձնաժողովը եզրակացություն է ուղարկել Մոսկվա, ըստ որի՝ Կարսի և Արդահանի կորուստը ռազմավարական առումով շատ խոցելի է դարձրել Խորհրդային Միության սահմանը: Հանձնաժողովն առաջարկում է օրակարգային դարձնել Կարսի վերադարձի խնդիրը՝ խաղաղ թե պատերազմական միջոցներով¹⁹⁷: Ցավոք, այս առաջարկությունը ևս Մոսկվայում դրական արձագանք չի ստանում:

Հայ-թուրքական հարաբերություններին ու սահմանային-տարածքային խնդիրներին անդրադարձել է նաև Կա-

¹⁹⁶ «Հայրենիք», 1932, 5 յունիսի:

¹⁹⁷ Տե՛ս «Հայրենիք», 1924, 3 օգոստոսի:

հիրեում հրատարակվող «Յուսաբեր» թերթը: Թերթի խմբագիր Վահան Նավասարդյանը, անդրադառնալով թուրքական խորհրդարանում Հայկական հարցի վերաբերյալ հնչեցված մտքերին, որոնցում հայ-թուրքական հարաբերությունների հետագա բարելավումը պայմանավորվում է հայերի ցանկությամբ, գրում է, որ թուրքերն իրենք նույնպես պետք է համապատասխան եզրակացություններ անեն¹⁹⁸: Անշուշտ, այստեղ նախ և առաջ նկատի է առնվում հայկական տարածքների վերադարձի հարցը: Վ. Նավասարդյանն այս տեսանկյունից կարևոր մատնանշումներ է անում Զարևանդի «Միացեալ Անկախ Թուրանիա կամ ի՞նչ կը ծրագրեն թուրքերը» գիրքն արժևորելիս¹⁹⁹:

Շարունակելով անդրադառնալ Խորհրդային Հայաստանի սահմանների կրճատման և պանթուրքիզմի միջև գոյություն ունեցող անմիջական կապին՝ Վ. Նավասարդյանը թերթի 1927 թ. ապրիլի 4-ի խմբագրականում մեկնաբանում է պանթուրքիզմի վտանգները հայության համար, նշում, որ Բաթումի փոխարեն Սուրմալուն թուրքերին զիջելը և Նախիջևանը Հայաստանից պոկելը այդ ծրագրի շրջանակներում են իրականացվել²⁰⁰:

«Յուսաբեր»-ն անդրադարձել է նաև Փարիզում հրատարակվող համայնավարական «Երեւան» թերթի՝ Դաշնակցությանը հասցեագրած այն մեղադրանքներին, թե ինչպես և ինչ միջոցներով է կուսակցությունն իրականացնելու հայկական տարածքները Թուրքիայից վերցնելու իր ծրագիրը:

¹⁹⁸ Տե՛ս «Յուսաբեր», Գափիթ, 1924, 22 ապրիլի:

¹⁹⁹ Տե՛ս «Յուսաբեր», 1927, 1 ապրիլի:

²⁰⁰ Տե՛ս «Յուսաբեր», 1927, 4 ապրիլի:

«Երեւան»-ը չի զլացել հիշեցնել նաև Ալեքսանդրապոլի պայմանագրի մասին²⁰¹: Այս կապակցությամբ «Յուսաբեր»-ը պատասխանել է, որ Դաշնակցությունն իր մեծ «յանցանքին» համար հեռացվել է Հայաստանից, սակայն խորհրդային իշխանությունները Հայաստանից պոկեցին Նախիջևանը և Ղարաբաղը, իսկ Սուրմալուն տվեցին Թուրքիային: Թերթը հիշեցնում է, որ վերջինն ընդգրկված չէր նույնիսկ «Ազգային ուխտ»-ի մեջ: «Յուսաբեր»-ն առաջարկում է հեգնելու փոխարեն ցույց տալ սեփական ուժերը՝ իրենց խոստումները կատարելու համար²⁰²: Այստեղ անշուշտ նկատի ունի այն, որ Հայաստանի խորհրդայնացման օրերին հայ բոլշևիկները խոստանում էին Հայաստանի սահմանային-տարածքային հարցերի հայանպաստ լուծում:

Այսպիսով՝ 1920-1930-ական թթ. դաշնակցական պարբերականները, որոնք հասկանալի պատճառներով հրատարակվում էին միայն Սփյուռքում, մեծ կարևորություն են տվել հայ-թուրքական սահմանային-տարածքային խնդրի լուսաբանմանը: Այս տեսանկյունից կարելի է նշել հետևյալ ընդգծելի եզրահանգումները.

- 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերը հայկական տարածքների հաշվին նախապես ծրագրված ռուս-թուրքական գործարքի արդյունք էին: Բացահայտվում էր այն, որ արդեն ձեռք բերված խորհրդա-թուրքական սահմանի վերաբերյալ համաձայնության վերանայման հնարավորությունը գոնե մոտ հեռանկարում խորհրդային կողմը չէր դիտարկում:

²⁰¹ Տե՛ս «Յուսաբեր», 1927, 4 փետրուարի:

²⁰² Տե՛ս նույն տեղում:

- Դաշնակցական մամուլը, ստեղծված կացությունն ընդունելով իրողություն, կոչ էր անում անընդհատ բարձրաձայնելու հայ ժողովրդի հանդեպ թույլ տրված անարդարության մասին: Խոսվում էր այն մասին, որ միայն արդարության վերականգնումից հետո է հնարավոր տարածաշրջանում հասնել իրական խաղաղության:

- Միաժամանակ կոչ էր արվում չդադարեցնելու պայքարը հայկական տարածքների հանդեպ ունեցած իրավունքները վերականգնելու ուղղությամբ:

ХАЧАТУР СТЕПАНЯН

***Заведующий кафедрой всемирной истории и
методики ее преподавания Армянского
государственного педагогического университета
им. Х. Абовяна
доктор исторических наук, профессор***

АРМЯНО-ТУРЕЦКАЯ ПОГРАНИЧНО- ТЕРРИТОРИАЛЬНАЯ ПРОБЛЕМА В ОЦЕНКАХ ПРЕССЫ АРФ ДАШНАКЦУТЮН (1920-1930 ГГ.)

Резюме

Доклад посвящен основным публикациям прессы АРФД в 1920-1930 гг. об армяно-турецких отношениях, в частности на границах Советской Армении и Турции, установленных Московским и Карсскими дого-

ворами 1921 года. Основная точка зрения, высказанная в периодических изданиях АРФД, заключалась в том, что армянские территории стали предметом торга между Советской Россией и Турцией. С точки зрения восстановления мира в регионе пересмотр границ и возврат Армении армянских земель должны стать приоритетом.

Ключевые слова: армяно-турецкая граница, пресса АРФ Дашнакцутюн, "Дрошак", "Айреник", "Усабер", "Арач", Рубен Тер-Минасян, Арташес Абебян, Каро Сасуни, Симон Врацян.

KNACHATUR STEPANYAN

Head of the Chair of the World History and its Teaching Methods at Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, Doctor of Historical Sciences, Professor

**ARMENIAN-TURKISH BORDER-TERRITORIAL
PROBLEM ACCORDING TO ARF DASHNAKTSUTYUN
PRESS (1920-1930)**

Summary

The report is dedicated to the main publications of the ARF press in 1920-1930 on the Soviet Armenia-Turkey

borders established by the Moscow-Kars treaties. The main view voiced in the ARF periodicals was that the Armenian territories had become a bargaining chip between Soviet Russia and Turkey. The review of borders and return of Armenian lands to Armenia in terms of restoring regional peace should be a priority.

Key words: *Armenian-Turkish border, ARF Dashnaktsutyun press, “Droshak”, “Hayrenik”, “Husaber”, “Haraj”, Ruben Ter-Minasyan, Artashes Abeghyan, Karo Sasuni, Simon Vratsyan.*

1918 ԵՎ 2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՆԵՐԽՈՒԺՈՒՄՆԵՐԸ ԱՐՑԱԽ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

ՎԱՀՐԱՄ ԲԱԼԱՅԱՆ

***Արցախի Հանրապետության ԱԺ արտաքին
հարաբերությունների հանձնաժողովի նախագահ,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր***
vahrambalayan@mail.ru

Բանալի բառեր – Հայաստան, Արցախ, Ադրբեջան,
Թուրքիա, պատերազմ, ժողովուրդ, փարածք, զորք,
վարձկաններ, ահաբեկիչներ:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին
Թուրքիան ծրագրել էր նվաճել Արևելյան Հայաստանը, այդ
թվում նաև՝ Արցախը: Սակայն ռազմաճակատում անհաջո-
ղություններ ունենալուց հետո թուրքերը փորձեցին դա իրա-
զործել իրենց իսկ ստեղծած մուսավաթական Ադրբեջանի
միջոցով:

Թուրքիայի համար մահու չափ վտանգավոր էր 1917-
1920 թթ. Արցախում ստեղծված հայոց պետականությունը:
1918 թ. Այսրկովկասում տեղակայված թուրքական զորքերի
հրամանատարությունը ձգտում էր օր առաջ մտնելու Շուշի,
ոչնչացնելու նորաստեղծ պետության ծիլերն ու ամբողջությա-
յամբ նվաճելու Արցախը, Զանգեզուրը և Նախիջևանը:

Ադրբեջանում փաստացի իշխանությունը թուրք զինվորականության ձեռքում էր: Նրանք զենք ունեցող տեղի մահմեդականներից ձևավորեցին հրոսակախմբեր: Առանձնապես դաժանորեն էր գործում, այսպես կոչված, «վայրի դիվիզիան», որի հսկողության տակ էր Շուշի-Եվլախ ճանապարհը:

1918 թ. սեպտեմբերի 15-ին թուրքերի՝ Բաքու մտնելուց 6 օր անց՝ սեպտեմբերի 21-ին, Կոստանդնուպոլսի իթթիհադական «Ենի գյուն» թերթում հրատարակվեց Այսրկովկասի քարտեզը, որտեղ Հայաստանը չկար, իսկ հայկական տարածքները, այդ թվում և՛ Արցախը, ներկայացված էին Ադրբեջանի կազմում²⁰³:

Այդ պայմաններում օրեցօր ծանրանում էր արցախահայության վիճակը: Լեռնային Ղարաբաղը կտրվեց արտաքին աշխարհից և հայտնվեց պաշարման օղակի մեջ: Արգելված էր հայերին վաճառել հաց, աղ և առաջին անհրաժեշտության ապրանքներ, հատկապես՝ պարենային:

Արցախի դեմ ռազմական գործողություններ ծավալելու նպատակով Էնվեր փաշայի հրամանով թուրքական մի զորագունդ մոտեցվում է երկրամասի սահմաններին և տեղակայվում Գանձակում: Մեկ այլ զորամաս էլ 1918 թ. օգոստոսին անցնում է Հազարու գետի կողմերը՝ նպատակ ունենալով Արցախը կտրելու Սյունիքից, միաժամանակ թույլ չտալու, որ Շուշիի գունդը Գորիսից անցնի Լեռնային Ղարաբաղ: Նուրի փաշայի տրամադրության տակ է դրվում «վայրի դիվիզիան», որը նույնպես նախապատրաստվում էր ներխուժելու Արցախ:

²⁰³ Տե՛ս Ա.-Դո, Հայութեան երկունքը, Երևան, 2014, էջ 554-555:

1918 թ. օգոստոսի վերջերին թուրքերն ավերեցին Արցախը Զանգեզուրի հետ կապող կարևոր հանգուցակետերից մեկը՝ Բերդաձորի ենթաշրջանի գյուղերը:

1918 թ. սեպտեմբերի 4-ին մուսավաթական կառավարության կողմից Ղարաբաղի պարետի պաշտոնում նշանակված Իսմայիլ Հակկի բեկը գրավոր վերջնագիր է ուղարկում Ղարաբաղի ժողովրդական կառավարությանը՝ զենքը վայր դնելու և Ադրբեջանի գերիշխանությունը ճանաչելու պահանջով²⁰⁴: 1918 թ. օգոստոսի 18-ին Նուրի փաշան կոչով դիմում է արցախահայությանը՝ խղճալու իրենց երեխաներին և ընդունելու Ադրբեջանի գերիշխանությունը²⁰⁵: Նույն պահանջով Ղարաբաղի ժողովրդական կառավարությանն է դիմում Աղդամում գտնվող կովկասյան մուսուլմանական առաջին դիվիզիայի հրամանատար Զամիլ Զահիդ բեյը²⁰⁶: Այդ օրախնդիր հարցը քննարկելու համար 1918 թ. սեպտեմբերի 7-10-ը Շուշիում հրավիրված արցախահայության երկրորդ համագումարը մերժեց այդ անօրինական պահանջները²⁰⁷:

Թուրքական բանակը տեղի մահմեդականների ուղեկցությամբ սեպտեմբերի 22-ին մտավ Լեռնային Ղարաբաղ՝ ավերելով Դահիրազ, Վարազաբույն, Փիրջամալ, Նախիջևանիկ, Քյաթուկ, Խրամորթ, Խանաբադ, Ղիշբաղ և Քարագլուխ գյուղերը:

Թուրքական զորամասերը Շուշի մտան սեպտեմբերի 25-ին: Բանակի հետևից շարժվում էր «տեղական թաթար-

²⁰⁴ Տե՛ս Իշխանեան Ե., Լեռնային Ղարաբաղ (1917-1920), Երևան, 1999, էջ 194:

²⁰⁵ Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1919, 18 փետրվարի:

²⁰⁶ Տե՛ս նույն տեղում, 1919, 23 փետրվարի:

²⁰⁷ Տե՛ս Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 200-204:

ների հազարավոր խումբանը՝ գրավված գյուղերն ու քաղաքը ավերելու և թալանելու նպատակով»²⁰⁸:

Թուրքական հրամանատարությունը լուծարեց Ղարաբաղի կառավարությունը: Ավելի քան 60 մտավորականներ, որոնց թվում և՛ Ղարաբաղի Հայոց ազգային խորհրդի նախագահ Եղիշե Իշխանյանը, ձերբակալվեցին ու նետվեցին բանտ: Թեպետ Շուշին ընկավ, սակայն Արցախի գավառները մնացին անառիկ: Ամենուրեք կազմավորվեցին ինքնապաշտպանական ջոկատներ: Մարտակերտի հայության հերոսական դիմադրության շնորհիվ կանխվեց Թուրքիայի մուտքը Ջրաբերդի շրջան: Այնուհետև ահեղ մարտեր ծավալվեցին Վարանդայի և Դիզակի շրջաններում: Հոկտեմբերի 18-ին Մամնա գյուղի մոտ Դիզակի և Վարանդայի զինված ուժերին հաջողվում է գլխովին ջախջախել թշնամու զորամասը: Մի քանի օր անց թուրք-թաթարական 600 ասկյարներից բաղկացած մեկ ուրիշ զորամաս երկրորդ անգամ փորձում է Վարանդայով անցնել Կարյազին²⁰⁹: Սակայն անկոտրում կամքի տեր հայ աշխարհազորայինների դիմադրությունը ստիպում է թուրքական հրամանատարությանը զորամասը վերադարձնել Շուշի:

Չնայած Թուրքիան Առաջին համաշխարհային պատերազմում պարտվելուց հետո իր զորքերը հիմնականում դուրս բերեց Այսրկովկասից, այնուամենայնիվ, նրա ներկայությունը Ադրբեջանում տեսանելի էր:

Թուրք-ադրբեջանական համագործակցության հաջորդ զոհը դարձավ Ղալաբաղի շրջանի հայությունը: 1919 թ. ապ-

²⁰⁸ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 200, ց. 1, գ. 49, թ. 47:

²⁰⁹ Տե՛ս «ԼՂ Հանրապետություն», Ստեփանակերտ, 1994, թիվ 22:

րիլի 30-ին թուրք-թաթարական և քրդական հրոսակախմբերը կրակի մատնեցին Ղայբալիշենը: «Գյուլի բոլոր տները այրվում են,- պատմում է արխիվային վավերագիրը,- իսկ կիսավեր և այրված տները լի են դիակներով: 70 տուն ունեցող գյուլի բնակչությունից ազատվել են մոտավորապես 160 հոգի»²¹⁰: Վերոհիշյալ չարագործությունները Սուլթանովի հետ միասին ղեկավարում էին թուրք էմիսարները: «Պատգամավոր Խոջայանի ստացած տեղեկություններով իբր թե էնվերը գտնվում է Սուլթանովի հայտնի բնակավայրում՝ Հաջի Սալմանում, իսկ անգլիացիների ունեցած տեղեկություններով նա իբր գտնվում է Աղդամում»²¹¹, - ասված է արխիվային վավերագրում:

Ծանր կացության մեջ էր Շուշին: 1919 թ. հունիսի 4-ին՝ առավոտյան ժամը 10-ին, Սուլթանովի հրամանով թուրքական ու քրդական հրոսակախմբերը սկսեցին կրակել հայկական քաղաքամասի խաղաղ բնակչության վրա: «Քերծի գլխի» ուղղությամբ նրանք անցան հարձակման, սակայն հայ պաշտպանների դիմադրությունը ստիպեց նրանց նահանջել²¹²:

Սուլթանովը Շուշին վերածել էր Ադրբեջանի և Թուրքիայի զինված ուժերի կենտրոնատեղիի: Բերդաքաղաքում էր Թուրքիայի սպայակույտի մի մեծ խումբ՝ Նուրի փաշայի գլխավորությամբ: Թուրքերը, մեծաքանակ զորքեր կենտրոնացնելով Շուշիում, 1920 թ. մարտի 23-ին հրի մատնեցին և թալանեցին հայկական թաղամասը: Զոհվեց 10000 հայ:

²¹⁰ ՀԱԱ, ֆ. 150, ց. 1, գ. 252, թթ. 171-182:

²¹¹ Նույն տեղում, թ. 175:

²¹² Տե՛ս **Քալայան Վ.**, Շուշի. Տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, Երևան, 2017, էջ 439:

Թուրքերն այս եղեռնագործությունը կազմակերպեցին՝ արդեն ունենալով համապատասխան փորձառություն, և, օգտվելով իրենց համար նպաստավոր պայմաններից ու անպատժելիության մթնոլորտից, փորձում էին Արևելյան Հայաստանը նույնպես արժանացնել Արևմտյան Հայաստանի ճակատագրին: Պատահական չէ, որ Թուրքիայի նախագահ Էրդողանը 2020 թ. դեկտեմբերին Բաքվում կայացած զինվորական շքերթի ժամանակ մեծարանքի խոսքեր շոյվեց Նուրի փաշայի հասցեին:

Շուշիի կործանման առթիվ վրացական թերթերից մեկը գրեց. «Կովկասում մի աղամանդ կար, թուրքերը փշրեցին այդ աղամանդը»²¹³:

Խորհրդային տարիներին ստեղծված քաղաքական նոր իրավիճակում Թուրքիան Արցախի վերաբերյալ իր ցեղասպանական ծրագրերին ժամանակավոր դադար տվեց:

Ինչպես Ղարաբաղյան առաջին պատերազմի (1991-1994 թթ.), այնպես էլ հետպատերազմյան շրջանում և 2016 թ. ապրիլյան մարտական գործողությունների (Ղարաբաղյան երկրորդ պատերազմ) ընթացքում Թուրքիան դիվանագիտական խողովակներով և կոշտ ուժի կիրառմամբ փորձում էր արցախա-ադրբեջանական հակամարտությունը լուծել իր իսկ ստեղծած պետության՝ Ադրբեջանի օգտին:

Էրդողանի կառավարման տարիներին թուրք-ադրբեջանական ռազմական համագործակցությունը ինստիտուցիոնալ բնույթ ստացավ: Թուրքիան արդեն ոչ միայն աջակցում էր Ադրբեջանին, այլև իրեն ներկայացնում էր որպես հակամարտության կողմ: Սկզբում Թուրքիան փորձում էր

²¹³ Սևյան Ռ., Շուշի, Երևան, 1991, էջ 80:

փոխել բանակցային ձևաչափը՝ ձգտելով իր տեղն ունենալու Մինսկի համանախագահ երկրների շարքում:

Տարիներ ի վեր Թուրքիան միջազգային կառույցներում սպասարկում է Ադրբեջանի շահերը: Հրաժարվելով ՀՀ-ի հետ առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերություններ ունենալուց՝ Թուրքիան շրջափակման ճանապարհով փորձում է հայ ժողովրդի համար ստեղծել անտանելի պայմաններ՝ նպատակ ունենալով իր կամքը թելադրելու ՀՀ-ին և ԱՀ-ին: Վերջին տարիներին Թուրքիայի սպալակույտը մշտական ներկայություն ունի Ադրբեջանում: Վերջինիս զինված ուժերի սպառազինումը, զորքերի մարտական պատրաստության բարձրացումը իրականացվում են Թուրքիայի և ՆԱՏՕ-ի չափանիշներով:

Թուրքիայի և նորանկախ Ադրբեջանի Հանրապետության միջև ռազմական համագործակցության պայմանագիր է կնքվել 1992 թ.: Երկու երկրների միջև 1996 և 1999 թթ. համանման պայմանագրեր ստորագրվեցին, և Թուրքիայի կողմից Ադրբեջանին ցուցաբերվող ֆինանսական և ռազմատեխնիկական աջակցության ծավալներն ավելի մեծացան²¹⁴:

2000 թվականից Թուրքիան իր ժամանակակից զենքերն սկսեց արտահանել Ադրբեջան: Այլ երկրներից, մասնավորապես՝ Ռուսաստանից և Իսրայելից, նոր զինատեսակների գնման գործընթացը նոր ծավալներ ընդունեց: Փորձագիտական շրջանակների գնահատմամբ՝ վերջին 20 տարում Ադրբեջանը Հայաստանի համեմատ 35-40 մլրդ դո-

²¹⁴ Տե՛ս «Ապառաժ», Ստեփանակերտ, 17-30 սեպտեմբերի 2021:

լարի ավել զենք է ձեռք բերել: Նավթից և գազից ստացված եկամուտները փակում են այդ ծախսերը:

2010 թ. Թուրքիան և Ադրբեջանը ստորագրեցին «-Ռազմավարական գործընկերության և փոխադարձ աջակցության» մասին համաձայնագիր: Նոր պայմանագրով Թուրքիան պարտավորվեց ադրբեջանցիների համար առավել խոր մասնագիտական ռազմական կրթության և վերապատրաստման հնարավորություններ ստեղծել: Համատեղ զորավարությունների անցկացումը համարվեց պարտադիր պայման:

2018 թ. անցկացվել է համատեղ 7, 2019 թ.՝ 13 զորավարություն²¹⁵: 2020 թ. հուլիս-օգոստոս ամիսներին Նախիջևանի ինքնավար Հանրապետությունում անցկացված զորավարությանը մասնակցեց 11000 թուրք զինվորական:

Ադրբեջանի ռազմական ակադեմիան և գլխավոր շտաբի քոլեջը հիմնադրվել են թուրք զինվորականների կողմից: Ուսումնական այդ հաստատությունների դասախոսները հիմնականում թուրք սպաներ են: Հարյուրավոր ադրբեջանցի սպաներ էլ կրթություն են ստանում թուրքական ռազմական ուսումնարանում և ակադեմիաներում:

Արցախյան երրորդ պատերազմի ժամանակ Թուրքիան անմիջական մասնակցություն ունեցավ ռազմական գործողություններին: Դեռևս 2020 թ. հուլիսին Նախիջևանում ադրբեջանա-թուրքական համատեղ զորավարության պատրվակով Թուրքիան մեծ քանակությամբ զորք, զինամթերք և ռազմական տեխնիկա էր տեղափոխել Ադրբեջան: 44-օրյա պատերազմի ընթացքում այդ զորքերը տեղափոխ-

²¹⁵ Տե՛ս նույն տեղում:

վել էին արցախա-ադրբեջանական հակամարտության գոտի:

Թուրքական «F-16» կործանիչները էրզրումի շրջակայքից ուղղորդում էին «Բայրաքթար» անօդաչու սարքերի աշխատանքը: Զոհերից խուսափելու և հանրության շրջանում հակակառավարական տրամադրություններ չիրահրելու միտումով Թուրքիան լայնորեն ռազմական գործողությունների մեջ ներգրավեց սիրիացի և լիբանանցի վարձկաններին:

2020 թ. հուլիսի 18-ին սիրիական «Sham-fm» լրատվամիջոցն իր ֆեյսբուքյան էջում գրել է. «Թուրքական օկուպացիոն ուժերը Աֆրինի շրջանում հաշվառման կենտրոն են բացել՝ նպատակ ունենալով հայկական բանակի դեմ կռվելու համար Ադրբեջան տեղափոխել իրենց հավատարիմ ահաբեկիչներին: Նրանց առաջարկվել է 2500 ամերիկյան դոլար ամսական աշխատավարձով 6 ամսվա համար պայմանագիր ստորագրել»²¹⁶: Հալեպի նահանգում՝ Սիրիայի հյուսիսում գտնվող Խավար Քիլիսի թուրքական ռազմական հենակետում Ադրբեջանի սահմանապահ զորքերի զինվորականների համագգեստով կազմակերպվել են արաբ վարձկանների վարժանքներ: Այնուհետև նրանց Ադանայի թուրքական ռազմական օդանավակայանից տեղափոխել են Ադրբեջան և մերձկասպյան զինվորական հենակետերից մեկում շարունակել վարժանքները: Վարձկանները հիմնականում պատկանում էին «Սիրիայի ազգային բանակ», «Սուլ-

²¹⁶ Участие боевиков во второй Арцахской войне. Роль Турции, 16 июля, 2021, Contributor.

թան Մուրադ դիվիզիա», «Ալ-Համազ» և «Աշ-շամ» խմբավորումներին:

Վերոհիշյալ կազմակերպությունների գործողությունները համակարգում էր «Սիրիական հեղափոխության և ընդդիմադիր ուժերի ազգային դաշինք» կազմակերպությունը, որի կենտրոնական շտաբը տեղակայված էր Ստամբուլում:

Ռազմական գործողությունների ընթացքում և դրանց հաջորդած օրերին համացանցում սփռված տեսահոլովակներում հստակ երևում է, թե ռազմաճակատի տարբեր հատվածներում Սիրիայի վարձկաններն ինչպես են կռվում հայկական բանակի դեմ:

«Սիրիացիները արդարության և արդարադատության համար» (STJ) կազմակերպության տվյալներով՝ մինչև 2020 թ. հոկտեմբերի 13-ը ռազմական գործողություններին մասնակցելու համար պայմանագիր է ստորագրել 2000 սիրիացի²¹⁷: Իսկ «Մարդու իրավունքների պաշտպանության սիրիական մոնիթորինգային կենտրոն»-ի (SOHR) տվյալներով՝ Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողությունների ընթացքում զոհվել են 293 վարձկան ահաբեկիչներ²¹⁸:

Կոլումբիայի համալսարանի մարդու իրավունքների և խաղաղության հաստատման ծրագրերի տնօրեն, «Վայրագություններ Արցախում» նախագծի հեղինակ Դևիդ Ֆիլիպսը նշել է, որ 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեյջանի զինված ուժերը թուրքական զինուժի և սիրիացի վարձկանների աջակցությամբ հարձակվել են Լեռնային Ղարաբաղի վրա:

²¹⁷ Տե՛ս նույն տեղում:

²¹⁸ Տե՛ս նույն տեղում:

Այնուհետև նա պատմում է, թե ինչպես է, հայերին սպանելու դիմաց պարգևատրումներ խոստանալով, Թուրքիան Սիրիայից և Լիբանանից շուրջ 2000 իսլամիստ ջիհադիստներ տեղափոխել Ադրբեջան: «Այս ջիհադիստներն ինքնուրույն չեն գործել,- գրել է Թուրքիայի ազգային հետախուզական ծառայության ղեկավար Հաքան Ֆիդանը,-իսկ դաշտային գործողություններն իրականացրել են թուրք հրամանատարների միջոցով»²¹⁹:

Շարունակելով այդ թեման՝ Դևիդ Ֆիլիպսը գրել է. «Ականատեսները նկարագրում են, թե ինչպես են ադրբեջանցի զինվորները խոշտանգում դիակները, գլխատում քաղաքացիներին, օգտագործում ֆոսֆորը: Անհրաժեշտ են պատժամիջոցներ՝ մարդկության դեմ հանցանքներ և պատերազմական հանցագործություններ նախապատրաստողներին պատասխանատվության ենթարկելու համար»²²⁰:

«Conflict intelligence Team» անկախ հետաքննող խումբը 2020 թ. հոկտեմբերի 24-ին հրապարակել է իր ուսումնասիրության արդյունքները, որում հավաստի փաստերով ներկայացված են Արցախյան երրորդ պատերազմի ժամանակ սիրիացի վարձկանների կատարած հանցագործությունները²²¹:

2020 թ. սեպտեմբերի 27-ին «Կոմերսանտ»-ին տված հարցազրույցի ժամանակ ՌԴ արտաքին գործերի նախարար Ս. Լավրովը նշել է, որ Ադրբեջանը շուրջ 2000 վարձ-

²¹⁹ Դևիդ Ֆիլիպս, Բայդենը պետք է պատժամիջոցներ կիրառի հայերի դեմ պատերազմական հանցանք գործած անձանց դեմ, lurer.com, 13 փետրվարի 2021:

²²⁰ Նույն տեղում:

²²¹ Տե՛ս «Кавказский узел», 22 октября, 2020 г.:

կան-ահաբեկիչների է ներգրավել ռազմական գործողությունների մեջ, և, այդ ամենով մտահոգ, նախագահ Վ. Պուտինը հեռախոսազրույցներ է ունեցել Հայաստանի, Ադրբեյջանի և Թուրքիայի ղեկավարների հետ²²²:

Ղարաբաղյան երրորդ պատերազմին ծայրահեղական խմբավորումների ներկայացուցիչների մասնակցության մասին 2020 թ. հոկտեմբերի սկզբներին խոսել է նաև ՌԴ արտաքին հետախուզության ղեկավար Սերգեյ Նարըշկինը²²³:

Ես գազաթնաժողովի առաջին նիստի արդյունքների ամփոփիչ հարցազրույցի ժամանակ Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը մասնավորապես նշել է, որ զինված հակամարտությանը Ադրբեյջանի կողմից մասնակցելու համար, որին աջակցում է Թուրքիան, Սիրիայից 300-ից ավելի իսլամիստների թուրքական Ղազիանթեփեով տեղափոխել են Լեռնային Ղարաբաղ: «Դա հաստատված փաստ է,- ընդգծել է Ֆրանսիայի նախագահը,- այդ մարդիկ նույնականացվել և հետապնդվում են. նրանք բոլորն էլ «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորման հետ կապեր ունեն: Ես այդ հարցը քննարկել եմ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հետ: Նա հաստատել է, որ Ռուսաստանը նույնպես տիրապետում է այդ փաստերին»²²⁴: Մակրոնի խոսքերով՝ Անկարան անցել է «կարմիր գիծը»²²⁵:

²²² Տե՛ս <https://www.vedomosti.ru/politics/news/2020/11/03/845680-mid-rossii-nazval-chislennost-inostrannih-naemnikov-v-karabahe> (մուտք՝ 11.10.2021):

²²³ Տե՛ս նույն տեղում:

²²⁴ <https://www.rbc.ru/rbcfreenews/5f769d7b9a7947d6fb825ad3> (մուտք՝ 11.10.2021).

²²⁵ <https://www.rbc.ru/rbcfreenews/5f769d7b9a7947d6fb825ad3> (մուտք՝ 11.10.2021).

2020 թ. հոկտեմբերի կեսերին «The Washington Post» թերթը գրել է, որ Ադրբեջանի կողմից կռվող 52 սիրիացի վարձկաններ զոհվել են Լեռնային Ղարաբաղում²²⁶:

Արդեն հոկտեմբերի երկրորդ կեսին Արցախի պաշտպանության բանակի մարտիկներին հաջողվել էր գերել սիրիացի 2 վարձկանների, որոնց հարցաքննություններից ակնհայտ երևում են Արցախյան երրորդ պատերազմի ժամանակ Թուրքիայի կատարած ռազմական հանցագործությունները:

Հարկ է նկատել, որ Թուրքիայի կառավարող շրջանակները չեն թաքցնում ռազմական գործողություններին իրենց մասնակցության հանգամանքը: Այսպես՝ Թուրքիայի արտաքին գործերի նախարար Մեվլյուտ Չավուշօղլուն 2020 թ. սեպտեմբերի 27-ին ասել է, որ ադրբեջանական կողմին պատրաստ են աջակցելու «ինչպես բանակցությունների ժամանակ, այնպես էլ ռազմի դաշտում»²²⁷:

Տարածաշրջանային որոշ վերլուծաբաններ նշում են. «Քանակապես շատ և ավելի լավ զինված ադրբեջանական բանակը Թուրքիայի աջակցությամբ ճնշեց հայկական ավելի փոքր և հնացած բանակին»²²⁸: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ Բաքվի պատերազմը ղեկավարելու համար Թուրքիան խորհրդականներ ու փորձառու զինվորականներ էր ուղարկել, և թուրքական ու իսրայելական անօդաչու թռչող սարքերի օգտագործումն այնպիսի բեկումնային դերակա-

²²⁶ Տե՛ս <https://www.vedomosti.ru/politics/news/2020/11/03/845680-mid-rossii-nazval-chislennost-inostrannih-naemnikov-v-karabahe> (մուտք՝ 11.10.2021):

²²⁷ <https://www.rbc.ru/rbcfreenews/5f769d7b9a7947d6fb825ed3> (մուտք՝ 11.10.2021).

²²⁸ «Ապառաժ», 17-30 սեպտեմբերի 2021, հմ. 10 (494):

տարություն ունեցավ, որ կանխորոշվեց Ադրբեջանի հաղթանակը²²⁹:

Թուրքիայի հետ համատեղ գործողությունների հետևանքով Ադրբեջանը Արցախյան երրորդ պատերազմում հաղթեց, ինչի պատճառով ԱՀ տարածքի 75 տոկոսն անցավ թշնամու գերիշխանության տակ, և հայկական կողմի զոհերի թիվը հասավ 5000-ի: Պատերազմի հետևանքով ԱՀ վերահսկողությունից դուրս է մնացել 118 համայնք, 2 համայնք (Թաղավարդ, Ճարտար) էլ՝ մասնակիորեն: Բռնազավթված տարածքում են մնացել 4 խոշոր և 118 փոքր բժշկական հաստատություն, 107 դպրոց, 17 մանկապարտեզ: 1656 ուսուցիչ տեղահանվել է:

Թշնամու վերահսկողության տակ են մնացել 10 պետական և 2 մասնավոր թանգարաններ, որոնցում պահպանվում էին 20345 ցուցանմուշներ, 4 արվեստի դպրոց, մոտ 4000 պատմամշակութային հուշարձան, Շուշիի տեխնոլոգիական համալսարանի, հումանիտար քոլեջի «Գյուրջյան» կիրառական արվեստի ինստիտուտի և «Եզնիկ Մոզյան» ուսումնարանի ողջ ունեցվածքը:

Հրետակոծությունից և հրթիռակոծությունից ԱՀ տարածքում վնասվել է 7031 շենք-շինություն: Նախապատերազմյան Արցախում գործող 37 հէկ-երից Արցախի վերահսկողության տակ են մնացել 8-ը, ինչի հետևանքով էլեկտրաէներգիայի արտադրությունը 2020 թ. դեկտեմբերին կազմել է 20.4 մլն կիլովատ՝ 2019 թ. դեկտեմբերի շուրջ 100 մլն կիլովատի դիմաց:

²²⁹ Տե՛ս նույն տեղում:

Այգիների, մշակվող հողահանդակների 70 տոկոսը զավթվել է թշնամու կողմից: 2455 հա կաթիլային համակարգով ոռոգվող հողերից 1693 հա մնացել է հակառակորդի կողմից բռնազավթված տարածքներում:

Ընդհանուր առմամբ տնտեսությունը 224 տոկոսով անկում է արձանագրել: Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն 2020 թ. կազմել է 1 մլն 820 հազար դրամ կամ 3722 ամերիկյան դոլար՝ 2019 թ. 2 մլն 307 հազար դրամի կամ 4803 ամերիկյան դոլարի դիմաց²³⁰:

Այսպիսով՝ 1915 թ. արևմտահայությանը ցեղասպանության ենթարկելուց հետո Թուրքիան ամեն գնով ձգտում էր նույն մեթոդներով հաշվեհարդար տեսնելու նաև արևելահայության նկատմամբ:

1918 թ. Այսրկովկասում տեղակայված թուրքական զորքերի հրամանատարությունը ծրագրել էր օր առաջ մտնել Շուշի, ոչնչացնել նորաստեղծ պետության ծիլերն ու ամբողջությամբ նվաճել Արցախը, Զանգեզուրը և Նախիջևանը:

Ճիշտ է, 1918 թ. սեպտեմբերի 22-25-ն ընկած ժամանակահատվածում թուրքերին հաջողվեց գրավել Արցախի մի շարք բնակավայրեր, այդ թվում՝ մայրաքաղաք Շուշին, այնուամենայնիվ, Ղարաբաղի Ազգային խորհրդին հաջողվեց ի մի բերել ուժերը և երկրամասից դուրս շարտել թուրքական զորքերին:

1918-1920 թթ. պայքարը շարունակվեց փոփոխական հաջողություններով: Ադրբեջանում ծվարած թուրք էմիսար-

²³⁰ Հաղորդում ԱՀ նախագահի 2020 թ. գործունեության միջոցառումների ծրագրի ընթացքի և 2021 թ. գործունեության միջոցառումների ծրագրի վերաբերյալ, 30 ապրիլի 2021:

ներին ու մուսավաթական իշխանություններին հաջողվեց կազմակերպել 1920 թ. մարտի 23-ի Շուշիի հայության ցեղասպանությունը:

Նորագույն ժամանակներում՝ ղարաբաղյան երեք պատերազմների (1991-1994 թթ., 2016 թ. ապրիլյան մարտական գործողություններ և 2020 թ. սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 10) ժամանակ, Թուրքիան, օգտվելով տարածաշրջանային և աշխարհաքաղաքական նոր զարգացումներից, դիվանագիտական խողովակներով և կոշտ ուժի կիրառմամբ փորձում էր արցախա-ադրբեջանական հակամարտությունը լուծել իր իսկ ստեղծած պետության՝ Ադրբեջանի օգտին՝ դրանով իսկ իրականություն դարձնելով Արցախը նվաճելու իր վաղեմի ծրագիրը:

БАЛАЯН ВАГРАМ

Председатель комиссии по внешним отношениям

Национального собрания Республики Арцах,

доктор исторических наук, профессор

ВТОРЖЕНИЯ ТУРЦИИ В АРЦАХ В 1918 И 2020

ГОДАХ И ИХ ПОСЛЕДСТВИЯ

Резюме

После геноцида армянского населения Западной Армении в 1915 году Турция стремилась любой ценой теми же методами свести счеты с армянским населением Восточной Армении. В 1918 году командование

турецких войск, дислоцированных в Закавказье, планировало как можно быстрее войти в Шуши, уничтожить ростки новосозданного государства и полностью захватить Арцах, Зангезур и Нахичеван.

С 22 по 25 сентября 1918 года туркам удалось захватить ряд населенных пунктов Арцаха, в том числе столицу Шуши, но тем не менее Национальному Совету Карабаха удалось объединить свои силы и изгнать турецкие войска со своей территории. В 1918-1920 годах борьба продолжалась с переменным успехом. Турецким эмиссарам в Азербайджане и властям «Мусават» удалось организовать 23 марта 1920 года геноцид армянского населения города Шуши.

Во время трех карабахских войн (1991-1994 гг., военные действия в апреле 2016 г. и 27 сентября – 10 ноября 2020 г.) Турция, пользуясь новыми региональными и геополитическими событиями, с помощью дипломатии и грубой силы пыталась разрешить арцахско-азербайджанский конфликт в пользу Азербайджана, тем самым реализуя свой давний план по завоеванию Арцаха.

Ключевые слова: Армения, Арцах, Азербайджан, Турция, война, народ, территория, армия, наемники, террористы.

VAHRAM BALAYAN

***Chairman of the Committee on Foreign Relations of
the Republic of Artsakh National Assembly,***

Doctor of Historical Sciences, Professor

**TURKISH INVASIONS IN ARTSAKH IN 1918 AND 2020
AND THEIR CONSEQUENCES**

Summary

After the genocide of the Armenian population of Western Armenia in 1915, Turkey, using the same methods, sought to settle scores with the Armenian population of Eastern Armenia at any cost. In 1918, the command of the Turkish troops stationed in Transcaucasia planned to enter Shushi as soon as possible, destroy the sprouts of the newly created state and completely capture Artsakh, Zangezur and Nakhichevan.

It is true that from September 22-25, 1918 the Turks managed to capture a number of settlements in Artsakh, including the capital Shushi, but nevertheless the National Council of Karabakh managed to unite its forces and expel the Turkish troops from the territory. In 1918-1920 the struggle continued with variable success. The Turkish emissaries and the Musavat authorities hiding in Azerbaijan managed to organize genocide of the Armenians of Shushi on March 23, 1920.

During the three recent Karabakh wars (1991-1994, hostilities in April 2016 and September 27-November 10, 2020), Turkey, taking advantage of new regional and geopolitical events, with the help of diplomacy and brute force was trying to resolve the Artsakh-Azerbaijani conflict in favor of Azerbaijan, thereby realizing its long-standing plan to conquer Artsakh.

Key words: Armenia, Artsakh, Azerbaijan, Turkey, war, people, territory, troops, empire, terrorists.

**1921 Թ. ՄԱՐՏԻ 16-Ի ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԿԱՐՍԻ
ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ**

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

***ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
eminasyan@ysu.am***

Քանալի բառեր – Մոսկվա, Կարս, պայմանագիր, ռուս-թուրքական կոնֆերանս, «Ազգային ուխտ», Կարսի մարզ, Սուրմալուի գավառ, Նախիջևանի մարզ, Ալեքսանդր Բեկզադյան, Վլադիմիր Լենին, Գեորգի Չիչերին:

Հայտնի իրողություն է, որ Մոսկվայի և Կարսի 1921 թ. կնքված պայմանագրերի միջև հատկապես հայ-թուրքական տարածքային-սահմանային խնդրում և բովանդակային առումով կա շատ մեծ ընդհանրություն և նույնականություն: Եթե Մոսկվայի պայմանագիրը խորհրդա-թուրքական (քեմալա-բոլշևիկյան) շահերի մերձեցման արգասիքն էր, ապա կենտրոնի հանձնարարությամբ անդրկովկասյան պատվիրակությունների ներկայացուցիչների կողմից ստորագրված Կարսի պայմանագիրը, ըստ էության, Մոսկվայի պայմանագրի կրկնությունն էր: Այս պայմանագրերը Հայաստանի ու հայ ժողովրդի համար ունեցան ճակատագրական նշանակություն, որոնց ծանր ու անդառնալի հետևանքները շարունակում են պահպանվել առ այսօր: Նախ և առաջ դա

դրսևորվեց Մոսկվայի և Կարսի 1921 թ. պայմանագրերով հայ ժողովրդի գոյատևման համար կենսական տարածքները Թուրքիային զիջելու փաստով:

Հայտնի է, որ 1921 թ. փետրվարի 26-ին Մոսկվայում սկսված ռուս-թուրքական երկրորդ կոնֆերանսն ավարտվեց 1921 թ. մարտի 16 (18)-ին ռուս-թուրքական «բարեկամության և եղբայրության» պայմանագրի ստորագրմամբ²³¹: Պայմանագիրը բաղկացած էր 16 հոդվածից և 3 հավելվածից: Այն ստորագրել են Գ. Չիչերինը, Ջ. Կորխմազովը (Ռուսաստանի կողմից), Յուսուֆ Քեմալ բեյը, Ռզա Նուրի բեյը և Ալի Ֆուատ փաշան (Ջեբեսոյ) (Թուրքիայի կողմից): Պայմանագրով խորհրդա-թուրքական սահմանի հայ-թուրքական հատվածն անցնում էր Ախուրյան և Արաքս գետերով՝ թուրքական կողմին թողնելով Կարսի մարզը, որի կազմի մեջ էին մտնում Կաղզվանի, Արդահանի, Օլթիի և Կարսի օկրուգները, որոնք մինչև 1918 թ. եղել են Ռուսաստանի կազմում: Մարզի ընդհանուր տարածքը կազմում էր 19.915 քառ. կմ, բնակչությունը՝ 492 հազար²³²: Պայմանագրով Թուրքիային էր անցնում նաև Սուրմալուի գավառը, որը «Ազգային ուխտ»-ի մեջ չէր մտնում և երբևէ Թուրքիային չէր պատկանել: Սուրմալուի գավառի հարցում ըստ էության կատարվեց փոխանակում, գործարք. «Ազգային ուխտ»-ի մաս կազմող Բաթումն իր

²³¹ Իրականում պայմանագիրը ստորագրվել է 1921 թ. մարտի 18-ին: Թուրքական կողմը պայմանագրի ստորագրումը կախման մեջ էր դրել ռազմական օգնությունից՝ իր պահանջներին տալով վերջնագրի տեսք՝ հաշվի առնելով Լոնդոնում Ռուսաստանի վարած բանակցությունները (տե՛ս **Казанджян Р.**, К вопросу о датировке Московского советско-турецкого договора 1921 г., «Вестник общественных наук», Ереван, 1999, № 1, էջ 183-187):

²³² Տե՛ս **Ղազարյան Հ.**, Մոսկվայի և Կարսի 1921 թ. պայմանագրերն ու նրանց ողբերգական դերը հայ ժողովրդի ճակատագրում, Երևան, 2010, էջ 286:

շրջակայքով անցավ Խորհրդային Վրաստանին, իսկ դրա փոխարեն «Ազգային ուխտ»-ի տարածքային շրջանակից դուրս և երբեք Օսմանյան Թուրքիայի կազմում չեղած Սուրմալուի գավառը՝ հայոց խորհրդանիշ Մասիս լեռով, հանձնվեց Թուրքիային: Այսինքն՝ հայկական Սուրմալուի գավառի հաշվին Վրաստանը փոխհատուցում ստացավ Բաթումը: Տարածքային առումով Բաթումի մարզի ընդամենը 6254 քառ. վերստ տարածքի ուղիղ կեսն անցնում էր Վրաստանին, իսկ դրա դիմաց Թուրքիան ստանում էր Սուրմալուի գավառը՝ 3174 քառ. վերստ տարածքով²³³: Այս փոխատեղությունը խորհրդային կողմը հիմնավորում էր նրանով, որ Բաթումը Անդրկովկասի խոշորագույն նավահանգիստն է՝ ծովային դարպասը, և կենսական նշանակություն ունի երկրամասի համար²³⁴: Փաստորեն, խորհրդաժողովում Գ. Չիչերինի և Յու. Քեմալի փոխադարձ համաձայնությամբ որոշվեց բանակցությունների համար հիմք ընդունել 1920 թ. օգոստոսի 24-ին նախաստորագրած խորհրդա-քեմալական պայմանագրի նախագիծը, որով ՌՍՖՍՀ-ն սկզբունքորեն ճանաչում էր թուրքական «Ազգային ուխտը», այսինքն՝ Թուրքիայի իշխանությունը Բաթումի, Կարսի և Արդահանի վրա²³⁵: Վերոնշյալ նախագծի հիմնադրույթները դրվեցին Մոսկվայի խորհրդաժողովի հիմքում:

²³³ Տե՛ս **Завриев Д.**, К новейшей истории северо-восточных вилайетов Турции, Тбилиси, 1947, էջ 69-70:

²³⁴ Տե՛ս **Հակոբյան Ա.**, Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Երևան, 2010, էջ 155:

²³⁵ Տե՛ս **Հոհրաբյան Է.**, 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և մեծ տերությունները, Երևան, 1997, էջ 142, **Գալոյան Գ.**, Հայաստանը և մեծ տերությունները (1917-1923), Երևան, 1999, էջ 265-268:

Շարուր-Դարալագյազի շրջանի հարթավայրային մասը՝ իբրև «Նախիջևանի մարզ», ինքնավար տարածքի կարգավիճակով փոխանցվեց Խորհրդային Ադրբեջանի «խնամակալությանը»՝ պայմանով, որ վերջինս այն չի զիջի մի երրորդ կողմի, այսինքն՝ Հայաստանին²³⁶։ Դրանով, փաստորեն, Հայաստանի թիկունքում՝ Արաքսի ձախ ափին, ստեղծվում էր թշնամական մի հենակետ (5.5 հազար քառ. կմ տարածքով), որը կապող օղակ էր դառնում Թուրքիայի ու Ադրբեջանի միջև և պոտենցիալ սպառնալիք ստեղծում Զանգեզուրի ու Արցախի համար։ Այս դրույթը հաջողվեց Կարսի կոնֆերանսում հանել։ Կարսի կոնֆերանսում խորհրդային կողմի միակ ձեռքբերումը կարելի է համարել այն, որ ՀՍԽՀ կազմում ներառվեց նախկին Երևանի գավառի հարավում գտնվող եռանկյունին՝ շուրջ 260 քառ. կմ տարածքով։ ՀՍԽՀ սահմանը Նախիջևանի հետ սկսվելու էր ոչ թե «Արարատ» կայարանից, այլ Ուրմիա գյուղից (այժմ անբնակ) և «Արագդայան» (այժմ՝ «Երասխ») կայարանից, այսինքն՝ Գայլի դրունքից։ Երևանի գավառից անջատված Արարատ-Քյոմուրլուդաղ-Արագդայան եռանկյունին մնում էր ՀՍԽՀ կազմում։ Ընդ որում, ՀՍԽՀ կազմում էին ներառվում նաև Արարատյան դաշտից Դարալագյազ (Վայոց ձոր) տանող ճանապարհը (որն այսօր էլ չի կորցրել իր ռազմավարական նշանակությունը) վերահսկող Քյարքի (այժմ՝ Տիգրանաշեն), ինչպես նաև Զաֆարլու-Գյունուֆ (Գենուտ) գյուղերը (35-40

²³⁶ Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), կազմողներ՝ **Զ. Ս. Կիրակոսյան, Ռ. Գ. Սահակյան**, խմբ.՝ **Զ. Ս. Կիրակոսյան**, Երևան, 1972, էջ 499-507։

քառ. կմ տարածքով), որոնք հետագա տարիներին աստիճանաբար «փոխանցվեցին» Նախիջևանի ԻՍԽՀ-ին²³⁷:

«Այդ զիջումների դիմաց, ինչպես հետագայում հայտարարեց կոնֆերանսում թուրքական պատվիրակության անդամ Մուխթար Բեյը, մենք Կարսի կոնֆերանսում ստացանք մեզ համար կարևոր իրավունքներ՝ Նախիջևանի շրջանից հարավ ընկնող տարածքները Թուրքիային միացնելու և եղբայրական Ադրբեջանի հետ անմիջական կապ ունենալու համար»²³⁸: Թուրքիային և Ադրբեջանին անցած հայկական տարածքները կազմում էին ավելի քան 25000 քառ. կմ²³⁹:

Մոսկվայի կոնֆերանսում հայկական շահերի անտեսման կապակցությամբ ՀՍԽՀ պատվիրակությունը՝ արտաքին գործերի ժողկոմ Ալ. Բեկզադյանի ղեկավարությամբ, 1921 թ. ապրիլի 15-ին բողոքի հուշագիր ուղղեց ՌԿ(Բ)Կ Կենտկոմի և խորհրդային պետության ղեկավար Վլադիմիր Լենինին: Դրանում մասնավորապես նշվում էր. «Կոնֆերանսի արձանագրություններից չի երևում, թե արվել է գոնե մի չնչին փորձ՝ պահպանելու այն հողերն ու շրջանները, որոնք կենսական նշանակություն ունեն երիտասարդ և փոքր խորհրդային Հայաստանի համար»²⁴⁰:

Փաստորեն, ռուս-թուրքական «դավադիր գործարքով» խորհրդային Հայաստանից խլվեց և Թուրքիային ու

²³⁷ Տե՛ս Խաչատրյան Կ., Սուքիասյան Հ., Բադալյան Գ., Հայկական տարածքների բռնակցումը Թուրքիային և խորհրդային Ադրբեջանին 1920-1930-ական թվականներին, Երևան, 2020, էջ 49-50:

²³⁸ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 114, ց. 1, գ. 221, թ. 36:

²³⁹ Տե՛ս Խաչատրյան Կ., Սուքիասյան Հ., Բադալյան Գ., նշվ. աշխ., էջ 46:

²⁴⁰ Ավետիսյան Հ., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, էջ 355:

Խորհրդային Ադրբեջանին նվիրաբերվեց հայկական տարածքների մի զգալի մասը, խախտվեցին ու ոտնահարվեցին միջազգային իրավունքի հիմնական սկզբունքները: Խորհրդային Ռուսաստանն ու քեմալական Թուրքիան, առանց Խորհրդային Հայաստանի մասնակցության, որևէ իրավասություն չունեին տնօրինելու հայկական տարածքների ու հայության ճակատագիրը: Իր քաղաքական նպատակների և համաշխարհային հեղափոխության անհեռանկար հույսերի համար Խորհրդային Ռուսաստանի ղեկավարությունը զոհաբերեց Հայաստանի ու հայ ժողովրդի շահերը. հայկական տարածքները նվիրաբերվեցին Թուրքիային: «Համաշխարհային հեղափոխությունը» հոդս ցնդեց, իսկ տուժեց հայ ժողովուրդը:

Խորհրդային Ռուսաստանի ճնշման ներքո Խորհրդային Հայաստանը թեև ստորագրեց Կարսի պայմանագիրը, բայց նրա իշխանություններն առիթը բաց չէին թողնում իրենց դժգոհությունն արտահայտելու համար: Նախիջևանի և Շարուր-Դարալագյազի հարցում դժգոհելով՝ Ալ. Բեկզադյանն ընդգծում էր, որ ռուսական պատվիրակությունը հանդես չբերեց իր դիրքերի պաշտպանության համառություն՝ հակառակորդ կողմին (թուրքերին) թույլ տալով, որ նա հանդես գա այդ տարածքի մահմեդականների հովանավորի դերում՝ չնայած Կարսի մարզի՝ Հայաստանին պատկանելության մասին Ադրբեջանի ու Հայաստանի հեղկոմների հայտնի դեկրետների առկայությանը²⁴¹: Ալ. Բեկզադյանը, նկատելով, որ Մոսկվայի պայմանագիրն ամբողջությամբ ուղղված էր

²⁴¹ Տե՛ս Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 2010, էջ 334:

հայ ժողովրդի շահերի դեմ, հիասթափվելով խորհրդային իշխանությունից, իր դժգոհությունն ու բողոքը հայտնեց Ռուսաստանի արտգործոժողկոմ Գ. Չիչերինին՝ բազմակողմանի և խոր վերլուծության ենթարկելով պայմանագիրը, և հանգեց այն եզրակացության, որ «Մոսկվայի կոնֆերանսի որոշումները չեն բխում «անխուսափելի օբյեկտիվ պայմաններից», որ Ռուսաստանի պատվիրակությունը հնարավոր համարեր խորհրդային Հայաստանի «կյանքի ու մահվան հարցերը լուծել» այդպես թեթևորեն»²⁴²:

Պատասխան նամակում Գ. Չիչերինը, Մոսկվայի կոնֆերանսի արդյունքները պատճառաբանելով Ռուսաստանի ներքին ու արտաքին աննպաստ դրությամբ, ընդգծել է, որ չի եղել ոչ մի կարևոր հարց, որի վերաբերյալ Կենտկոմը չընդուներ որոշում: Նա, այնուամենայնիվ, չի անդրադարձել Հայաստանի գոհաբերության կողմին, որ թերևս ամենագլխավորն է պատճառների թվում²⁴³:

Եթե Ալ. Բեկզադյանի հուշագիրն արժանացավ Գ. Չիչերինի արձագանքին, ապա Սահակ Տեր-Գաբրիելյանի և կուսակցական հայտնի գործիչ Վահան Տեր-Վահանյանի՝ հայության համար ծանր հետևանքներ ունեցող Մոսկվայի պայմանագրի վերաբերյալ Վ. Լենինին ուղղված բողոքի դիմումը մնաց անպատասխան: Դրանում հայ գործիչները «Հայաստանի հաշվին Թուրքիային զիջում արած» Վ. Լենինի ուշադրությունը հրավիրում էին հայ ժողովրդի նկատմամբ

²⁴² Նույն տեղում, էջ 336:

²⁴³ Ст'я Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий, В 2 т. / Сост., отв. ред., авт. предисл. и коммент. Ю.Г. Барсегов, т. 2, ч. 1, Москва, 2003, էջ 498-499:

թուրքերի կողմից իրականացված չարագործությունների փաստերի վրա²⁴⁴:

1921 թ. մայիսին ՀԿ(Բ)Կ Կենտկոմի պլենումը քննարկեց հայկական պատվիրակության ղեկավար և արտգործ-ժողկոմ Ալ. Բեկզադյանի զեկուցումը Մոսկվայի ռուս-թուրքական կոնֆերանսի արդյունքների և հետևանքների մասին: Չնայած պաշտոնապես արտահայտած դժգոհությանը՝ ՀՍԽՀ իշխանությունները, այնուամենայնիվ, ինչպես հարկն է, չպայքարեցին Հայաստանի ու հայ ժողովրդի ազգային, կենսական շահերի պաշտպանության համար²⁴⁵: Մոսկվայի պայմանագրի ծանր հետևանքների հարուցած ժողովրդական դժգոհության ու բողոքի տեսանկյունից խիստ բնորոշ է Խարկով քաղաքի երկաթուղային հիվանդանոցի մի խումբ աշխատակիցների անունից կոմունիստ Խարդանմարյանցի նամակը «Известия» թերթի (Մոսկվա) խմբագրին: Նամակում ասված էր. «Բոլորովին անհասկանալի է Ռուսաստանի արևելյան քաղաքականությունը, երբ սկսած Արևելքի ժողովուրդների համագումարից (1920 թ. սեպտեմբեր)՝ թույլ են տրվել մի շարք ծանր, անբացատրելի սխալներ, որոնք կարող են այդ քաղաքականությունը հասցնել սնանկության, իսկ Թուրքիայի հետ կնքված պայմանագրի առնչությամբ ծագում են անհասկանալի հարցեր»²⁴⁶: Նամակը հասել էր նաև Գ. Չիչերինին, որը նրա հայ հեղինակին քննադատել էր՝ մեղադրելով «հայկական ազգայնականության» մեջ, և թերթի խմբագրին խորհուրդ տվել չտպագրելու այն²⁴⁷:

²⁴⁴ Տե՛ս Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին, էջ 336:

²⁴⁵ Տե՛ս նույն տեղում:

²⁴⁶ Նույն տեղում:

²⁴⁷ Տե՛ս նույն տեղում:

Մոսկվայի պայմանագիրը դժբախտություն էր հայ ժողովրդի համար: Այն 1920 թ. սկսված քեմալա-բոլշևիկյան համագործակցության և ռուս բոլշևիկների որդեգրած արևելյան քաղաքականության, համաշխարհային հեղափոխության գաղափարների և այդ ուղղությամբ ծավալված գործունեության արդյունքն էր: Մի հեղափոխություն, որին, ըստ բոլշևիկ առաջնորդների, կարելի էր նույնիսկ զոհաբերել (թեկուզ ժամանակավոր) ամբողջ ժողովուրդներ: Մոսկվայի մարտի 16-ի պայմանագիրը ոչ թե բոլշևիկյան Ռուսաստանի, այլ քեմալական Թուրքիայի խոշոր հաղթանակն էր: Այն նպաստեց վերջինիս ինքնահաստատմանն ու միջազգային ասպարեզում նրա դերի մեծացմանը: Առաջին համաշխարհային պատերազմից դուրս գալով որպես պարտված պետություն, որը Սևրի պայմանագիրը գործողության մեջ դնելու դեպքում կվերածվեր մի թույլ պետության, քեմալական Թուրքիան կարողացավ ոչ միայն հասնել Սևրի պայմանագրի չեղյալ հայտարարմանը, այլև տեր դառնալ նախկինում Թուրքիային չպատկանած, բայց բռնությամբ զավթված հայկական զգալի տարածքների: Հայաստանը զրկվեց ոչ միայն Կարսի մարզից, այլև ամբողջ Արևմտյան Հայաստանից, որի գոյության մասին պայմանագրում ոչինչ չէր ասվում: Մոռացության տրվեց ավելի քան կես դարի ընթացքում նրա ազատագրման համար հայ ազատամարտիկների և ռուս զինվորների թափած արյունը: Պայմանագիրը հիմք հանդիսացավ Նախիջևանը Հայաստանից խլելու, այն հետագայում հայաթափելու, ապա Լեռնային Ղարաբաղը Հայաստանից խլելու և Ադրբեջանին հանձնելու համար: Մոսկվայի պայմանագիրը պայմանավորեց այն ներքին լարվածությունը, որ տաս-

նամյակներ շարունակ տիրում էր հայ-ադրբեջանական հարաբերություններում, և որը, վերջին հաշվով, հանգեցրեց արյունահեղ ընդհարումների²⁴⁸:

Մոսկվայի պայմանագիրը թուրքական դիվանագիտության հաղթանակն էր: Թուրքական պատվիրակության անդամ Ալի Ֆուատ Ջեբեսոյը, նկատի ունենալով թուրք-հայկական պատերազմում իրենց հաղթանակով և Լեհաստանի դեմ պատերազմում Ռուսաստանի պարտությամբ ստեղծված իրավիճակը, գրել է, որ դրա շնորհիվ հաջողվեց Խորհրդային Ռուսաստանի հետ կնքել նպաստավոր համաձայնություն և ռազմական ու ֆինանսական օգնություն ստանալ նրանից²⁴⁹:

Պայմանագրով Թուրքիային արված տարածքային մեծագույն զիջումներին գումարվեց նաև նրան տրվող, այսպես կոչված, «օժիտը»՝ ռազմական ու ֆինանսական օգնությունը: Եթե 1920 թ. ամռանը Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը քեմալականներին հանձնել էր 6000 հրացան, ավելի քան 5 մլն փամփուշտ, 17600 արկ, աշնանը՝ 200.6 կգ ոսկի և մեծ քանակի այլ զենքեր ու ռազմական հանդերձանք, ապա 1921 թ. մարտի 16-ից հետո այդ ամենը բազմապատկվեց²⁵⁰: 1921 թ. ընթացքում Թուրքիային են տրվել 33275 հրացան, մոտ 580000 փամփուշտ, 327 գնդացիր, 54 հրանոթ, մոտ 130000 արկ, 1500 սուսեր, 20000 հակազազ, ծովային 2 ռմբակոծիչ և այլ զենքեր: Խորհրդային Ռուսաստանը Թուրքիային անհատույց տալու էր նաև 10 մլն

²⁴⁸ Տե՛ս **Գալոյան Գ.**, նշվ. աշխ., էջ 456:

²⁴⁹ Տե՛ս Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին, էջ 335:

²⁵⁰ Տե՛ս **Գալոյան Գ.**, նշվ. աշխ., էջ 456:

ռուբլի ոսկով, որից 6.5 միլիոնը տրվեց 1921 թ. աշնանը, 3.5 միլիոնը՝ 1922 թ.²⁵¹:

Խորհրդային Ռուսաստանը զիջումներ արեց մի պետության, որն իրավահաջորդն էր ցեղասպան Օսմանյան կայսրության, իսկ նա ոչ միայն չխոստովանեց կատարած ոճրագործությունը՝ ցուցաբերելով ժխտողական կեցվածք, այլև շարունակեց նույն քաղաքականությունը: Քեմալական Թուրքիայի հետ դաշնակցած Խորհրդային Ռուսաստանը, աչք փակելով այդ ամենի վրա, փաստորեն ստանձնեց հովանավորի դեր և ստորագրած պայմանագրով հարկադրեց Խորհրդային Հայաստանին ընդունել սեփական կորուստները:

1921 թ. Կարսի պայմանագիրը, ըստ ակադեմիկոս Գալուստ Գալոյանի, ունեցավ այն դրական հետևանքը, որ չեղյալ հայտարարվեց Ալեքսանդրապոլի 1920 թ. դեկտեմբերի 2-ի հայ-թուրքական պայմանագիրը²⁵²: Չնայած դրան՝ Թուրքիան շարունակում էր կառչած մնալ այդ պայմանագրից: Մոսկվայի պայմանագրի ստորագրումից հետո Խորհրդային Ռուսաստանի ղեկավարության և Կարմիր բանակի հրամանատարության վճռական դիրքորոշման շնորհիվ քեմալական զորքերի զինագրավումից ազատագրվեց Ալեքսանդրապոլի գավառը, որը, համաձայն պայմանագրի, մնալու էր ՀՍԽՀ կազմում: Ապրիլի 22-ին թուրքական վերջին զորամասերը հեռացան Ալեքսանդրապոլից²⁵³:

²⁵¹ Տե՛ս նույն տեղում:

²⁵² Տե՛ս **Գալոյան Գ.**, նշվ. աշխ., էջ 458:

²⁵³ Տե՛ս **Ղազախեցյան Վ.**, Հայաստանը 1920-1940թթ., Երևան, 2006, էջ 127-137:

Լոռուց հետո Ալեքսանդրապոլի գավառը հաջորդ տարածքն էր, որ Հայաստանի խորհրդայնացումից հետո միացվեց Խորհրդային Հայաստանին: Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածով Խորհրդային Ռուսաստանը պարտավորություն էր ստանձնել դիմելու անհրաժեշտ քայլերի, որպեսզի Թուրքիայի և Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների միջև առաջիկայում ստորագրվելիք պայմանագրում վերջիններս «պարտադիր կերպով ճանաչեն սույն պայմանագրի այն հոդվածները, որոնք անմիջականորեն իրենց են վերաբերում»²⁵⁴: Ըստ էության, բոլշևիկյան Ռուսաստանը, Հայաստանի տարածքները քեմալական Թուրքիային և նրա ցեղակից Ադրբեջանին նվիրաբերելուց բացի, պարտավորվում էր ստիպել ՀՄԽՀ իշխանություններին ճանաչել այդ բռնազավթումները:

Հայտնի է, որ կոնֆերանսում հայկական կողմի առաջարկները՝ ՀՄԽՀ-ի օգտին սահմանների որոշ ուղղումներ կատարելու Նախիջևանի երկրամասում և Արփաչայի գոտում, Հայաստանին վերադարձնելու ընդամենը 860 հազար մ² կազմող Անիի ավերակները և այլն, հանդիպեցին թուրքական կողմի համառ դիմադրությանը և մերժվեցին: 1921 թ. հոկտեմբերի 13-ին Կարսում ստորագրված թուրք-անդրկովկասյան «բարեկամության պայմանագիրը» չնչին փոփոխություններով վերահաստատեց Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրով որոշված թուրք-անդրկովկասյան սահմանը: Խորհրդային Հայաստանի կառավարությունը Կարսի պայմանագիրը վավերացրեց 1922 թ. մարտի 20-ին, իսկ քեմալական Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի իշխա-

²⁵⁴ Документы внешней политики СССР, т. III, Москва, 1959, с. 602.

նությունները, փոխադարձ պայմանավորվածությամբ, այն վավերացրին միաժամանակ՝ 1922 թ. մարտի 16-ին՝ Մոսկվայի ռուս-թուրքական նվաստացուցիչ պայմանագրի տարեդարձի օրը²⁵⁵:

Փաստորեն, Կարսի պայմանագիրը վավերացրեց 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրով Հայաստանի տարածքները Թուրքիային հանձնելու ակտը և վերածվեց այդ պայմանագրի հավելվածի: Դա քեմալականների դիվանագիտության խոշոր հաղթանակն էր: Ահա այսպես «լուծվեց», 20-րդ դարի մեծագույն բռնակալներից մեկի՝ Ի. Ստալինի խոսքերով, «այսպես կոչված Հայկական հարցը»: Կարսի պայմանագիրը մեծ ուրախությամբ ընդունվեց Թուրքիայում: Մուստաֆա Քեմալը, հանդես գալով թուրքական մեջլիսի երկրորդ նստաշրջանի բացմանը (1922 թ. մարտի 1-ին), հայտարարեց, որ Կարսի պայմանագիրը «նշանավորում է Արևելքում մեր փաստական վիճակի իրավական ճանաչումը և կրկին վկայում Սևրի պայմանագրի գործադրման անհնարինությունը: Այսպես կոչված Հայկական հարցը Կարսի պայմանագրում գտավ իր ամենաճիշտ լուծումը»²⁵⁶: Սա Հայկական հարցի «լուծման»՝ Ստալինի տված հայտնի ձևակերպման կրկնությունն էր: «1921 թ. Կարսի, ինչպես նաև ռուս-թուրքական մարտի 16-ի պայմանագրերի ստորագրումը ողբերգական նշանակություն ունեցավ ոչ միայն Հայաստանի, այլև Խորհրդային Ռուսաստանի հետագա ճակատագրի համար»²⁵⁷, - գրում է Գ. Գալոյանը: Այս պայմա-

²⁵⁵ Տե՛ս **Խաչատրյան Կ., Սուքիասյան Հ., Բաղալյան Գ.**, նշվ. աշխ., էջ 52:

²⁵⁶ **Խատիսյան Ալ.**, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 6:

²⁵⁷ **Գալոյան Գ.**, նշվ. աշխ., էջ 486:

նագրի ստորագրումից հետո քեմալականների ձեռքերն արձակվեցին, և նրանք բացահայտ անցան Անտանտի կողմը: Իսկ երբ Կարսի պայմանագրի կնքումից մեկ շաբաթ անց՝ հոկտեմբերի 20-ին, Անկարայում կնքվեց Ֆրանս-թուրքական պայմանագիրը, որով, ըստ էության, Ֆրանսիան Կիլիկիան հանձնում էր Թուրքիային, ճանաչում էր Քեմալի կառավարությունը, և լեգալացվում էր Ֆրանսիայի և Թուրքիայի հակառուսական դաշինքը, ռուս-թուրքական հակամարտությունն արդեն իրական վտանգ չէր ներկայացնում:

Խոսելով Կարսի պայմանագրի ծանր հետևանքների մասին՝ այն ստորագրած ՀՍԽՀ արտգործոժողկոմ Ա. Մռավյանը նշում է. «Մենք չենք կարող երբևիցե հրաժարվել հողային պահանջներից, որոնք մեզ համար անհրաժեշտություն են, մեր կենսունակության և ապրելու կարելիության առաջին պայմանը»²⁵⁸: Հայտնի հեղափոխական և պատմաբան Բ. Բորյանը, անդրադառնալով այդ պարտադրված պայմանագրերի ծանր ու անդառնալի հետևանքներին, ընդգծում է. «Ավելի ծանր և ավելի անօգուտ խաղաղություն, քան Կարսին է, հազիվ թե կարելի է գտնել պատմության էջերում», ապա իրավացիորեն նկատում է, որ Կարսի պայմանագիրը, «ըստ էության, ֆորմալ, քաղաքական և միջազգային իրավական նորմերի տեսանկյունից ինքնուրույն փաստաթուղթ լինել չի կարող, այլ կրկնում և ամրագրում է 1921 թ. մարտի 16-ի պայմանագիրը»²⁵⁹: Եվ քանի որ Մոսկվայի պայմանագիրն իր հերթին ստորագրվել է միջազգային իրավունքի հիմնա-

²⁵⁸ «Խորհրդային Հայաստան», Երևան, 21 հոկտեմբերի 1921, № 201:

²⁵⁹ **Борьян Б.**, Армения, международная дипломатия и СССР, часть II, Москва-Ленинград, 1929, с. 163.

րար սկզբունքների խախտումներով (պայմանագիրը ստորագրող կողմերն առանց որևէ լիազորության միջամտել էին այն չստորագրող ինքնիշխան պետության, պետությունների տարածքային ամբողջականության հարցերին), ուստի տարածքային սահմանազատման հարցերում ևս Կարսի պայմանագրի համար Հայաստանն իրավական պարտավորություն չպետք է կրի²⁶⁰:

Մոսկվայի և Կարսի պայմանագրերը միջազգային առումով, անշուշտ, իրենց բացասական դերն ունեցան Հայկական հարցի հետագա լուծման ճանապարհին, չնայած մեծ տերությունները չեն ճանաչել ո՛չ Մոսկվայի և ո՛չ էլ Կարսի պայմանագրերը:

Հայտնի է, որ երբ Լոզանի կոնֆերանսում կամ միջազգային այլ ատյաններում խոսք էր բացվում Հայկական հարցի վերաբերյալ, թուրքական կողմը, մեջտեղ բերելով Կարսի պայմանագիրը, հայտարարում էր, որ Խորհրդային Հայաստանը և Թուրքիան իրար հետ արդեն կնքել են պայմանագիր և վճռել սահմանային խնդիրները:

Քեմալական Թուրքիան Հայկական հարցը դարձրեց առևտրի (աճուրդի) առարկա Անտանտի ու Ռուսաստանի միջև և հասավ նրան, որ մեծապես օգտվեց երկուսից էլ: Ինչպես արդեն նշվել է, Թուրքիան Մոսկվայի պայմանագրով յուրացրեց հայկական հսկայական տարածքներ: Մոսկվայի կոնֆերանսին զուգահեռ Լոնդոնում կայացած կոնֆերանսում (1921 թ. փետրվարի 21-ից մարտի 14-ը, մի կողմից՝ Անտանտի երկրների և մյուս կողմից՝ պարտված Գերմանիայի ու Թուրքիայի միջև) թուրքական միացյալ պատվիրա-

²⁶⁰ Տե՛ս Խաչատրյան Կ., Սուքիասյան Հ., Բադալյան Գ., նշվ. աշխ., էջ 51:

կությանը հաջողվեց մերժել Ավետիս Ահարոնյանի և Պողոս Նուբար փաշայի ղեկավարությամբ հայկական երկու պատվիրակությունների առաջարկությունները՝ Արևմտյան Հայաստանի մասին Սևրի պայմանագրի հոդվածները կենսագործելու և հայկական Կիլիկիայում Ֆրանսիայի հովանավորությամբ «վարչական ինքնավարություն» կազմավորելու վերաբերյալ:

Փաստորեն, Թուրքիան դրան հասավ Ֆրանսիայի և Իտալիայի հետ գաղտնի գործարքներ կնքելով: Իսկ Սևրի պայմանագիրը նենգափոխվեց Թուրքիայի արևելյան նահանգներում հայկական «ազգային օջախի» առաջարկությամբ, որը հետագայում մերժվեց:

1923 թ. հուլիսի 24-ին 8 երկրների մասնակցությամբ կնքված Լոզանի հաշտության պայմանագրում (կազմված 5 մասից, 143 հոդվածից) արմատապես վերանայվեց Սևրի պայմանագիրը: Լոզանի պայմանագրում «Հայաստան» անվան անգամ հիշատակություն չկար: Մերժվեց հայկական «ազգային օջախի» գաղափարը, արգելվեց հայ գաղթականության վերադարձը Արևմտյան Հայաստան²⁶¹:

Կարսում ՀՍԽՀ ներկայացուցիչ Գ. Սարգսյանը Հայաստանի Ժողկոմխորհի նախագահ Ա. Մյասնիկյանին ուղղված նոյեմբերի 20-ի գաղտնի զեկուցագրում թուրքերի քաղաքական կողմնորոշման մասին հայտնում էր. «Կարսի պայմանագրից հետո էլ թուրքերը հաջող բանակցություններ են վարում Անտանտի հետ: Նրանք գրեթե իրենց վրայից դեն են նետել բոլշևիկյան կողմնորոշման թիկնոցը»²⁶²:

²⁶¹ Տե՛ս **Հակոբյան Ա.**, նշվ. աշխ., էջ 324:

²⁶² ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 33, թ. 146:

Մոսկվայի և Կարսի պայմանագրերը հեշտացրին Անտանտի տերությունների գործը Սևրի պայմանագրի վերանայման հարցում: Դրանք ճանապարհի հարթեցին արևմտյան տերությունների համար՝ վերանայելու և լիովին հրաժարվելու Սևրի պայմանագրից: Հայաստանի խորհրդայնացումից հետո Անտանտի երկրները ամենևին շահագրգռություն հանդես չբերեցին Հայկական հարցի լուծման խնդրում: Նրանց տեսակետից ՀՍԽՀ-ի համար տարածքային զիջումներ անելը հավասարազոր էր բոլշևիկյան Ռուսաստանին հզորացնելուն: Անտանտի տերությունները և առաջին հերթին Անգլիան, եթե Թուրքիայի վրա ճնշում էին գործադրում, ապա նպատակը վերջինիս Ռուսաստանի դեմ տրամադրելն էր: Թուրքիան, սակայն, քանի դեռ չէր լուծել իր ազգային-տարածքային հիմնախնդիրները և այդ դժվարին ճանապարհին զգում էր Ռուսաստանի համակողմանի օգնության կարիքը, նախապատվությունը տալիս էր Ռուսաստանին: Բայց հենց որ նա ռուսական ոսկով ու զենքով լուծեց իր ռազմական խնդիրները, դեն նետեց բոլշևիկների հետ հաստատած կեղծ բարեկամության քողը, թուլացրեց հետաքրքրությունը խորհրդային երկրի նկատմամբ և քաղաքականապես կողմնորոշվեց դեպի Արևմուտք²⁶³:

Ռուսաստանի հետ քեմալականների վարած կեղծ բարեկամության քաղաքականությունը Արևմուտքի տերություններին հանգեցրեց այն համոզման, որ պետք է ճանաչել «Նոր Թուրքիան» և կարգավորել հարաբերությունները նրա հետ: Դա տեղի ունեցավ Լոզանի 1922-1923 թթ. խորհրդաժողովում: Հայկական հարցի վերջին արարողակարգը դար-

²⁶³ Տե՛ս Հակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 322:

ծավ Լոզանի կոնֆերանսը: Ռուս-թուրքական միասնական ճակատի ստեղծումը իրականում հաղթանակ ապահովեց թուրքերի համար Լոզանի կոնֆերանսում: Այդ մասին խոստովանել է Թուրքիայի պատվիրակության ղեկավար Իսմեթ փաշան 1923 թ. հունվարին Չիչերինի և Կրասինի հետ ունեցած հանդիպման ժամանակ²⁶⁴: Իսկ երբ 1923 թ. հուլիսի 24-ին կնքվեց Լոզանի թուրքանպաստ պայմանագիրը, այդ հաղթանակի կապակցությամբ արտգործոժողկոմ Գ. Չիչերինը բարեկամական նոտայով շնորհավորեց ԽՍՀՄ-ում արդեն Թուրքիայի դեսպան նշանակված Նախկին արտգործկոմիսար Ահմեդ Մուխթարին²⁶⁵:

Հայտնի իրողություն է, որ հայկական «ազգային օջախի» հարցի քննությունը Լոզանի կոնֆերանսը հանձնել էր Ազգերի լիգայի խորհրդին: Խնդրի լուծումը կապվում էր Թուրքիայի՝ Ազգերի լիգայի անդամ դառնալու հետ²⁶⁶: 1932 թ. Թուրքիայի Հանրապետությունը դարձավ Ազգերի լիգայի անդամ: Սակայն դրանից հետո էլ Նախկին Անտանտի տերություններից և ոչ մեկը Թուրքիային չհիշեցրեց հայկական «ազգային օջախի» ստեղծման մասին:

Մոսկվայի և դրա կրկնօրինակ Կարսի անարդար պայմանագրերի սխալի մասնակի ուղղման փորձ կատարվեց Երկրորդ աշխարհամարտի ավարտին՝ 1945-1946 թթ.: Երկրորդ աշխարհամարտի ավարտին, երբ կտրուկ փոխվել էին միջազգային դրությունը և աշխարհաքաղաքական ուժերի հարաբերակցությունը, ԽՍՀՄ ղեկավարությունը, հաշվի

²⁶⁴ Տե՛ս Геноцид армян..., т. 2, ч. 1, էջ 609:

²⁶⁵ Տե՛ս Հակոբյան Ա., նշվ. աշխ., էջ 323:

²⁶⁶ Տե՛ս Սահակյան Տ., Ցավալի պայմանագրեր, Երևան, 2010, էջ 458-459:

առնելով պատերազմի տարիներին Թուրքիայի անթաքույց գերմանամետ դիրքորոշումը, 1945 թ. ամռանը Բեռլինի (- Պոտսդամի) հաշտության կոնֆերանսում հարց բարձրացրեց Խորհրդային Հայաստանին վերադարձնելու 1921 թ. Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրով Թուրքիայի կողմից անարդարացիորեն խլված Կարսը, Արդահանը և Սուրմալուն: Խորհրդային ղեկավարությունը Ի. Ստալինի և Վ. Մոլոտովի կողմից այդ տարածքների վերադարձը պայմանավորում էր 1925 թ. դեկտեմբերի 17-ի Փարիզի խորհրդաթուրքական բարեկամության և չեզոքության պայմանագրի ժամկետը լրանալու ու դրա դենոնսացիայի կապակցությամբ Թուրքիայի հետ նոր պայմանագիր (դաշինք) կնքելու հանգամանքով:

Երկրորդ աշխարհամարտում բացահայտվեցին քեմալական Թուրքիայի իսկական դեմքն ու նպատակները, նաև նրա անթաքույց հակախորհրդային կեցվածքն ու գերմանամետ դիրքորոշումը: Եվ ԽՍՀՄ ղեկավարությունը հանգեց այն համոզման, որ իբրև պատժի ձև պետք էր Թուրքիայից պահանջել 1921 թ. Մոսկվայի պայմանագրով նրան զիջված տարածքները: Սակայն, ցավոք, խորհրդային կառավարության այս պահանջին դեմ հանդես եկան ԽՍՀՄ-ի երեկվա դաշնակիցներ Անգլիան և ԱՄՆ-ն: «Կոմունիզմի տարածման սպառնալիքի կանխման» կարգախոսով նրանք Թուրքիային առան իրենց պաշտպանության տակ: Այդ տարիներից արդեն գլուխ բարձրացրած Սառը պատերազմի և միջուկային զենքի ամերիկյան մենաշնորհի պայմաններում ԽՍՀՄ-ը հարկադրված ընկրկեց և ի վերջո հետ կանգնեց

Թուրքիայի նկատմամբ ներկայացրած տարածքային պահանջներից:

Ավելի ուշ՝ Ի. Ստալինի մահից ամիսներ անց՝ 1953 թ. մայիսի 30-ին, խորհրդային կառավարությունը պաշտոնապես հայտարարեց, որ հանուն խաղաղության, անվտանգության և բարիդրացիական հարաբերությունների պահպանման ԽՍՀՄ-ը հրաժարվում է Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջներից²⁶⁷: Դրանից 25 տարի անց՝ 1978 թ. օգոստոսի 22-ին, Թուրքիայի վարչապետ Բ. Էջևիրը և ԽՍՀՄ վարչապետ Ա. Կոսիգինը Մոսկվայում ստորագրեցին միջպետական պայմանագիր, որով փաստորեն վերահաստատվեց ԽՍՀՄ կառավարության 1953 թ. մայիսի 30-ի չարագուշակ հայտարարությունը՝ Թուրքիայից տարածքային պահանջներ չունենալու վերաբերյալ, և կողմերը հայտարարեցին փոխադարձաբար տարածքային հավակնություններ չունենալու մասին²⁶⁸: Ահա այսպես հերթական անգամ միջազգային ամենաբարձր մակարդակով բարձրացվեց ու անարդյունք փակվեց հայկական տարածքների հարցը:

Հետագա տասնամյակներին մոռացության մատնվեց հայկական հողերի հիմնախնդիրը: Բացառություն են միայն 1965 թ. ազգային վերածնունդը ազդարարող՝ Երևանում ապրիլի 24-ին կազմակերպված համաժողովրդական զանգվածային ցույցերը: Դրանց գլխավոր պահանջը հողերի վե-

²⁶⁷ Տե՛ս Դաշնակից երեք տերությունների՝ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ղեկավարների Բեռլինի (Պոտսդամի) կոնֆերանսը (փաստաթղթերի ժողովածու), Երևան, 1989, էջ 591: Այդ նույն միտքը վերահաստատվեց երկու երկրների միջև 1978 թ. կնքված միջպետական պայմանագրով:

²⁶⁸ Տե՛ս **Захаров В.**, Карс и Карсский договор 1921 года в истории Армении, Москва, 2010, էջ 81:

րադարձն էր, այսինքն՝ Մոսկվայի և Կարսի պայմանագրերի չեղյալ հայտարարումը: Յուցարարները միութենական և տեղական իշխանություններից պահանջում էին դատապարտել Հայոց ցեղասպանությունը, հասնել դրա միջազգային ճանաչմանը և պաշտպանել հայ ժողովրդի պատմական իրավունքները:

Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրին քաղաքական և իրավական գնահատական տալու մասին հարց բարձրացվեց արդեն «վերակառուցման» փուլում՝ 1989 թ. ԽՍՀՄ ժողովուրդների առաջին համագումարում, որին, սակայն, ընթացք չտրվեց²⁶⁹: Հայաստանի անկախության արշալույսին ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը փաստաթղթեր պատրաստեց բոլոր հակահայկական պայմանագրերը, այդ թվում՝ Մոսկվայինը և Կարսինը, անօրինական հայտարարելու մասին, ինչը, սակայն, հետագա զարգացում չստացավ²⁷⁰: Համաձայն ենք այն կարծիքին, որ ներկայումս Հայաստանի Հանրապետությունն ու համայն հայությունն ունեն պատմական, քաղաքական և իրավական բավարար հիմքեր ու փաստարկներ՝ պետական մակարդակով միջազգային դատական ատյաններ տեղափոխելու և քննարկելու Մոսկվայի և դրա հետևանք հանդիսացող Կարսի պայմանագրերի օրինականության հարցը՝ դրանք Հայաստանի առումով անօրինական ու անվավեր ճանաչելու՝ դենոնսացիայի ենթարկելու և պահանջատեր լինելու իրենց ոտնահարված իրավունքներին ու բռնազավթված հողերին ²⁷¹:

²⁶⁹ Տե՛ս **Գալոյան Գ.**, նշվ. աշխ., էջ 494:

²⁷⁰ Տե՛ս **Խուրշուդյան Լ.**, Հայկական հարցը, Երևան, 1995, էջ 70-71:

²⁷¹ Տե՛ս նույն տեղում:

Այսպիսով՝ բոլշևիկյան Ռուսաստանը և քեմալական Թուրքիան, համատեղ գործակցությամբ հակազդելով ու չեղյալ համարելով Սևրի դաշնագիրը, Հայաստանը բաժանեցին իրար մեջ: Այդ ամենը հիմք է տալիս ասելու, որ Հայաստանն ու համայն հայությունն ունեն բոլոր իրավունքները (պատմական, քաղաքական, իրավաբարոյական և այլն)՝ բողոքի ծայն բարձրացնելու ու պայքարելու Մոսկվայի և Կարսի անարդար պայմանագրերի դեմ, Հայաստանի առումով դրանք չեղյալ համարելու և պահանջատեր լինելու հայկական բռնազավթված հողերին: Առաջին աշխարհամարտում պարտված և այդ ընթացքում ծանրագույն հանցագործություն՝ Հայոց ցեղասպանությունն իրականացրած Թուրքիան, փոխանակ միջազգային հանրության կողմից պատասխանատվության կանչվեր, ընդհակառակը, օգտագործելով մեծ տերությունների միջև եղած հակասությունները և կեղծ հեղափոխություն ու բարեկամություն խաղալով բոլշևիկյան Ռուսաստանի հետ, ոչ միայն պատիժ չկրեց ու չվերադարձրեց Սևրի պայմանագրով նախատեսված Արևմտյան Հայաստանի նահանգները, այլև Մոսկվայի պայմանագրով նույնիսկ որպես պարզև ստացավ Արևելյան Հայաստանի տարածքների մի զգալի մասը: Ավելին՝ քեմալականները գերակատարեցին «Ազգային ուխտ»-ով նախատեսված իրենց տարածքային պահանջների պլանը: Մոռացության տրվեց Արևմտյան Հայաստանը: Նրանք տիրացան նաև Սուրմալուին և Նախիջևանին, երկրամասեր, որոնք թուրքերին չէին պատկանում. Սուրմալուն պահեցին իրենց, իսկ Նախիջևանը նվիրեցին Ադրբեջանին: Սրան ավելացնենք նաև այն, որ ՌԿ(Բ)Կ ԿԿ Կավբյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի որոշմամբ՝ ԼՂ-ն՝

4160 քառ. կմ տարածքով, ևս նվիրաբերվեց Ադրբեջանին: Այսինքն՝ Ադրբեջանին միացվեց շուրջ 10 հազ. քառ. կմ հայկական տարածք: Ընդհանուր առմամբ 1920-1921 թթ. ընթացքում Հայաստանից խլվեց նրա իրական տարածքի կեսից ավելին՝ պրոֆ. Ա. Հակոբյանի հաշվարկով $20700+9660=30360$ քառ. կմ, որը, ինչպես նկատում ենք, ավելի մեծ է, քան Խորհրդային Հայաստանի ու նրա իրավահաջորդ ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքը²⁷²:

Հանրագումարի բերելով Մոսկվայի և Կարսի պայմանագրերի արդյունքները՝ կարելի է եզրակացնել, որ այդ անարդարացի պայմանագրերի համար պատասխանատվություն են կրում առաջին հերթին Թուրքիան և Խորհրդային Ռուսաստանը: Պայմանագրերում իրենց մեղքի ու պատասխանատվության մեծ բաժինն ունեն նաև Անտանտի երկրները, որոնք անտարբեր գտնվեցին իրենց իսկ կնքած Սևրի պայմանագրի նկատմամբ: Նրանք Հայաստանի ու հայ ժողովրդի համար ծանր պահին իրենց շահերի թելադրանքով թողեցին հայությանը բախտի քմահաճույքին և աստիճանաբար հաշտվեցին ու բարեկամացան Թուրքիայի հետ: Եվ պատահական չէ, որ Անգլիայի վարչապետ Լլոյդ Ջորջն իր հուշերում խոստովանում է. «Հայաստանը մեր զոհն է»²⁷³:

Փաստորեն, Խորհրդային Ռուսաստանը Հայկական հարցին Մոսկվայում ու Կարսում հասցրեց վճռական հարվածը, իսկ եզրափակումը եղավ Լոզանում: Խորհրդային Ռուսաստանը նույնպես իր շահերի թելադրանքով և հանուն

²⁷² Տե՛ս **Հակոբյան Ա.**, նշվ. աշխ., էջ 325:

²⁷³ **Джордж Л. Д.**, Правда о мирных договорах, т. 2, Москва, 1957, с. 390.

համաշխարհային հեղափոխության սին գաղափարների իրականացման ռազմաֆինանսական ու քաղաքական օգնություն ցույց տվեց Թուրքիային, որպեսզի համատեղ պատռեն Սևրի պայմանագիրը, ծնկի բերեն իմպերիալիզմի «գործիք» Հայաստանին՝ բզկտելով նրա տարածքները և բաժանելով իրար մեջ: Վերջին խորհրդաժողովում՝ Լոզանում, Հայկական հարցի առնչությամբ խորհրդային պատվիրակությունն ամեն կերպ պաշտպանում էր քեմալական Թուրքիային: Խորհրդային պետությունը նպաստեց, որ «ազգային օջախի» գաղափարը մերժվի:

Մոսկվայի և Կարսի պայմանագրերը կնքվել են պարտադրանքով, միջազգային իրավունքի նորմերի անտեսմամբ, մի ամբողջ ժողովրդի օրինական շահերի ոտնահարմամբ, պայմանագրեր, որոնց հետ հայ հանրույթը չի հաշտվել և չի հաշտվելու, մինչև որ չվերականգնվի արդարությունը: «Մոսկվայի և դրա հետևանք Կարսի պայմանագրերով,- նշում է իրավագետ-միջազգայնագետ Յու. Բարսեղովը,- ոչ միայն հայ ժողովուրդը զրկվեց իր հայրենիքի մեծագույն մասից, այլև ցեղասպանություն տեսած հայ գաղթականությունը զրկվեց իր կորցրած հայրենիքը վերադառնալու և ապրելու իրավունքից: Նա դարձավ քշված, աստանդական, առանց հայրենիքի ժողովուրդ»²⁷⁴: Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրը չի կարող մնալ անհետևանք: Դա ենթադրում է պահանջատիրություն, տարածքային փոխհատուցում, որպեսզի իր հայրենիքը կորցրած ժողովուրդը գոնե մասամբ վերագտնի

²⁷⁴ Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий, В 2 т. /Ред., сост. и авт. коммент. Ю.Г. Барсегов, т. 2, ч. 2, Москва, 2005, с. 435.

այն: Հայաստանի Հանրապետությունն ունի իրավական, քաղաքական և պատմական բավարար հիմքեր՝ վիճարկելու և միջազգային մակարդակով բարձրացնելու այդ հարցը: «Խաղաղութին էր հիմնուած անարդարութեան վրայ,- գրում է Ջ. Մսրըլեանը,- որ մեզի՝ հայերու անընդունելի է եւ կը մնայ, որքան ատեն որ Արարատը, Անին, Կարսը, Կողբը, Սուրմալուն եւ այլն կը մնան թրքական լծի տակ»²⁷⁵:

Ինչպես նշվել է, Մոսկվայի և Կարսի պայմանագրերը, ըստ էության, գործարք էին: Մոսկվայի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող մասը միջազգային իրավունքի տեսանկյունից խախտում էր այն իմաստով, որ, ինչպես ամրագրված է 1969 թ. կոնվենցիայի 34-րդ հոդվածում, «Պայմանագրերը կարող են վերաբերել միայն պայմանագիրը ստորագրող կողմերին և որևէ պարտավորություն կամ իրավունք չեն ստեղծում պայմանագրային մաս չկազմող երրորդ կողմի համար առանց վերջինիս համաձայնության»²⁷⁶: Այդ իմաստով Մոսկվայի պայմանագիրը ՀՍԽՀ-ին վերաբերող դրույթներով կարելի է որակել որպես գործարք: Այն գործարք է համարվում՝ պայմանավորված երկու հանգամանքով. առաջին՝ Մոսկվան հայկական հողերի հաշվին տարածքային զիջումներ արեց քեմալականներին, որպեսզի կանխեր նրանց հնարավոր անցումը Անտանտի կողմը, և երկրորդ՝ Հայաստանի սահմանների հարցը լուծվում էր առանց նրա ներկայացուցիչների մասնակցության: Եվ այդ առումով Մոսկվայի պայմանագիրը՝ իբրև նախադեպ, նմանություն և ընդհանրություն ունի 1939 թ. օգոստոս-սեպ-

²⁷⁵ **Մսրըլեան Ջ.**, Երեք դաշնագիրեր (Ալեքսանդրապոլի, Մոսկուայի եւ Կարսի դաշնագիրերը, 1920-1921 թթ.), Պէյրուֆ, 1979, էջ 140:

²⁷⁶ **Հակոբյան Ա.**, նշվ. աշխ., էջ 319:

տեմբերի խորհրդա-գերմանական գաղտնի պայմանագրերի հետ²⁷⁷:

Խոսելով իր ժամանակաշրջանում գործող միջազգային իրավունքի էության մասին՝ նա գրում է. «Միջազգային իրավունք ասելով՝ մենք հասկանում ենք իրավաբանական նորմերի համակցություն, որոնք սահմանում են ժողովուրդների՝ միմյանց հետ փոխհարաբերության ընթացքում իրենց կենսական նպատակներին հասնելու պայմանները»³²⁶: Այս ճշմարիտ փաստն ընդգծելով՝ նա միաժամանակ արձանագրում է, որ տիրակալները, ձգտելով բոլոր ուժերով իրականացնելու իրենց անձնական եսասիրական նպատակները, օտարերկրացի ժողովուրդների և նրանց տիրակալների համար ոչ մի իրավունք չէին ճանաչում և խտրականություն չէին դնում իրենց առջև դրված նպատակներին հասնելու հարցում³²⁷:

Մինչև արդի միջազգային իրավունքի ձևավորումը միջազգային հարաբերություններում չէր բացառվում հարկադրանքը հաղթող պետության կողմից պարտվող պետու-

³²⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 393:

³²⁶ Նույն տեղում, էջ 16:

³²⁷ Տե՛ս **Мартенс Ф.**, Современное международное право цивилизованных народов, Том I, СПб., 1898, էջ 95:

յան հետ պայմանագիր կնքելիս³²⁸: Նշելով, որ այս փաստը, որպես այդպիսին, հակասում էր իրավունքի ընդհանուր սկզբունքին, ինչի պատճառով ժամանակ առ ժամանակ այն քննադատվում էր միջազգայնագետների և կառավարությունների կողմից, Լ. Օպենհեյմը կարծում էր, որ միջազգային պայմանագիր կնքելիս հաղթողի կողմից հարկադրանքի կիրառման հանգամանքը բնականորեն բխում է պատերազմի՝ որպես գոյություն ունեցող իրավունքի փոփոխության գործիքի թույլատրելիությունից: Պատերազմը հարկադրանքի օրինական միջոց էր, և, ըստ դրա արդյունքի, տրված համաձայնությունը չէր կարող արատավոր լինել³²⁹:

Այսպիսով՝ մինչժամանակակից միջազգային իրավունքը մի կողմից կարծես թե ճանաչում և խրախուսում էր միջազգային իրավունքի առաջադեմ նշանակությունը ժողովուրդների և նրանց պետությունների իրավահավասարության ճանաչման և փոխադարձ հարգանքի հարցում, սակայն, մյուս կողմից, այն ավելի շատ ուներ տեսական և դոկտրինալ, քան գործնական նշանակություն: Դա է հավանաբար պատճառը, որ, ինչպես իրավագիտորեն նշում է Ի. Լուկաշուկը, Հ. Գրոցիի և նրա հետևորդների աշխատությունները հիմք դրեցին միջազգային իրավական գիտակցության ձևավորմանը, այլ ոչ թե միջազգային իրավունքին, որը երկար ժամանակ մնաց ընդամենը որպես գաղափար³³⁰:

³²⁸ Տե՛ս **Оппенгейм Л.**, Международное право, том I. Мир, полутом 2, Москва, Изд-во Иностранной литературы, 1949, էջ 418:

³²⁹ Տե՛ս նույն տեղում:

³³⁰ Տե՛ս **Лукашук И.**, Нормы международного права в международной правовой системе, Москва, 1997, էջ 34:

Ինչպես նշվեց, XX դարի շեմին, պետությունների իրավահավասարությամբ պայմանավորված, դոկտրինալ մակարդակով արդեն ձևավորվել էր ավելի թույլ պետությունների կամքը հարգելու սկզբունքը, ինչպես նաև այն մոտեցումը, որ միջազգային պայմանագրերի իրավաբանական ուժի ճանաչման կարևոր պայմաններից է մասնակից պետության ներկայացուցչի իրական համաձայնությունը, քանզի սպառնալիքի կամ հարկադրանքի կիրառմամբ կնքված պայմանագիրն անվավեր և նույնիսկ առ ոչինչ է:

Ասվածի համատեքստում կարող ենք արձանագրել, որ Կարսի և Մոսկվայի 1921 թ., ինչպես նաև այլ պետությունների միջև կնքված բազմաթիվ պայմանագրերի օրինակով կարելի է պնդել, որ, չնայած պետությունների իրավահավասարության վերաբերյալ առաջադիմական դոկտրինի ձևավորմանը, հզոր տերությունները դեռևս իրենց իրավունք էին վերապահում տնօրինելու ավելի թույլ պետությունների ճակատագիրը՝ պարտադրելով նրանց կնքել իրենց համար ոչ ձեռնտու, նույնիսկ ստրկացուցիչ պայմաններով պայմանագրեր: Ավելին՝ Մոսկվայի 1921 թ. պայմանագիրն անվիճելի ապացույց է, որ շատ հաճախ այս կամ այն ժողովրդի պատմական հայրենիքի մասը կազմող տարածքների կարգավիճակին կամ դրանց պատկանելությանն առնչվող հարցերը մեծ տերությունները լուծում էին նույնիսկ առանց նրանց այդ գործընթացին ձևականորեն մասնակից դարձնելու:

Այսօր ոչ մի ողջամիտ իրավաբան, ոչ մի միջազգային դատարան կամ կազմակերպություն չի կարող իրավաչափ և գործող իրավադրույթ ճանաչել Մոսկվայի պայմանագրի 15-

րդ հողվածը, համաձայն որի՝ «Ռուսաստանը պարտավորվում է անդրկովկասյան հանրապետությունների նկատմամբ դիմել քայլերի, որպեսզի այդ հանրապետությունների կողմից Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրերում անպատճառ ճանաչվեն սույն պայմանագրի այն հողվածները, որոնք անմիջաբար վերաբերում են իրենց» :

Մոսկվայի 1921 թ. պայմանագրի նշված 15-րդ հողվածը և նորմատիվ իրավադրույթների զգալի մասն այսօր գործող միջազգային իրավունքի տեսանկյունից միանշանակ հակասում են ՄԱԿ-ի կանոնադրությանը և Վիեննայի՝ միջազգային պայմանագրերի իրավունքի մասին 1969 թ. կոնվենցիայի պահանջներին և միջազգային իրավական առումով առ ոչինչ են:

Ինչպես նշեցինք, Կարսի 1921 թ. պայմանագիրը նույնպես ըստ էության հակասում էր իր կնքման պահին գործող միջազգային իրավունքին և միջազգային պայմանագրերի իրավունքի վերաբերյալ դոկտրինին: Սակայն այդ պայմանագրի անվավերության փաստն ակնառու է, երբ այն վերլուծում ենք հատկապես արդի միջազգային իրավունքով նախատեսված իրավակարգավորումների համատեքստում:

Ըստ արդի միջազգային իրավունքի՝ միջազգային պայմանագրի «անվավերությունը» և միջազգային պայմանագրի «առ ոչինչ լինելը» նույնական են այն առումով, որ երկու դեպքում էլ պայմանագիրը կորցնում է իր իրավաբանական նշանակությունը: Անվավերությունը (առ ոչինչ լինելը) առաջանում է կա՛մ միջազգային պայմանագրի կնքման պահին գործող միջազգային իրավունքի էական խախտման հետևանքով, կա՛մ այն դեպքում, երբ միջազգային պայմա-

նագիրը հակասության մեջ է մտնում միջազգային իրավունքի նոր ձևավորված իմպերատիվ նորմի հետ (*jus cogens*), որը տվյալ պայմանագրի կնքման պահին չի եղել: Առաջին դեպքում ընդունված է ասել, որ պայմանագիրը բացարձակապես առ ոչինչ է կնքման պահից սկսած (*ab initio* կամ *ab ovo*), երկրորդ դեպքում համարվում է, որ պայմանագիրն առ ոչինչ է ամբողջությամբ կամ մասամբ իր առ ոչինչ լինելու հանգամանքի առաջացման պահից (*ex tunc*)³³¹:

Այս իրավական հայեցակարգը հստակ ամրագրված է Վիեննայի՝ միջազգային պայմանագրերի իրավունքի մասին 1969 թ. մայիսի 23-ի կոնվենցիայում: Այսպես, համաձայն կոնվենցիայի 64-րդ հոդվածի, **«Եթե առաջանում է ընդհանուր միջազգային իրավունքի պարտադիր նոր նորմ, ապա ցանկացած պայմանագիր, որը հակասում է այդ նորմին, անվավեր է և դադարում է»**: Այս նորմը Վիեննայի կոնվենցիայի 53-րդ հոդվածի տրամաբանական հետևանքն է: Համաձայն 53-րդ հոդվածի՝ «Պայմանագիրն առ ոչինչ է, եթե կնքման պահին հակասում է ընդհանուր միջազգային իրավունքի պարտադիր նորմին» : Նշված իրավադրույթից կարելի է սխալ կարծիք կազմել՝ ենթադրելով, թե խոսքը վերաբերում է նոր կնքվող պայմանագրերին: Այս առումով Միջազգային իրավունքի հանձնաժողովը նշում է, որ նոր իմպերատիվ նորմի գործողությունը պետք է տարածվի ոչ միայն հետագայում կնքվելիք պայմանագրերի, այլև արդեն գոյություն ունեցող պայմանագրերի վրա: Այս դիրքորոշումն ամրագրված է հենց կոնվենցիայի 64-րդ հոդվա-

³³¹ Ст'ю Международное право. Учебник, 5-е издание. Отв. ред. докт. юрид. наук, профессор С. А. Егоров, Москва, 2014, էջ 341:

ծում, որում շեշտվում է, որ անվավեր է ճանաչվում ցանկացած պայմանագիր, որը հակասում է ընդհանուր միջազգային իրավունքի նոր ձևավորված պարտադիր նորմին:

Հարկ է ընդգծել, որ Կարսի 1921 թ. պայմանագիրը, որը կնքվեց երրորդ պետությունների օկուպացիայի պայմաններում, չնայած քաղաքական առումով գործող պայմանագիր է, քանի որ, «*inter alia*», դրանով ամրագրվել են մասնակից պետությունների պետական սահմանները, այդուհանդերձ, բացի սահմանագծման (դեֆինիտացիա) և սահմանազատման (դեմարկացիա) վերաբերյալ իրավադրույթներից, մնացած հոդվածներն ուղղակիորեն հակասում են այսօր գործող միջազգային իրավունքին և անվավեր են: Որպես օրինակ կարելի է վկայակոչել Կարսի պայմանագրի թեկուզ 6-րդ և 8-րդ հոդվածները:

Համաձայն 6-րդ հոդվածի 2-րդ կետի՝ «Թուրքիային կտրվի Բաթումի նավահանգստով Թուրքիա կամ այնտեղից ուղարկվող ամեն տեսակի ապրանքների ազատ, անմաքս տրանզիտի իրավունք, տեղի չեն ունենա խափանումներ, ապրանքների համար չի սահմանվի ոչ մի տեսակի տուրք: Թուրքիային կտրվի Բաթումի նավահանգստից օգտվելու իրավունք, և դրա համար նրանից չեն գանձվի հատուկ տուրքեր»: Իսկ 8-րդ հոդվածում նշվում է. «Վրաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության կառավարությունը և Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունը, նկատի առնելով երկու երկրների սահմանամերձ վայրերի բնակիչների համար սահմանից անդին գտնվող ամառային և ձմեռային արոտավայրերից օգտվելու անհրաժեշտությունը, պայմանավորվեցին այդ բնակիչներին տալ իրենց նա-

խիրների հետ սահմանն անցնելու և սովորական արոտավայրերից օգտվելու իրավունք»:

Չենք կարծում, որ ինքնիշխան Վրաստանը, հիմք ընդունելով 100 տարի առաջ բոլշևիկյան Ռուսաստանի պարտադրանքով կնքված պայմանագիրը, այսօր Թուրքիայի համար կճանաչի Բաթումի նավահանգստով Թուրքիա կամ այնտեղից ուղարկվող ամեն տեսակի ապրանքների ազատ, անմաքս տրանզիտի իրավունք: Ընդ որում, «ապրանքների համար չի սահմանվի ոչ մի տեսակի տուրք: Թուրքիային կտրվի Բաթումի նավահանգստից օգտվելու իրավունք, և դրա համար նրանից չեն գանձվի հատուկ տուրքեր»:

Կարսի 1921 թ. պայմանագիրն այսօր մասնակից պետությունների միջև ընդամենը պետական սահմաններ կանխորոշող՝ քաղաքական բնույթի պարտավորություններ սահմանող փաստաթուղթ է:

Կարսի պայմանագրին առնչվող խնդիրը դեռևս գոյություն ունի, և շատ դժվար է կանխորոշել, թե ժամանակի ընթացքում այն ինչպես կլուծվի:

Մոսկվայի և Կարսի 1921 թ. պայմանագրերին առնչվող հիմնախնդիրը կրկին հասարակության ուշադրության կենտրոնում հայտնվեց այն ժամանակ, երբ խոր հակասություն առաջացավ Վրաստանի կենտրոնական իշխանության և նրա կազմում գտնվող Աջարիայի ղեկավարության միջև: Նշված հակասության առնչությամբ Բաքվում Թուրքիայի դեսպան Ունալ Չևիկոզը 2004 թ. մարտի 17-ին լրագրողներին հայտարարեց, որ Թուրքիայի իշխանությունները, համաձայն 1921 թ. Կարսի պայմանագրի, իրավունք ունեն իրենց զորքերը մտցնելու Աջարիա, և իր միտքը հիմնավորեց

հետևյալ կերպ. «Կարծում եմ՝ այդ առումով որևէ պարզաբանման կարիք չկա: Պարզապես համաձայնությունը մնում է ուժի մեջ, և դա ասելը բավարար է»³³²: Հակառակ թուրք դեսպանի՝ Մոսկվայում Վրաստանի դեսպան Կոնստանտին Կեմուլարիան հայտարարեց, որ Աջարիան չի կարող պաշտպանություն ակնկալել Թուրքիայից՝ համաձայն Կարսի պայմանագրի, քանզի այն դադարել է գոյություն ունենալուց. «Ոչ մի իմաստ չունի այդ պայմանագիրը մեկնաբանել: Դրա ժամկետն արդեն ավարտվել է. հիմա իրողությունը բացարձակապես այլ է: Այժմ միջազգային հարաբերությունները կառուցվում են XXI դարի իրողությունների վրա: Այժմ այլ իրողություններ են Ռուսաստանի և Թուրքիայի, Վրաստանի և Թուրքիայի, Վրաստանի և Ռուսաստանի միջև: Ոչ մի հեռանկար չունեն նրանք, ովքեր հիմա հույս ունեն վկայակոչելով մեր նախնիների միջազգային պայմանագրերը վերականգնողանալու անցյալը»³³³: Մինչև դեսպանների՝ նշված հայտարարություններն անելը Աջարիայի ղեկավար Ասլան Աբաշիձեն արդեն հայտարարել էր, որ Ռուսաստանը «ոչ թե պետք է, այլ պարտավոր է պաշտպանել Աջարիան»: «Կա Կարսի պայմանագիր, համաձայն որի՝ թուրքական կողմը պարտավորություն ունի պաշտպանելու Աջարական հանրապետության ինքնավարությունը»: Նա նշել էր. «Մինչև Կարսի պայմանագիրը կար Մոսկվայի պայմանագիրը. այնտեղ

³³² <http://www.panlog.ru/modules.php?name=News&file=print&sid=780> (մուտք՝ 10.09.2021).

³³³ https://www.pravda.ru/news/world/20080-turcija_mozhet_vvesti_voiska_v_adzhariju/ (մուտք՝ 31.10.2021).

նույն պարտավորություններն են: Այդ պայմանագրերով Ռուսաստանը պարտավոր է պաշտպանել Աջարիան»³³⁴:

Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ Աջարիայի և Վրաստանի միջև առաջացած քաղաքական ճգնաժամի հետևանքով 1921 թ. Կարսի, ինչպես նաև դրա հետ ամենասերտ առնչությունն ունեցող Մոսկվայի պայմանագրերի վավերականության հարցը ոչ միայն դոկտրինալ, ոչ միայն գիտատեսական, այլև միջպետական հարաբերությունների մակարդակով լրջորեն դրվեց կասկածի տակ: Նշված հանգամանքն ավելորդ անգամ ապացուցում է, որ Մոսկվայի և Կարսի պայմանագրերի առնչությամբ կան ոչ միայն պատմաքաղաքական, այլև միջազգային իրավական մի շարք հիմնախնդիրներ, որոնց ուսումնասիրությունն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական և քաղաքական կարևոր նշանակություն:

³³⁴ Նույն տեղում:

ВЛАДИМИР ОГАННИСЯН
*Заведующий кафедрой международного и
европейского права Армяно-российского
университета*
доктор юридических наук, профессор

**ПРОБЛЕМА ДЕЙСТВИТЕЛЬНОСТИ МОСКОВСКОГО
16 МАРТА 1921 ГОДА И КАРСКОГО 13 ОКТЯБРЯ 1921
ГОДА МЕЖДУНАРОДНЫХ ДОГОВОРОВ В
КОНТЕКСТЕ СОВРЕМЕННОГО МЕЖДУНАРОДНОГО
ПРАВА**

Резюме

К рубежу 20-го века уже доктринально закрепился принцип уважения воли более слабых государств, основанный на равноправии государств, согласно которому международные договоры должны основываться на компромиссе, ибо договор, заключенный под угрозой или по принуждению является недействительным. Однако и Московский и Карсский договоры 1921 г. были подписаны в результате военно-политического давления, грубо нарушившего исторические права и законные интересы армянского народа.

По законности и действительности Московский и Карсский международные договоры 1921 г. Проти-

воречат не только Уставу ООН 1945 года, Венской конвенции о праве международных договоров 23 мая 1969 г., духу и букве современного международного договорного права, но и основным требованиям международного права, действовавшим в момент их заключения, еще в начале 20 века.

Ключевые слова: *Московский и Карсский договоры 1921 г., международное право, требования армянского народа, Устав ООН, Венская конвенция.*

VLADIMIR HOVHANNISYAN

***Head of the Chair of the International and European
Law of the Armenian-Russian University, Doctor of
Law, Professor***

**THE PROBLEM OF VALIDITY OF THE INTERNATIONAL
TREATIES OF MOSCOW (MARCH 16, 1921) AND KARS
(OCTOBER 13, 1921) IN THE CONTEXT OF THE
TEMPORARY INTERNATIONAL LAW**

Summary

By the turn of the 20th century, the doctrinal principle of respecting the will of weaker states on the basis of equality of states had already been formulated,

according to which international treaties should be based on the consent and compromise of the parties, as a treaty under threat of coercion is invalid and even void. However, the treaties of Moscow and Kars were signed in 1921 as a result of military-political pressure, grossly violating the historical rights and legitimate interests of the Armenian people.

The 1921 Moscow and Kars international treaties, in terms of legality and validity, contradict not only the 1945 UN Charter, the Vienna Convention on the Law of Treaties of May 23, 1969, the spirit and letter of modern international treaties, but also to the basic requirements of international law in the early 20th century.

Key words: *Moscow and Kars Treaties of 1921, international law, demands of the Armenian people, UN Charter, Vienna Convention.*

**ԿԵՐՊԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ
ԶԻՆՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԵՎ
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ.
ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ**

ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

***Երևանի պետական համալսարանի գիտական
քարտուղար, քաղաքական ինստիտուտների և
գործընթացների ամբիոնի դոցենտ,
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի
Թուրքիայի բաժնի վարիչ,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
levhovsa@gmail.com***

Բանալի բառեր – Թուրքիա, «Արդարություն և
զարգացում» կուսակցություն, զինվորականություն, պաշտ-
պանական համակարգ, ինստիտուցիոնալ ինքնություն, գա-
ղափարախոսություն, կերպափոխում, արտաքին ու ան-
վտանգային քաղաքականություն:

Հոդվածում քննվում են թուրքական զինվորականու-
թյան հավաքական ինքնության կերպափոխման և իսլամա-
կանացման միտումները, պաշտպանական համակարգի ան-
նախադեպ վերածնունդների ազդեցությունը բանակի ինստի-

տուցիոնալ ինքնության վրա: Ռազմական հեղաշրջման ծախսողված փորձից հետո Էրդողանը լայն թափով սկսեց անվտանգային ու պաշտպանական ոլորտում էական փոփոխություններ իրականացնել, որոնց հետևանքով այդ ողջ համակարգը դրվեց նախագահի ինստիտուտի վերահսկողության ներքո: Սրան զուգահեռ՝ Էրդողանը սկսեց բանակում արժեքային ու գաղափարախոսական վերածնունդների ակտիվ քայլեր ձեռնարկել՝ ձգտելով զինվորականությանը բերելու սեփական գաղափարախոսական ազդեցության ոլորտ: Այս ամենը ոչ միայն ամբողջովին չեզոքացնում է բանակի՝ նախկինում արժեքային կողմնորոշիչներով իշխանություններին հակակշռելու ավանդական գործառույթը, այլև արտաքին ու անվտանգային քաղաքականության ոլորտում ազատում սեփական ինքնության ու գաղափարախոսական նախապատվություններով տարածաշրջանային ռեզիլիենտի ձգտող Էրդողանի ձեռքերը:

Թուրքիան իր արտաքին և տարածաշրջանային քաղաքականության իրականացման հարցում ներկայումս առանցքային նշանակություն է տալիս ուժային գործոնին՝ ուղղակի և անուղղակի ռազմական միջամտությունները դարձնելով իր արտաքին և տարածաշրջանային քաղաքականության շարժիչ ուժը Լիբիայից մինչև Հարավային Կովկաս: Ռեզիլիենտիզմն ու միլիտարիզմը, ագրեսիվ հոետորաբանությունը դարձել են Թուրքիայի ռազմաքաղաքական վարքագիծը պայմանավորող հիմնական գործոնները: Միջազգային համակարգային գործոններից բացի՝ Թուրքիայի անվտանգային ու տարածաշրջանային քաղաքականության վրա էական ազդեցություն ունեն միավորային/ներքին մակարդա-

կում տեղի ունեցող գործընթացները: Ուստի այդ գործընթացների ու գործոնների վերհանումը հնարավորություն կտա ավելի լավ հասկանալու Թուրքիայի արտաքին ու անվտանգային քաղաքականության հիմքում ընկած ներպետական մակարդակի գործոնները:

Վերջին տասնամյակում թուրքական բանակն ու պաշտպանական համակարգը էական վերափոխումների ենթարկվեցին, որոնք ընդգրկեցին ռազմատեխնիկական-կրթականից մինչև կազմակերպա-կառուցվածքային ոլորտները: Նոր թափով շարունակվում էր ռազմաքաղաքացիական փոխհարաբերությունների արմատական վերանայման գործընթացը, ինչի հետևանքով զինված ուժերը՝ որպես ինստիտուտ, և զինվորականությունը՝ որպես հավաքական սուբյեկտ, զրկվեցին պետության ներքին ու արտաքին քաղաքական գործընթացներում իրենց ունեցած դերակատարության պաշտոնական և ոչ պաշտոնական լծակներից: Այդ վերափոխումների շրջանակներում ընթանում է նաև բանակի ու զինվորականության գաղափարախոսական «վերամշակման» գործընթաց, ինչն իր ուղղակի և անուղղակի ազդեցությունն է ունենում այդ երկրի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ու անվտանգային քաղաքականության վրա: Խոսքը վերաբերում է զինվորականության ու բանակի հավաքական ինքնության և դրա առանցքային բաղադրիչ աշխարհիկության վերափոխմանը՝ իսլամականացմանը, երբ իսլամը՝ որպես գաղափարախոսական-արժեքային համակարգ, ներթափանցում է բանակ գործող վարչակարգի խրախուսման ու պարտադրման հետևանքով: Էրդողանական Թուրքիայի դոմինանտ գաղափարախոսական ա-

ռանցքն իսլամական ազգայնականությունն է, և մասնագիտական քննարկումներում Թուրքիայի իսլամականացման ու դրա հետևանքով պետական ինքնության կերպափոխման թեման այսօր առավել քան արդիական է:

Զինվորականությունն ու գլխավոր շտաբը (այսուհետ՝ ԳՇ) հանրապետական Թուրքիայում ավանդաբար համարվել են քեմալիզմի կրողն ու այդ արժեքային համակարգի երաշխավորը՝ կանխելով և թույլ չտալով դրանից շեղումներ հասարակական-քաղաքական կյանքում: Իսկ աշխարհիկությունն առանցքային այն բաղադրիչն էր, որի վրա հիմնված էր պետության ու հասարակության արդիականացումը: Աշխարհիկությունը, որի վրա էլ ձևավորված էր զինվորականության ինստիտուցիոնալ ինքնությունը, ամրագրված «կարմիր գիծ» էր թուրքական զինվորականության համար, որը հատելը լրջագույն հետևանքներ էր ունենում: Զինվորականությունն աշխարհիկության պահպանումը ձևակերպել էր որպես ազգային անվտանգության ապահովման անհրաժեշտ պայման³³⁵: ԳՇ-ն բավական հետևողական էր բանակում իսլամական գործոնի ազդեցությունն ամեն կերպ թույլ չտալու հարցում: Իրեն համարելով քեմալական ազգային պետության հիմնադիր ու խնամակալ՝ հատկապես 1960 թ. ռազմական հեղաշրջումից հետո բարձրագույն զինվորականությունը վճռականորեն էր տրամադրված կանխելու իսլամական տարրերի ներթափանցումները զինված ուժեր³³⁶,

³³⁵ Տե՛ս **Hülya Arik**, Secular risk governance and the Turkish military's battle with political Islam, 1980s-2000s, "Security Dialogue", 2018, 49 (4), էջ 307-310:

³³⁶ Տե՛ս **Hakan Yavuz, Rasim Koc**, The Gulen Movement vs. Erdoğan: The Failed Coup, Turkey's July 15th coup: what happened and why / edited by M. Hakan Yavuz and Bayram Balci, The University of Utah Press, 2018, էջ 79:

մասնավորապես երբ ինստիտուցիոնալացվեցին քեմալիզմն ու զինվորականության դերակատարությունը պետության մեջ³³⁷: Հսկվում էին զինվորական անձնակազմի նույնիսկ անձնական տիրույթն ու գործունեությունը, և քեմալական ազգային ուղեգծից շեղումների դեպքում սպաները հեռացվում էին բանակից: Հեռացվում էին նույնիսկ այն սպաները, որոնց կանայք կրոնական գլխաշոր էին կրում³³⁸: Իսլամական հետադիմականությունը սահմանելով որպես պետության համար ազգային անվտանգության խնդիր՝ զինվորական հրամանատարությունը հետևողականորեն մաքրագտումներ էր իրականացնում սպայական կազմում, երբ բացահայտվում էին վերջիններիս կրոնամետ մոտեցումներն ու կապերը իսլամական միաբանությունների հետ³³⁹: Այս կերպ թուրքական զինվորականությունն ապահովում էր իր քեմալական հավաքական ինքնությունն ու արժեքային միասնականությունը, նաև սրանից բխող քաղաքական ազդեցիկ դերակատարությունը: Զինվորականության ու բանակի ինստիտուցիոնալ ինքնավարությունն ապահովում էր նաև վերջինիս ինստիտուցիոնալ ինքնությունը:

«Արդարություն և զարգացում» կուսակցության (այսուհետ՝ ԱԶԿ) կառավարման տարիներին աստիճանաբար սահմանափակվեց զինվորականության քաղաքական ազդեցիկ դերակատարությունը, չեզոքացվեց ԳԾ-ի ազդեցիկ ինք-

³³⁷ Տե՛ս **Fatih Çağatay Cengiz**, Turkey: The Pendulum between Military Rule and Civilian Authoritarianism, Leiden/Boston: Brill, 2020, էջ 49:

³³⁸ Տե՛ս **Jenny White**, Muslim Nationalism and the New Turks, Princeton, New Jersey: Princeton University Press, 2013, էջ 61:

³³⁹ Տե՛ս **Serdar Gülener**, **S. Hüseyin Öztürk**, İtiraflarda Fetö'nün devlete sizması (Askeriye, Mülkiye, Adliye), SETA yayınlari, İstanbul, 1 Baskı, 2018, էջ 35:

նավարությունը: Անշուշտ, 2009-2010 թթ. կարելի է համարել ԱԶԿ-ի կողմից իր իշխանության հիմքերի ամրապնդման շրջան, երբ ընթանում էր աշխարհիկ-քեմալական շրջանակների ու կադրերի դուրսնման գործընթաց՝ դրանք փոխարինելով ԱԶԿ-ամետ և իսլամամետ տարրերով: Այդ շրջանում էր նաև, որ բանակի հրամանատարությունը բավականին բարդ իրավիճակում էր՝ ներգրավված լինելով դատական գործընթացներում: Իսկ արդեն 2016 թ. ձախողված ռազմական հեղաշրջումն ազատեց Էրդողանի ձեռքերը՝ իսլամականացման օրակարգն անարգել նաև բանակին թելադրելու համար: Պաշտպանական համակարգում և բանակում տեղի ունեցան այնպիսի աննախադեպ վերափոխումներ, որոնք նախկինում հնարավոր չէր անգամ պատկերացնել: Անվտանգային-պաշտպանական ողջ համակարգը վերածնվեց նախագահական կառավարման համակարգի տրամաբանությամբ՝ ամբողջությամբ դրվելով նախագահ Էրդողանի վերահսկողության տակ: Իշխանությունների օրակարգը լուսաբանող մամուլն ու վերլուծական շրջանակները զինված ուժերում և պաշտպանական համակարգում իրականացվող լայնամասշտաբ վերակազմավորումների համատեքստում ընդգծում էին նաև բանակի արժեքային վերափոխման անհրաժեշտության հանգամանքը՝ նշելով, որ Թուրքիայի մուսուլման հասարակությունը քեմալիստ չէ, որ զինված ուժերն ու պետությունն էլ պարտադրված քեմալիստական սկզբունքներով ու հիմքերով զարգանան: Քեմալական արժեքաբանության վրա հիմնված բանակը որակվում էր որպես «կեղծ դիմագծի և ճշմարտանման բռնության վրա

հիմնված կայսրություն»³⁴⁰: Իշխանություններին սպասարկումամուլն ու հրապարակախոսներն անցան գործի, ինչն էլ ավելի էր «լեգիտիմացնում» էրդողանական տեսլականը: Իշխանամետ մամուլն ակտիվորեն սկսեց առաջ մղել բանակը ներկայիս Թուրքիայի սոցիալ-հասարակական, մշակութային իրողությունների, այն է՝ իսլամականության համատեքստում դիտարկելու հրամայականը: Զինվորականության դերակատարության թուլացման և 2016 թ. ռազմական հեղաշրջման փորձից հետո վերջինիս ինքնավարությանն ու ազդեցիկությանը հասցված կործանարար հարվածից հետո էրդողանը համարեց, որ հասունացել է զինված ուժերն իր նախապատվություններին, առաջնահերթություններին ու գաղափարական կողմնորոշումներին համապատասխան վերաձևելու ժամանակը: Էական վերաձևման ենթարկվեց ռազմակրթական համակարգը, սկսեց աճել իսլամական հայացքներ ունեցող և կրոնական կենսակերպ վարող ռազմական կուրսանտների թիվը:

2016 թ. վերացվեց «իմամ-հաթիփ» դպրոցների շրջանավարտների՝ ռազմաուսումնական հաստատություններ ընդունվելու կոշտ արգելանքը, ինչը, փաստորեն, կրոնական սպասավորներ պատրաստող դպրոցների շրջանավարտների համար սպայական առաջխաղացում ունենալու դռներ բացեց³⁴¹: Սրանով վերացավ թուրքական բանակի

³⁴⁰ **Kenan Alpay**, TSK'dan tasfiye edilecekler listesi, <http://www.yeniakit.com.tr/yazarlar/kenan-alpay/tskdan-tasfiye-edilecekler-listesi-15988.html> (մուսն.՝ 09.10.2021).

³⁴¹ Տե՛ս **Bakan Fikri İşik**: İmam hatipliler de TSK'ye girecek, <http://www.birgun.net/haber-detay/bakan-fikri-isik-imam-hatipliler-de-tsk-ye-girecek-122146.html> (մուսն.՝ 09.10.2021):

համար զգայուն հարցերից մեկը համարվող և մշտապես կիրառված արգելանքը: Էրդողանը ոչնչացրեց բանակի կարևորագույն տաբուներից մեկը: Դեռևս մի քանի տարի առաջ զինվորականությունը կոշտ էր արձագանքում նման լուրերին և ընդդիմանում նման հնարավորությանը, քանի որ նա կկորցնե՞ր աշխարհիկության պահապանի իր կերպարը և թուրքական բանակի ու զինվորականության կրոնականացման (իսլամականացման) ճանապարհ կբացե՞ր³⁴²: Վերացվեց բանակում կրոնական գլխաշորի արգելանքը, ըստ որի՝ ԳՇ-ում, հիմնական զորատեսակներում և այլ ստորաբաժանումներում ծառայող, ինչպես նաև ռազմաուսումնական հաստատություններում ուսանող կանայք կարող են կրոնական գլխաշոր կրել³⁴³: 2021 թ. հանրապետության ռազմական ակադեմիայի պատմության մեջ առաջին անգամ կրոնական գլխաշորով առաջին կին սպան ավարտեց ակադեմիան և դիպլոմն ստացավ անձամբ ԳՇ պետից³⁴⁴: Հիշենք, որ դեռ 1-2 տասնամյակ առաջ բանակից հեռացվում էին այն զինվորականները, որոնց ընտանիքի անդամներից գլխաշոր կրողներ էին լինում: Էլ չասած, որ կարող էին պետական հաստատությունում գլխաշորով կնոջ հետ լինչի դատաստան տեսնել կամ ցուցադրաբար արհամարհել երկրի առաջին տիկնոջը, ով գլխաշոր էր կրում:

³⁴² Տե՛ս **Metin Gurcan**, Turkish military faces secularism test, <https://www.al-monitor.com/originals/2016/05/turkey-military-entry-ban-religious-school-graduates.html> (մուսն՝ 09.10.2021):

³⁴³ Տե՛ս TSK'da başörtü yasağı kalktı, <http://www.sozcu.com.tr/2017/gundem/sondakika-tskda-basortu-yasagi-kalkti-1694055/> (մուսն՝ 09.10.2021):

³⁴⁴ Տե՛ս Kara Harp Okulu tarihinin ilk başörtülü subayı: Müberra Öztürk, <https://www.yenisafak.com/gundem/kara-harp-okulu-tarihinin-ilk-basortulu-subayi-muberra-ozturk-3690077> (մուսն՝ 09.10.2021):

Թուրքական մամուլում տեղեկություններ հայտնվեցին Էրդողանի նախաձեռնությամբ զինված ուժերում նաև «մասսայական աղոթքների» նախկինում եղած արգելանքի վերացման մասին³⁴⁵: 2020 թ. վերացվեց դեռևս 1960 թ. ռազմական հեղաշրջման հետևանքով չեղարկված «կրոնական սպալության» ինստիտուտի արգելանքը: Բոլոր զորատեսակներում սկսեց ներդրվել, այսպես կոչված, «գումարտակային իմամների» ինստիտուտը, ինչը ենթադրում է կրոնական սպաների առկայություն բանակում՝ որպես բարոյական, արժեքային, դաստիարակչական ու խորհրդատվական գործառույթներ իրականացնող զինվորականներ: Իշխանություններին սպասարկող իսլամական պարբերականը, որը երկար ժամանակ ապահովում էր «գումարտակային իմամների» լոբբինգը, ոգևորությամբ ազդարարեց իր և «արդարության հաղթանակի» մասին³⁴⁶: 2021 թ. վերացվեց զինված ուժերի անձնակազմի (սպայական, ենթասպայական) համալրման հարցում հետադիմականության (կրոնականության) հետ երբևէ առնչություն չունենալու պարտադիր պայմանը, իսկ սպայական ու ենթասպայական արագացված կուրսերի ուղեցույցներից հանվեց Աթաթյուրքի անունը³⁴⁷: Հիշենք, որ կրոնականության հետ զինվորականի փոքրիշատե կապի բացահայտումը նշանակում էր վերջինիս «պրոֆեսիոնալ վախճան»:

³⁴⁵ Տե՛ս TSK'da cemaatle namaz kilma yasağı kalkti,

<http://www.memurlar.net/haber/501790/> (մուսն՝ 09.10.2021):

³⁴⁶ Տե՛ս 60 yıl sonra 'Din Subaylığı' müjdesi, <https://www.yeniakit.com.tr/haber/60-yil-sonra-din-subayligi-mujdesi-1465167.html> (մուսն՝ 09.10.2021):

³⁴⁷ Տե՛ս **Öztürk**: ASTTASAK ve SUTASAK yönergelerinden Atatürk adi tamamen çıkarildi, <https://www.politikyol.com/ozturk-asttasak-ve-sutasak-yonergelerinden-ataturk-adi-tamamen-cikarildi/> (մուսն՝ 09.10.2021):

2021 թ. ապրիլին պաշտոնաթող 103 ծովակալներ իշխանություններին ուղղված քննադատական հայտարարություն տարածեցին, ինչը լուրջ անհանգստություն առաջացրեց իշխանական շրջանակներում: Հայտարարության մեջ նաև զգուշացվում էր Սահմանադրության հիմնարար արժեքներից չշեղվելու մասին, ինչն առաջին հերթին վերաբերում էր երկրի աշխարհիկ կարգերին³⁴⁸: Հայտարարության առանցքում քենալիզմի՝ Աթաթյուրքի նախանշած ուղուց շեղվելու շուրջ անհանգստությունն էր և, մասնավորապես, «զինված ուժերի և ռազմածովային ուժերի՝ Աթաթյուրքի ուղուց հեռացած լինելն ի ցույց դնելու ջանքերի» դատապարտումը: Զինվորականությունը հայտարարությամբ առանցքային էր համարում նաև «ռազմածովային ուժերի անձնակազմի դաստիարակումը Աթաթյուրքի սկզբունքներին ու հեղափոխությանը համապատասխան»³⁴⁹: Այդ հայտարարությունը պաշտոնաթող զինվորականության՝ երկրում իսլամականացման միտումների շուրջ բողոքի ձայնն էր, քանի որ էրդողանը ոչ միայն էական վերաձևումների է ենթարկել քենալական արտաքին քաղաքականության սկզբունքներն ու մոտեցումները, այլև խարխուլ է քենալիզմի ու աշխարհիկության հիմքերը՝ երկիրը մղելով իսլամականացման ուղեծիր: Բարձրաստիճան զինվորականների այդ հայտարարությունը բացահայտորեն փաստում էր զինված ուժերի իսլամականացման

³⁴⁸ St'ü Emekli amirallerden Montrö ve sarikli amiral bildirisi, https://www.sozcu.com.tr/2021/gunun-icinden/emekli-generallerden-montro-ve-sarikli-amiral-bildirisi-6352482/?utm_source=gozdenkacmasin_anasayfa&utm_medium=free&utm_campaign=gozdenkacmasin (մուտք՝ 09.10.2021):

³⁴⁹ Նույն տեղում:

միտումների մասին: Քեմալիստական-աշխարհիկ շրջանակներում և վերլուծական քննարկումների ժամանակ հաճախ է բարձրաձայնվում «թուրքական բանակի պակիստանացման վտանգի», աշխարհիկությունից դեպի իսլամականացում դրսևորումների մասին³⁵⁰:

Թուրքիայում հասարակական, սոցիալ-մշակութային, արժեքային կերպափոխումներն այս կամ այն կերպ իրենց անդրադարձն են ունենում զինվորականության ինքնության ու ռազմական մշակույթի վրա, սոցիալ-մշակութային և գաղափարախոսական տիրապետող արժեքներն առավել դյուրին են թափանցում բանակ, քանի որ վերջինս զրկվել է իր ինքնավարությունից և դրանից բխող հակազդման լծակներից: Իսկ Էրդողանը, բնականաբար, ամեն ինչ անում է՝ իր արժեքային-գաղափարախոսական ազդեցության դաշտ բերելու զինվորականությանն ու զինված ուժերը՝ բանակում սոցիալական ինժեներիայի համար ապահովելով իսլամի «գործիքայնացումը»:

Ռազմական հեղաշրջման փորձից հետո պաշտպանական համակարգում իրականացվեցին կառուցվածքային, օրենսդրական ու կադրային լայնամասշտաբ փոփոխություններ, որոնք, նախագահի լիազորությունների ավելացմանը զուգահեռ, բանակի նկատմամբ վերահսկողություն սահմանելու և անմիջապես նախագահի կողմից աննախադեպ լծակներ ու լիազորություններ ստանալու հնարավորություններ տվեցին: Սրանք աննախադեպ փոփոխություններ էին,

³⁵⁰ St'u Montrö Bildirisiyle Yeniden Gündeme Gelen 'Cübbeli ve Sarikli Amiral' Hakkında Neler Biliniyor?, <https://onedio.com/haber/montro-bildirisiyle-yeniden-gundeme-gelen-cubbeli-ve-sarikli-amiral-hakkinda-neler-biliniyor-974659?ref=slider4> (մուտք՝ 09.10.2021):

որոնք էականորեն կերպափոխեցին Թուրքիայի պաշտպանական համակարգը: Իշխանությունները բանակն իրենց նախապատվությամբ վերափոխելու համար հսկայական ջանք են գործադրել: Բավական խիստ զննության են ենթարկվում սպայական առաջխաղացման ենթակա զինվորականները, ինչի իրավասությունն ու պարտականությունը դրվել են Էրդողանի հավատարիմ հենարանի համբավ ունեցող Հ. Ֆիդանի ղեկավարած Ազգային հետախուզական կազմակերպության (MIT) վրա: Զննության նպատակը հակաէրդողանական սպաների առաջխաղացման բոլոր հնարավորությունները կանխելն է: Ռազմական հեղաշրջման փորձից հետո բարձրագույն հրամկազմի մաքրազտումներն այդ հարցում տվեցին իրենց արդյունքը: Նախագահական կառավարման համակարգին համապատասխանեցման նպատակով զինված ուժերի անձնակազմի մասին օրենքում կատարված փոփոխությունները լայն լիազորություններ տվեցին Էրդողանին, մասնավորապես՝ կադրային հարցում միջամտությունների առումով, ինչպիսիք են, օրինակ, սպաների ծառայության ժամկետների երկարաձգման, կրճատման, բանակից հեռացնելու լիազորությունները³⁵¹: Վերջին տարիներին գնալով ավելանում է քաղաքացիական բուհերից պայմանագրային ծառայության անցնող սպաների թիվը բանակում, ինչը բերում է քաղաքական ու արժեհամակարգային բազմազանության, քանի որ բանակն էր առավելապես ռազմական կրթության միջոցով «ստանդարտիզաց-

³⁵¹ St'u TSK'daki terfi ve atamalarda düzenleme... Bir üst rütbe ye atamalar Cumhurbaşkanlığı tarafından yapılacaktır, <http://www.hurriyet.com.tr/gundem/tskdaki-terfi-ve-atamalarda-duzenleme-bir-ust-rutbeye-atamalar-cumhurbaskani-tarafindan-yapilacak-40891755> (մուտք՝ 09.10.2021):

նում» երիտասարդ սպայակազմը: Բանակի սպայակազմի հիմքը կազմող ռազմական ակադեմիաների շրջանավարտ-սպաների թիվը վերջին 5 տարիներին էականորեն նվազել է՝ 90 %-ից հասնելով 60 %-ի, ինչը պայմանավորված է առավել-լապես քաղաքացիական հաստատություններից պայմա-նագրային ծառայության անցնող սպաների թվի աճով³⁵²: 2016 թ. հեղաշրջման փորձից հետո մեծ հնարավորություն տրվեց իսլամամետ իշխանություններին մաքրագտումների հետևանքով բանակից հեռացված սպաներին փոխարինելու գաղափարական-արժեքային կողմնորոշիչներով իրենց հարմար ու հավատարիմ զինվորականներով՝ ապահովելով նրանց հետագա առաջխաղացումը³⁵³:

Բանակում կադրային նշանակումները և առաջխա-ղացումները, որոնք իրականացվում են իշխանությունների ուժեղ վերահսկողությամբ, կատարվում են քաղաքական նկատառումներով, որպեսզի իշխող կուսակցությունը մե-ծացնի հսկողությունը, բանակը դարձնի իր հենարանն ու հավատարիմ գործիքը, ինչը հանգեցնում է զինվորակա-նության՝ էրդողանական օրակարգով քաղաքականացմանը: Այս գործընթացներն իրենց ազդեցությունն են ունենում

³⁵² Տե՛ս **Metin Gurcan**, A snapshot of the blackbox: a 2015 survey of the Turkish officer corps, “Turkish Studies”, 2018, Vol. 19, No. 1, էջ 111:

³⁵³ Նշվածի վառ օրինակներից էր ծովակալի կոչման արժանացած և ռազմածովային մատակարարման հրամանատարի պաշտոնում նշանակված Մ. Սարրիի դեպքը, երբ 2021 թ. լուրջ աղմուկ բարձրացրեց իսլամական թարիքաթներից մեկում իր այցի ժամանակ «կրոնական համազգեստով» արված նրա լուսանկարը (տե՛ս Tarikat evine giden Tuğamiral Sari ‘sözleşmeli subay’ olarak başlamış, <https://www.cumhuriyet.com.tr/haber/tarikat-evine-giden-tugamiral-sari-sozlesmeli-subay-olarak-baslamis-1825057> (մուսը՝ 09.10.2021), Tekkedeki amiral ortaya çıktı, <https://www.veryansintv.com/tekkedeki-amiral-ortaya-cikti> (մուսը՝ 09.10.2021)):

թուրքական բանակի ու զինվորականության պրոֆեսիոնալ պատրաստության վրա, ինչը երկարաժամկետ հեռանկարում կարող է լրջորեն դրսևորվել, ինչի մասին բարձրաձայնում են նաև թուրքական փորձագիտական շրջանակներում:

Զինվորականության դերի նվազումը, ինստիտուցիոնալ ինքնավարության չեզոքացումը, տոտալ մաքրագրումներն ու գաղափարախոսական մշակումը, ինչպես նաև ներպետական զսպման ու հակակշռման համակարգի վերացումը հնարավորություն տվեցին Էրդողանին լիակատար վերահսկողություն սահմանելու զինվորականության ու բանակի նկատմամբ: Նաև հենց սրանով պայմանավորված՝ Էրդողանի տարածաշրջանային քաղաքականությունը դարձավ ավելի անկանխատեսելի ու ագրեսիվ: Պաշտպանական համակարգի վերաձևումները, անվտանգային որոշումների կայացման մոնոպոլիզացիան նախագահական ինստիտուտի ձեռքում, երկրում հակակշիռների ու փոխզսպումների համակարգի կազմաքանդումը, զինվորականության քաղաքական դերակատարության չեզոքացումն ու նրա գաղափարական վերամշակումների գործընթացն իրենց ուղղակի ազդեցությունն ունեցան Էրդողանական արտաքին ու անվտանգային քաղաքականության ուղեգծի վրա: Էլիտայի գաղափարական ու ինքնության գործոններով պայմանավորված ագրեսիվ, ծավալապաշտական ու ռիսկային անվտանգային քաղաքականության իրացումը համակարգային կաշկանդող գործոններ այլևս չունեն: Ռազմական հեղաշրջման փորձից հետո կառավարության կողմից զինված ուժերում ձեռնարկված հեղափոխական քաղաքացիականացման գործընթացով այլևս չի ճանաչվում զինվորականության նախկինում ու-

նեցած «ինքնավար տիրապետությունը», և շարունակաբար փորձ է արվում չեզոքացնելու այն: Այս նոր ժամանակաշրջանում արմատախիլ են արվում սոցիալ-մշակութային նորմերը, որոնցով զինվորականությունը ներարկվել էր հանրապետության ստեղծումից հետո³⁵⁴: Հ. Յավուզը նկատում է, որ 2016 թ. ռազմական հեղաշրջման ձախողված փորձը Էրդողանն օգտագործեց ոչ միայն իր մենիշխանության մեծացման, այլև պետության ու դրա ինքնության վերածնունդի համար³⁵⁵: Հեղաշրջման փորձը պետության կառուցվածքային, սոցիալ-քաղաքական և գաղափարական վերածնունդների ու դրանց անկաշկանդ ընթացքն ապահովելու աննախադեպ հնարավորություններ ընձեռեց Էրդողանին: Զգուշավորության ու ռիսկային իրավիճակներից խուսափողականության վրա հիմնված քեմալական ռազմավարական մշակույթը³⁵⁶ փոխակերպվեց ռևոլյուցիոնարական ու ծավալապաշտական, կայսերական ժառանգությունից բխեցվող ագրեսիվ ռազմավարական մշակույթի:

Զինվորականության դիրքերի թուլացմամբ ԱԶԿ-ն իրեն ավելի ուժեղ զգաց և համախմբեց իր ներուժը ինչպես երկրում, այնպես էլ միջազգային հարթակում: Նա կարողացավ նախաձեռնել գործընթացներ, այդ թվում՝ արտաքին քաղաքականության ոլորտում, որոնք նախկինում մերժված

³⁵⁴ Տե՛ս **Metin Gürcan**, Never again! But how? State and the Military in Turkey after July 15, Istanbul Policy Centre at Sabanci University, April 2017, էջ 12, http://ipc.sabanciuniv.edu/wp-content/uploads/2017/04/Never-Again_Metin-Gurcan.pdf (մուտք՝ 09.10.2021):

³⁵⁵ Տե՛ս **Hakan Yavuz**, Understanding Turkish secularism in the 21st century: a contextual roadmap, "Southeast European and Black Sea Studies", 2019, Vol. 19, No. 1, էջ 18:

³⁵⁶ Տե՛ս **Malik Mufti**, Daring and Caution in Turkish Foreign Policy, "Middle East Journal", Winter, 1998, Vol. 52, No. 1, էջ 32-50:

էին³⁵⁷: Զ. Օնիշի դիտարկմամբ՝ ավանդական քեմալական արտաքին քաղաքականության իսթեբլիշմենթը լուսանցք մղվեց ԱԶԿ-ի իշխանության կոնսոլիդացիայով, ինչը երկրում ուժային վերաբաշխման հետևանք էր³⁵⁸: Թուրքիայի արտաքին քաղաքականության հարցերի մեկ այլ մասնագետի՝ Բ. Փարքի գնահատմամբ՝ Թուրքիայի արտաքին քաղաքականության օրակարգն արտացոլում է հենց ԱԶԿ-ի բնույթը, որի իսլամական, պոպուլիստական ու ավտորիտար ձգտումներն ավելի արագ ու պարզորոշ դրսևորվեցին զինվորականության ու քեմալական բյուրոկրատական համակարգի՝ քաղաքական լուսանցքում հայտնվելուց հետո³⁵⁹:

Տ. Ալարանտան նկատում է, որ ԱԶԿ-ի և Էրդողանի տեսլականի վրա հիմնված «միսիոներական արտաքին քաղաքականությունը» կապված է միջազգային թատերաբեմում Թուրքիայի նոր՝ ավելի պրոակտիվ դերակատարության հետ, բայց և այնպես ենթադրում է ավելին, քան արտաքին քաղաքականության արդի վերաճումը կամ աշխարհում նրա տեղի ու դերի վերասահմանումը. այն ենթադրում է պետության ինքնության վերասահմանում³⁶⁰: Վերափոխված միջազգային համակարգը և թուրք-իսլամական ազգային

³⁵⁷ Տե՛ս **Henry J. Barkey**, The evolution of Turkish foreign policy in the Middle East, TESEV, 2012, էջ 3, http://tese.org.tr/wpcontent/uploads/2015/11/The_Evolution_Of_Turkish_Foreign_Policy_In_The_Middle_East_EN.pdf (մուտք՝ 09.10.2021):

³⁵⁸ Տե՛ս **Ziya Öniş**, Turkey and the Arab Revolutions: Boundaries of Regional Power Influence in a Turbulent Middle East, "Mediterranean Politics", 2014, Vol. 19, No. 2, էջ 215:

³⁵⁹ Տե՛ս **Burak Bilgehan Özpek, Nebahat Tanriverdi Yaşar**, Populism and foreign policy in Turkey under the AKP rule, "Turkish Studies", 2018, Vol. 19, No. 2, էջ 202:

³⁶⁰ Տե՛ս **Toni Alaranta**, National and State Identity in Turkey: The Transformation of the Republic's Status in the International System, London: Rowman & Littlefield, 2015, էջ 100:

ինքնության վերաիմաստավորումն ու ամրապնդումը ստեղծեցին պետության ինքնության կերպափոխման նպաստավոր պայմաններ³⁶¹: Հատկապես 2011 թվականից սկսած՝ ԱԶԿ կերպափոխումը իսլամական ազգայնականության հանգեցրեց ոչ միայն երկրի բուռն իսլամականացման, այլև դրա ներթափանցման արտաքին քաղաքականության գաղափարական ոլորտ, որում ձևավորվում էին Անկարայի անվտանգային ընկալումներն ու դրանց արձագանքները³⁶²: Թ. Օղուզլուն կարևորում է գաղափարախոսության և անվտանգության միջև կապը՝ նշելով, որ անվտանգային ընկալումները ձևավորվում են գաղափարական ազդեցության ներքո, այսինքն՝ կախված են նրանից, թե ինչպես են էլիտաները մեկնաբանում և ըմբռնում անվտանգային շահերը³⁶³: Ըստ այդմ՝ 2000-ական թվականներից հետո Թուրքիայի Հանրապետության անվտանգային «հիմնադիր մտածողությունը», որը խարսխված էր արևմտականության, աշխարհիկության ու արտաքին քաղաքական զգուշավորության վրա, սկսեց փոփոխության ենթարկվել: ԱԶԿ-ական անվտանգային մտածողությունը Թուրքիան դիտարկում է ոչ թե հնից ամբողջովին կտրված, այլ օսմանյան ժառանգության շարունակականությունը կրող քաղաքական միավոր: Անվտանգային այդ մտածողության համաձայն՝ Թուրքիայի արտաքին ու անվտանգային շահերը մեկնաբանվում են ոչ միայն զուտ ա-

³⁶¹ Տե՛ս նույն տեղում, էջ 103:

³⁶² Տե՛ս **Şevket Ovali, İlkim Özdikmenli**, Ideologies and the Western Question in Turkish Foreign Policy: A Neo-classical Realist Perspective, "All Azimuth", 2020, Vol. 9, No. 1, էջ 120:

³⁶³ Տե՛ս **Tarik Oğuzlu**, Türkiye'nin güvenlik kültürünün oluşumunda ideolojinin önemi, <http://antalyaekspres.com.tr/yazi/prof-dr-tarik-oguzlu/turkiye%E2%80%99nin-guvenlik-kulturunun-olusumunda-ideolojinin-onemi/95508> (մուտք՝ 09.10.2021):

նատոլիական, այլև Օսմանյան կայսրության աշխարհագրական լայն տարածքի և դրանցում Թուրքիայի պատմական պատասխանատվության ու դերակատարության շրջանակներում³⁶⁴:

Ինչպես ցույց տվեցին զարգացումները, Թուրքիայի արտաքին քաղաքականությունը դարձավ հակամարտածին ու սպառնալից, երբ ԱԶԿ-ն գերակայություն հաստատեց արտաքին քաղաքականության ոլորտում որոշումների կայացման մեխանիզմում³⁶⁵, անձնակենտրոն ավտորիտար կառավարման հաստատմամբ կազմաքանդելով հակակշիռների ու փոխզսպման ներպետական համակարգը:

Ներկայիս Թուրքիայի աշխարհաքաղաքական դերի մեծացումն ապահովող կայսերական ժառանգությունն ու ինքնությունը անհրաժեշտ են դարձնում նաև ազգային շահի վերասահմանումը, ինչը հակադրվում է քեմալական աշխարհաքաղաքական պատկերացումներին: Ներկայումս նեոսումանականների տեսլականում Թուրքիան չի ներկայացվում որպես սովորական ազգ-պետություն, այլ որպես մեծ պատմական տարածքի միջուկ-երկիր, որն ունի այդ տարածքում առաջնորդության և պատմական պատասխանատվության առաքելություն³⁶⁶: Աշխարհաքաղաքական նոր ինքնությունն ու պատկերացումները ոչ միայն դնում են ազգային շահի վերաձևակերպման պահանջ՝ արտաքին ու անվտանգային քաղաքականության նոր հրամայականներով, այլև ձևակեր-

³⁶⁴ Տե՛ս նույն տեղում:

³⁶⁵ Տե՛ս **Burak Bilgehan Özpek**, նշվ. աշխ., էջ 208-209:

³⁶⁶ Տե՛ս **Igor Torbakov**, Neo-Ottomanism versus Neo-Eurasianism?: Nationalism and Symbolic Geography in Postimperial Turkey and Russia, “Mediterranean Quarterly”, June, 2017, Vol. 28, No. 2, էջ 141-142:

պում ռևիզիոնիստական աշխարհաքաղաքականության նոր մոտեցում հարևան տարածաշրջաններում: Եթե քեմալիստական ազգայնականությունը Թուրքիայի տարածքը մեկնաբանում էր պաշտպանողական տեսանկյունից՝ որպես հայրենիք, որն ազատագրվել էր և դեռ պետք է պաշտպանվեր արտաքին ու ներքին թշնամական անվերջանալի դավադրություններից, ԱԶԿ-ական ազգայնականությունն այդ նույն աշխարհագրությունը դիտարկում է առավելապես հավակնոտ դիրքերից՝ որպես մշակութային ու քաղաքական կենտրոն, որից պետք է տարածվի Թուրքիայի քաղաքական ազդեցությունը հարևան տարածաշրջաններում³⁶⁷: ԱԶԿ-ական ռևիզիոնիզմը կարող ենք սահմանել որպես նախկին ստատուս-քվոյի ավանդական արտաքին քաղաքականության մերժում, միջազգային ու տարածաշրջանային կարգի վերափոխմանը միտված քաղաքականություն, որը կհամապատասխանի Թուրքիայի վերաձևակերպված ազգային շահերին ու տեսլականին, տարածաշրջանային հեգեմոնիայի ձգտումներին ու հավակնություններին:

Այսպիսով՝ բանական վերագրվում է նաև քաղաքակրթական ու արժեքային նոր «առաքելություն», ինչը դուրս է քեմալական «թուրքական հայրենիքի» պաշտպանության պատասխանատվության սահմաններից ու ընկալումներից: Այս համատեքստում կարող ենք դիտարկել Ա. Դավութօղլուի այն մոտեցումը, որ օսմանյան ժառանգության տեր լինելն անհմաստ է դարձնում Թուրքիայի համար պաշտպանական

³⁶⁷ Տե՛ս **Cenk Saraçoğlu, Özhan Demirkol**, Nationalism and Foreign Policy Discourse in Turkey Under the AKP Rule: Geography, History and National Identity, “British Journal of Middle Eastern Studies”, 2015, Vol. 42, No. 3, էջ 312:

մտածողությունը, և անհնար է զուտ իր սահմանների ներսում պաշտպանության ընկալումն ու պլանավորումը: Օսմանյան պատմական այդ ժառանգությունն ամեն պահ կարող է իր տարածքից դուրս Թուրքիայի միջամտությունների կամ ներգրավման անհրաժեշտություն առաջացնել³⁶⁸: Սրանով Դավութօղլուն դեռ վաղուց իր տարածքից դուրս Թուրքիայի ռազմական հնարավոր միջամտությունների ու ծավալապաշտական ռազմավարության տեսական հիմքն էր ապահովում: 2020 թ. Արցախի դեմ ադրբեջանա-թուրքական լայնամասշտաբ ագրեսիայի նախաշեմին Էրդողանը հայտարարեց, որ «իրեն է վերապահվում Կովկասում օսմանյան առաքելության շարունակումը», որով, փաստորեն, հիշեցնում էր 1918 թ. օսմանյան բանակի ռազմական արշավն Անդրկովկաս³⁶⁹ դրանով նախանշելով Կովկասում ոչ միայն ազդեցության հաստատման ու ամրապնդման, այլև ադրբեջանական կողմի հաղթանակի ապահովման իր «առաքելության» կատարումը: Էրդողանը հաստատեց 2015 թ. իր այն հայտարարությունը, որ «եթե Թուրքիան 1990-ականների սկզբներին հզոր լիներ, ինչպես այսօր, Լեռնային Ղարաբաղում պատերազմ չէր լինի», այսինքն՝ թույլ չէր տրվի ադրբեջանական կողմի պարտությունը³⁷⁰: 2021 թ. նոյեմբերին, խոսելով 44-օրյա պատերազմում Թուրքիայի և նրա նախա-

³⁶⁸ Տե՛ս **Ahmet Davutoglu**, *Stratejik Derinlik: Türkiye'nin Uluslararası Konumu*, İstanbul: Küre yayinlari, 2001, էջ 56:

³⁶⁹ Տե՛ս **Pietro Shakarian, Artyom Tonoyan**, Nagorno-Karabakh: Turkey Instigates An Old War With Older Ambitions, *The National Interest*, October 13, 2020, <https://nationalinterest.org/feature/nagorno-karabakh-turkey-instigates-old-war-older-ambitions-170644?page=0%2C1> (մուտք՝ 09.10.2021):

³⁷⁰ Տե՛ս **Ərdoğlan**: Türkiyə 90-ci illərin əvvəllərində güclü olsaydı, Dağlıq Qarabağ münaqişəsi də olmazdı, <https://az.trend.az/azerbaijan/karabakh/2374737.html> (մուտք՝ 09.10.2021):

գահ Էրդողանի չափազանց մեծ դերակատարության մասին, Իլիամ Ալիևը վերահաստատեց վերոնշյալը, որ «եթե պատերազմի ընթացքում Թուրքիան այլ առաջնորդ ղեկավարելիս լիներ, Անկարան այդչափ խիզախ որոշումներ չէր կարող կայացնել»³⁷¹:

Իշխանություններն ակտիվորեն քայլեր են ձեռնարկում բանակն ու զինվորականությանն իրենց արժեքային ու գաղափարախոսական դաշտ բերելու ուղղությամբ, ինչն ամբողջովին կչեզոքացնի բանակի՝ նախկինում արժեքային կողմնորոշիչներով իշխանություններին հակակշռելու իր անվանական գործառույթը: Սա էլ արտաքին ու անվտանգային քաղաքականության ոլորտում ազատում է Էրդողանի «ձեռքերը»՝ իր ինքնութենական ու գաղափարախոսական կողմնորոշիչներով արտաքին-անվտանգային քաղաքականության իրականացման հարցում ապահովելով զինված ուժերի անարգել գործիքայնացումը: Զինվորականության և անվտանգության համակարգի նկատմամբ լիակատար վերահսկողությունը, հակակշռման մեխանիզմի կազմաքանդումը մեծացնում են Էրդողանի ուժային և ռևոլյուցիոնարական տարածաշրջանային ագրեսիվ քաղաքականության հնարավորությունները: Այն, ինչը նախագահ Օզալին չհաջողվեց, իսկ Էրբաքանը ձախողեց, վճռականորեն իրականացնում է Էրդողանը, որի համար չափազանց մեծ նշանակություն ունի Օզալի և Էրբաքանի թողած քաղաքական ժառանգությունը:

³⁷¹ Zaferin nişanesi Füzuli'den güçlü mesaj, <https://www.yenisafak.com/dusunce-gunlugu/zaferin-nisanesi-fuzuliden-guclu-mesaj-3710509> (մուտք՝ 09.10.2021).

ЛЕВОН ОВСЕПЯН

*Научный секретарь Ереванского государственного
университета, доцент кафедры Политических
институтов и процессов,
Заведующий отделом Турции Института
востоковедения НАН РА,
кандидат исторических наук, доцент*

ТРАНСФОРМАЦИИ СРЕДИ ТУРЕЦКИХ ВОЕННЫХ И В ОБОРОННОЙ СФЕРЕ: ВОПРОСЫ ИДЕНТИЧНОСТИ И ИДЕОЛОГИИ

Резюме

В статье анализируются тенденции трансформации и исламизации коллективной идентичности турецких военных, влияние беспрецедентных реорганизаций системы обороны на институциональную идентичность армии. После неудавшегося военного переворота Эрдоган начал осуществлять существенные изменения в сфере безопасности и обороны, в результате чего вся система перешла под контроль института аппарата президента. Параллельно с этим, Эрдоган стал проявлять активные шаги по идеологической и ценностной обработке армии, пытаясь вовлечь военных в поле своего идеологического влияния. Все это, несомненно, не только полностью нейтрализует традиционную во всей

республиканской истории Турции функцию армии по уравниванию гражданских властей, исходя из ценностно-идеологических соображений, но и освобождает руки Эрдогана в области внешней политики и политики безопасности, который, исходя из своих идеологических предпочтений, стремится к региональному ревизионизму.

Ключевые слова: Турция, партия “Справедливость и развитие”, военные, оборонная система, институциональная идентичность, идеология, трансформация, внешняя политика и политика безопасности.

LEVON HOVSEPYAN

Scientific Secretary of Yerevan State University,

Associate Professor of the Chair of Political

Institutions and Processes,

Head of the Department of Turkey of the Institute of

Oriental Studies of the National Academy of Sciences

of the Republic of Armenia,

Candidate of Historical Sciences, Associate Professor

TRANSFORMATIONS OF THE TURKISH MILITARY AND

DEFENSE SECTOR: ISSUES OF IDENTITY AND

IDEOLOGY

Summary

The article analyzes the collective identity transformation and Islamization trends of the Turkish

military, the influence of the unprecedented reshaping of the defense sector on the institutional identity of the Turkish Armed Forces. After the 15 July failed coup Erdogan launched a new wave of the radical reshaping of the security and defense sectors, subjugating it under the full control of the Presidency. In parallel, Erdogan took active steps in army's value-based and ideological spheres, striving to bring the military under his own ideological domain. All this not only fully neutralised TAF's previously influential and unquestionable role in checking the civilian authorities but also gave Erdogan free-hands in conducting revisionist and irredentist regional policy based on his identity and ideological preferences.

Key words: Turkey, Justice and Development Party, the military, defense sector, institutional identity, ideology, transformation, foreign and security policy.

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄԸ ԱՖՐԻԿԱ

ԽԱԼԻԴ ՕԿԱՇԱ

Եգիպտոսի ռազմավարական հետազոտությունների կենտրոնի տնօրեն, քաղաքագիտության դոկտոր

Բանալի բառեր – Թուրքիա, Եգիպտոս, Արաբական գարուն, Միջերկրական ծով, Աֆրիկա, թուրքական ներթափանցում, տարածաշրջանային անվտանգություն:

Նպատակները և միջոցները

2002 թ. Թուրքիայում «Արդարություն և զարգացում» կուսակցության՝ իշխանության գալուց հետո աֆրիկյան մայրցամաքը թուրքական ղեկավարության ուշադրության առարկա դարձավ, քանի որ նա որդեգրեց մի քաղաքականություն, որը հետապնդում էր «Աֆրիկայում տարածվելու» նպատակ: Կան մի շարք խթանիչներ, որոնք դրդեցին թուրք որոշում ընդունողներին ներթափանցելու աֆրիկյան մայրցամաք:

